

ԷԶՄԻԱԾԻՆ



Բ.
2024




ՉԼ. ՏԼԻԻ

ՀԱՅԿԱՅԻ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ԱՆՅՐ ԼԹՈՒՈՅ ՄԻՈՅ ԷԶՐԻԼՏՆԻ

ՓԷԳՐ ՊԵՐ

2024
Լ. ԷԶՐԻԼՏՆԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուատնական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոգոեան,
Խաչիկ Բաֆֆի Գազեր
Վահէ Թորոսեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer
Vahe Torosyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал


Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Ваге Торосян**



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՍՐԲՈՑ ՂԵԻՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԳՈՒՄԱՐՎԱԾ
ՔԱՂԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻՆ**

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 6 փետրվարի, 2024 թ.)

Գերաշնորհ Սրբազաններ,
Հոգեշնորհ եւ Արժանապատիվ հայրեր,

Հայրական սիրով եւ օրհնությամբ ողջունում ենք ամենքիդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ ջերմորեն շնորհավորում Սրբոց Ղեւոնդյանց տոնի առիթով: Մեր գնահատանքն ենք բերում ձեզ եւ Հայոց Եկեղեցու անդամատանում քրիստոսավանդ սպասավորության զինվորագրված բոլոր եկեղեցականներին: Մեր շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն ենք ուղղում իրենց նվիրյալ ծառայությամբ այսօր պարգեւների արժանացած քահանա հայրերին:

Նվիրական այս տոնն ինչպես դարեր շարունակ, այսօր էլ առիթ է Սրբոց Ղեւոնդյանց քահանայից պայծառ օրինակի եւ սխրանքի լույսի ներքո անդրադառնալու հոգեւորականի առաքելությանը եւ արժեւորելու մերօրյա եկեղեցականաց նվիրյալ ծառայությունն ազգային եւ հոգեւոր կյանքում: Երանյալ սրբերի հիշատակը մշտապես մեծագույն երախտիքով է տոնախմբվել մեզանում՝ անքակտելիորեն շաղկապված մնալով Սրբոց Վարդանանց զորավարաց տոնի խորհրդի հետ: Ազգային մտապատկերում Սուրբ Ղեւոնդյանք մարմնացումն են «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» հերոսական ոգու, որով մեր ժողովուրդը իր պատմության տարբեր հանգրվաններում Ավարայրի գոյամարտ է մղել աստվածապարգեւ իր անկախ ու ազատ կյանքի եւ իր ինքնության անխաթար պահպանության համար:

Սիրելի հոգեւոր հայրեր, այս պաշարը թվում է, թե շարունակական է մեր ազգի լինելիության, մեր արդար իրավունքների ու համազգային շահերի պաշտպանության համար: Մեր Սուրբ Եկեղեցու եւ եկեղեցականաց տերունապատվեր ծառայությունն ու պատասխանատվությունը մեր ժողովրդի եւ հայրենյաց նկատմամբ մշտական են եւ անընդմիջելի՝ աննկուն պահելու Ղեւոնդյանց ու Վարդանանց ոգին հայոց մեջ, դիմակայելու ժամանակի փորձություններին, պահպանելու այն, ինչ ազգային կյանքում նվիրական է եւ սուրբ, արժեքավոր ու հարազատ:

Այսօր պատմության դժվարին շրջափուլ է ապրում մեր ժողովուրդը, մեր սրբազան հայրենիքը: Բռնազավթված է Արցախը, անվտանգային մարտահրավերների առջեւ է մեր նահատակ զավակների արյամբ, համայն ազգի զոհողություններով կերտված հայոց անկախ պետականությունը, հարվածների ներքո են մեր ժողովրդի նվիրական ընկալումներն ու ազգային-հոգեւոր արժեհամակարգը, թիրախավորվում է նաեւ Հայոց Եկեղեցին: Ցավ է մեզ համար արձանագրել, որ մեր հասարակության մեջ սերմանվում եւ արմատավորվում են հաշտվողական տրամադրություններ ստեղծված ծանր իրավիճակի հետ՝ տկարացնելով չարին ու չարիքին ընդդիմանալու ոգին: Այս պայմաններում կենսական կարեւորություն ունի ամենքիս նվիրյալ ու նախանձախնդիր ծառայությունը, որպեսզի մեր զավակաց սրտերում տեղ չգտնեն անտարբերությունն ու հուսալքությունը, եւ նրանցում չբնակվի վհատության ոգին: «Որովհետեւ,— ինչպես ասում է առաքյալը,— Աստված մեզ երկշտություն ոգի չտվեց, այլ՝ զորության, սիրո եւ զգաստության ոգով պետք է շարունակենք հոգեւոր մեր առաքելությունը՝ հայորդյաց սրտերում զորացնելով հավատն ու հույսը վաղվա օրվա նկատմամբ, սերմանելու հունդերը մեր լուսավոր գալիքի տեսլականի: Նույնն է առաքելությունը, նույնն են պատասխանատվությունն ու պարտականությունը մերօրյա Ղեւոնդյանց քահանաներիդ, որպեսզի ձեր անդուլ եւ հետեւողական աշխատանքով հետպատերազմյան այս թմբիրից դուրս բերվի մեր ժողովուրդը եւ իր հայրենական ու ազգային կյանքը ամրորեն վերախարսխի դարերի փորձությունների բովով թրծված հայրենանվիրումի ու ազգասիրության վրա: Մեր ազգի արժանապատիվ կյանքի վերակերտման հիմքում վերստին պետք է անկյունաքար դառնա մեր ազգային-հոգեւոր արժեհամակարգը, որը շաղախյալ է մեր ժողովրդի բազմադարյա տառապանքներով ու հոգեւոր խիզախումներով եւ ճշմա-




րիտ բանալին է մեր հավաքական կամքի եւ ոգու հաղթության: Հարկ է ամենայն ջանք գործադրել, որպեսզի մեզանում համընդհանուր մերժման ու դատապարտման արժանանան անարդարություններն ու անիրավությունները, եւ կասեցվեն մեր ժողովրդի միասնությունը խաթարող եւ ուժերը ջլատող ընթացքներն ու խոտելի երեւույթները:

Սիրելի՛ հոգեւոր հայրեր, մեր Սուրբ Եկեղեցու հանձնառությունն է բոլոր ժամանակներում, հավատարիմ ու նվիրյալ մնալով մեր Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետությանը եւ քրիստոնեական անխախտ արժեհամակարգին, հովվել ու հոգատարել հայոց ազգին, ամրապնդել «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» ոգին, ծառայել խաղաղ ու ապահով հայրենիքի կերտմանը, հայեցի դաստիարակությամբ եւ ազգային գիտակցության ամրապնդմամբ ամենուր յուրովսանն նպաստել հայ ինքնության անաղարտ պահպանությանը եւ մեր ազգի ու հայրենիքի անսասանությանը: Այս առումով այսօր առավել քան կարեւոր է ձեր սրբազան առաքելությունը՝ աստվածահաճո ընթացքներով ուղղորդելու եւ փրկության առաջնորդելու ձեր խնամքին հանձնված բանավոր հոտը: Մնացեք քաջ ու աներեր ճշմարտության եւ արդարության պաշտպանության ձեր կոչման ու ծառայության ճանապարհին: Ոչինչ չպետք է հեռացնի մեզ մեր Աստծո, մեր նախնյաց ու Սրբոց Դեւոնդյանց նախանշած ուղուց: Ապավինենք մեր Երկնավոր Տիրոջը, գոտեպնդվենք հավատով եւ տերունաշնորհ հույսով: Միշտ հիշենք սուրբգրային խոսքը. «Մարդ ինչ որ սերմանում է, նույնը եւ կհնձի» (Գաղ. 2. 8):

Վերստին Մեր գնահատանքն ենք բերում թեմակալ առաջնորդներին, քահանայից դասին, եկեղեցական կառույցներում եւ ի սփյուռս աշխարհի սպասավորող ողջ հոգեւորականությանը՝ հայցելով, որ Բարձրյալն Աստված զորացնի ամենքիդ երկնատուր շնորհներով եւ պարգևի քաջություն, աննվազ ուժ ու կորով՝ ի սպասավորություն համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդի, ի զորացում եւ ի փառս մեր հայրենիքի եւ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի սերը, շնորհը եւ խաղաղությունը միշտ լինեն մեզ հետ եւ ամենքի, այսօր եւ հավիտյանս. ամեն:





Տ. ՕՇԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻԷԿԻԷԼԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՕՍՈՒԼԾ ԵՐԵԼԱՆԻ Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒԽ
ՍԱՏՈՒՑՈՒԼԾ Ա. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(4 փետրուարի 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Ես դնեմ ձեռս ի վերայ սոցա, եւ դուք
ամենեւեամ աղօթս արարէք:

Մայր Մաշտոցի այս տողերը, որ առաքելական շրջանից փոխանցուել է հայրապետներին եւ Լուսաւորչից մինչեւ մեր օրերը Նորին Սուրբ Օծութիւն Տեր Տեր Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհուած այդ իշխանութիւնը, որ մեզ՝ եպիսկոպոսներու արտօնութիւն տուեց օծելու եւ ձեռնադրելու հոգեւորականների: Եւ այս առիթով իմ արդիական խորին երախտագիտութիւնն եմ ուզում յայտնել Ամենայն Հայոց Հայրապետին, որ նուաստիս՝ Իրաքահայոց թեմի առաջնորդին, արժանի գտաւ կարգելու զիս եպիսկոպոս, տակաւին մեռոնը թաց ճակատիս՝ կրկին պատին ընծայեց այս պատմական պահին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու խորանի վրայ ձեռնադրելու եւ օծելու տասնմէկ նուիրեալ երիտասարդների՝ ծառայելու Հայաստանեայց Եկեղեցու անդաստանի մէջ: Կրկին անգամ իմ երախտագիտութիւնն եմ յայտնում Վեհափառ Հայրապետին՝ այս մեծ պատուի համար:

Ինչպէս ասացի աղօթքի մէջ. «Ես դնեմ ձեռս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք»: Այս ձեռնադրութեան եւ օծման արարողութեանը մենք՝ բոլորս մասնակցեցինք:

Միայն մեր աղօթքը չէ, այլ նաեւ ձեր աղօթքները նորընծաների համար, որպէսզի իրենք իրենց կարգի մէջ լինեն հաւատարիմ եւ ծառայասէր հոգեւորականներ, ծառայելու մեր ժողովրդին: Որպէս իրենց հոգեւոր


ծնողը՝ իմ միակ մաղթանքն ու աղօթքն այն է, որ իրենք ամենայն հաւատարմութեամբ ծառայեն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցուն:

Սիրելի՛ նորընծաներ, ձեր առաքելութիւնը շուտով պիտի սկսուի, եղէք քաջ հովիւներ, բերէք ձեր ծառայութիւնը Հայ Եկեղեցուն եւ հայ ժողովրդին՝ մանաւանդ այս օրերուն, երբ մեր շուրջ բոլորը տեսակ-տեսակ փորձութիւններ եւ դժուարութիւններ կան. եղէք ամուր, եղէք իմաստուն, եղէք զօրաւոր ծառայելու համար: Մի վազէք նիւթին ետեւէն, այլ թողէք, որ նիւթը կամ անձնականը վազէ ձեր ետեւէն:

Մեր ժողովուրդը, աւելի քան երբեք, կարոտ է ձեր խօսքին, ձեր աղօթքին, ձեր մխիթարութեանը: Դուք էլ կկատարէք ամուսնութիւններ, հարսանիքներ, մկրտութիւններ, կմխիթարէք տառապեալներին, բայց միշտ այն գիտակցութեամբ, որ դուք Հայ Եկեղեցու սպասաւորներն էք: Թող ձեր ճամփան բաց լինի, որովհետեւ բաւականին դժուարութիւններ կան, բայց Քրիստոսի խօսքը ձեր վահանն է, ձեր սուրն է եւ ձեր խաչը, որպէսզի կարողանաք ծառայել Հայ Եկեղեցուն:

Սիրելի՛ հաւատացեալներ, մեր այս նորընծայ հոգեւոր հայրերը պիտի ծառայեն Հայաստանում եւ միզուցէ տարբեր տեղերում՝ բերելու իրենց աղօթքը եւ օրհնութիւնը, դուք ալ եղէք իրենց համար աղօթողներ, որպէսզի նրանք իրենց կարգին մէջ մնան հաստատ եւ ամուր:

Կրկին անգամ իմ երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնն եմ յայտնում այս պատուի համար եւ փառք եմ տալիս Աստծուն, որ տկար ուսերիս վրայ կարողացայ կատարել այս օծումը, լինել այս երիտասարդների հոգեւոր ծնողը՝ ձեր աղօթքներով միասին ծառայելու մեր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի. ամէն:



Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 փետրվարի 2024 թ.)

Հանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօր մեր Եկեղեցին տոնախմբում է Բուն բարեկենդանի տոնը: Երկար կարելի է խոսել Բուն բարեկենդանի տոնի ավանդույթների, զրույցների ու պատմությունների մասին՝ տեղ գտած թե՛ գեղարվեստական գրականության եւ թե՛ ժողովրդական բանահյուսության մեջ: Այդ զրույցները, պատումները, անգամ հեքիաթներն ունեցել են միայն մեկ նպատակ՝ ամրապնդել, տարածել, սերմանել մարդկանց մեջ Բարեկենդանի հոգեւոր բուն խորհուրդը:

Իսկ ո՞րն է Բուն բարեկենդանի խորհուրդը: Դա հասկանալու համար պիտի վերադառնանք նախամեղանչական մարդու սուրբգրային պատմությանը, արարչագործությունից հետո առաջին մարդկանց ստեղծմանը, նրանց դրախտային կյանքին՝ մինչեւ այն պահը, երբ նախամարդիկ՝ Ադամն ու Եւան, անհնազանդության պատճառով վտարվեցին դրախտից:

Այսօրվա շարականը շատ հետաքրքիր կերպով է նկարագրում մարդկանց դրախտային կյանքը: Շարականագիրն ասում է, որ Ադամն ու Եւան ցնծալով ուրախանում էին անտիրական՝ տիրություն չունեցող խնդությամբ, երբ ամեն անգամ տեսնում էին, որ Աստված այցելում է իրենց, իջնում դրախտ: Այս է շարականի իմաստային թարգմանությունը: Նախաստեղծ մարդիկ ուրախանում էին անտիրական խնդությամբ, երբ ամեն անգամ զգում էին Աստծու ներկայությունը դրախտում: Տոնի անվանումը եւս բացահայտում է նրա խորհուրդը՝ բարի կենդանություն: Մոտավորապես այն, ինչ մենք հասկանում ենք՝ երջանկություն ասելով: Եւ եթե դիմենք այլաբանությանը, գեղարվեստական մտածողությանը, ապա կհաստատենք, որ Բուն բարեկենդանի տոնախմբությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ երջանկության տոնի հիշատակությունը, երջանիկ հիշո-

ղուծյունների տոնախմբությունը: Այո՛, նախաստեղծ մարդիկ դրախտում քանի դեռ չէին մեղանչել, քանի դեռ Աստված իրենց չէր վտարել, կամ ավելի ճիշտ՝ քանի դեռ չէին հեռացել Աստծուց, երջանիկ էին:

Նրանք երջանիկ էին, երբ պահպանում էին Աստծու պատվիրանները: Աստված ասել էր, որ այն ամենը, ինչ որ ստեղծվել է, այն ամենը, ինչ որ արարվել է, պատկանում է իրենց. «Տնօրինեք, օգտվեք, վայելեք, երջանիկ եղեք»: Միակ բացառությունը, որ Աստված սահմանեց, այն էր, որ չճաշակեն դրախտի մեջ տնկված ծառերից մեկի պտուղը:

Ժողովուրդն ասում է, որ Ադամի եւ Եւայի՝ խնձոր ուտելու պատճառով մարդիկ վտարվեցին դրախտից: Իհարկե, միամտություն կլինի կարծել, որ խնդիրն ընդամենը խնձոր ուտելն էր: Մարդիկ վտարվեցին դրախտից, որովհետեւ ոտնահարեցին աստվածային պատվիրանը, չհնազանդվեցին Աստծու կամքին: Մարդիկ ասում են՝ ես պիտի որոշեմ, ինքս պիտի տնօրինեմ: Եւ այս անհնազանդության ամբողջ պատմությունը հանգում է մարդկային ես-ին: «Աստված չէ, որ պիտի որոշի, Պողոսը չէ, որ պիտի որոշի, պիտի որոշեմ ես, ես եմ որոշում՝ ինչ է իմ անելիքը, ինչ պիտի անեմ»։ Կհա մարդկային ողբերգության մեծագույն պատճառը: Եւ այս եսակենտրոնությունը, ես-ին ուղղված փառաբանությունը հանգեցրել են ողբերգական այնպիսի հետեւանքների, որոնք հաղթահարելու համար Աստված Իր Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին ուղարկեց, որ գա եւ այդ ողբերգական հետեւանքները վերացնի:

Դիտեք, անցյալ օրն ընթերցում էի մի հետաքրքիր հարցազրույց: Հեղինակը հարցնում էր՝ որն է կարեւոր՝ երջանկությունը, առողջությունը, թե՛ հաջողությունը: Տարբեր մարդիկ տարբեր կարծիքներ էին հայտնում, տարբեր մոտեցումներ էին արտահայտում: Հիմա ուզում եմ միասին մտածենք այդ մասին՝ որն է ավելի կարեւոր մարդկային կյանքում՝ երջանկությունը, առողջությունը, թե՛ հաջողությունը: Մտածում եմ՝ իհարկե երջանկությունը:

Մարդիկ փնտրում են առողջություն, ցանկանում են հաջողակ լինել, բայց ես հանդիպել եմ հազարավոր առողջների, վստահ եմ՝ դուք էլ, որոնք երջանիկ չեն, տեսել եմ հազարավոր հաջողակների, որոնք եւս երջանիկ չեն: Իհարկե, սա չի նշանակում, թե բոլոր հիվանդներն ու ձախողակները երջանիկ են, ո՛չ, սխալ պետք չէ հասկանալ: Ասածս այն է, որ միայն առողջությունը եւ հաջողությունը չեն, որ երջանիկ են դարձնում մարդկանց: Դու կարող ես լինել առողջ, հաջողակ, կարող ես լինել հա-

րուստ, ճանաչված, բայց չլինել երջանիկ: Ինչո՞ւ, որովհետեւ մենք երջանկությունը փնտրում ենք ոչ այն տեղերում, ուր իրապես այն կա: Երբեմն մենք այն որոնում ենք նյութական հանգամանքների մեջ, մեր կարգավիճակի, կրթության, ճանաչված լինելու մեջ: Մինչդեռ իրական երջանկությունն Աստծու կամքի հետ մեր ներդաշնակությունն է:

Ահա այսօր այդ իրական երջանկությունը տոնախմբելու օրն է: Եւ երջանկությունը, ինչպես նախաստեղծների պատումի մեջ իսկ երեւում է, ոչ թե մեր սեփական ցանկություններին տուրք տալն է, այլ այդ ցանկություններին զերծ մնալը: Այն, ինչը կարող է սկզբնական շրջանում հաճելի թվալ, հետագայում կարող է դառնալ կործանարար: Հիմնականում երջանկությունը ոչ թե այն է, որ անենք այն, ինչ ուզում ենք, այլ չանենք այն, ինչ որ չենք ուզում:

Ադամը եւ Եւան չպետք է անեին այն, ինչ արգելված էր իրենց: Այդ էր լինելու երջանկությունը, եւ այդ էր պայմանը, որ Աստված իրենց շարունակեր այցելել:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօր մենք սկսում ենք քառասնօրյա մի ճամփորդություն: Բուն բարեկենդանի օրը մենք հիշում ենք մարդու՝ Աստծու հետ ներդաշնակության մեջ լինելը: Նրանք Աստծու հետ էին եւ վայելում էին լիարժեք, լիակատար երջանկություն: Այս քառասնօրյա շրջանում մենք պիտի հիշենք այն օրերը, երբ մարդիկ հեռացան Աստծուց, եւ ինքներս պիտի փորձենք այդ հեռավորությունը, այդ վիհը լցնել մեր աղոթքներով, մեր զրկանքներով: Այսօրվա քաղաքակրթությունը կառուցված է սպառման, վայելքի, ամեն ինչ ունենալու մոլուցքի վրա, մինչդեռ քրիստոնեական քաղաքակրթությունը կառուցվում է կամավոր զրկանքների վրա. կամավորաբար պետք է ինքդ քեզ զրկես այն ամենից, ինչը վնասում է քո քրիստոնեական կյանքին, ինչն անջրպետ է առաջացնում քո եւ Աստծու միջեւ: Այս քառասնօրյա շրջանում մենք պիտի փորձենք վերացնել այդ պատնեշը, պիտի փորձենք լցնել մեզ եւ Աստծուն բաժանող այդ անդունդը եւ հասնենք Տիրոջ Սուրբ Հարության տունին՝ վայելելու համար Տիրոջ ամբողջական ներկայությունը: Թող Աստված օրհնի մեզ այդ ճամփորդության մեջ, զորացնի, որպեսզի մենք այդ զրկանքները՝ կամավոր զրկանքները, քաղցրությամբ կրենք:

Տիրոջ օրհնությունն ամենքիս հետ թող լինի այժմ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ՔԱՅԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(14 փետրվարի 2024 թ.)

Գերաշնորհ սրբազան հայրեր,
Հոգեշնորհ հայրեր, արժանապատիվ ֆահանա հայրեր,
Սիրելի՛ հավատակից ու հավատավոր քույրեր եւ եղբայրներ,
Մինչ բուն ֆարոգիս անդրադառնալը ցանկանում եմ երախտիքիս եւ շնորհակալության խոսքս հղել ազդիս Վեհափառ Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաւրեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետին, որ ինձ առիթ ընձեռեց մասնակցելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպված ֆահանաների վերապատրաստման դասընթացներին եւ առավել եւս Տյառնդառաջի տոնին պատմական Սուրբ Գայանե վանքում պատարագ մատուցել:

«Աւր. արձակեա՛ գծառայս Քո, Տէր, ըստ
բանի Քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք
իմ զփրկութիւն Քո»

(Ղուկ. Բ. 29–30):

Սիմեոն Ծերունին այս գործաբանական օրհնաբանությունով կանխագուշակել է Քրիստոսի ապագա գործունեության ամբողջ պատմությունը: Եւ ահա Տիրոջ ծննդյան քառասուներորդ օրը Նրան բերում են Երուսաղեմ: Հին Ուխտում քառասուն թիվը խորհրդավոր ու նախամեծար է եղել: Այդպես է եւ նորում: Մովսեսը լեռան վրա քառասուն օր ու քառասուն գիշեր մնաց պահեցողությանը եւ ապա ստացավ Տիրոջ պատվիրանները: Այսօր այս թիվը պահվեց նաեւ Տիրոջ կողմից՝ Իր քառասնօրյա գալստյամբ տաճար: Այսպիսով՝ քառասուն օր Բեթղեհեմում մնալուց հետո, որով լրացան նրանց սրբագործման օրերը, Հովսեփին ու Մարիամը վերցրեցին մանուկ Հիսուսին, եկան Երուսաղեմ: Քանի որ Տերը պետք է կատարեր ամբողջ օրենքը, իսկ Մովսեսի օրենքների պահանջներից մեկն այն էր, որ քառասուն օրական առաջնեկը պետք է տաճարին ընծայվեր:

«Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պետք է կոչվի»:

Սա ասված է բոլոր կանանց վերաբերյալ, սակայն ոչ Մարիամի, քանի որ Աստվածածին Կույսն օրենքի տակ չէր: Նա անախտ էր բոլոր կրքերից, մաքուր եւ սրբության աղբյուր եղավ՝ ծնելով կուսությունը: Նա կարիք չուներ օրենքի պահանջով քառասուն օր պահել՝ մաքրագործվելու համար, բայց հենց սկզբից Մովսեսի օրենքին հակառակ ու օրինախախտ չերեւալու նպատակով հանձն առավ կատարելու օրենքը: Այդ պատճառով Բեթղեհեմում մնաց քառասուն օր, ապա եկավ տաճար:

Մեզ՝ բոլորիս համար սա խոնարհության օրինակ է, քանի որ եթե նա, ով ծնվեց Աստծու որդի, սրբվեց, ապա որքան առավել պետք է սրբվեն նրանք, ովքեր մեղքերի մեջ ծնվեցին: Եւ ինչպես որ Որդին, կարիք չունենալով թլփատություն, խոնարհությամբ թլփատվեց, որպեսզի կատարվի օրենքը, նույնպես եւ Աստվածամայրը, կարիք չունենալով մաքրագործման, մաքրագործվեց. սուրբ լինելով՝ առանց սրբվելու չմտավ տաճար:

Երբ նրանք մոտեցան տաճարին, արդեն մութ էր, եւ տաճարի արեւելյան դուռը, որ վաղուց ի վեր փակ էր, Տիրոջ մոտենալու պահին ինքն իրեն բացվեց, որով կատարվեց մարգարեի խոսքը. «Այս դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտնի այնտեղով»:

Եւ այսպես էլ եղավ. դռները բացվելուն պես մեծ դրոշյուն որոտաց քաղաքում, բնակիչները դուրս վազեցին իրենց տներից, եւ քանի որ արդեն մութ էր, վառվող ջահեր ու ճրագներ ձեռքներին գնացին տաճար՝ տեսնելու տաճար մտնողին, եւ միմյանց ձայն տալով՝ ասացին. «Տերն անցավ այս դռնով»:

Եւ մոտենալով տաճարին՝ տեսան Հովսեփին ու Մարիամին՝ Հիսուս մանկանը գրկած: Այսօր մենք նույն օրինակով ենք կատարում Տյառնընդառաջի նախատոնակը: Երեկոյան վառվող մոմերով ենք սկսում խորհրդի կատարումը:

Թեպետ Տերը խոնարհ տեսքով եկավ տաճար, սակայն չթաքցվեց Նրա աստվածությունը, քանի որ Սիմեոնը, որ երկար տարիներ սպասում էր Տիրոջը, ընդառաջ գնաց կուսածին Մանկանը, վերցրեց Նրան իր գիրկը եւ Աստված դավանելով՝ օրհնեց:

Ըստ ավանդության՝ նա մեկն էր այն 72 թարգմանիչներից, որոնք Եգիպտոսի Պտղոմեոս Եղբայրասեր թագավորի հրամանով Հին Կտակա-

րանի գրքերը եբրայեցերենից հունարենի թարգմանեցին: Արքայի որոշումով յուրաքանչյուր թարգմանիչ Փառան կղզում առանձին սենյակի մեջ էր պահվում, որպեսզի միմյանց հետ չխորհրդակցեն եւ թարգմանությունն անաղարտ լինի: Նրանցից յուրաքանչյուրը Սուրբ Հոգու ներգործությամբ 72 օրում ամբողջ մատյանը թարգմանեց, եւ բոլորի թարգմանությունները նույնը եղան եւ մտքով, եւ խոսքով:

Երբ թարգմանելիս Սիմեոնը հանդիպում է Եսայի մարգարեի հետեւյալ խոսքին. «Ահա կույսը պիտի հղիանա ու որդի պիտի ծնի», տարակուսում է, թե հնարավոր է, որ չհավատան այս խոսքերին, եւ ջնջում է իր թարգմանածը: Սակայն այնուհետեւ խորհում է, որ իր թարգմանիչ ընկերները ճիշտ կթարգմանեն, իսկ ինքը՝ ոչ, ինչի պատճառով նրանց միջեւ տարաձայնություններ կծագեն, եւ հակառակություններ կառաջանան մարգարեության հարցում:

Այսպիսի մտածումների մեջ Սիմեոնը քնով է ընկնում եւ արթնանալով տեսնում է, որ իր ջնջածը նորից գրված է նույն տեղում՝ ոսկյա տառերով: Այս տեսնելով՝ նա արտասովում է ամբողջ օրը եւ երանի տալիս նրանց, ովքեր պիտի տեսնեն կուսածին Մանկանը եւ գրկեն Նրան: Եւ Հոգին, որ նրա վրա էր, հաճեցավ իրականացնել արդարի ցանկությունը եւ պահեց Սիմեոնի մահկանացու բնությունը՝ ասելով. «Մահ չես տեսնի, մինչեւ տեսնես Տիրոջ օծյալին»:

Եւ 344 տարի անց կատարվում է թարգմանությունը, երբ քառասնօրյա Օծյալ Հիսուս մտնում է տաճար: Այդ օրը Սուրբ Հոգին կանչում է Սիմեոնին՝ ասելով. «Արի՛, ծեր, գնա տաճար եւ տես այն, ինչ ցանկացար, ահա կույսը եւ իր Որդին»:

Եւ քանի որ Սիմեոնն իր կամքն ու հոժարությունն ամբողջովին հանձնել էր Աստծուն, դրա համար էլ հոգով եկավ տաճար եւ նույն հոգով ճանաչեց կապանքներից արձակողին եւ մարմնավորված Աստծուն: Սիմեոնը մանուկ Հիսուսին մեծ ուրախությամբ վերցրեց իր գիրկը, քերովբեական աթոռ եղավ երկրի վրա: Սուրբ Հոգին նրա վրա էր, իսկ Որդին՝ գրկին, իսկ այնտեղ, որտեղ Հոգին ու Որդին են, նրանց հետ է նաեւ Հայրը: Նա, Ով լցնում է երկինքն ու երկիրը Իր կամքով, Սիմեոնի գրկում տեղավորվեց: Գրկելով Մանկանը՝ նա գոհացավ Տիրոջից, որ այդքան ժամանակ իրեն պահեց ու արժանացրեց տեսնելու Նրան, Ով անտեսանելի էր հրեշտակների համար, եւ Ում ցանկանում էին տեսնել բոլոր մարգարեները:

Սիմեոնն օրհնեց Նրան, Ով մեծ լույս ծագեցրեց՝ լուսավորելով մեղքերի ծովն ընկածներին եւ մահւման ստվերում նստածներին: Օրհնեց Աստծուն, որ է եւ էր եւ երեւաց որպէս բարերար ու մարդասեր եւ առնելով ծառայի կերպարանք ու մարդանալով՝ նրա գրկում հայտնվեց՝ որպէս քառասնօրյա Մանուկ, եւ այդ գիրկն Աստվածութեան ընդունարան եղավ:


Քրիստոս Սիմեոնի կողմից արդարացիորեն հռչակվում է որպէս Լույս. «Լույս հայտնութիւն հեթանոսաց»:

Այս արտահայտութիւնն ինքնին զորավոր փաստ է, թե քրիստոնեութիւնը լուսավորութեան եւ համամարդկային կրօն է, որին անդամակցվելու գլխավոր եւ անհրաժեշտ պայմանը հավատքն է: Առանց Քրիստոսի լույսի՝ մեր հոգեւոր եւ բարոյական կյանքը գոյութիւն չի կարող ունենալ: Եթե Քրիստոսի լույսից եւ քրիստոնեութեան լուսավորութիւնից զուրկ մնանք, մեր բոլոր աշխատութիւններն անպտուղ եւ ապարդիւն կդառնան:

Ահա ճիշտ այս հասկացողությամբ եւ ըմբռնումով է, որ հայ ժողովուրդը քրիստոնեութեան սկզբնական շրջանից մինչեւ այսօր կառչած է իր լույս հավատքին եւ կրօնին: Մեր նախնիներն ընդունել եւ հավատացել են, որ մեր ժողովրդի փրկութիւնը եւ հենարանը նույն Ինքը՝ Քրիստոս է՝ Իր լուսավոր վարդապետութեամբ:

Մենք եւս պահենք լույս հավատքը, որ մեզ է փոխանցվել մեր նախնիներից: Պահենք այն իր վեհութեան եւ բարձրութեան վրա, շարունակենք քայլել մեր նախնիների բացած ճանապարհով, որպէսզի նրանց հոգիները ուրախանան մեր հավատքի զորութեամբ՝ այն խոր եւ ճշմարիտ համոզումով, թե Քրիստոս միշտ օգնական եւ պաշտպան է Իրեն հավատացողներին:

Այժմ եւ միշտ եւ հավիտյանս, ամեն:



Տ. ՎԱՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՕՍՈՒԿՈՒ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՑՈՒԿՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(18 փետրուարի 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն:

«Մեղաք անօրինեցաք ամենեւեմ, ոչ պահեցաք զպատուիրանս Քն, մեղաք Քեզ, Տէր, քանի որ զիս»

(Շարական Ապաշխարութեան ԱԿ.):

Այս խօսքերը, սիրելիներ, այսօրուան շարականէն քաղած ենք, որ մեր եկեղեցւոյ հայրերը զետեղած են Մեծ պահքի երկրորդ Կիրակիի շարականներուն մէջ: Ինչպէս գիտէք, մենք Մեծ պահքի մէջ ենք, որ հոգեւոր վերապատրաստումի, վերանորոգումի եւ ինքնաքննութեան առիթ է մեզմէ իւրաքանչիւրիս համար: Իւրաքանչիւր Կիրակիի համար մեր հայրերը թեմա մը զետեղած են, որ Սուրբ Գրքէն եւ մեր եկեղեցւոյ դաւանութենէն ընտրած են, որպէսզի առաջնորդեն մեզի Մեծ պահքի հոգեւոր ճամբորդութեան ընթացքին:

Անցեալ Կիրակին որ պահքի սկիզբն է, Բուն Բարեկենդան կը կոչուի, որով եկեղեցին յիշեցուց մեզի այն բարի կեանքը, որ Աստուած ստեղծեց որպէսզի մենք յաւիտեանս յաւիտենից վայելենք: Այս Կիրակին Արտաքսման Կիրակի կը կոչուի, որով եկեղեցին կը հրաւիրէ մեզի անդրադառնալ մեղքին եւ մեղքի հետեւանքներուն մասին: Յաջորդող Կիրակիները համանման անուանումներով եւ տարբեր թեմաներով մեզ զանազան քայլերով պիտի առաջնորդեն, որպէսզի կարողանանք վերադառնալ այն երանելի վիճակին, որպէսզի հանդերձեալին արժանանանք Աստուծոյ ներկայութեան մէջ անվերջ երջանիկ կեանք մը ապրելու:

Որովհետեւ այսօր Արտաքսման Կիրակին է, եկէք կեդրոնանանք եւ անդրադառնանք այս թեմային:

Արտաքսման Կիրակիի թեման քաղուած է Աստուածաշունչի առաջին գիրքէն՝ Ծննդոցէն: Այնտեղ կը կարդանք, թէ Աստուած ինչքան սիրեց Ադամին ու Եւային, որ զանոնք թագաւոր ու թագուհի դարձուց Իր ստեղծագործութեան վրայ: Զանոնք Իր պատերով ու նմանութեամբ ստեղծեց: Աստուծոյ ամբողջ ստեղծագործութիւնը իրենց ենթարկեց: Ադամին տուաւ իշխանութիւն, որպէսզի իւրաքանչիւր կենդանիի անուն մը տայ, այդպիսով յայտարարելով, թէ Ադամը Աստուծոյ ստեղծագործութեան տէրն ու խնամակալն է:

Այս բոլոր բարիքներուն եւ շնորհներուն դիմաց, Աստուած Ադամէն ու Եւայէն պահանջեց, որ Դրախտի մէջ եղող մէկ ծառէն հեռու մնան, անոր պտուղէն չուտեն: Աստուած ըսաւ անոնց. «Եթէ այդ ծառէն ուտէք՝ կը մեռնիք» (տ՛ես Ծննդ. Բ. 17): Սակայն, Ադամն ու Եւան սատանայէն խաբուեցան: Սատանան, օձի միջոցով մօտեցաւ իրենց եւ ըսաւ, որ եթէ այս ծառէն ուտէք, դուք ամէն ինչ կը գիտնաք. Աստուած ձեզի այդ չըսաւ, բայց դուք այս ծառէն ուտելով նոյնիսկ յաւիտենական կեանք կ'ապրիք (տ՛ես Ծննդ. Գ. 4—5): Ադամն ու Եւան որոշեցին Աստուծոյ կամքին հակառակիլ եւ ուտել այդ ծառի պտուղէն: Ահա թէ ինչու Աստուած Ադամին ու Եւային վրայ բարկացաւ եւ որոշեց պատժել զանոնք՝ արքայութիւնը զիրենք այդ երանելի դրախտէն դէպի այս մեղաւոր աշխարհը, ուր այսօր մենք կ'ապրինք:

Մի քանի հարցումներ կան, սակայն, որ վստահ եմ յաճախ մենք մեզի կը հարցնենք, որոնց պատասխանները եթէ գտնենք, պիտի օգնեն մեզի այս նիւթին մէջ խորանալու:

Հետեւեալ հարցումով սկսինք. ինչո՞ւ համար այդքան խիստ պատիժ: Արդեօք իրապէ՞ս ծառի պտուղը ուտելը մարդուն դրախտէն արտաքսուելու եւ Աստուծոյ ներկայութենէն զրկուելու կ'արժանացնէ: Կամ եթէ նոյնիսկ այդ պատիժին արժանի են, ինչո՞ւ Աստուած անոնց չներեց: Ինչո՞ւ չըսաւ, այստեղ մնացէ՛ք, ուրիշ առիթ մըն ալ կու տամ ձեզի: Սիրելի հաւատացեալներ, այսօր կը հրաւիրեմ ձեզ վերոյիշեալ հարցումներուն եւ անոնց պատասխաններուն մասին անդրադարձ կատարելու:

Նախ եւ առաջ, իրապէս, Ադամին եւ Եւային մեղքը պարզապէս ծառի պտուղէն ուտելն էր: Այստեղ մէկ բան պէտք է յատակեցնեն, թէ կարելոր չէ թէ ծառը ինչ էր, ոչ ալ կարելոր է թէ պտուղը ի՞նչ էր: Այստեղ կարելորը այն է, որ Աստուած պահանջեց այդ ծառէն չուտել, իսկ Ադամն ու Եւան իմանալով Աստուծոյ կամքը, միաժամանակ օգտագործելով Անոր իրենց

տուած ազատ կամքը, որոշեցին հակառակիլ Աստուծոյ կամքին եւ այդ ծառի պտուղէն ուտել: Հետեւաբար, ինչքան խորանանք Ադամի մեղքին վրայ, կը տեսնենք, որ այդ մեղքը իրապէս բազմակողմանի է:

Առաջինը այն է, որ անոնք իմանալով Աստուծոյ կամքը որոշեցին Աստուծոյ կամքին հակառակիլ: Ուրեմն, Ադամական մեղքին առաջին երեսը՝ Աստուծոյ կամքին անհնազանդութիւնն է: Սակայն, Ադամի գործած մեղքին մէջ այլ երեսներ եւս կան, որոնք դեռեւս անհնազանդութենէն շատ աւելի խորն են: Ադամն ու Եւան երբ անհնազանդ գտնուեցան Աստուծոյ կամքին եւ հակառակ Անոր կամքին գործեցին այդ մեղքը, անոնք իրենց մեղաւորութիւնը չընդունեցին, այլ՝ շարունակեցին բնական կերպով ապրիլ: Նոյնիսկ, երբ Աստուած ձայն տուաւ անոնց, անոնք իրենց մերկութիւնը ծածկելու համար պարտէզի ծառերուն մէջ պահուրտեցան, եւ սկսան Աստուծոյ հետ վիճաբանիլ՝ փոխանակ իրենց մեղաւորութիւնը ընդունելու եւ Աստուծոյ ներողութիւն խնդրելու, անառակ որդիին նման, ըսելով. «Հայր, մեղայ առաջի քո», այսինքն՝ «ո՛վ Հայր, առջեւդ մեղք գործեցի» (Դուկ ԺԵ. 21), կամ ինչպէս քարոզիս բնաբանին մարգարտահիւս շարականին բառերը կըսեն. «Մեղաք անօրինեցաք ամենեքեան, ո՛չ պահեցաք զպատուիրանս քո», այսինքն՝ մենք բոլորս անօրէնութիւն գործելով մեղանշեցին եւ Քու պատուիրաններդ չպահեցին-չգործադրեցին: Հետեւաբար, մեղք երկրորդ երեսը, սիրելիներ, կարելի է ըսել չզղջալու կամ չապաշխարելու հանգամանքն է, այսինքն՝ մեղքը գործելէ ետք, մեղքի մասին չզղջալն ու ներողութիւն չխնդրելը:

Ադամական մեղքի երրորդ երեսը, սիրելիներ, մեր կատարած սխալներուն համար ուրիշներ յանցաւոր կամ մեղաւոր նկատելն է: Հետաքրքրական է, չէ՞, որ երբ անոնց մեղք գործեցին՝ «Ադամն ու իր կինը Տէր Աստուծոյ երեսէն պահուրտեցան՝ պարտէզի ծառերուն մէջ» (Ծննդ. Գ. 8): Երբ Աստուած Ադամին հարցուց, թէ՛ «արդեօք կերա՞ր այն ծառէն, որմէ պատուիրած էի քեզի չուտել» (Ծննդ. Գ. 11), Ադամը իր յանցանքը չխոստովանեցաւ, այլ մեղադրեց իր կինը՝ Եւան, ըսելով. «Այն կինը, որ ինծի տուիր, ա՛ն տուաւ ինծի այդ ծառի պտուղէն, եւ ես կերայ» (Ծննդ. Գ. 12): Եւան եւս նոյն ձեւով վարուեցաւ, երբ Աստուած հարցուց անոր, թէ՛ «այդ ի՞նչ ըրած ես», ան չընդունեց իր մեղաւորութիւնը եւ մեղադրեց օձին, ըսելով. «Օձը խաբեց զիս եւ ես կերայ» (Ծննդ. Գ. 13): Ահաւասիկ ուրիշ երես մը եւս Ադամական մեղքին, որն է ուրիշները մեղադրել մեր սխալներուն համար: Մենք ալ մեղք կը գործենք եւ ժամանակ առ ժամանակ,

ուրիշները կամ կեանքի պայմանները, հանգամանքները կը մեղադրենք՝ զանոնք նկատելով մեր մեղաւորութեան պատճառը. «Կեանքիս պայմանները դժուար են», կամ «գործս այդպէս կը պահանջէ», կամ «բարեկամներս ստիպեցին ինծի», եւ այլն: Այդպիսով, երբ մեզք կը գործենք, ո՛չ միայն չենք ընդունիր այդ մեղքը, ո՛չ ալ կը զղջանք մեր գործած մեղքին համար, այլ՝ մեր շարագործութեան համար ուրիշները եւս կը մեղադրենք:

Բայց այսքանն ալ բաւարար չէ, սիրելիներ, Ադամի եւ Եւայի մեղքի չորրորդ երեսն ալ կայ, այն է, որ անոնք փորձեցին մեղքը բնական դարձնել ու ընդհանրացնել: Ադամն ու Եւան ծառին պտուղը իրարու հետ կիսուեցան, որպէսզի մէկը միւսին չըսէ ատիկա սխալ է եւ Աստուծոյ կամքին հակառակ է:

Բոլորս ալ կը զգանք մեր ամէնօրեայ կեանքին մէջ, որ այսօրուան կեանքին եւ մեր ապրած աշխարհին մէջ հոսանքներ կան, որոնք կը փորձեն մեր ազգին, մեր հայրերուն մեզի կտակած աւանդութիւններուն եւ մեր դաւանութեան խորթ ու հակառակ սովորութիւններ ներմուծել մեր կեանքէն ներս, այդ խորթ եւ օտար սովորութիւնները ներկայացնելով որպէս բնական երեւոյթներ, որպէս նոր ապրելակերպ: Կը փորձեն համոզել մեզի, որ մեր պապեանական ապրած քրիստոնէական կենցաղը պարզապէս ձեւ մըն է, բայց ուրիշ ձեւեր ալ կան: Եւան կերաւ, Ադամին ալ տուաւ: Ադամն ալ կերաւ, որպէսզի միասին ըսեն, թէ՛ «միասին կերանք»: Օրինակ, Մեծ պահքի այս օրհնեալ օրերուն, ոմանք կ'ըսեն ինծի. «Սրբազան հայր, չորս կողմս շատ մարդիկ կան, որոնք պահք չեն պահեր: Դուք իրապէ՞ս պահք կը պահէք»: Կամ, «այսօր քանի՞ հոգի պահք կը պահէ»: Այլ խօսքով, բնական երեւոյթ է, որ այսօր պահք չպահենք, որովհետեւ մեր շրջապատին մէջ շատ շատերը պահք չեն պահեր: Ահաւասիկ, Ադամական մեղքի մէկ ուրիշ խորքային երեսակը:

Ի վերջոյ, Ադամական մեղքի հինգերորդ երեսը կարելի է նշմարել, որ ամբարտաւանութիւնն է: Ադամն ու Եւան սատանայէն խաբուեցան, կարծելով, որ հիմա իրենք այլեւս ճշմարտութիւնը ունին աւելիով, ինչքանով որ Աստուած տուաւ իրենց: Սատանան ըսաւ, եթէ ուտէք՝ «ձեր աչքերը կը բացուին եւ աստուածներու նման կ'ըլլաք» (Ծննդ. Գ. 5): Այսօր, սիրելիներ, վստահ եմ, որ մարդիկ կան, թերեւս դուք ալ ճանչնանք, որոնք կը կարծեն, թէ իրենց ունեցած գիտելիքով, իրենց ուսումով, իրենց զբաղեցուցած պաշտօնով ու դիրքերով, իր հարստութեամբ՝ Աստուծմէ շատ աւելի լաւ գիտեն: Անոնք համար Աստուծոյ պատուիրանները 2000 տարի

առաջ երրայական գիրքի մը մէջ արձանագրուած գրութիւններ են՝ եւ ո՛չ աւելին: Ոմանք կ'ըսեն. «Սրբազան, մենք այսօր 21-րդ դարուն մէջ կ'ապրինք: Մենք մեր ուսումով եւ գիտութեամբ կ'որոշենք, թէ ո՞րն է ճիշդը եւ ո՞րն է սխալը»:

Այսպիսով, սիրելիներ, կը տեսնենք որ հինգ երեսներով Ադամական մեղքը շատ իրական է ու ներկայութիւն է մեր այսօրուան կեանքին մէջ եւս: Այս հինգ երեսները շեշտելով, կը տեսնենք, որ Ադամի մեղքին խորքը, պարզապէս ծառին պտուղէն ուտելը չէր, այլ՝ հակառակիլը Աստուծոյ կամքին, մերժելը որ մենք սխալ ենք, մեր մեղքերուն համար ուրիշները մեղադրելը, փորձել մեղքը բնական դարձնելը եւ ուրիշներուն հրաւիրելը մեղսակից, յանցակից ըլլալու եւ ապա համոզուած ըլլալ, որ մենք ճշմարտութիւնը գիտենք, եւ այդ ճշմարտութիւնը մեզի համար աւելի լաւ ու յարմար է քան Աստուած եւ մեր Եկեղեցւոյ դարաւոր Սուրբ Աւանդութիւնը, որով մեր հայրերը, մեր նախնիները երկա՛ր դարեր ապրած են:

Այս բոլորը ըսելէ ետք, մեզի կը մնայ ուրիշ հարցումի մըն ալ պատասխանել: Տեսանք, որ Ադամին ու Եւային գործածը շատ մեծ մեղք էր, սակայն, Աստուած ինչո՞ւ չներեց անոնց, մանաւանդ որ, մենք գիտենք թէ Ան ներողամիտ Աստուած է: Այստեղ աստուածաբանական ուրիշ կարեւոր ճշմարտութիւն մը կայ, որ Աստուածաշունչի էջերէն կը քաղենք, որու վրայ կեդրոնացած են մեր Եկեղեցւոյ հայրերը: Այդ ճշմարտութիւնը հետեւեալն է, որ Աստուծոյ ներկայութեան մէջ՝ չարը եւ չարագործները չեն կրնար գոյութիւն ունենալ, ինչպէս խաւարը լոյսի ներկայութեամբ չի՛ կրնար գոյատեւել: Փորձեցէք խաւար ստեղծել եւ ապա լոյսի ճառագայթներ տարածէք այդ խաւարին վրայ, ու կը տեսնէք թէ ինչպէս խաւարը անմիջապէս կը փարատի: Աւելցնենք, որ խաւարը չի՛ կրնար լոյսին ըսել, թէ՝ «քիչ մը նստինք ու խօսինք իրարու հետ, եւ փորձենք՝ թերեւս կը համաձայնինք», այլ՝ լոյսի ներկայութեան խաւարը անմիջապէս կ'ոչնչանայ: Այդպէս ալ, կեանքի ներկայութեամբ մահը արմատախիլ կ'ըլլայ: Ահա թէ ինչու, երբ Աստուած իմացաւ որ Ադամն ու Եւան մեղանչեցին եւ Իր օրէնքներուն հակառակ գործեցին, Աստուած լաւապէս իմացաւ, որ անոնք այլեւս պիտի ոչնչանան եթէ Իր ներկայութեան մէջ մնան, ինչպէս Դաւիթ Մարգարէն կ'ըսէ. «Որովհետեւ Դուն անօրէնութեան հաճութիւն տուող Աստուած չես: Չարը Քու քովդ չի՛ կրնար բնակիլ: Ամբարտաւանները չեն կրնար Քու աջքիդ առջեւ կենալ: Դուն բոլոր անօրէնութիւն գործողները կ'ատես» (Սաղմ. Ե. 4—5): Նոյն միտքը կը կրկնէ Ամբակում

Մարգարէն, երբ Աստուծոյ աղօթելով, կ'ըսէ. «Դո՛ւն, որուն աչքերը չարութիւն տեսնելու համար մաքրամաքուր են եւ չարութեան չեն կրնար նայիլ» (Ամբ. Ա. 13), այսինքն՝ չարութիւնը կ'ոչնչանայ եթէ նայուածքդ իր վրայ իյնայ:

Չարին ու չարագործին ոչնչանալը Աստուծոյ ներկայութեան մէջ արձանագրուած կը գտնենք մեր Եկեղեցւոյ գրականութեան մէջ եւս: Սուրբ Յովհան Օձնեցի Կաթողիկոսը ամէն օր զԱստուած փառաբանելով, կ'աղօթէ Անոր, ըսելով. «Դուն ես գովելի լոյսը, սուրբ եւ առաջին լոյսը: Խաւարը կը փախչի Քեզմէ: Տէ՛ր, Քու կենդանի լոյսդ ծագեցո՛ւր մեր սիրտերուն վրայ» (Ժամագիրք): Նոյն միտքը կը ներկայացնէ Սուրբ Գրիգոր Նարեկացին իր՝ Քրիստոսին ուղղած աղօթքին մէջ, ուր կ'ըսէ, թէ՝ «Կենդանի Աստուծոյ Որդի, Որմէ խաւարը կը փախչի, մէզը կը հեռանայ, մառախուղը կը մերժուի, մռայլութիւնը կը փարատի, աղջամուղջը կը սպառի, մութը կը վերանայ, գիշերը կ'անցնի, տագնապը կը տարագրուի, չարիքը կը չքանայ, յուսահատութիւնները կը հալածուին» (Մատեան Ողբերգութեան, Բան ՂԴ.):

Հետեւաբար, Աստուած երկու կարեւորութիւններէն մէկը պիտի ընտրէր. կամ ձգեր որ Իր ստեղծագործութիւնը, Իր ձեռագործը, մեղքով մթնած՝ ոչնչանայ, կամ ժամանակաւորապէս ուրիշ տեղ մը պիտի ղրկէր, ուր Աստուծոյ ներկայութիւնը անմիջական չէր եւ ուր չարը կրնար գոյատեւել, միաժամանակ առիթ ունենալով ապաշխարութեան եւ զղջումի միջոցով վերստին յաւիտենական կեանքին արժանանալու: Ահա թէ ինչու Աստուած որոշեց Ադամն ու Եւան փրկել եւ անոնց միջոցով նաեւ՝ մարդկութիւնը, զանոնք Եդեմական պարտէզէն արտաքին աշխարհ փոխադրելով ու առիթ տալով որպէսզի անդրադառնան իրենց գործած մեղքին եւ իրենց ազատ կամքով որոշում կայացնեն վերադառնալ Աստուծոյ անմիջական ներկայութեան, թէ ոչ:

Սիրելիներ, Եկեղեցին Արտաքսման Կիրակին Մեծ պահքի սկզբնաւորութեան դնելով, որպէս երկրորդ Կիրակի, ատով շատ յստակ պատգամ ունի մեզի փոխանցելիք: Մենք եւս, մեր կեանքի ընթացքին Ադամի նման երբեմն-երբեմն ո՛չ միայն կը մերժենք Աստուծոյ կամքը, այլ՝ կը հակառակինք եւս, չեն զղջար մեր մեղքերուն համար, ո՛չ ալ ներողութիւն կը խնդրենք մեր Երկնաւոր Հօրմէն: Մենք եւս, կը փորձենք ընդհանրացնել մեր սխալ կենցաղակերպն ու սովորութիւնները, որպէսզի մեր խիղճը հանգիստ ըլլայ: Մենք եւս, մեր նմանները եւ կեանքի պայմանները կը

մեղադրենք՝ մեր մեղքերուն համար: Եկեղեցին, Արտաքսման Կիրակիի խորհուրդով մեզի կը հրաւիրէ, որ Ազամական մեղքէն սորվինք չփորձել կրկնել նոյն մեղքը եւ մեր կեանքի ընթացքին ջանք թափենք, նախ հասկնալու Աստուծոյ կամքը, ապա՝ մեր կեանքը Աստուծոյ կամքին համաձայն ապրիլ: Աստուծոյ կամքը հասկնալը կը պահանջէ մեզմէ եկեղեցի երթալ, քարոզներ լսել, ծէսերուն մասնակցիլ, քահանաներուն հետ զրուցել ու խորհրդակցիլ, Սուրբ Գիրք կարդալ եւ աղօթել:

Այս բոլորն ալ տարբեր միջոցներ են, որպէսզի մենք կարենանք նախ Աստուծոյ կամքը հասկնալ, ապա մեր ազատ կամքով որոշենք թէ կ'ուզենք այս կամքին հնազանդիլ, կամ որ: Որոշում կայացնելէ ետք, սիրելիներ, երրորդ քայլ մըն ալ ունին կատարելու, որն է քաջութիւն ունենալ այդ որոշումը գործադրելու մեր կեանքին մէջ՝ հակառակ սատանային կողմէ մեր դէմ կատարուող փորձութիւններուն: Մենք փորձենք մեր որոշումներուն հաւատարիմ մնալ եւ իրագործենք զանոնք մեր կեանքին մէջ:

Այսպիսով, սիրելիներ, մեր Մայրը՝ Սուրբ Եկեղեցին, այսօրուրնէ սկսած մեզի առիթ կ'ընծայէ, որպէսզի անդրադառնանք մեր հաւատքին ու մեր կեանքին, կեդրոնանանք մեր որոշումներուն եւ մեր քայլերուն վրայ եւ մեր նախընտրութիւնները յստակացնենք, որպէս անձեր, անհատներ, ինչու չէ նաեւ որպէս հաւաքականութիւն, որպէս ընտանիք ու ազգ, յայտնաբերելու համար թէ արդեօք կառչած ենք Աստուծոյ կամքին, կամ ոչ:

Այսօրուան եւ յառաջիկայ Կիրակի օրերու խորհուրդներով Եկեղեցին պիտի հզօրացնէ ու առաջնորդէ մեզ, պիտի ամրապնդէ մեր հաւատքն ու նուիրումը Աստուծոյ կամքին, որպէսզի պահեցողութեան վերջաւորութեան արժանի ըլլանք տօնելու տօներու Տօնը, յաղթանակի հրաշքը մահուան ու մեղքի վրայ՝ Հրաշափառ Յարութիւնը մեր Փրկիչին եւ Տիրոջ Յիսուսի Քրիստոսին, Որուն վայել է Փառքը, Իշխանութիւնը եւ Պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:



Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲ ԱՄԵՆԱՊԱՏԻՒՄ Ս. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԼՍՈՒՄ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՈՒԼՍՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(25 փետրուար 2024)

Նախ շնորհակալութիւն կը յայտնեմ լուսարարապետ գերշ. Մուշեղ սրբազան եղբօր եւ նաեւ Մայր Աթոռի միաբանութեան՝ Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ: Միշտ որ կ'այցելեմ Մայր Աթոռ, մեծ պատիւներով կը դիմաւորեն ինծի եւ փարգեւելու այս թանկագին պահը ինծի կ'ընծայեն:

Գերագոյն հոգեւոր խորհուրդի ժողովներուն հարկաւ թէ եկեղեցին հետաքրքիր հարցեր խօսուեցան, որոշումներ առնուեցան: Հաւանաբար ամբողջ հայութիւնը հետաքրքիրը այդ թանկագին որոշումը այն էր, որ սեպտեմբեր ամսուան 28ին եւ 29ին Մայր տաճարի օծման եւ նոր միտոնի օրհնութեան արարողութիւնները պիտի կատարուին: Այնպէս որ անհամբեր ժողովուրդը իր սուրբ տաճարին հետ պիտի ողջագուրուի, եւ երախաները, եկեղեցականները, տաճարները թարմ միտոնով պիտի օծուին: Աղօթեմք, որ Աստուած մեզի այդ առիթը տայ, որովհետեւ քանի մը անգամ այդ առիթները հասան, բայց ամբողջ Հայ աշխարհը ցնցող դէպքեր պատահեցան, եւ մենք չկրցանք այս սրբազան արարողութիւնները կատարել:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, Մեծ պահքի կիրակիներէն հասանք Անառակի կիրակիին: Իր անունը կ'առնէ Տէր Յիսուսի պատմած առակներէն մէկէն, բայց իրականութեան մէջ Յիսուս կորսուածութեան մասին երեք առակ պատմեց Ղուկասի Աւետարանի 15րդ գլխուն մէջ: Աստուածաբանները այս գլուխը կը կոչեն Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանը: Որովհետեւ Տէր Յիսուս առակներով պատմեց, թէ ինչու համար եկաւ աշխարհ: Ինչպէս կորսուածը գտնէ, եւ որքան կորսուած հոգիները եւ մեղաւորները թանկագին են Աստուծոյ համար: Այդ երեք առակները պատմեց: Կորսուած ոչխարը, կորսուած դրամը եւ կորսուած երկու որդիներու առակը: Ամէն անգամ, որ կը կարդամ, կը կեդրոնանամ, ու որոշ կէտեր

ցայտուն կերպով աչքիս կը զարնեն: Այս տարի ի՞նչ տպաւորեց ինծի, անոր մասին կ'ուզեմ խօսիլ. քանի մը կէտեր:

Անոնցմէ մէկը սա է. ինչո՞ւ համար մարդուն այսքան հոգ կը տանի Աստուած: «Աստուած այնքան սիրեց աշխարհը, մարդկութիւնը, որ Իր Միածին Որդին տուաւ: Այնպէս որ անոր հաւատացողը չկորսուի, այլ՝ ունենայ յաւիտենական կեանք»: Մարդը որ կը ծնի, կ'ուտէ, կը խմէ եւ տարիներ կը բոլորէ յետոյ հողէ հող կը վերադառնայ: Այսպիսի արարածին համար, անասնական աշխարհը արարածներէն միոյն համար ինչո՞ւ այսքան մտահոգութիւն:

Ուրեմն, սիրելիներ, Տէր Յիսուս մեզի՝ հաւատացեալներուն եւ մեղաւորներուն կ'ըսէ, որ մարդուն մէջ այնպիսի թանկագին բան մը կայ, որ այս պարզ աչքերով կարելի չէ տեսնել: Զայն Աստուած կը տեսնէ: Հետեւաբար ան, որ Աստուծոյ լուսով լուսաւորուած է, ան կը հասկնայ, որ ամենէն յետին անձին մէջ, նոյնիսկ ամենէն մեղաւորին մէջ, նոյնիսկ անյոյս կորածին մէջ շատ թանկագին բան մը կայ, եւ Աստուած կ'ուզէ անիկա ետ առնել:

Երբ որ հինգ օրերուն Աստուած ստեղծեց ինօրկանիք եւ օրկանիք բուսական եւ կենդանական կեանքը, յետոյ ուզեց, որ Ինքը միջրոքող-մոս ստեղծէ, այսինքն՝ փոքր տիեզերք: Հաւաքեց այդ բոլորը եւ նաեւ հրեշտակային կարողութիւնները շաղախեց մարդուն մէջ եւ չբաւեց Իր շունչը փչեց անոր, եւ մարդը ապրող արարած դարձաւ Աստուծոյ նմանութեամբ: Խնդիրը սա է. այն շունչը, որ Աստուած փչեց, տակաւին մեր մէջն է: Այսինքն՝ այս շունչը, որ կ'առնենք եւ կուտանք, Աստուծոյ հետ միասնաբար կ'առնենք եւ կուտանք: Երբեք չէ բաժնուած ան մեզմէ: Անոր համար Յիսուս Իր եւ մարդկութեան հետ ունեցած յարաբերութիւնը, երբ որ կ'ուզէր պատկերացնել, ըսաւ. «Ես եմ որթատունկը, դուք իմ ճիւղերս էք»: Ինչպէս որթատունկը իր ճիւղերուն մէջ է միշտ եւ կ'ապրի եւ պատճառ կը դառնայ, որ պտուղ տայ, այդպէս ալ մարդը Աստուծոյ հետ է: Բայց կեանքի մեծ փորձառութիւնը մեզի կ'ըսէ, որ որքան մենք հասկնանք գործիքի մը արժէքը, զայն շինող ճարտարագէտին պէս չենք կրնար հասկնալ: Որքան մենք իմանանք մեր մարմնի առողջութիւնը, չենք կրնար բժիշկի մը շափ անոր արժէքը իմանալ:

Ուրեմն այստեղ արժէքը իմանալու մէջն է: Աստուած մարգարէներու միջոցաւ եւ ի վերջոյ Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւ ըսաւ, որ դուք՝ բոլորդ, անգին էք, ես կը սիրեմ ձեզ, եւ ձեր արժէքը չկորսուիր ձեր մեղ-

քերով: Եթէ ձեր ամուսնութեան ոսկի մատանին գետին իյնայ՝ ցեխերուն մէջ, ի՞նչ կ'ընէք: Նորը կ'առնէք, թէ՛ ձեր ձեռքը ցեխին մէջ կը մխրճէք ու կը փնտռէք եւ երբ որ գտնէք, կը տեսնէք, որ ցեխոտ է, բայց գիտէք, որ կարելի է մաքրել ջուրով, թէ՛ ձեր ձեռքը եւ այդ մատանին, եւ ան վերստին իր արժէքը կը ստանայ:

Ուրեմն, մեղքը ի՞նչ կ'ընէ մարդուն: Քրիստոնեայ աշխարհի աստուածաբանները երկու տեսակէտ ունին. կաթոլիկեան եւ ուղղափառ հաւատքը մարդուն մեղաւոր վիճակը տարբեր կը հասկնան: Կաթոլիկէ աշխարհը եւ անկէ ազդուած բողոքական աշխարհը կ'ըսէ4 որ մեղքը մարդուն ամբողջ էութիւնը կ'աւրէ: Չկայ անկիւն մը, որ մեղքով ինկած չըլլայ: Հետեւաբար այս ինկած մարդը նորոգել կարելի չէ: Այս մարդը միայն կը փրկուի Տէր Յիսուս Քրիստոսի արիւնով: Մեղաւորը նոր պատմութեան՝ Յարութեան պատմութեան կը հագուի եւ այդպէս կը կենայ Աստուծոյ առջեւ՝ միշտ մեղաւոր: Եւ իր էութեան մէջ այդ մեղքէն փրկուած ըլլալու գիտակցութիւնը կրելով՝ խոնարհաբար կ'ապրի նոյնիսկ երկինքի մէջ, նոյնիսկ դրախտի մէջ:

Այո՛: Ասիկա փաստելիք շատ համարներ կան Աւետարանին մէջ, որ հաւատքով կը փրկուինք: Իսկ ուղղափառ աստուածաբաններ կ'ըսեն, որ մարդուն էութեան մէջ քանի որ Աստուած ալ կը բնակի, այնպիսի կէտ մը կայ, որ մարդը իր բոլոր մեղքերով հանդերձ չկրնար հասնիլ այլ խորունկութեան: Եւ այդ խորութիւնը, որպէս անմեղ մանուկ, միշտ մարդուն մէջն է: Ուրեմն, երբ որ մենք արտաքին աշխարհէն կը ստանանք բարի լուրը՝ աւետիսը, եւ հաւատքով Տէր Յիսուս Քրիստոսին կը միանանք, ուրեմն կը միանայ այդ ներքին լոյսը, անմեղանչելի մասը մեր մնացեալ մասերուն հետ, եւ կարելի է նոր արարած դառնալ: Կարելի է նորոգուիլ: Հոնկէ սկսելով նոր մարդ դառնալ:

Ուրեմն, սիրելիներ, Աստուած մեզի այս կը սորուեցնէ Ղուկասու Աւետարանի 15րդ գլխուն մէջ: Կ'ըսէ, որ բոլորդ թանկագին էք, եւ ես կ'ուզեմ, որ ետ դառնաք: Բայց խնդիր մը կայ: Երկրորդ կէտը: Մարդուն ամենէն մեծ խնդիրը դրախտէն սկսեալ մինչեւ այսօր ունեցած հարստութիւնն է: Մենք հարուստ հայր մը ունինք, մարդը հարուստ ստեղծած է: Հարուստ միջավայրին մէջ դրած է: Դրախտին մէջ դրած է: Տակաւին այս աշխարհը դրախտ է, տակաւին մենք շատ հարուստ ենք: Տէր Յիսուս Քրիստոս Անառակ որդիի առակին մէջ կը պատմէ, որ Աստուծոյ մեղաւոր զաւակներն ալ, հարուստ զաւակներն ալ այս հարստութեան հետ խնդիր ունին:

Կարող չեն այդ հարստությունը կառավարելու: Մեղաւորները վատնելով կը գործածեն այդ հարստությունը ի վնաս իրենց, հաւատացեալներու 99 տոկոսն ալ երբեք չեն գործածեր, նման՝ մեծ որդիին: Ինչ կ'ըսէ, երբ որ իր եղբայրը կը դառնայ, բարկութեամբ իր հօր կը դառնայ եւ կ'ըսէ. «Այսքան տարիէ ի վեր կը ծառայեմ քեզի, ինծի ու մը իսկ չտուիր, որպէսզի բարեկամներուս հետ ուրախանամ: Երբ որ քու մեղաւոր որդիդ կերաւ քու ունեցուածքդ, անոր համար պարարտ եզը մորթեցիր եւ ընդունեցիր զայն»: Եւ Տէրը կ'ըսէ, որ այստեղ հայրն է. «Որդեակ, ինչպէս կարելի է քու ըսածդ ճշմարիտ ըլլայ: Եղբայրդ երթալէ յետոյ ժառանգին ամբողջությունը քուկդ էր: Դուն երբ ուզեցիր, որ բարեկամներուդ հետ ու մը ուտել, եւ ես արգիլեցի: Ինծի հարցնելու նոյնիսկ պէտք չունէիր: Դուն կրնայիր պարարտ եզը մորթել եւ ուրախանալ, բայց չես ըրած անիկա: Ուրեմն, սիրելիներ, մեր խնդիրը Աստուծոյ ճամբաներուն մէջ մեր հարստությունն է: Վստահեմ, որ այստեղ շատեր իրենք զիրենք հարուստ չեն տեսներ, որովհետեւ հարստությունը դրամական հարստութեամբ չափուած է:

Ինչ պէտք է ըլլայ, որպէսզի հասկնաք, թէ ի ծնէ դուք հարուստ էք: Երկրաշարժ պէտք է, որ կորսնցնէք դուք ձեր ամէն ինչը եւ վրանի մէջ մնաք կորսնցուցած՝ ձեր զաւակները, ընկերները եւ վիրաւոր ու ըսէք, որ ես հարուստ եմ եղեր, հիմա կը հասկնամ: Մենք հարուստ ենք, աչքեր ունինք եւ ան աշխարհի գեղեցկությունները կրնանք վայելել: Ականջներ ունինք եւ ձայներու երաժշտությունը կրնանք վայելել: Բերան ունինք խօսելու: Իմացություն ունինք դատելու եւ ստեղծագործելու: Փառաւոր յիշողություն ունինք մենք, ձեռքեր ունինք ստեղծագործ: Մեր ուզած տեղը ազատօրէն կ'երթանք, եւ այս մեծ հարստություն է մեր, փորձությունը այդ հարստութենէն կուգայ:

Դրամով մեծահարուստներուն ամենէն մեծ խնդիրներէն մէկը ինչ է: Իրենց զաւակները, ինչպէ՞ս պիտի կրթեն: Եթէ իրենց ամբողջ հարստությունը շուայլեն անոնց համար, գիտեն, որ պիտի չկարողանան զայն օգտագործել: Իսկ եթէ շատ զրկեն, այս անգամ ալ կարելի է իրենց սիրտը դառնութեամբ լեցուի իրենց հօրը նկատմամբ: Հետեւաբար մեծահարուստները այս երկուքը շատ նրբօրէն պէտք է չափաւորեն: Քսան տարիներ առաջ դէպք մը պատահած է Հայաստան: 2005ին եկած ատենս պատմած էին: Մեծահարուստներէն միոյն որդին արկած մը անցուցած է եւ մեռած: Տղան կը թաղեն եւ յետոյ այս մեծահարուստ-

տը տղուն արկած ըրած Մէրսէտէսն ալ կը թաղէ: Երբեմն այդ ճամբայէն անցած ատենը ինծի ցոյց կուտային, այստեղ թաղուած է Մէրսէտէսը: Ուրեմն այս մեծահարուստը հաւանաբար շատ բարկացած է իր հարստութեան վրայ: Եթէ այդ հարստութիւնը չըլլար, կարելի է իր որդին ապրէր: Ուրեմն իր որդիին յանձնած է բան մը, զոր ինքը կարող չէ կառավարել:

Ուրեմն, մեղաւորներու խնդիրը այդ հարստութիւնը շահագործել, չարագործել է, իրենց հաճոյքներուն համար: Ստորին ցանկութիւններու համար: Եւ կը վատնուի անիկա: Ինչ է երիտասարդութիւնը: Մեր ձեռքի վառած մոմի պէս է: Կը հալի: Բայց Յիսուս այս առակը չպատմեց անառակ որդիին համար, մեծ որդիին համար պատմեց: Այսինքն՝ փարիսեցիները, որ կը տեսնէին մեղաւորները, Յիսուսին կուգային, եւ Ան կ'ընդունէր զանոնք, նաեւ անոնց հետ կ'ուտէր: Ընդունիլը մասամբ կարելի է, մեղաւորները ընդունէ եւ խրատէ անոնց: Բայց միասին ուտելը աններելի մեղք էր: Սուրբը մեղաւորին հետ ինչպէ՞ս հաւասար կրնայ ըլլալ: Որովհետեւ սեղանը հաւասար կը դարձնէ մեր բոլորը: Եւ Տէր Յիսուս տեսաւ, որ հաւատացեալներու մէջ հաւատացեալներն ալ Աստուծոյ իրենց տուած հարստութիւնը գործածելու մէջ շատ ժլատ են: Կը ծառայեն Աստուծոյ, Աստուծոյ տան մէջ են, պաշտամունքներուն կը մասնակցին, բայց չեն կրնար ճաշակել Աստուծոյ գեղեցկութիւնը եւ քաղցրութիւնը: Այդ սաղմոսի խօսքերը խոտոր է իրենց համար. «Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր. Զի յաւիտեան է ողորմութիւն նորա»:

Ուրեմն, մենք կրօնքի կալուածին մէջ շատ հարուստ ենք: Կրօնք ըստածը վէպի շնմանիր, որ առնես եւ կարդաս: Կրօնքը հանրագիտարանի կը նմանի: Հարիւրաւոր յօդուածներով լեցուն է: Կ'առնես ինչ որ քեզի պէտք է, կը բանաս եւ այնտեղէն կը կարդաս: Կրօնքն ալ այդպէս է: Այնքան հարուստ կալուածներ ունի, որ հաւատացեալները անոնցմէ մէկուն բարին եւ իրենց ամբողջ կեանքը անոր շուրջը դառնալով անցնեն եւ երբեք խորը չթափանցեն:

Երանաշնորհ Շնորհք Պատրիարք, երբ իմացաւ, որ մեր ժողովուրդին մէջ Տէր Յիսուսի Աստուածութեան մասին կասկածներ կան, սկսաւ թէ՛ հայերէնով եւ թէ՛ թրքերէնով բացատրել, թէ՛ Քրիստոս Աստուած է: Ուրեմն, եկեղեցւոյ դպիրները, քառասուն տարուան սարկաւազները վազեցին եւ ըսին, որ մեր Պատրիարքը նոր բան մը կը սորվեցնէ մեզի: Մենք գիտենք, որ Տէր Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է եւ ոչ թէ Աս-

տուած: Հարկաւ թէ Շնորհք Պատրիարքը զարմացաւ, որովհետեւ ասոնք քառասուն տարի ծառայած են որպէս սարկաւագներ ու դպիրներ: Միշտ երգեր են: Անոնց կը հարցնէ. դուք գիտէք «Սուրբ Աստուած, Սուրբ եւ Հօր, Սուրբ եւ Անմահ, որ խաչեցար վասն մեր» երգը: «Ո՞վ է խաչուածը» կը հարցնէ. Սուրբ Աստուածը: Աստուած ե՞րբ խաչուեցաւ, կ'ըսեն: Խաչուած Աստուածը Յիսուս Քրիստոսն է եղեր: «Դուք հաւատամք չե՞ք գիտեր» կը հարցնէ: Կը պատասխանեն. «Անգիր գիտենք մենք: Մանկութենէ դպրոցէ սորուեր ենք չորրորդ դասարանէն»: «Աստուած Աստուծոյ, լոյս ի լուսոյ. Աստուած ճշմարիտ, Աստուծոյ ճշմարտէ ծնունդ եւ արարած» բառերը ի՞նչ կը նշանակեն: Իրենց գլուխը ծռելով, բայց տակաւին չհամոզուած, գացին այս մարդիկը: Բայց հարցը այստեղ է: Այս մարդիկը կը սիրեն եկեղեցին, այս մարդիկը ծառայելու պատրաստ են, բայց մնացեր են ժամերգութեան երգերու եւ Ս. Պատարագի արտաքին ձեւին մէջ: Որովհետեւ այդ արտաքինը այնքան հարուստ է, որ այդ հարստութիւնը մոռնալով չեն մտածած քիչ մը եւս խորանալ: Իրենց անգիր գիտցած շարականները ի՞նչ կ'ըսեն: Հոգ չեն ըրած:

Ուրեմն, մենք մեծ հարստութեան մէջ աղքատանալու վտանգը ունինք: Յիսուս մեզի համար պատմեց այս առակը եւ ըսաւ, որ անառակ որդիին փրկութիւնը, մեղաւոր մարդուն փրկութիւնը աւելի դիւրին է, քան թէ մեծ որդիին փրկութիւնը: Որովհետեւ մեծ որդին արդէն փրկուած ըլլալու, հաւատացեալ ըլլալու յաւակնութիւնը ունի: Այլընտրանք չունի իր մտքին մէջ: Ինքը կը կարծէ, որ շատ լաւ կը ճանչնայ իր հայրը: Որոշած է Հօրը աչքը մտնելու համար թագաւորէ աւելի թագաւորապաշտ դառնալ եւ այդպէս վարել չոր ու ցամաք հաւատացեալի կեանք մը:

Մեր կեանքը ինչպէ՞ս է: Մենք մեր հարստութեան տէր դարձանք: Այդ հարստութեան մենք մկրտութեամբ տէր դարձանք: Բայց հաւանաբար մկրտութեան պահուն չհասկցանք, թէ ինչ հարստութիւն ստացանք: Կամ երախայութեան ժամանակ մկրտուեցանք, որ բան մը չէինք հասկնար, կամ ալ մեծ հասակով, բայց առանց մտածելու, թէ ինչ կը նշանակէ այս մկրտութեան արարողութիւնը: Շատ ատեն մկրտելիները այնքան շատ էին, որ շատ շուտով մկրտուեցանք: Մկրտութեան բանաձեւը սա է. «Եկեալ յերախայութենէ ի Մկրտութիւն, մկրտի յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. գնեալ Արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի՝ լինել ժառանգակից

Քրիստոսի եւ տաճար Հոգւոյն Սրբոյ»։ Այս բոլորը ընդունելու ենք մենք։ Այս ժառանգութեան մէջ ո՞ր ենք։ Ս. Հոգիին Տաճարն ենք իրապէս։ Ունինք Քրիստոսի ժառանգը եւ կը գործածենք զայն։

Անցեալները դպիրներ ձեռնադրեցի։ Չորս աստիճաններէն մէկը երդմնազանցութիւնն է։ Այսինքն՝ դպիրներուն մենք կուտանք շար ոգիները հալածելու իշխանութիւն։ Կա՞յ այստեղ դպիր կամ սարկաւազ, որ այդ իշխանութիւնը կը գործածէ։ Չեմ կարծեր։ Որովհետեւ մենք մեծ որդիին տիպարն ենք, որ փարիսեցիներու տիպարն էր։ Շատ նախանձախնդիր էին իրենց հաւատքի նկատմամբ, բայց ալ աւելի կը շրջէին օրէնքներու հարստութեան մէջ։ Շաբաթ օրուայ օրէնքներու կիրարկման ամէն մէկ քայլին մասին տասնեւերկու հատորներ գրած էին, եւ տակաւին շէր աւարտած։

Ուրեմն, հարստութիւնը մեր մեծագոյն խնդիրն է դրախտէն սկսեալ մինչեւ այսօր։ Ինչպէ՞ս պիտի գործածես։ Անոր համար սուրբերը միշտ զգոյշ են հարստութեան նկատմամբ։ Ինչպէս Ս. Ներսէս Շնորհալի մեզի կը սորվեցնէ՝ ինչպէս աղօթել, որ այդ հարստութեան տէր դառնանք։ «Ամենախնամ Տէր, դիր պահապան աշաց իմոց զերկիւղ Քո սուրբ, ո՛չ եւս հայիլ յայրատ, եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս շարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զշարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց Քոց յամենայնի. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ բազմամեղիս»։ Ուրեմն, ձեր տան պարտականութիւնն է այս աղօթքը անգիր սորուիլ։ Չգիտցողներ թող սորուին, գիտցողներ աւելի յաճախ կրկնեն։ Առաւօտեան ամենէն կարելորդ աղօթքներէն մին է ասիկա։ Որպէսզի մենք այդ մեծ աստուածային հարստութիւնը, Աստուծոյ կամքին համաձայն գործածենք։ Ուրեմն, հարստութիւնը մեր մեծագոյն խնդիրն է։

Երկրորդ դասը, որ ես այս տարի այս առակէն ստացայ, այն է, որ անառակ որդին իր հարստութենէն բաժինը կ'առնէ, դրամի կը փոխէ, անառակ կեանքով օտար երկրի մէջ կ'ուտէ ու կը խմէ։ Երբ կը դառնայ իր հօր տունը։ Երբ որ ամէն ինչ լմննայ, սովը սկսի։ Հարցում. եթէ սովը սկսած չըլլար, քիչ մը այս դրամը աշխատցնէր, խելացի ըլլար եւ հարստութիւնը շարունակէր, իր հօր տունը կը դառնար։ Ուրեմն, օրհնեալ սով ըսուած բան մը կայ, որ մեղաւորը կ'ուղղէ դէպի Աստուած։

Մենք բոլորս այս սովը գիտենք, եւ այս սովը չապրողը գործ չունի հոս՝ այս եկեղեցիին մէջ: Այդ ներքին կապուածութիւնը Աստուծոյ: Այս աշխարհի մեզի տալիքները երբ կը լմննան բոլորովին, մենք մեր աչքերը կ'ուղղենք դէպի Աստուած: Անառակ որդին եսասէր է: Երկու տեսակ եսասէր էր: Երբ որ հօրմէն բաժնուեցաւ, իր եսը կը մտածէր, իր հարստութիւնն ու հանգիստը, հաճոյքները կը մտածէր: Ինքզինքը կը մտածէր միայն, եւ այս եսասիրութիւնը քիչ մնաց իր կործանման պատճառ պիտի դառնար: Հիմա կրկին եսասիրութիւն մը ունի: Կը ցաւի իրեն՝ ըսելով. Մեղք ինծի: Իմ Հօրս տունը նոյնիսկ աշխատաւորները առատ հաց ունին, եւ այստեղ կը տառապիմ: Խոզերուն կերած ուտելիքը չեն տար ինծի: Երթամ հօրս ապաշխարեմ, ըսեմ քեզի եւ երկինքի դէմ մեղք գործեցի, արժանի չեմ քեզի որդի կոչուելու: Քու ծառաներէն միոյն պէս ընդունէ զիս: Ուրեմն, կրկին եսասիրութիւնն է, որ անառակ որդին կը դառնայ, բայց այս ուղիղ եսասիրութիւն է:

Երբ որ Աստուած մեր մէջ եսասիրութիւնը դրաւ, անիկա նաեւ առողջ բան մըն է: Երկրորդ հրամանը ի՞նչ կ'ըսէ: Պիտի սիրես քու դրացիդ քու անձիդ պէս: Եթէ քու անձդ լաւ չես սիրեր, ինչպէ՞ս պիտի կրնաս սիրել քու դրացիդ: Ուրեմն անձը լաւ սիրելու, անձնասիրութեան կատարեալ ձեւը, ակը հասկնալն է: Դէպի Աստուած ուղղուիլն է եւ հասկնալ է, որ անկէ զատ՝ ուրիշ փրկութիւն չկայ, հարստութիւն չկայ, Ան է Փրկիչը: Հետեւաբար երբ որ մարդը կ'ըսէ, որ որքան թանկագին եմ ես, պիտի մեռնիմ եւ գերեզմանին մէջ որդե՛ր պիտի ուտեն զիս, այսպէս պիտի լմննայ հեքեաթը, չէ ես շատ թանկագին եմ: Պէտք է թանկագին ըլլամ: Ինծի յաւիտենական կեանք պէտք է: Ո՞վ կրնայ տալ ինծի, եթէ ոչ՝ Աստուած:

Ուրեմն, նայեցէք այստեղ օրհնուած սով մը կայ եւ չքաւորութիւն: Բոլոր մարդիկ իրենք զիրենք աղքատ կը կարծեն: Շատ քիչերն են, որ ձեզի խօսուած այդ հարստութիւնը կզգան: Ամէն մարդ պակասաւոր է: Բայց երբեմն այդ պակասը այնքան կը խստանայ, որ մենք կը սկսինք մտածել մեր կեանքին մասին, ապագայի մասին, յաւիտենական կեանքի մասին, կեանքի իմաստին մասին: Եւ այդ սովը այս վիճակը մեզի դէպի Աստուած կ'ուղղէ: Բայց բոլոր մարդիկ, որ հոգեւոր սովը կը զգան, դէպի Աստուած չեն ուղղուիր: Սով մը ունիմ, կ'ուզեմ անիկա ուրիշ բանով մը լեցնել: Բայց դէպի Աստուած չեն ուղղուիր: Անառակ որդին ինչո՞ւ Աստուծոյ կ'ուղղուի այդ սովի ժամանակ: Որովհետեւ յիշատակ ունի իր հօր

նկատմամբ: Գիտէ իր հօր քաղցրութիւնը, ողորմածութիւնը, այսինքն՝ ինքը յիշատակ ունի երկնաւոր Հօր մասին: Հետեւաբար մեղաւորը սոսկի մէջ նոյնիսկ ըլլայ, եթէ Աստուծոյ մասին տեղեկացուած չէ, պիտի չուղղուի Աստուծոյ: Եթէ չիմանար, որ հայր ունի երկնքի մէջ, պիտի չուղղուի դէպի այդ կողմը:

Եւ մենք այստեղ կը հանդիպինք մանկավարժական մեծ խնդրի մը: Մեղաւորը եթէ օր մը իր կեանքի Յիսուսին պիտի յանձնէ, պէտք է իմանայ իր մասին, երկնաւոր Հօր մասին, Ս. Երրորդութեան մասին, Եկեղեցիին մասին, Ս. Պատարագի մասին: Յ՛րբ պիտի սորուի ասիկա. իր ընտանիքէն եւ վարժարանէն: Անոր համար է որ, Հայ Առաքելական Եկեղեցին դպրոցներուն, Հայ Եկեղեցւոյ պատմութեան դասերուն վրայ այսքան բծախնդիր է եւ նախանձոտ: Որովհետեւ այդտեղ պէտք է մեր հայ աշակերտները իմանան, որ երկնաւոր Հայր մը ունին: Յետոյ պատանեկան, երիտասարդութեան ժամանակները պիտի գան, ինչ-ինչ մեղքերու մէջ թերեւս պիտի տապալին, բայց իրենց ուսուցուած այդ խօսքերը օր մը պիտի արթննան եւ ըսեն. Գիտենք, որ Եկեղեցի ունինք մենք: Գիտենք, որ աղօթք կայ, ապաշխարանք կայ, սիրոյ Աստուած կայ: Անոր երթանք եւ այդ փորձենք: Այդ փոքր ծառայութիւն մը չէ մարդկութեան համար: Պէտք է սոսկի մատնուած մարդկանց համար այլընտրանք ստեղծել: Հետեւաբար իրենք պէտք է իմանան, որ երկնաւոր Հայր մը կայ եւ անոր յիշատակը իրենց աչքին առջեւ պէտք է գայ: Պէտք է մենք այդ ուղղութեամբ քալենք:


Սիրելի եղբայրներ եւ քոյրեր,


Զրկանքներ ունիս, ունեցեր ես: Հիւանդութիւններ ունիս կամ ունեցեր ես: Զբաւորութիւններ, անգործութիւններ ունեցեր ես կամ ունիս: Դրամական ճգնաժամ ունիս: Դրացիներուդ հետ խնդիր ունիս: Այս չքաւորութեան պահը ինչպէ՞ս պիտի օգտագործես: Եթէ քեզի Աստուծոյ կ'ուղղեն, ամենէն օրհնուած պահն է ան: Հանգստութեան եւ հարստութեան ժամանակ պիտի չերթայիր Աստուծոյ, բայց այդ պատճառ դարձաւ, որ Աստուծոյ մօտենաս: Եւ պէտք է ըսենք Պօղոս առաքեալով. «Երբ որ տկար եմ, այն ատեն զօրաւոր եմ»: Որովհետեւ Աստուած կուգայ եւ տկարութիւնս զօրութեամբ կը լեցնէ:

Ուրեմն այս տաճարէն պէտք է բաժնուիս եւ քու աղքատութեանդ մասին մտածես եւ պէտք է ըսես, որ այս դժբախտ վիճակը ինձի Աստուծոյ կը մօտեցնէ, թէ՛ ոչ: Եթէ կը մօտեցնէ, օր մը պիտի գայ, աղքատ Ղազարո-

սին նման պիտի տեսնես, որ այդ պահը քու կեանքիդ ամենէն օրհնուած պահն է, որովհետեւ քեզի Աստուծոյ մօտ տարած է: Ծնրադրած եւ «Մեղայ Աստուծոյ» ըսած ես, օգնութիւն ուզած ես: Եւ Աստուած ալ եկեր ու ողջագործուեր է քեզի հետ: Քու բոլոր պէտքերդ տեղը բերեր է: Աստուծոյ համար կարեւորը այդ է, որ դուք վերագառնաք եւ Աստուծոյ հետ ողջագործուիք: Աստուած կը սպասէ այս ճամբուն վրայ տուն վերադարձող իր անառակ որդիներուն:

Տէրը օրհնէ ձեր բոլորը. ամէն:





Doi: 10.56737/2953-7843-2024.02-34

ԲԱԲԿԵՆ ՆԱՆՅԱՆ

ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻ ՀԱՍԱՊԱՏԿԵՐՈՒՄ՝

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հրեական մշակույթը, պատմական անցյալն ու կրոնական համակարգը միասին կազմում էին այն բնօրրանը, որտեղ ձևավորվեց եւ սկիզբ առավ քրիստոնեությունը: Հիսուսն ինքը հաստատում է համապարփակ այս կապի առկայությունը՝ ասելով. «Մի՛ համարի՛ք եթե եկի լուծանել զՕրէնս կամ զՄարգարէս. ոչ եկի լուծանել, այլ լնուլ» (Մատթ. Ե. 17):

Սկզբունքային այս ելակետից մեկնելով եւ գործադրելով գոյություն ունեցող պատմամշակութային, ծիսատոնաբանական եւ համեմատական կրոնագիտության ու աստվածաբանական վերլուծական մեթոդաբանությունները՝ անխուսափելիորեն հանգում ենք այն եզրակացությանը, որ հուդայականությունն իսկապես վիթխարի ազդեցություն է ունեցել քրիստոնեության վրա: Միանգամայն հասկանալի է, որ այս ազդեցությունն իբրեւ հետեւանք պետք է ունենար նաեւ իր ուրույն արտահայտությունը նոր կրոնի տարբեր ոլորտներում: Ընդունելով հանդերձ այս անվերապահ ճշմարիտ դրույթը՝ հարկ է, այնուամենայնիվ, խուսափել հուդայականությունն ու քրիստոնեությունը նույնականացնելու պարզունակ փորձերից: Տոնաբանական եւ հատկապես պաշտամունքային մեկ համակարգից անցումը մյուսին բարդ գործընթաց էր: Ինչպես կարող ենք համոզվել արմատներով հրեական կրոնից սերող Տյառնընդառաջի պարագայում, քրիստոնեականանալուց հետո այն ենթարկվում է արմատական վերաիմաստավորման՝ թե՛ խորհրդաբանական եւ թե՛ աստվածաբանական տեսանկյունից: Տյառնընդառաջը, արտահայտելով հրեական հիմնարար

^{1*} Ստացվել է՝ 12.01.2024, գրախոսվել է՝ 24.01.2024: էլ. հասցե՝ vasconani@yahoo.it:

օրենքների պահանջները, տոնաբանական բոլորովին նոր շեշտադրություն է առաջ բերում՝ կենտրոնանալով հատկապես Տիրոջ եւ Սիմեոնի հանդիպման վրա:

Ղուկասի նկարագրած պատմության քննությունը ցույց է տալիս, որ այն, ըստ էության, երկու միանգամայն իրարից տարբեր օրենսդրական պարտականությունների հնարամիտ համաձուլվածք է²: Ավելին. նյութի ուշադիր ուսումնասիրությունը մի կողմից երեւան է հանում ուշագրավ մի շարք տեղեկություններ, մյուս կողմից, սակայն, բացահայտում բազում հանգամանքներ, որոնք ուղղակիորեն բացակայում են ավետարանական շարադրանքում: Ահավասիկ վերոհիշյալ չհիշատակված պատմական եւ ծիսական հանգամանքների ամբողջական եւ, ամենակարեւորը, հավաքական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում առավել խոր եւ ճշգրիտ հասկանալ Հիսուսի մանկությանը վերաբերող այս կարեւորագույն դրվագի բուն իմաստը³:

Տյառնընդառաջ տոնի նախաքրիստոնեական հիմքում ընկած է հրեական երկու հիմնարար օրենք՝

ա. մաքրագործության օրենքը,

բ. անդրանիկների փրկագնման օրենքը:

ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ավետարանական վկայությունը

Ղուկասի Ավետարանում գտնում ենք հետեւյալ վկայությունը.

«Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի [...] (Ղուկ. Բ. 22): [...] Եւ տալ պատարագս ըստ ասացելոյն յօրէնս Տեառն զոյգս տատրակաց կամ երկուս ձագս աղանեաց⁴ (Ղուկ. Բ. 24)»:

² Տե՛ս I. MARSHALL, The Gospel of Luke A Commentary on the Greek Text, Michigan 1978, [Apple Books], էջ 279:

³ Ղուկասի Ավետարանում Մովսիսական օրենքի առանձնահատկությունների անտեսումը, պաղեստինյան տեղանքի վերաբերյալ ստույգ տեղեկությունների սակավությունը, հունարենի անթերի տիրապետումը, ինչպես նաեւ եբրայեցերեն բառերի ու հինկտալարանյան մեջբերումների բացակայությունը հիմք են տվել մի շարք գիտնականների ենթադրելու, որ երրորդ Ավետարանի հեղինակը ծագումով ոչ թե հրեա է եղել, այլ «երկրորդ եւ կամ երրորդ սերնդի քրիստոնյա»: Տե՛ս J. FITZMYER, The Gospel According to Luke I-IX, New York, 1981, էջ 35–47, R. BROWN, The Birth of the Messiah. A Commentary on the Infancy Narratives in the Gospels of Matthew and Luke, New York, 1997, էջ 235–241:

⁴ Արյան մաքրության համար նախատեսված ընծաները՝ «երկու տատրակս կամ երկու ձագս աղանեաց» (Ղեւտ. ԺԲ. 8) թոշունների միակ տեսակներն են, որոնք Օրենքն ընդունե-

Մովսիսական օրենքը

Աստվածահաստատ սույն օրենքն առաջին անգամ ի հայտ է գալիս Ղեւտացվոց գրքում.

«Կին ոք՝ եթէ սերմն առցէ եւ ծնանիցի արու, պիղծ լիցի զեւթն օր. ըստ աւուրց զատանելոյ դաշտանին իւրոյ պիղծ լիցի (Ղեւտ. ԺԲ. 2) [...] Եւ զերեսուն եւ զերիս աւուրս նստցի ի սրբութեան արեան իւրոյ. յամենայն ինչ սուրբ նա մի՛ մերձենայցէ, եւ ի սրբութիւնն մի՛ մտցէ, մինչեւ լցցին աւուրք սրբութեան նորա (ԺԲ. 4) [...] Եւ յորժամ ընուցուն աւուրք սրբութեան նորա ի վերայ ուստերն՝ կամ դստերն, ածցէ գառն տարեւոր յողջակէզ, եւ զոյգս աղանւնոյ կամ տատրակի՝ վասն մեղաց ի դուռն խորանին վկայութեան առ քահանայն: Եւ մատուցէ առաջի Տեառն, եւ քաւեսցէ վասն նորա քահանայն, եւ սրբեսցէ զնա յաղբերէ արեան նորա: Այս օրէն իցէ այնորիկ՝ որ ծնանիցին արու կամ էգ: Ապա թէ ոչ գտանիցէ ձեռն նորա բաւական լինել գառամբ, առցէ երկուս տատրակս կամ երկուս ձագս աղանւնեաց. զմին յողջակէզ եւ զմիւսն վասն մեղաց, եւ քաւեսցէ վասն նորա քահանայն, եւ սրբեսցի (ԺԲ. 6–8)»:

Հրեական կրօնը տարբերակում էր մաքրագործության պաշտամունքի երկու տեսակ. առաջինը՝ գալիք վնասից կամ վտանգից անփորձանք ազատվելու կարգը, իսկ մյուսը՝ բացառապէս անմաքրությունից սրբվելու կարգը⁵: Մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող մաքրագործման ծիսակարգը, որը հայտնի էր «Նիդգա»⁶ անվամբ, ըստ Մովսիսական օրենքի, անմաքրություն էր համարում ոչ թե ամուսինների մերձեցումը կամ ինքնին հղիության փաստը, այլ մասնավորապէս արյունահոսության եւ դաշտանի հետեւանքով առաջ եկած պարագաները⁷:

լի էր համարում զոհաբերության համար: Միլգրոմը Ղեւտացվոց գրքին նվիրված իր կոթողային ուսումնասիրության մեջ հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում, ըստ որոնց՝ ուգարիթական պաշտամունքը եւս նախընտրում էր տատրակներ եւ աղավիններ, մինչդեռ ծննդկան կնոջ մաքրագործման հիթիթական արարողության համար պահանջվում էր ծննդկանի կողմից զոհաբերված երկու թռչուն: Տե՛ս J. MILGROM, *Leviticus 1–16*, Doubleday 1991, էջ 758:

⁵ Տե՛ս Y. KAUFMANN, *The Religion of Israel: From its Beginnings to the Babylonian Exile*, Schocken Books, 1972, էջ 106–108:

⁶ Նշանակում է «դաշտան ունեցող կին»: Տե՛ս J. NEUSNER — A. AVERY-PECK, *The Routledge Dictionary of Judaism* = RDJ, Routledge, 2003, էջ 104:

⁷ Մեր օրերում «նիդգա»-ի օրենքն իսրայելացի առաջագեմ կանայք արժանացնում են լրջագույն քննադատության: Այն ընկալվում է հրեական հասարակության մեջ իբրեւ կնոջ դերի ու նշանակության նսեմացման հիմնական պատճառներից մեկը, որի արդյունքում կանայք դարեւ շարունակ զուրկ են մնացել հավասար հնարավորություններից ու ինքնար-

Ծիսական արարողակարգը

Ղեկտարացվող գիրքը հակիրճ ներկայացնում է ծեսի հետ կապված հիմնական պահանջներն ու ընթացակարգը, որոնցից պարզ է դառնում, որ ծննդկան կինը արու գավակ ծնելու պարագայում պարտավորվում էր 40-րդ օրը (7+33) ներկայանալ Տաճար եւ քահանայի ներկայությամբ կատարել մաքրագործման արարողություն՝ գառի եւ կամ երկու տատրակի զոհաբերությամբ: «Նիդդա»-ի օրենսդրական սահմանափակումները գերազանցապես պայմանավորված էին արյան առկայությամբ, որն անշուշտ ենթադրում էր ջրով մաքրվելու պաշտոնակարգ: Օրենքը պահանջում էր, որ յուրաքանչյուր կին հոգեւոր արձակում ստանալուց առաջ նախ ֆիզիկապես մաքրվեր: Այս առումով հույժ տարօրինակ է, որ Ղեկտարացվող գիրքն այստեղ ընդհանրապես չի հիշատակում ջրով ծիսական մաքրագործման արարողակարգի գոյության մասին: Մինչդեռ քաջ հայտնի է, որ անմաքրության այս կարգավիճակից դուրս գալու համար նախատեսված էր ընկղմում «միկվա»⁸-ում, որն էլ ըստ էության՝ խորհրդանշում էր հրեական ծիսական մաքրագործումը⁹: Ղուկաս ավետարանիչը եւս Ղեկտարացվող գրքի հետեւողությամբ նախընտրում է լուծություն պահանջել այս նյութի շուրջ:

Վերականգնելով Քրիստոսի ծննդյան 40-րդ օրվա հանգամանքները՝ կարող ենք փաստել, որ Մարիամ Աստվածածինը՝ Հիսուսի եւ ամուսնու հետ, վերցնելով երկու տատրակ, ուղեւորվում է դեպի Տաճար՝ կատարելու Մովսեսի հաստատած պատվիրանը: Բեթղեհեմից դեպի Սողոմոնի տաճար տանող ճանապարհը ոտքով տեւում է շուրջ երկու ժամ (մոտ 8 կմ), ուստի կարելի է ենթադրել, որ, ամենայն հավանականությամբ, մինչեւ սրբավայր ներկայանալը Մարիամը Տաճարի շրջակայքում գտնվող բազմաթիվ

տահայտման ազատությունից: Տե՛ս H. CARMEL, “The Laws of Niddah as a Means of Controlling Female Sexuality”, *Humaniora* 25 (2019), էջ 39–44: Այս երեւույթը, սակայն, չէր սահմանափակվում Հրեաստանով, ուներ եւ որոշ դեպքերում առ այսօր ունի ընդհանրական բնույթ, ինչպես արդարացիորեն պատճառաբանում է Ֆրանկ Յանգը: Տե՛ս F. YOUNG, *Initiation Ceremonies: A Cross-Cultural Study of Status Dramatization*, Indianapolis 1965, էջ 155:

⁸ Խոսքը ծիսական բնույթ ունեցող ջրավազանի մասին է, որի մեջ ընկղմման միջոցով կատարվում էր անմաքրությունից սրբվելու արարողությունը: Տե՛ս RDJ, էջ 90:

⁹ Տե՛ս H. DONIN, *To Be A Jew. A Guide to Jewish Observance in Contemporary Life*, Basic Books, 1991, էջ 126:

«միկվա»-ներից մեկում նախապես կատարած պետք է լիներ իր ջրային մաքրագործության արարողությունը¹⁰:

Ջրով մաքրագործման այս սովորությունը մինչ օրս մեծ դեր է նշանակություն ունի հրեական կրոնական կյանքում¹¹: Ինչ վերաբերում է ծննդաբերությունից հետո Տաճար ներկայանալու՝ Ղուկասի նկարագրած եւ Ղեւտացիների գրքում սահմանված օրենսդրական պահանջին, ապա այն արդի հրեական կրոնական կյանքում կորցրել է իր կարեւորությունը եւ այլեւս չի կատարվում:

Ժամանակի սովորության համաձայն՝ մաքրագործվող կինը, Կանանց գավթից առաջանալով, ներկայանում էր Տաճարի արեւելյան հատվածում գտնվող Նիկանորի դարպասի առջեւ, որտեղ հերթապահ քահանան կատարում էր հավուր պատշաճի արարողություն: Պետք է ենթադրել, որ Մարիամը, մաքրագործման կարգից հետո անցնելով Նիկանորի դարպասից, մտել է Սողոմոնի տաճարի սրբազան հատվածը, ուր տեղադրված էր զոհասեղանը, եւ ուր տեղի պետք է ունեցած լիներ անդրանիկների փրկագնման ծեսը¹²:

Կրոնական նախապատմությունը

Հրեական իրականության մեջ գոյություն ունեցող բարեպաշտական այս սովորությունը մաս էր կազմում տարածաշրջանային համընդհանուր կրոնամշակութային արժեհամակարգի¹³: Հին Հունաստանում, օրինակ, կինն իր հղիությունը հայտնաբերելուց հետո 40 օր շարունակ զրկվում էր տաճար մտնելու եւ սրբություններին հաղորդակցվելու իրավունքից¹⁴,

¹⁰ Իսրայելում կատարված հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել է ծիսական շուրջ 700 ավազան, որոնցից 200-ը՝ Երուսաղեմում, իսկ դրանցից 50-ը՝ միայն Սողոմոնի տաճարի շրջակայքում: Այս մասին տես E. REGEV, "The Ritual Baths Near the Temple Mount and Extra-Purification Before Entering the Temple Courts", Israel Exploration Journal, 55 (2005), էջ 194–204: Բացի այդ, ընկալյալ սովորության համաձայն, Երուսաղեմ եկող ուխտավորները Տաճար մուտք գործելուց առաջ նախ ջրային ավազաններում սրբվում էին՝ ճանապարհի փոշուց եւ անմաքրությունից մաքրվելու համար, ապա նոր ներկայանում Տիրոջ առջեւ:

¹¹ Դոնինի վկայությամբ՝ հրեական հոգեւոր կյանքը բնականոն կարող է շարունակվել նույնիսկ սինագոգի բացակայության պարագայում, սակայն այն անհնարին է առանց «միկվա»-ի ընթացակարգի: Տես DONIN, նշ. աշխ., էջ 127:

¹² Տես E. GALBIATI, «La Presentazione al Tempio (Luca 2,22–40)», Bibbia e Oriente 6 (1964), էջ 36:

¹³ Տես MILGROM, նշ. աշխ., էջ 763–765:

¹⁴ Ժամանակի բժշկական գիտելիքների համաձայն՝ բեղմնավորումից հետո՝ 40 օր, արյունահոսությունը տակավին շարունակվում էր, իսկ վիժումը լուրջ սպառնալիք էր: Այս

իսկ ազատման 40-րդ օրը մեծ խրախճանք էր կազմակերպվում: Հին եգիպտոսում ծննդաբերող կանանց համար 14-րդ օրը նախատեսված էր մասնավոր մաքրագործման ծես, որը բաղկացած էր լվացումից, խնկարկումից եւ հատուկ սննդատեսակի ճաշակումից¹⁵: Հիթիթական կրոնական հավատալիքների համաձայն՝ նորածին երեխայի միջից շարը վանելու եւ բարի բախտ ապահովելու նպատակով կատարվում էր մասնավոր ծես, որին հաջորդում էր մոր, մանկան եւ ծննդաբերության ընթացքում գործածված բոլոր սպասքի ու առարկաների՝ ջրով մաքրագործման արարողություն: Եւ վերջապես, դարձյալ համայնական կյանք վերադառնալու համար արու զավակների պարագայում Յ, իսկ աղջիկների պարագայում 4 ամիս անց կատարվում էր հավելյալ կարգ¹⁶: Հնդկական բրահմանիզմի հայեցակարգում եւս որդեծնությունը համարվում էր անմաքրության աղբյուր¹⁷, իսկ արյունահոսող կնոջն արգելվում էր տաճար մտնել: Մինչեւ օրս աշխարհագրական տարբեր շրջաններում ապրող ցեղերը, ինչպես օրինակ՝ դոգոններն Արեւմտյան Աֆրիկայում, ինդոնեզիայի Հաուալուի եւ Պապուա Նոր Գվինեայի լեռնաշխարհի ցեղերը, դաշտանի ժամանակ կանանց արգելափակում են հատուկ առանձնատներում, որոնք հայտնի են «կարմիր խրճիթ» անվամբ¹⁸:

Աստվածաշնչյան մեկնաբանություն

Հիսուսի մանկությունն այս դրվագը վերլուծելիս անհնար է անտեսել մեկ հարց, որն առանցքային տեղ է զբաղեցրել նյութն ուսումնասիրող մասնագետների աշխատություններում: Դուկաս ավետարանչի «Եւ իբրեւ լցան

շրջանից հետո մանկան սաղմը ձեւավորվում էր, եւ արու զավակը մոր որովայնում սկսում էր կենդանության նշաններ ցույց տալ: Տէս R. PARKER, *Miasma. Pollution and Purification in Early Greek Religion*, Oxford, 1996, էջ 48–52:

¹⁵ Տէս A. BLACKMAN, "Purification (Egyptian)", *Encyclopaedia of Religion and Ethics* = ERE 10, New York, 1922, էջ 477: Տէս նաեւ J. QUACK, "Conceptions of Purity in Egyptian Religion" in *Purity and the Forming of Religious Traditions in the Ancient Mediterranean World and Ancient Judaism*, edited by C. Frevel and C. Nihan, Leiden-Boston, 2013, էջ 142–143:

¹⁶ Տէս G. BECKMAN, *Hittite Birth Rituals*, Wiesbaden 1983, էջ 251:

¹⁷ Տէս J. JOLLY, "Purification (Hindu)", ERE 10, էջ 491:

¹⁸ Հմմտ. M. DALE, «Purity: Guarding the Body Corporate», in *Grounded in the Body in Time and Place, in Scripture*, edited by J. Firth – D. Cooper-Clarke, Oregon, 2021, էջ 68: Տարբեր ժողովուրդների՝ կնոջ արյունահոսության վերաբերյալ ազգագրական եւ կրոնական պատկերացումների մասին տես Blood Magic: The Anthropology of Menstruation, edited with an introduction by T. Buckley and A. Gottlieb, University of California Press, 1988:

աւուր՝ սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի» (Ղուկ. Բ. 22) արտահայտութիւնը եւ հատկապէս հոգնակի թվով օգտագործված «նոցա = նրանց»¹⁹ դերանունը պատճառ են դարձել լուրջ շփոթութեան²⁰: Որոշ գիտնականներ փորձել են հիմնավորել այս հոգնակին այն ենթադրութեամբ, որ ծննդկան մոր անմաքրութիւնը տարածվել է նաեւ նորածին մանկան վրա՝ եթե ոչ հոգեւոր, ապա առնվազն կենսաբանական եւ բնախոսական տեսանկյունից: Ի հակակշիռ նկատենք, որ մեկնութեան ավանդական դպրոցի ներկայացուցիչները խնդրին տալիս են շատ ավելի պարզ լուծում՝ առաջ քաշելով տեսակետ, ըստ որի՝ ձեռագրի ընդօրինակողը, չհավատալով Մարիամի մաքրութեանը, բնագրային «եւ իբրեւ լցան աւուր՝ նորա» (αὐτοῦ – եղակի թվով) դերանունը կամայական կերպով փոխարինել է «նոցա»-ով²¹:

Հաշվի առնելով, որ մոր անմաքրութեան բուն պատճառ համարվող արյունն անմաքուր էր դարձնում այն ամենը, ինչին կինը դիպչում էր, տրամաբանական է թվում այն հետեւութիւնը, որ նորածինը եւս, հաղորդակցվելով մոր արյանը, առնվազն տեսականորեն կարող էր դառնալ անմաքուր: Դժբախտաբար Ղեւտացվոց գիրքն այս հարցի վերաբերյալ չի պարունակում սպառնիչ պատասխաններ՝ խնդրը թողնելով առկախյալ վիճակում: Հակառակ սաղմոսի հռչակավոր «Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ» (Սաղմ. Ծ. 7) խոսքի, որն ակնարկում է նորածին մանկան մեղսակցութեանը²², թալմուդական ավանդութիւնը պնդում է վերջինիս ամբողջապէս անարատ եւ մեղքից մաքուր լինելը. «Աստված իմ, այն հոգին, որ դու տվել ես ինձ, մաքուր է. Դու ձեւավորեցիր այն իմ մեջ, դու այն արտաշնչեցիր իմ մեջ եւ պահում ես այն իմ մեջ» (Berakhot 60d)²³:

¹⁹ Սեպտուագիւնտան, Պեշիտտան, Աստվածաշնչի հայերեն, եթովպերեն ու գոթերեն թարգմանութիւնները, ինչպէս նաեւ այլ սկզբնաղբյուրներ ու թարգմանութիւններ գործածում են «նոցա» (αὐτῶν) տարբերակը:

²⁰ Իգնատիոս Սելեւնցին (ԺԱ.–ԺԲ. դդ.) իր աշխատութեան մեջ խնդրո առարկա հատվածը ներկայացնելիս զարմանալիորեն գործածում է «նրա» դերանունը. «Եւ իբրեւ լցան աւուրք սրբութե նր ըստ օրինացն մովսէսի, ածին զնա յէմ՝ յանդիման առնել տն»: Տէս Ի ԳԵԱՏԻՈՍ ՍԵԼԵՆՑԻ, Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու, Կ. Պոլիս, 1824, էջ 78:

²¹ Տէս B. EASTON, The Gospel according to St. Luke: A Critical and Exegetical Commentary, Edinburgh, 1926, էջ 27, H. LUCE, The Gospel according to S. Luke, Cambridge 1933, էջ 101, F. HAUCK, Das Evangelium des Lukas, Leipzig, 1934, էջ 41:

²² Ի դէպ, շատ հեռու չգնալով՝ հիշենք, որ քրիստոնեական դավանաբանութեան մեջ եւս նորածին երեխան ի սկզբանե համարվում է ազամական մեղքի կրող, որը մաքրվում է միայն մկրտութեան ավազանում:

²³ Տէս Trattato delle Benedizioni (Berakhot) del Talmud babilonese, a cura di S. Cavalletti, Torino, 1968, էջ 406, DONIN, նշ. աշխ., էջ 271, B. LEVINE, The JPS Torah Commentary Leviticus ԽԴԴԴ,

Այս հարցով զբաղվող Մ. Թիսսենն առաջ է քաշում մի շարք վավերական հարցադրումներ. «Եթե նորածինը անմասն է ծիսական անմաքրությունից, ապա ինչո՞ւ նրա սեռը ազդեցություն կարող էր ունենալ մոր մաքրագործության գործընթացի տեւողության վրա»²⁴՝ ավելացնելով՝ «Ինչո՞ւ էր արու նորածնի թլփատությունը կատարվում ծննդյան ութերորդ օրը: Հնարավոր է, որ քահանայական դասը կարծում էր, որ արու զավակը ծննդյան առաջին յոթ օրվա ընթացքում նույնքան անմաքուր էր, որքան մայրը, եւ որ թլփատությունը պետք է հետաձգվեր, մինչեւ որ անցներ անմաքրության այս թեժ շրջանը»²⁵:

Ամփոփիչ նկատառումներ

Եզրափակելով այս ենթագլուխը՝ անհրաժեշտ ենք համարում մասնավոր կերպով կանգ առնել մի քանի դիտարկումների վրա:

Philadelphia, 1989, [Kindle Version edited by H. Liviu], էջ 299:

²⁴ Տե՛ս M. THIESSEN, “Luke 2:22, Leviticus 12, and Parturient Impurity”, *Novum Testamentum* 54 (2012), էջ 22: Հին աշխարհում հստակ ձեւակերպում էր ստացել այն գաղափարը, ըստ որի՝ արական եւ իգական սեռի ծնունդների միջեւ գոյություն ուներ հստակ տարբերություն՝ կախված արյան եւ հարակից հեղուկների (lochia) արտադրության քանակից (Արիստոտել, Հիպոկրատ): Սա իր հերթին հիմք դարձավ քրիստոնյա մեկնիչների համար, որ անմաքրության սահմանափակման ժամանակային տարբերությունը բացատրեն ֆիզիկական հիմնապատճառներով: Տե՛ս D. MACHT, “A Scientific Appreciation of Leviticus 12:1–5”, *Journal of Biblical Literature* = *JBL* 52 (1933), էջ 254: Միջնադարյան հայ դավանաբանական միտքը խնդրո առարկայի վերաբերյալ ուներ նույնանման պատկերացում. «Կին ոք, յորժամ սերմ առիցի եւ ծնցի արու, կացցէ աւուրս քառասուն ի վերայ սրբութեան դաշտանին իւրոյ: Այս է պատճառն, վասնզի արուն յորովայնի մաւրն ի քառասուն աւր[ն] կենդանանալ վասն լերդին ջերմութեան յաջակողմանն, եւ էգն ի ձախակողմն՝ վասն փեծադանն հովութեան: Արդ՝ աւրէնքն պիղծ համարէին, ուր [ի] մեռեալն մերձենայր, վասնզի այսչափ յորովայնի մաւրն մեռեալ կայր արուն կամ էգն: Պիղծ համարեւ մայրն, եւ ի ծնանելն, ըստ չափու աւուրցն, զմեռեալն կրելով՝ սրբութիւն պահէր» (ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԳ, Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, Սբ. Էջմիածին, 2005, էջ 88–89): Ինչ վերաբերում է հրեական ավանդությունը, ապա ռաբինական մեկնաբանություններն այս հարցի վերաբերյալ գերծ են նույնիսկ գիտական նվազագույն հիմնավորումից եւ ավելի շուտ բանահյուսական բնույթ են կրում: Այսպէս՝ Շիմոն բար Յոխայի (Shimon bar Yochai) (Ք. դ.) կարծիքով՝ երբ արու զավակի ծննդյան կապակցությամբ բոլորը խնդության մեջ են, մայրը զղջում է երկունքի ցավերի ընթացքում տված իր երդման համար, թե այլեւ երբեք չպետք է մերձենա իր ամուսնուն: Այս «հանցանքը» սրբելու համար անհրաժեշտ է մեկ շաբաթ, մինչդեռ աղջիկ զավակ ծնելու պարագայում բոլորն արդեն հիասթափված են, եւ այս վիճակից ելնելու համար անհրաժեշտ է առնվազն երկու շաբաթ ժամանակ: Ավելի ուշ շրջանում ապրած Աբրահամ Սաբայի (Abraham Saba) (1440–1508) խորին համոզմամբ՝ արու զավակի պարագայում մայրն անմիջապէս մոռանում է երկունքի ցավերը եւ ցանկանում դարձյալ հղիանալ՝ հերթական արու զավակին լույս աշխարհ բերելու համար, մինչդեռ աղջկա պարագայում վիճակը ճիշտ հակառակն է: Հմմտ. Z. FARBER, “Postpartum Impurity: Why Is the Duration Double for a Girl?”, <https://www.thetorah.com/article/postpartum-impurity-why-is-the-duration-double-for-a-girl>.

²⁵ Անդ, էջ 22:

Ղեկտացվող գրքի վկայությունն ընդամենը մատնացույց է անում ծննդական կնոջ ծիսական անմաքրությունը եւ ոչ թե որեւէ տեսակի մեղսական վիճակը: Ի վերջո, կինը, Տիրոջ «աճեցէք եւ բազմացարուք» (Ծննդ. Ա. 28) պատվիրանի համաձայն, նոր կյանք է աշխարհ բերում, հետեւաբար ինչպես Ս. Բալենտայն է ճիշտ եզրակացնում, Մարիամի «անմաքրությունը ծիսական բնույթի է եւ ոչ թե բարոյական»²⁶:

Հիսուսի թլփատությունը, ընծայումը Տաճարին եւ մկրտությունը Եկեղեցու հայրերը դիտարկում են որպես Մովսիսական օրենքի հանդեպ Տիրոջ ցուցաբերած հնազանդության եւ ոչ թե հոգեւոր կարիքի կամ իրավական անհրաժեշտության արտահայտություն: Ինքնին հասկանալի է, որ Աստված կարիք չուներ նմանօրինակ եւ ոչ մի տեսակի ծեսի կամ արարողության: Նույն տրամաբանությամբ, ուրեմն, որքան արդարացված էր Մարիամ Աստվածածնի մասնակցությունը մաքրագործման արարողությանը, հատկապես երբ հարցը դիտարկում ենք անարատ հղության եւ անապական ծննդի անսակարկ ճշմարտության (հուն. *δογματικός*) տիրույթում: Թեեւ արդի աստվածաբանների ճնշող մեծամասնությունը, հիմք ընդունելով Մարիամի կուսության անսակարկ ճշմարտությունը (հուն. *δόγμα*), միանգամայն ժխտում են նման հավանականությունը, այնուամենայնիվ որոշ գիտնականներ հակված են կարծելու, որ մաքրագործման արարողությունը Մարիամի պարագայում ուներ իրական եւ ոչ թե ձեւական բնույթ²⁷:

Հիսուսն ի սկզբանե զերծ էր որեւէ տեսակի անմաքրությունից: Սա ոչ թե սոսկ սուրբգրային հետեւություն է կամ գիտական փաստերի վրա հիմնված տրամաբանական եզրակացություն, այլ Հավատո հանգանակում հաստատված դավանություն. «[...] էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ [...]»²⁸՝ բացի մեղքից²⁹: Ավելին. մայրա-

²⁶ S. S. BALENTINE, *Leviticus*, Louisville 1989, էջ 103, J. Hartley, *Leviticus*, Dallas, 1992, էջ 169:

²⁷ Ռ. Բրաունը համոզված է, որ Տիրամոր ծիսական մաքրագործման պարտականություններից ազատման համար անարատ հղությունը բավական պատճառ չի հանդիսացել (BROWN, նշ. աշխ., էջ 436), այն դեպքում, երբ, Ֆիցմայերի պնդմամբ, նույնիսկ Ղուկաս ավետարանիչը համոզված է եղել, որ Մարիամը մաքրագործման կարիք է ունեցել (տես FITZMYER, նշ. աշխ., էջ 421):

²⁸ Պատարագամատոյց, Սբ. էջմիածին, 2010, էջ 18:

²⁹ Հմմտ. Բ. Կորնթ. Ե. 21, Ա. Պետ. Բ. 22, ԱՐԲԱՀԱՍ ԱՂԲԱԹԱՆԵՅԻ, «Թուղթ շրջագայական Տեառն Աբրահամու Հայոց Կաթողիկոսի» (Մատենագիրք Հայոց, հտ. Դ., Լիբանան, 2005, էջ 19), ՆԵՐՍԵՍ ԼԱՍՔՐՈՆԵՅԻ, Մեկնություններ «Հավատամքի» եւ «Հայր մեր»-ի, Սբ.

կան արյունն անմաքուր չէր կարող դարձնել մանկանը ճիշտ այնպես, ինչպես արյունահոսություն ունեցող կնոջ հետ հանդիպումը (Մարկ. Ե. 25–34) անմաքուր չդարձրեց Հիսուսին՝ խորհրդանշելով իրականում «վաղ քրիստոնեական համայնքի խզումը հրեական մաքրագործության համակարգից»³⁰:

Մարիամի մաքրագործության ծիսական պարտականությունների կատարման ժամանակ մանուկ Հիսուսի ներկայությունը Տաճարում ամենեւին էլ պարտագիր չէր³¹: Մարիամի՝ Սողոմոնի տաճար ներկայանալու որոշումը եւս ամբողջապես անհատական էր:

Ղուկասը ճշգրիտ չի նշում, թե ո՞ր օրն են Հիսուսի ծնողներն այցելում Տաճար, եւ սահմանափակվում է անորոշ «եւ իբրեւ լցան աւուրֆ նոցա» (Ղուկ. Բ. 22) արտահայտությամբ: Սակայն քանի որ Օրենքը պահանջում էր մաքրագործության համար ներկայանալ 40-րդ օրը (7+33), իսկ փրկագնման համար՝ 31-րդ (1+30), ապա պարզ է, որ նրանք, այնուամենայնիվ, Տաճար են գնում 40-րդ օրը: Սոսկ այն իրողությունը, որ տվյալ դրվագում շեշտադրվում է Մարիամի ծիսական պարտականությունների կատարումը, Կաթոլիկ եկեղեցու աստվածաբաններին հիմք է տվել Տյառնընդառաջի տոնը համարելու մարեմաբանական տոն:

Դժբախտաբար, ակնհայտ հեթանոսական ծագում ունեցող եւ քրիստոնեական հավատքի հետ բնավ առնչություն չունեցող օրենսդրական սահմանափակումները դաշտանի վերաբերյալ ներթափանցում են նաեւ Քրիստոնեական եկեղեցի³²: Օրենսդրական այս ներմուծման առաջին արտահայտություններն ի հայտ են գալիս բավականին վաղ շրջանից:

Էջմիածին, 2007, էջ 30, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ-ՊԼՈՒՋ, «Յաւուր Ծննդեան եւ Մկրտութեան Քրիստոսի», «Գանձասար», 6 (1996), էջ 430:

³⁰ Տէս Մ. SELVIDGE, "Mark 5:25–34 and Leviticus 15:19–20: A Reaction to Restrictive Purity Regulations", JBL 103 (1984), էջ 619:

³¹ Տէս Բ. BOVON, Vangelo di Luca. Introduzione. Commento a 1,1–9,50, I, edizione italiana a cura di O. Ianovitz, Brescia, 2005, էջ 166:

³² Կոհենը կարելու է համարում հստակեցնել, որ այս օրենքը քրիստոնեություն սպրդել է ոչ թե հեթանոսական աշխարհից, այլ ուղղակիորեն հուդայականությունից՝ Ղեւտացվոց գրքի ազդեցությամբ: Նա ուշադրություն է հրավիրում կարելու մեկ հանգամանքի վրա եւս: Տղամարդկանց եւ կանանց՝ տարբեր դասերում նստելու սովորությունը, որ ժամանակին կար քրիստոնեական ավանդության մեջ (ի դեպ՝ Ղպտի եկեղեցում եւ Կ. Պոլսի հայ եկեղեցիներում այս սովորությունը տակավին պահպանվում է), «նիդգա»-ի հեռավոր արձագանքներից մեկն է: Մինազոգներում նույնպես զատ նստելու այս սովորությունն առ այսօր ուժի մեջ է: Տէս Ս. COHEN, "Menstruants and the Sacred in Judaism and Christianity", in Women's History and Ancient History, edited by S. Pomeroy, The University of North Carolina Press, 1991, էջ 287–288:

Նախ Հիպոդիտոսն իր «Առաքելական ավանդության» (217 թ.) մեջ հանձնարարում է, որ դաշտան ունեցող կինը «մեկ այլ օր մկրտվի»³³: Առաջին անգամ Սիրիայում ի հայտ եկած «Didascalia Apostolorum» (Գ. դար) գործից տեղեկանում ենք, որ Անտիոքի քրիստոնեական համայնքում գերակա էր այն համոզումը, որ արյունահոսության ժամանակ կինը զրկվում էր Սուրբ Հոգու ներկայությունից, հետեւաբար 7 օրվա ընթացքում պետք է ձեռնպահ մնար աղոթքից, սուրբգրային ընթերցումներից եւ կենարար հաղորդությունից³⁴: Դիոնիսիոս Ալեքսանդրացին (Գ. դար) 2-րդ կանոնով արգելում է արյունահոսություն ունեցող կանանց մասնակցել պատարագի արարողությանն ու հաղորդություն ստանալ³⁵: Լաոդիկեայի ժողովի (363–364) 44-րդ կանոնի համաձայն՝ կնոջն արգելվում է խորան բարձրանալ³⁶: Տիմոթեոս Ալեքսանդրացու (Գ. դար) 6-րդ կանոնը պատվիրում է, որ մկրտվել ցանկացող, բայց արյունահոսություն ունեցող կինը նախ պետք է ամբողջապես մաքրվի եւ ապա նոր մկրտվի³⁷: Նույն հեղինակի 7-րդ կանոնն ընդհանրապես արգելում է արյունահոսություն ունեցող կնոջը հաղորդություն ստանալ³⁸: Հայ Եկեղեցին եւս անմասն չի մնացել այս գործընթացից: Հայտնի է կանոնական երկու հրահանգ, ընդ որում՝ երկուսն էլ կասկածելի վավերականությամբ, որոնք պատկերացում են տալիս հայկական պաշտոնական դիրքորոշման վերաբերյալ: Բարսեղ Կեսարացու անունով մեզ հասած կանոնն այս առնչությամբ ծայրաստիճանի ծանր պատիժ է սահմանում. «(ՃԺԹ.) Կիմ տեռատես եւ ծնեալ՝ ի սուրբ եկեղեցի մի՛ իշխեսցէ մերձենալ միմչեւ սրբեսցի. եւ եթէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի»³⁹: Մեկ այլ՝ «Կանոնք հարանց հետեւողաց» կանոնախումբն արյունահոսություն ունեցող կնոջ համար նախատեսում է

³³ Տէս The Apostolic Tradition of St. Hippolytus of Rome, edited by G. Dix, London, 1968, էջ 32:

³⁴ Տէս The Didascalia Apostolorum in Syriac, translated by A. Vööbus, Corpus Scriptorum Christianorum Orientalium 408, Scriptores Syri 180, Louvain, 1979, էջ 238: Աշխատության հեղինակն ընդգիմանում է այս սին գաղափարին՝ հակազդելով, որ եթե Սուրբ Հոգին նրանց մեջ չէ, ապա ինչպէս կարող են նրանք առհասարակ գործել ու գոյատեւել:

³⁵ Տէս Правила Православной Церкви, с толкованиями Никодима епископа Далматинского-Истрийского, 2, Москва, 2001, էջ 326–327:

³⁶ ԺԲ. դարի աստվածաբան Հովհաննես Զոնարասը, մեկնաբանելով այս պահանջը, նկատում է, որ այն հատկապես վերաբերում է դաշտանի շրջանում գտնվող կանանց (անդ, էջ 108):

³⁷ Անդ, էջ 483:

³⁸ Անդ, էջ 483:

³⁹ Վ. ՀԱՎՈՐՅԱՆ, Կանոնագիրք հայոց, հտ. 2, Երեւան, 1971, էջ 129:

«պոռնիկի» համար սահմանված ապաշխարության կարգը. «(ԻԳ.)Իսկ այլ է որ գոյացուցանէ յիմեան եւ եռացուցանէ յորդոր մտաւ եւ յուրեմ հայելով լիկէ զմարմինն եւ զարիւնն հոսեցուցանէ՝ կանոնեցաւ մմա զպոռնկին ապաշաւանս, զի որպէս նա այլով մարմնով՝ եւ սա իւրովն զնոյն զարշուրթինս զրգոնցուցանէ»⁴⁰:

ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ ՓՐԿԱԳՆՄԱՆ ՕՐԵՆՔԸ

Ավետարանական վկայությունը

Ղուկասի Ավետարանում գտնում ենք հետեւյալ վկայությունը.

«[...] ածին զնա յերուսաղէմ յանդիման առնել Տեառն, (Բ. 22) որպէս եւ գրեալ է յօրէնս Տեառն, թե՛ Ամենայն արու որ բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի (Բ. 23)»:

Մովսիսական օրենքը

Աստվածահաստատ սույն օրենքն առաջին անգամ ի հայտ է գալիս Հնգամատյանում.

«Զպտուղ կալոյ քո եւ զհնձանի մի՛ հատանիցես. զանդրանիկս որդւոց քոց ինձ տացես: Նոյնպէս արասցես զարջառ քո եւ զոշխար քո եւ զէշ քո՝ զելթն օր եղիցի ընդ մարբ իւրով, եւ յաւուրն ութերորդի տացես զնա ինձ» (Ելք ԻԲ. 29–30):

«Եւ ամենայն որ բանայ զարգանդ՝ յամենայն մարմնոյ, զոր մատուցանիցեն Տեառն ի մարդոյ մինչեւ յանասուն՝ քեզ լիցի. ալլ փրկելով փրկեսցես զանդրանիկս մարդկան, եւ զանդրանիկս անասնոց անսրբոց փրկեսցես: Եւ փրկանք նորա յամսօրէից եւ ի վեր, եւ գին նորա հինգ սիկղ ըստ սրբութեան սկեղն, որ է քսան դանգ» (Թվ. ԺԸ. 15–16):

Մովսիսական օրենքը հրեական հասարակության մաս կազմող յուրաքանչյուր ընտանիքի առջեւ հստակ պահանջ էր դնում Տիրոջը իբրեւ պատարագ մատուցել բերքի առաջին պտուղները, կենդանիների առաջնեկներն ու անդրանիկ զավակներին⁴¹: Թվարկված զոհաբերությունները,

⁴⁰ Վ. ՀԱԿՈՔՅԱՆ, նշ. աշխ., հտ. 1, Երեւան, 1964, էջ 110–111:

⁴¹ Խոսքն այստեղ բացառապէս արու զավակների մասին է: Եթէ ընտանիքում առաջինը ծնվում էր աղջիկ, ապա անդրանիկության օրենքը տվյալ ընտանիքին այլեւս չէր վերաբերում: Բացի այդ՝ հաշվի առնելով, որ Հին Հրեաստանում լայնորեն տարածված էր բազմակնությունը, ռաբինական կանոնադրությունը հստակ զատորոշում էր «պիղյոն հաբեն»-ի անդրանի-

ըստ էության, ընդգրկում էին հավատացյալի ողջ կենսական տիրույթը՝ գյուղատնտեսությունից մինչև անասնապահությունն եւ ընտանեկան պարագաներ: Զոհաբերության հայեցակարգը հիմնված էր սկզբունքային հետեւյալ հավասարության վրա՝ Աստված աշխարհն ու մարդ արարածին գոյության էր կոչել, հետեւաբար թե՛ բնությունը եւ թե՛ մարդը պարտավորված էին Տիրոջ առջեւ:

Բայցեւայնպես Տիրոջ պահանջած ընծաների միջեւ գոյություն ուներ էական տարբերություն: Մինչ «պտուղ գինւոյ եւ ցորենոյ» (Թվ. ԺԸ. 12) եւ կենդանիները (Ղեւտ. Ա.) ողջակիզվում էին, անդրանիկ զավակների կյանքը խնայվում էր: Այս ակնհայտ անհամապատասխանությունը պատճառ է դարձել առաջադրելու այն վարկածը, որ վաղնջագույն շրջանում Հրեաստանում այնուամենայնիվ գոյություն է ունեցել զոհաբերության միասնական կարգ, որը ներառել է նաեւ անդրանիկ զավակներին, այն է՝ մարդկային զոհաբերությունը: Արդի հնագիտական, ինչպես նաեւ համեմատական կրոնագիտության ուսումնասիրությունները գալիս են փաստելու այս տեսակետը, իսկ Աբրահամի եւ Իսահակի (Մննդ. ԻԲ. 1–19), Հեփթայեի եւ նրա դստեր (Դատ. ԺԱ. 29–40), Հովաբի եւ նրա անդրանիկ որդու զոհաբերության (2 Թագ. Գ. 27) պատմությունները եւ Եզեկիել մարգարեի ամենահիմնարար վկայությունը⁴² (Եզեկ. Ի. 25–26) կենտրոնական տեղ են զբաղեցնում այս հայեցակարգում: Չպետք է անտեսել նաեւ այն իրողությունը, որ այդ ժամանակաշրջանում Ասորիքում եւ Քանանում լայնորեն տարածված էին Մողոքի եւ Բահաղի պաշտամունքները, որոնք ենթադրում էին մանուկների ողջակիզման արարողություն (հմմտ. Երեմ. Է. 31, ԺԹ. 5, ԼԲ. 35):

Անդրանիկների հատուցման հրեական կարգը հայտնի էր «պիղոն հաբեն» անվամբ: Թորայի համաձայն՝ այս պաշտամունքը, այն է՝ իսրայելացիների անդրանիկների նվիրաբերումն Աստծուն, հաստատվում է այն ժամանակ, երբ Տիրոջ խոսքով՝ եգիպտացիների անդրանիկները կոտորվում են, իսկ «ընտրյալ ժողովրդի» անդրանիկները՝ խնայվում:

Կին ժառանգության անդրանիկից: Տե՛ս E. HIRSCH — I. CASANOWICZ, “Primogeniture”, The Jewish Encyclopedia, 10, London, 1905, էջ 198:

⁴² Խնդրո առարկա այս հատվածն աստվածաբանները բնորոշում են իբրեւ crux interpretum եւ իրավամբ համարվում է մեկնաբանության տեսանկյունից ամենաբարդ եւ հակասական գրվագներից մեկը: Տե՛ս K. FINSTERBUSCH, “The First-Born between Sacrifice and Redemption in the Hebrew Bible”, in Human Sacrifice in Jewish and Christian Tradition, edited by K. Finsterbusch, A. Lange, K. Romheld, էջ 91:

այս կյանքերը, սակայն, դարձյալ պատկանում էին Տիրոջը, որ կոչում է նրանց ի գործ քահանայական սպասավորության, հետեւաբար «տեսականորեն սա նշանակում էր, որ նրանք պետք է ընդունեին հին աստվածաշնչյան օրենքով նախատեսված ծիսական պարտականությունները»⁴³: Այս շրջանի համար թե՛ լեզվաբանական եւ թե՛ աստվածաբանական տեսանկյունից ճիշտ է այս օրենսդրական պահանջը կոչել անդրանիկներին Տիրոջն ընծայելու կամ նվիրաբերելու կարգ⁴⁴: Հետագայում, երբ քահանայական մենաշնորհը տրվեց Ահարոնի ժառանգներին եւ ղեւտացիներին, Իսրայելի անդրանիկներն ազատվեցին իրենց անմիջական ծիսական պարտականություններից, սակայն «...տեսականորեն նրանք դեռեւս պարտավորված էին գնել Աստծուն պատկանելու իրենց կարգավիճակի ազատման արտոնությունը»⁴⁵: Ահավասիկ այս պահից ի վեր անդրանիկների պաշտամունքային արարողությունն ստանում է նոր կարգավիճակ եւ ըստ ամենայնի ներկայանում որպէս «անդրանիկների փրկագնման» կարգ:

Ծիսական աւարողակարգը

Հրեական հավատքի համակարգում «պիղյոն հաբեն»-ը հնագույն ծիսակարգերից մեկն էր: Այն կատարվում էր անդրանիկորդու ծննդյանը հաջորդող 30-րդ օրը, այսինքն՝ $1+30 = 31$ -րդ օրը⁴⁶: Եթե 31-րդ օրը շաբաթ էր ընկնում եւ կամ համընկնում էր որեւէ մեծ տոնի, ապա արարողությունը տեղափոխվում էր հաջորդ օրը: Առաջին հայացքից այս պարզ հանգամանքը հուշում է, որ «պիղյոն հաբեն»-ը, ի տարբերություն թլփատություն⁴⁷, օժտված էր որոշակի շարժականությամբ: Սա կարելու է նրանով, որ հնարավոր պատասխան է պարունակում այն հարցին, թե

⁴³ Տէս M. KERTZER, What Is a Jew?, New York, 1996, էջ 245:

⁴⁴ «Ադոնայ Տէր, Ելովէ Սաբաուվթ, եթէ հայեսցիս ի տառապանս աղախնոյ քո, եւ յիշեսցես զիս, եւ տացես աղախնոյ քում զաւակ առն, տաց զնա նուէր առաջի քո մինչեւ ցօր մահուան իւրոյ. եւ զինի եւ արբեցութիւն մի՛ արբեցէ, եւ երկաթ մի՛ ելցէ ի գլուխ նորա» (Ա. Թագ. Ա. 11): «Նվիրաբերել» բառը եբրայեցերէն բնագրում սկիզբ է առնում «տալ = nātan» (Ելք ԻԲ. 29) բայից:

⁴⁵ Տէս KERTZER, նշ. աշխ., էջ 245:

⁴⁶ Ժամանակի հրեական մարդաբանական, ինչպէս նաեւ կրոնական պատկերացումների համաձայն՝ միայն 30 օր անց ամրանում էր այն համոզումը, որ նորածինը կենդանի կմնա, հետեւաբար միայն այդ ժամանակ էր կազմակերպվում քավություն արարողությունը: Տէս B. LEVINE, Numbers 1–20, New York, 1993, էջ 447:

⁴⁷ Թլփատությունը կատարվում էր 8-րդ օրը՝ անկախ այն բանից թե այն շաբաթ էր կամ նույնիսկ Յոմ Կիպուր: Տէս R. ROSENBERG, The Concise Guide to Judaism, A Mentor Book, 1991, էջ 194:

ինչո՞ւ Հիսուսի ծնողները մովսիսական երկու օրենքները կատարեցին միեւնույն օրը, երբ ի նկատի ենք ունենում ժամանակային տարբերությունը (31 եւ 40): Այս առնչությամբ Բ. Իստոնն առաջ է քաշում, թեեւ չհիմնավորված, բայց խելամիտ մի վարկած, ըստ որի՝ «երուսաղեմացիների կողմից փրկագնման եւ մաքրագործման արարողությունների համակցումը, հավանաբար, սովորական կիրառույթ էր»⁴⁸: Նկատենք նաեւ, որ տերունական հրահանգն ի կատար ածելու համար գոյություն չունեն Տաճար այցելելու պարտադիր հարկադրանք:

Անդրանիկների փրկագնման կարգը, որքան էլ որ կարելու էր հրեական հոգեւոր կյանքում, այդուհանդերձ շատ կարճ եւ ամփոփ արարողություն էր, որի ընթացքում հայրը վկայում էր, որ մանուկն իր անդրանիկ զավակն է, մինչ քահանան, պահելով մանկան գլխի վրա 5 սիկղը, զավակի եւ դրամի միջեւ ընտրություն հնարավորություն էր տալիս հորը⁴⁹: Հայրը, ընտրելով զավակին, նվիրաբերում էր խորհրդանշական գումարը եւ արտասանում հետեւյալ գոհաբանական աղոթքը. «Օրհնյա՛լ ես, Տեր Աստված մեր, Արարիչ տիեզերքի, որ օրհնեցիր մեզ Քո պատվիրաններով եւ պատվիրեցիր մեզ փրկագնել անդրանիկ որդիներին: Օրհնյա՛լ ես Դու, Տեր Աստված մեր, Արարիչ տիեզերքի, որ մեզ կյանք պարգեւեցիր, խնամեցիր եւ հասցրիր այս օրվան», հավարտ որի՝ ծիսակատար քահանան, ձեռքերը երկինք բարձրացնելով, գինու գավաթի վրա կարդում էր եզրափակիչ օրհնությունը. «Օրհնեսցէ զքեզ Տէր եւ պահեսցէ զքեզ: Երեւեցուցէ Տէր զերեսս Իւր ի քեզ եւ ողորմեսցի քեզ: Ամբարձցէ Տէր զերեսս Իւր ի քեզ եւ տացէ քեզ խաղաղութիւն (ԹՎ. Զ. 24–26)»⁵⁰:

Անդրանիկների փրկագնման արարողությունը կրոնական օրենքների մեջ հաստատված «միցվա»⁵¹ է, որի ծեսը վերջնականապէս ձեւավորվել է Միշնական շրջանում (Ա.–Բ. դարեր)⁵²:

⁴⁸ Տէս EASTON, նշ. աշխ., էջ 27:

⁴⁹ Անդրանիկների փրկագնման համար հրեական օրենքով նախատեսված 5 սիկղը (ԹՎ. ԺԸ. 16) իրականում ամենեւին էլ փոքր գումար չէր: Ինչպէս Գալբիատին նշում է, մեկ աշխատողի օրավարձը Հիսուսի ժամանակ կազմում էր 1 դահեկան (Մատթ. Ի. 2), մինչդեռ 5 սիկղը հավասար էր 20 դահեկանի, հետեւաբար պետք է ենթադրել, որ Հիսուսի հայրը, որ ատաղձագործ էր, իր որդու հատուցման համար պետք է Տաճարին նվիրաբերեր շուրջ 20 օրվա աշխատավարձ: Տէս GALBIATI, նշ. աշխ., էջ 36:

⁵⁰ Արդի եւ ամբողջական հրեական ծեսի մասին տէս Siddur Tehillat Hashem Nusach Ha–Ari Zal, according to the text of S. ZALMAN, MerkOS L'Inyonei Chinuch, 2003, էջ 460:

⁵¹ Պատվիրան, հրահանգ կամ կրոնական պարտականություն: Տէս RDJ, էջ 97:

⁵² Տէս P. KNOBEL, «Ritti di Passagio Ebraici», Enciclopedia delle Religioni, 6, էջ 605:

Կրոնական նախապատմությունը

Զոհաբերությունը «կրոնական մթնոլորտում եւ կրոնական պաշտոնակատարի կողմից իրականացվող»⁵³ արարողություն էր, որը կենտրոնական տեղ էր գրավում անխտիր բոլոր հին կրոններում եւ հավատալիքների համակարգում: Որքան էլ արտաքինապես զոհաբերությունը դիտարկվում է որպես Բարձրյալի հետ հոգեւոր հաղորդակցության⁵⁴ տեսանկյունի արտահայտություն, խորքում, սակայն, զուտ գոյաբանական տեսանկյունից, զոհ մատուցելը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ մարդու եւ Աստծու միջեւ գոյություն ունեցող, այսպես կոչված, «առեւտրային» (բառիս բուն՝ «առ» եւ «տուր» իմաստով) փոխհարաբերության ամենապարզունակ առհավատչյան՝ հիմնված խնդրանք եւ զոհաբանություն պատճառահետեւանքային հիմնարար փոխկապակցության վրա: Ուստի պատահական չէ, որ մարդկության պատմության վաղնշագույն շրջանից սկսած՝ զոհաբերության պաշտամունքն իր մնայուն տեղն է զբաղեցրել հասարակական համակարգում: Զոհաբերությունն առաջադիմական պաշտամունք էր, ուստի տարբեր ժամանակներում եւ տարբեր կրոններում ուներ տարբեր արտահայտություններ՝ մարդակերտ առարկաների, քարերի, բուսական կամ կենդանական աշխարհի տեսակների ընծայումից⁵⁵ մինչեւ խորհրդանշական եւ ծիսական բռնության ծայրաստիճան արտահայտությունը՝ մարդկային զոհաբերությունը⁵⁶: Թեեւ արդի կրոնագիտության մեջ համարվում է, որ մարդկային զոհաբերություն կիրառած հասարակությունների ամենաակնառու օրինակներ են տալիս հատկապես հարավային Մեսոամերիկայի մայանների ու ացտեկների քաղաքակրթությունները⁵⁷, սակայն հնագիտական անհեր-

⁵³ Տե՛ս H. HUBERT — M. MAUSS, *Sacrifice: Its Nature and Functions*, The University of Chicago Press, 1981, էջ 19:

⁵⁴ Զոհաբերության ծիսակարգի հոգեւոր եւ խորհրդաբանական գործառույթներից են՝
1) Արարչի (կամ հոգիների) հետ առավել անմիջական կապ հաստատելն ու պահպանելը,
2) հոգիներից ազատագրվելը,
3) զոհաբերող անձի համար «իշխանություն» աղերսելը,
4) առկա կարողությունից կամ ուժից ազատ արձակվելը: Տե՛ս B. NAKHAI, *Archaeology and the Religions of Canaan and Israel*, Boston 2001, էջ 25:

⁵⁵ Ի դեպ՝ նկատենք, որ Հայ Եկեղեցում գոյություն ունեցող այնպիսի ծեսեր, ինչպիսիք են խաղողօրհնեքը եւ մատաղի արարողությունը, այս հնագույն պաշտամունքների արտահայտություններից են:

⁵⁶ Տե՛ս D. CARRASCO, “Sacrifice/Human Sacrifice in Religious Traditions”, in *The Oxford Handbook of Religion and Violence*, Oxford, 2013, էջ 209–225:

⁵⁷ Այս մասին տե՛ս S. SUGIYAMA, *Human Sacrifice, Militarism, and Rulership*, Cambridge, 2005:

քելի փաստերը գալիս են հաստատելու, որ այս վայրագ սովորույթը գոյություն է ունեցել շատ ավելի «քաղաքակիրթ» հասարակություններում եւս, ինչպես օրինակ՝ Հունաստանում⁵⁸, Հռոմում⁵⁹, Հնդկաստանում⁶⁰, Եգիպտոսում⁶¹, Միջագետքում⁶², Հրեաստանում⁶³, Պարսկաստանում⁶⁴ եւ Սեւծովյան տարածաշրջանում⁶⁵: Ի նկատի ունենալով, որ հնդեւրոպական ընտանիքի բոլոր ազգերն այս կամ այն կերպ ունեցել են մարդու ծիսական զոհաբերության պաշտամունք, տրամաբանական է ենթադրել, որ Հայաստանում եւս այն գոյություն ունեցած պետք է լինի⁶⁶:

Կառուսկոն այս առնչությամբ գրում է. «Աշխարհի կրոններում մարդկային զոհաբերությունների վերաբերյալ գրականության ճշող մեծամասնությունը վկայում է մարդկային զոհաբերությունների կամ կենդանիների կամ ալ առարկաներով փոխարինելու ձեւափոխության կամ բարեփոխման մասին»⁶⁷: Հրեական հասարակության մեջ նույնպես գոյություն

⁵⁸ ՏՆՍ W. BURKERT, Homo Necans. The Anthropology of Ancient Greek Sacrificial Ritual and Myth, University of California Press, 1986, D. HUGHES, Human Sacrifice in Ancient Greece, Routledge, 1991:

⁵⁹ ՏՆՍ R. WÜNSCH, "Human Sacrifice (Roman)", ERE 7, էջ 858–862:

⁶⁰ ՏՆՍ J. HEESTERMAN, The Broken World of Sacrifice. An Essay in Ancient Indian Ritual, University of Chicago Press, 1993; E. A. GAIT, "Human Sacrifice (Indian)", ERE 7, էջ 849–853:

⁶¹ ՏՆՍ R. MACALISTER, "Human Sacrifice (Semitic)", ERE 7, էջ 862–865, R. CAMPBELL, Kill Thy Neighbor: Violence, Power, and Human Sacrifice in Ancient Egypt (unpublished PhD dissertation), University of California, 2019:

⁶² ՏՆՍ J. DAY, Yahweh and the Gods and Goddesses of Canaan, Sheffield Academic Press, 2002, էջ 210–212:

⁶³ ՏՆՍ R. MACALISTER, նշ. աշխ., էջ 862–865, H. DEWRELL, Child Sacrifice in Ancient Israel, Eisenbrauns 2017, O. БОЕИМ, "Child Sacrifice, Ethical Responsibility and the Existence of the People of Israel", Vetus Testamentum 54 (2004), էջ 145–156: Այս տեսությունը հիմնովին մերժում են հատկապես քրիստոնյա պատմաբաններն ու մարդաբանները, որոնք հակված են կարծելու, որ Իսրայելում նման սովորություն գոյություն չի ունեցել: ՏՆՍ R. DE VAUX, Ancient Israel. Its Life and Institutions, London, 1973, էջ 442–446, E. SPEISER, Genesis, New York 1964, էջ 165, N. SARNA, Genesis, Philadelphia, 1989, էջ 150–154:

⁶⁴ ՏՆՍ E. EDWARDS, "Human Sacrifice (Roman)", ERE 7, էջ 853–855:

⁶⁵ ՏՆՍ Ю. ШИЛОВ, «Человеческие жертвоприношения в мифоритуалах Северного Причерноморья IV–I тыс. до н. э.», Жертвоприношение. Ритуал в культуре и искусстве от древности до наших дней, Москва, 2000, էջ 54–77: Խոսքը «Причерноморье» անվան տակ հայտնի պատմաքաղաքական տարածաշրջանի մասին է, որն ընդգրկում էր մերօրյա Աբխազիան, Վրաստանը, Բուլղարիան, Ռուսաստանի հարավային մասը, Ռումինիան, Թուրքիան եւ Ուկրաինան:

⁶⁶ Հնագիտական պեղումների վրա հիմնված ուսումնասիրությունները փաստում են նման վարկածի վավերականությունը: ՏՆՍ A. KHUVERDYAN, "Decapitations in Late Bronze Age and Iron Age Sites from Sevan Region (Armenia)", Journal of Siberian Federal University, 9 (2014), էջ 1555–1566:

⁶⁷ ՏՆՍ CARRASCO, նշ. աշխ., էջ 213:

ունեցող անդրանիկների զոհաբերության վաղնջագույն ծեսը ենթարկվում է արմատական փոփոխությունների: Այն նախ փոխարինվում է նվիրաբերության, ապա փրկագնման ծիսակարգով եւ ի վերջո հասնում իր լրմանը՝ մարդկության համար խաչի վրա իբրեւ գերագույն փրկագին մատուցված Աստծու Միածին որդու զոհաբերության խորհրդով⁶⁸:

Անդրանիկների զոհաբերություն	→	Անդրանիկների նվիրաբերում	→	Անդրանիկների փրկագնում	→	Աստծու Միածին ⁶⁹ Որդու զոհաբերություն
-----------------------------	---	--------------------------	---	------------------------	---	--

Աստվածաշնչյան մեկնաբանություն

Ղուկասի օրենսդրական վկայությունն իրականում հինկտակարանյան հետեւյալ՝ ելից ԺԳ. 2⁷⁰, 12⁷¹, 15⁷² եւ Թվոց Հ. 15–16⁷³ համարներում ամփոփված կանոնական երկու դրույթի միավորումն է: Ավետարանիչը նախ անդրադարձ է կատարում Մովսեսին՝ «ըստ օրինացն Մովսիսի» (Ղուկ. Բ. 22), ապա անմիջապես վերախմբագրում այն՝ փոխարինելով

⁶⁸ Այս մասին տես Զ. Լեւնսոնի փալլուն մենագրությունը՝ D. LEVENSON, The Death and Resurrection of the Beloved Son. The Transformation of Child Sacrifice in Judaism and Christianity, Yale University Press, 1995:

⁶⁹ Այս առնչությամբ ուշագրավ է Աբրահամ կաթողիկոսի (607–615) այն միտքը, թե ինչու Հիսուսի վերաբերյալ չպետք գործածել «անդրանիկ» եզրը. «Ժսկ անդրանիկ միածին զնա ասել եւ անճաճան՝ հեռի է ի կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ բարբառոց: Քանզի անդրանիկը անուն զբազումն նշանակէ, եւ առ նմին միածին մի միոյ, որպէս երբեմն Սողոմոն թագաւորութեամբն անդրանիկ ի մէջ ալ որդւոցն Դաւթի, եւ ըստ Բերսաբեայ մի մարն իւրոյ» (տես ԱՐԲԱՆԱՄ ԱՂԱԹԱՆԵՅԻ, «Պատասխանի ի հայոց թղթոյն Մխիթարայ Ամարասայ եպիսկոպոսի», Մատենագիրք Հայոց, հտ. Դ., Լիբանան, 2005, էջ 24): Հայ եկեղեցու դավանական մտքի կարկառուն ներկայացուցիչ Գրիգոր Տաթևացին գրում է. «Եւ զի տր մեր յս քս անդրանիկ ծնունդ է ի հօրէ նախքան զյաւիտեանս. եւ անդրանիկ ծնաւ ի մօրէ ի ժամանակի. վս այնորիկ քառասնօրեայ բերաւ ի տաճարն ընծայիլ հօր այ» (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ, «Քարոզ վասն Տն ընդառաջին», Ձմեռան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 84):

⁷⁰ «Սրբեա դու ինձ զամենայն անդրանիկ նախածին որ բանայ զամենայն արգանդ ի մէջ որդւոցդ Իսրայէլի, ի մարդոյ մինչեւ յանասուն, քանզի իմ է»:

⁷¹ «Եւ զատուցես Տեառն զամենայն արու որ բանայ զարգանդ. եւ զամենայն որ բանայ զարգանդ յանդէոց եւ յանասնոց քոց որ լինիցի քեզ. արուքն սուրբ Տեառն լինիցին»:

⁷² «Յորժամ խստացաւ փարաւոն չարձակել զմեզ, կոտորեաց Տէր զամենայն անդրանիկս յերկրին եգիպտացոց, յանդրանիկ մարդոյ մինչեւ ցանդրանիկս անասնոյ. վասն այնորիկ ես մատուցանեմ Տեառն զամենայն արու որ բանայ զարգանդ, եւ զամենայն անդրանիկս որդւոց իմոց փրկեցից»:

⁷³ «Եւ ապա մտցեն դեւտացիքն գործել զգործ խորանին վկայութեան. եւ սրբեսցես զնոսա, եւ տացես զնոսա հատուցումն առաջի Տեառն (Հ. 15): Զի հատուցումն հատուցեալ են ինձ ի միջոյ որդւոցն Իսրայէլի. փոխանակ ամենայն անդրանիկաց որ բանան զամենայն արգանդ յորդւոցն Իսրայէլի՝ առի զնոսա ինձ (Հ. 16)»:

«յօրէնս Տեառն» (Ղուկ. Բ. 23) բանաձեւով՝ մի արտահայտութեամբ, որը Նոր Կտակարանում գործում է բացառապէս Ղուկասը⁷⁴:

Ղուկասն անդրանիկների փրկագնման ծեսն անվանում է «յանդիման առնել Տեառն = παραστέσαι⁷⁵ τῷ Κυρίῳ» (Ղուկ. Բ. 22): Այս նոր անունը, ամենայն հավանականութեամբ, առնչվում է Աստծու պաշտոնյաների (Ես. ԿԱ. 6, Երմ. ԼԳ. 21)՝ Տիրոջ առջեւ ծառայության համար պատրաստ եւ ներկա գտնվելուն (Բ. Օր. Ժ. 8, Ժէ. 12, ԺԸ. 5): Էվանսի կարծիքով՝ «յանդիման առնել Տեառն» բառակապակցութիւնը մանուկ Հիսուսին Սամուելի օրինակով (Ա. Թագ. Ա. 21–28) Տաճարին ընծայելու պատմության վերարտադրութեան փորձ է⁷⁶:

Եթե մաքրագործման պարագայում պարտադիր չէր մանկան ներկայութիւնը, ապա անդրանիկների փրկագնման ծեսը չէր ենթադրում տաճարի պարտադիր առկայութիւն: Իբրեւ արարողութիւն՝ այն կարող էր կատարվել հայցվորի տանը՝ քահանայի հանդիսապետութեան պայմանով: Ահաւասիկ հրեական երկու ծեսերի օրենսդրական դաշտից դուրս մնացած այս երկու գործոնները (մաքրագործութիւն → մանուկ եւ փրկագնում → տաճար) դնում են քրիստոնեական նոր տոնի խորհրդաբանական հայեցակարգի հիմքերը: Նոր լույսի ներքո Ղուկասի ծիսական աւանդատ «շփոթութիւնը» ստանում է միանգամայն այլ երանգ եւ բովանդակութիւն: Ավետարանչի «միտումնավոր լուութիւնը»⁷⁷ 5 սիկղի գործարքի վերաբերյալ, որով երեխան պետք է առերես ազատվեր Աստծուն պատկանելու իր պարտականութիւնից, ճանապարհ է հարթում մեկ այլ՝ առավել վեհ գաղափարի, համաձայն որի՝ Հիսուսը ոչ թե ազատվում, այլ, հակառակը, ամբողջութեամբ նվիրվում է Աստծու ծառայութեանը: Այս պատմութեան ենթիմաստում, ինչպէս շատ աստվածաբաններ եւ Սուրբ

⁷⁴ Տէս C. EVANS, Saint Luke, SCM Press, 1990, էջ 212: Ինքնին հասկանալի է, որ պաշտոնական տեսանկյունից Մովսէս մարգարեն օրենքի հեղինակը չէր եւ լինել չէր կարող՝ հակառակ այն բանի, որ օրենքը հայտնի էր նրա անվամբ: Հին Կտակարանից քանիցս տեղեկանում ենք, որ օրենքի բուն հեղինակն Աստված Ինքն է, մինչդեռ Մովսէսն ընդամենը թարգման է՝ «խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ» (Ելից. ԺԳ. 1):

⁷⁵ «παραστέσαι» բառն առաջացել է «παρίστημι» արմատից, որ նշանակում է «կանգնեցնել կամ կողքի դնել», «ներկայացնել», «մատուցել», «ընծայել», «առջեւ բերել», «գալ», «մոտ կանգնել» եւ այլն: Տէս H. LIDDELL - R. SCOTT, A Greek-English Lexicon, American Book Company, 1901, էջ 1156:

⁷⁶ Տէս EVANS, նշ. աշխ., էջ 213:

⁷⁷ Տէս R. SCHULTE, «Il Misteri della "Preistoria" di Gesù», in *Mysterium Salutis* III/2, Brescia, 1971, էջ 65:

Գրքի մասնագետներ առիթ են ունեցել նկատելու, ընկած է Սամուելի՝ իր ծնողների կողմից Աստծու ծառայությանը նվիրաբերվելու պատմությունը⁷⁸: Բացի դրանից՝ Հիսուսի պարագայում տաճարի օրենսդրական «գործարքը» ավետարանիչը թողնում է ստվերում այն պարզ պատճառով, որ այս դեպքում ընծան/փրկագինը եւ գործարքն այլեւս բոլորովին տարբեր էին: Ներսես Շնորհալի հայրապետը սա բնորոշում է հետեւյալ կերպ. «Օրինադիրդ ըստ Օրինին, Մըտեր յընծայ ի տաճարին»⁷⁹:

Երկրորդ հիմնարար գաղափարներից մեկը, որի վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, վերաբերում է Ղուկասի «Ամենայն արու ուր բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի» (Բ. 23) արտահայտությանը: Քրիստոնեական դավանաբանությունն Աստվածածնի մշտակուսության անսակարկ ճշմարտությամբ փաստացի հաստատում է Տիրոջ գերբնական ծնունդը եւ բացառում արգանդ բանալու որեւէ տարբերակ⁸⁰: Շարունակելով տրամաբանական նույն շղթան՝ տեսնում ենք, որ վերոհիշյալ ճշմարտության գաղափարական շրջածիրից ներս՝

ա) Մարիամ Աստվածածինը կարիք չուներ մաքրագործվելու, քանզի հրաշագործ ծննդյան ժամանակ արգանդ չէր բացվել, հետեւաբար նաեւ բացակայում էր արյունահոսության պատճառը⁸¹.

բ) Հիսուսը, ըստ «պիղյոն հաբեն»-ի յուրահատուկ պահանջների, ենթակա չէր փրկագնման, քանի որ բացակայում էր մայրական արգանդը բացելու իրողությունը⁸²:

⁷⁸ Տէ՛ս BOVON, նշ. աշխ., էջ 166–167, MARSHALL, նշ. աշխ., էջ 282–283, EVANS, նշ. աշխ., էջ 213:

⁷⁹ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Հիսուս Որդի, Երեւան, 1991, էջ 80:

⁸⁰ «[...] ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով»: Տէ՛ս Պատարագամատոյց, էջ 18: 553 թ. Կ. Պոլսո 2-րդ ժողովը, նշովելով «Երեք գլուխները», 6-րդ հոդվածով փաստացի հաստատում էր ծնունդից առաջ, հետո եւ ընթացքում Մարիամ Աստվածածնի կուսությունը: Տէ՛ս G. ALBERIGO, Decisioni dei Concili Ecumenici, Torino, 1978, էջ 185:

⁸¹ Հայ Եկեղեցին այս հարցի վերաբերյալ ուներ հստակ դիրքորոշում, ինչը կարող ենք տեսնել Բերդումյան արքեպիսկոպոսի հետեւյալ դիտարկումներում. «[...] զի Աստուածածինն ոչ էր պարաւանդեալ պահել զայս օրէն, վասն Բ պատճառի. Նախ՝ զի ի յղութեան անդ բաժանումն արեան հոգեւորիլ ի միաւորիլ ընդ Բանին եղեւ միանգամայն ի նոյն կէտն եւ ոչ գտաւ գէթ ըոպէ մի դիակիր, ըստ այնմ. «Որ ի նմայն ծնեալ է, ի Հոգւոյն Սրբոյ է»: Երկրորդ՝ զի ոչ ունէր պէտս մաքրութեան արեան, վասն զի անսերմն յղութեան հետեւի անապական ծնունդ» (ՊԵՏՐՈՍ (ԱՂԱՄԱԼԵԱՆ) ԲԵՐԴՈՒՄԵԱՆ, «Նորին քարոզ ի վերայ քառասնօրեայ Գալստեանն ի տաճարն», Քարոզ Տարեկան, Մաշտոցի Մատենադարան (= ՄՄ) № 174 (1771 թ.), թ. 88բ – 92ա):

⁸² Մերօրյա հրեական կրոնական կիրառույթը նույնությամբ արտացոլում է դարերի խորքից եկող սովորությունները: Այսպէս՝ «պիղյոն հաբեն»-ի «միջվա»-ն գործում է միայն

Ամփոփելով այս ենթաբաժինը՝ հարկ ենք համարում նշել նաեւ, որ որոշ հետազոտողներ համեմատության եզրեր են գտնում Հիսուսի (Ղուկ. Բ. 22–40)՝ Տաճար մտնելու եւ Մաղաքիայի մարգարեության «[...] եւ յանկարծակի եկեսցէ ի տաճար իւր Տէր զոր խնդրէք [...]» (Մաղ. Գ. 1) դրվագներին⁸³, ինչպես նաեւ ծննդյան (Ղուկ. Ա. 35) ու ընծայման (Ղուկ. Բ. 23) համար Տիրոջ առջեւ Տաճար ներկայանալու եւ Զաքարիայի մարգարեության Զ. 5 համարում ներկայացված դրվագների միջեւ:

Այսպիսով՝ միանգամայն ակնհայտ է դառնում, որ Ղուկաս ավետարանիչը հետեւողականորեն փորձում է ապահովել սուրբգրային պատգամների ներդաշնակությունն ու տրամաբանական շարունակականությունը՝ կապ հաստատելով հինկտակարանյան մարգարեությունների եւ Հիսուսի մանկության դրվագների միջեւ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մովսիսական օրենք, մաքրագործման ծիսակարգ, «Նիդդա», Հրեական կրոն, Ղեւտացոնց գիրք

РЕЗЮМЕ

Христианство, будучи рожденным в Израиле, *ipso facto* являлось активным носителем многих обрядов и религиозных верований Иудаизма. Таким образом, праздник Сретения Господня, относящийся к циклу детства Христа, включает в себя два важнейших Моисеевских предписаний: Закон очищения и Закон искупления первенцев.

В данной статье предпринята попытка в краткой форме пролить свет на законодательные, литургические, исторические, а также толковательные особен-

մոր արգանդը բացած անդրանիկների պարագայում (խոսքը բացառապես արական սեռի մասին է), ընդ որում՝ եթե ընտանիքի հայրը ղեւտացի կամ «կոհեն» է, ապա արարողությունը չի կատարվում: Կեսարյան հատումով աշխարհ եկած անդրանիկները եւս ենթակա չեն «պիդդոն հաբեն»-ի: Տէս DONIN, նշ. աշխ., էջ 277:

⁸³ Տէս R. LAURENTIN, Structure et Theologie de Luc I-II. Etudes Bibliques, Paris, 1957, էջ 56–61:



ՄՄ ձեռ. Հ^մ 10 675, էջ 167ա

ности вышеупомянутых законов. Более того, консолидированное повествование евангелиста Луки о празднике дает основание предположить, что христианство изначально придало существенно новый смысл и религиозное содержание этим Моисеевым обрядам.

SUMMARY

Christianity, being originated in Israel, was *ipso facto* an active carrier of many rituals and religious beliefs of Judaism. As a matter of fact, the feast of the Presentation of the Lord to the temple, a part of the *corpus* of Christ's childhood, comprises two of the most important Mosaic commands: the Law of Purification and the Law of Redemption of the Firstborn.

This article attempts to briefly shed light on the legislative, liturgical, historical, as well as exegetic peculiarities of the above-mentioned laws. Moreover, the Evangelist Luke's consolidated narrative of the feast suggests that Christianity from the very beginning gave a substantially new meaning and religious content to these Mosaic rites.



Ս. ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ (ՆԱԶԻԱՆՋԱՑԻ)

ՃԱՌ ԻԸ.¹ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՐԿՐՈՐԴ

Սկիզբը՝ 2023 թ. թիվ ԺԱ., թիվ Ա.

18. Ուստի «Ենոքը ապավինելով կանչում էր Տիրոջը» (Ծննդ. Դ, 26), ընդ որում՝ նրա արժանիքն ապավինությունն էր, իսկ ապավինությունը գիտությունը չի վերաբերում, այլ կանչելուն: Ենոքը, սակայն, «անհետացավ» (Ծննդ. Ե, 24), բայց հասնել եղավ Աստծու բնությանը, թե՛ դեռ պիտի հասնել լինելը, — անհայտ է: Նույն նույնպես, որին հանձնված էր բովանդակ աշխարհը կամ աշխարհի սերմերը լողալով ոչ մեծ փայտով փրկել ջրերից, մի առավելություն ուներ, այն է՝ աստվածահաճությունը (Ծննդ. Զ, 5): Թեպետ մեծն նահապետ Աբրահամն արդարացավ հավատով եւ արտասովոր զոհ մատուցեց՝ Մեծ Զոհի նախօրինակը, այնուամենայնիվ Աստծուն իբրեւ Աստված չտեսավ, բայց հյուրասիրեց իբրեւ մարդու եւ գովաբանվեց իբրեւ մեծարող՝ ըստ իր գործադրած ջանքի:

Հակոբը երազում բարձր սանդուղք է տեսնում եւ հրեշտակների ելնելն ու իջնելը դրանով. նա խորհրդավոր կերպով օծում է կոթողը (հավանաբար կանխավ նախանշելով մեզ համար օծվող Վեմը), ի պատիվ Հայտնվողի՝ տեղանքը «Աստծու տուն» անունով է կնքում (Ծննդ. ԻԸ, 17), Աստծու հետ պաշարի է բռնվում՝ իբրեւ մարդու (արդյոք իրականում Աստված մարտնչում էր մարդու հետ, թե՛ դրանով ցույց է տրվում, թե՛րեւս, մարդկային առաքինության հավասարեցումն Աստծուն), յուր վրա կրում է այդ կռվի նշանները, որը ցույց է տալիս, որ արարված բնությունը զիջեց հաղթանակը, եւ իբրեւ պարզեւ՝ բարեպաշտության համար անվանափոխության է արժանանում՝ Հակոբից վերանվանվելով Իսրայելի (իրապես մեծ եւ բարեբանյալ անուն). բայց ո՛չ նա, ո՛չ էլ տասներկու ցեղերից որեւէ մեկը, որոնց հայրն էր Հակոբը, թեկուզեւ նրանից ավելի մեծ

^{1*} Թարգմանվել է հետեւյալ հրատարակությունից. Св. Григорий Богослов, Творения, т. 1, Москва, 2007, էջ 333–350: Թարգմանչի ծանոթագրությունները հետադարձ կտրվեն կարգային համարի հետ դրված աստղանիշով:

լիներ, ցայժմ չի գովաբանվել որպես Աստծու բնությունը ճանաչող կամ նրան տեսնող:

19. Բայց Եղիայի համար ո՛չ հուժկու հողմն էր, ո՛չ կրակը, ո՛չ երկրաշարժը, ինչպես գիտենք պատմությունից (Գ. Թագ. ԺԹ. 12), այլ ոչ մեծ զուլությունն էր Աստծու ներկայության նշանը, եւ միմիայն ներկայության, այլ ոչ թե բնության: Իսկ ո՞ր Եղիայի: Նրա, ում հրե կառքը երկինք տարավ՝ այսու արդարի մեջ մարդուց գերիվեր ինչ-որ բան նշանավորելով: Հաշս քո մի՞թե զարմանալի չեն նախ՝ Մանով դատավորը, ապա՝ աշակերտ Պետրոսը: Նրանցից մեկի համար տանելի չէր իրեն հայտնված Աստծուն տեսնելը, ուստի եւ ասում է. «Անպատճառ կմեռնենք, որովհետեւ տեսանք Աստծուն» (Դատ. ԺԳ. 22), որով ցույց է տալիս, որ մարդու համար անհամատեղելի է նույնիսկ երեւումն Աստծու, էլ ուր մնաց բնությունը: Իսկ Պետրոսը թույլ չէր տալիս Քրիստոսին նավակում մնալ եւ վանում էր իրենից (Դուկ. Ե. 3–8), թեեւ մյուսներից ավելի ջերմ վերաբերմունք ուներ առ Նա, ինչի համար երանելի անվանվեց եւ կարեւորագույն հանձնառությունների արժանացավ (Մատթ. ԺԶ. 16–19): Իսկ ի՞նչ ասենք Եսայու, Եզեկիելի՝ մեծ խորհուրդների ականատեսի եւ այլ մարգարեների մասին: Նրանցից մեկը տեսավ Զորությունների Տիրոջը՝ նստած փառքի գահին՝ շրջապատված փառաբանություն մատուցող եւ իրենց ծածկող վեցթեւյան Սերովբեներով, տեսավ, թե ինչպես էին իրեն մաքրագործում վառվող ածուխով եւ մարգարեության նախապատրաստում (Եսայի Զ. 1–7): Մյուսը նկարագրում է Աստծու կառքը՝ Քերովբեներին, իսկ նրանց վրա՝ գահ, գահի վրա՝ երկնակամար, երկնակամարում՝ Իրեն Հայտնողին, ինչպես նաեւ ինչ-ինչ ձայներ, շարժումներ, գործողություններ (Եզեկ. Ա. 22–27). եւ չեմ կարող ասել՝ արդյոք դա ցերեկային երեւոյթ էր՝ միմիայն սրբերի հայեցողությանը մատչելի, թե՞ գիշերային անսուտ տեսիլք, թե՞ Ամենակալի հայտնությունը մեզ, որով ապագան էլ է, ինչպես ներկան, ընդգրկվում, թե՞ մարգարեության մի այլ անբացատրելի տեսակ, — սա միայն հայտնի է մարգարեների Աստծուն եւ նմանօրինակ ներշնչանքներին հաղորդակիցներին: Համենայն դեպս, ո՛չ նրանք, որոնց մասին է մեր խոսքը, ո՛չ էլ նրանցից հետո ասպարեզ իջած որեւէ մեկը, ըստ Սուրբ Գրքի վկայության, չեն հաղորդակցվել Տիրոջ խորհրդին եւ էությանը (Երեմ. ԻԳ. 18), ոչ ոք չի տեսել ու ճանաչել Աստծու բնությունը:

20. Եթե Պողոսն ի զորու լիներ արտահայտելու այն, թե ինչ էր երրորդ երկինքը եւ անդ գնալը (կամ աստիճանական բարձրացումը անդ,

կամ ակնթարթային հափշտակումը), ապա, հավանաբար, Աստծու մասին դուզն-ինչ ավելին կիմանայինք (եթե Պողոսի հափշտակության խորհուրդը սոսկ դրան վերաբերեր): Բայց քանի որ դա անճառելի էլ մնաց, ապա մենք էլ ենք այն պատվում լուսնյուն պահպանելով եւ ուշիուշով լսում իրեն՝ Պողոսին, որն ասում է. «Շատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարեանում» (Ա. Կորնթ. ԺԳ. 9): Սրան հար եւ նման խոստովանում է նա, որ «անվարժ չէ գիտություն» (տե՛ս Ա. Կորնթ. ԺԱ. 6), որ սպառնում է ապացույց ներկայացնել, որ յուր մեջ խոսողը Քրիստոսն է (Բ. Կորնթ. ԺԳ. 3), այսպես է խոստովանում ճշմարտության մեծն ջատագովն ու ուսուցիչը: Ուստիեւ, նա ամենայն երկրային գիտելիք՝ ճշմարտության փոքրիկ նշույլներից իսկ անդին չծավալվող, ավելի բարձր չի դասում հայելիների մեջ արտացոլվող պատկերներից եւ կռահումներից (Ա. Կորնթ. ԺԳ. 12): Իսկ թե չվախենայի այլոց իմ մասին այն միտքը հայտնել, որ ավելորդության աստիճան եւ առանց հարկավորության եմ զբաղվում այսպիսի ուսումնասիրություններով, ապա հենց այս նույն եւ ոչ այլ մեկ բանի մասին, թերեւս, կարելի կլիներ ասած լինել. «Բայց այժմ չեք կարող տանել» (Հովհ. ԺԶ. 12), ինչը Ինքը՝ Բանն էր հասկանալ տալիս, որ հընթացս ժամանակի կկարողանանք տանել եւ պարզել դա մեզ համար: Այս նույն բանը, այսինքն՝ այն, որ «աշխարհն իսկ բավական չէր լինի պարփակելու այդ» (Հովհ. ԻԱ. 25), ընդունում էր նաեւ Հովհաննեսը՝ Բանի Նախակարապետը՝ ճշմարտության մեծն ձայնը:

21. Արդ, ամենայն ճշմարտություն եւ ամենայն խոսք անհասկանալի են մեզ համար ու մութ: Մենք ասես թե փոքրիկ գործիքով ենք վիթխարի շինություններ կառուցում, երբ մարդկային իմաստությամբ ենք նշմարում այն, ինչ որ կա, երբ մտքով պատկերացվող առարկաներին ձեռնամուխ ենք լինում մեր իսկ զգացողություններով կամ ոչ առանց զգացողությունների, որոնք հարկադրում են մեզ պտույտներ գործելու եւ թափառելու, եւ չենք կարողանում պարզ մտքով ծածուկ առարկաներ քննելիս գոնե մի քիչ մոտենալ ճշմարտությանը եւ մտքում դրոշմել դրա մասին գաղափարները: Իսկ խոսքն Աստծու մասին որքան որ կատարյալ է, այնքան էլ անհասանելի է եւ տանում է անթիվ-անհամար առարկությունների եւ ամենից խրթին լուծումների: Արդ, ամենայն խոչընդոտ, նույնիսկ՝ աննշան, կասեցնում եւ դժվարացնում է մտքի ընթացքը եւ թույլ չի տալիս առաջ գնալ՝ հար եւ նման նրան, ինչպես որ սանձով հանկարծակի կանգնեցնում են սլացող նժույզներին եւ դրա անսպասելի թա-

փահարումով մի կողմ թեքում: Այսպես, Սողոմոնն անշափ հմաստություն ստացավ՝ առավել բոլոր նրանցից, ովքեր ապրել են մինչև ինքը, եւ իր ժամանակակիցներից, քանզի Աստված տվեց նրան «շատ խոր հմաստություն եւ ծովեզերքի ավազի չափ լայնախորհ սիրտ» (Գ. Թագ. Դ, 29), եւ որքան շատ էր խորանում հմաստության մեջ, այնքան ավելի շատ էր դեզերում եւ հմաստության գրեթե վերջում հասավ նրան, որ խոստովանեց. «Հմաստությունը հեռու էր ինձանից» (Ժող. է. 24): Իսկ Պողոսը, թեպետ, համարձակվում է քննել, չեմ ասում, թե Աստծու բնությունը (նա քաջ գիտեր, որ դա միանգամայն անհնար է), այլ միայն Աստծու դատաստանները, բայց քանի որ այդ պրպտումների վերջն ու հանգստության հանգրվանը չի գտնում, քանզի մտքի սերն առ գիտություն ակնհայտորեն չի հասնում վերջնասահմանին, այլ միշտ նրա համար ինչ-որ մի տակավին չճանաչված բան է մնում, ապա (օ՛, զարմանահրաշ բան, երանի՜ թե ինձ հետ էլ նման բան պատահեր) խոսքն ավարտում է զմայլանքով՝ նման ամեն բան անվանելով «Աստծու հարստություն եւ խորություն» (Հռոմ. ԺԱ. 33), եւ խոստովանում նրա դատաստանների անքննելիությունը: Ընդ որում՝ արտահայտվում է գրեթե այնպես, ինչպես Դավիթը, երբ վերջինս Աստծու դատաստանները «խոր անդունդներ» է անվանում, որոնց հատակին չի կարելի հասնել ո՛չ չափելով, ո՛չ զգացողությամբ. ուստի ասում է, որ զարմանում է դրանից եւ դրա կազմությունից. «Զարմանալի է Քո հմացությունը իմ մասին, այնքան զորեղ, որ չեմ կարող հասու լինել» (Սաղմ. ԶԼԸ. 6), այսինքն՝ ինչքան մեծ են նրա զորությունն ու ծավալը:

22. Մի կողմ թողնելով մնացյալ ամեն ինչ, խորհրդածում է Դավիթը, կանգրագառնամ ինքս ինձ, կքնեմ առհասարակ մարդկային բնությունն ու մարդկային կազմությունը: Այս ինչ խառնուրդ կա մեր մեջ: Այս ինչ շարժում է: Ինչպե՞ս է մահականացուն համաձուլվում անմահի հետ: Ինչպե՞ս եմ ես վար հոսում եւ վեր խոյանում: Ինչպե՞ս է իմ մեջ շրջանառվում հոգիս, կյանք պարգեւում՝ անմասն չմնալով տվյալանքներից: Ինչպե՞ս է միտքը եւ առնվում սահմանների մեջ, եւ անորոշելի մնում, ինչպե՞ս է եւ մեր մեջ ամփոփված մնում, եւ յուր արագ առաջխաղացմամբ եւ ընթացքով ամենուր թափանցում: Ինչպե՞ս է խոսքի հետ հաղորդվում ու փոխանցվում, օդի միջով թափանցում-անցնում, բուն առարկաների հետ նույնանում: Ինչպե՞ս է հաղորդակցվում զգացմունքին եւ հեռանում դրանից: Եւս մեկ բան, նախեւառաջ ինչպե՞ս է բնության գեղարվեստական աշխարհում ստեղծում մեր եւ նախասկզբնական ստեղծագործումն ու

կազմումը, եւ վերջնական ձեւավորումն ու կատարելագործումը: Այս ինչ ցանկությունն է սննդի նկատմամբ եւ մարսողությունն մեր մեջ: Ո՞վ է մեզ առանց հարկադրելու բերել կյանքի առաջին աղբյուրներին ու միջոցներին: Ինչպե՞ս է մարմինը սնվում խորտիկներով, իսկ հոգին՝ խոսքով: Այս ինչ բնական տենչեր են, ծնողների ու երեխաների փոխադարձ հակվածություններ՝ իրար սիրով կապող: Ինչպե՞ս է որ (արարածների) տեսականերն անփոփոխ են մնում եւ չեն համընկնում իրենց տարբերիչ հատկություններով: Ինչպե՞ս է, որ դրանց ոչ մեծ քանակության պարագայում մի ցեղատեսակի առանձնատկություններն աննկատ են մնում: Ինչպե՞ս է, որ միեւնույն կենդանի էակը միաժամանակ մահկանացու է եւ անմահ, մահկանացու է, քանզի դադարում է սեփական կյանքը, իսկ անմահ է, քանզի ծնում է այլ կենդանի էակների: Մեկը հեռանում է, մյուսը գալիս, ինչպես հոսող գետը, որը տեղում կանգնած չի մնում եւ միշտ լեցուն է:

Դեռ շատ կարող ենք իմաստասիրել մարմնի անդամների եւ մասերի վերաբերյալ, նրանց փոխադարձ կառուցիկության մասին. ըստ բնության օրենքի եւ համաչափության ու նաեւ գեղեցկության կարիքներին համապատասխան՝ սրանցից մի քանիսը մոտ են իրար, մյուսները հեռացված իրարից, մի քանիսը դեպի ներս, իսկ մյուսները դեպի դուրս են ուղղված, մի քանիսը միավորված են, մյուսները՝ բաժանված իրարից, մի քանիսն ընդգրկում են մյուսներին, իսկ մյուսներն իրենք են ընդգրկվում: Շատ կարելի է խոսել ձայների եւ լսողության մասին, այն մասին, թե ինչպես են ձայները սլանում հնչուն գործիքներից, իսկ լսողությունն ընկալում եւ դրանց հետ օգի տատանումների միջոցով փոխադարձ հաղորդակցության մեջ մտնում: Կարելի է բավականին խոսել տեսողության մասին, որն անբացատրելի կերպով շարժման մեջ է դրվում կամքի հրամանով եւ միաժամանակ նմանվում մտքին, քանզի նույնքան արագ միտքն էլ է համընկնում մտածողության առարկայի հետ, ինչպես հայացքը տեսողության առարկայի հետ: Կարելի է նաեւ շատ խոսել այլ զգայարանների մասին, որոնք ծառայում են որպես արտաքին աշխարհի ոչ մտահասանելի ընդունիչներ: Շատ կարելի է խոսել քնի ժամանակ հանգստանալու, երազների, հիշողության եւ վերհիշման, բանականության, ջղագրգռության եւ ցանկության մասին, կարճ ասած՝ այն ամենի մասին, ինչ բնավորվել է մարդ կոչված այս փոքրիկ աշխարհում:

23. Արդյոք կկամենան, որ քեզ համար թվարկեմ այլ կենդանիների տարբերությունները մեզանից եւ մեկը մյուսից, այսինքն՝ ներկայաց-

նեմ յուրաքանչյուրի բնություն, ծնվելու ու դաստիարակության կերպը, բարքերն ու համակեցության օրենքները: Ինչու են դրանցից մի քանիսն ապրում հոտային կյանքով, մյուսները՝ միայնակ. մի քանիսը խոտաճարակ են, մյուսները՝ գիշակեր. մի քանիսը կատաղի են, մյուսները՝ հեզ. մի քանիսն ընտանի են եւ մարդու ձեռքով են կերակրվում, մյուսները՝ անասատ ու սիրում են ազատությունը. դրանցից մի քանիսն ասես մոտ են խելացիությունը եւ ունակ վարժվելու, այլք բնավ խելացի ու սովորելու ունակ չեն. մի քանիսը մեծաթիվ զգայարաններով են օժտված, այլք՝ ավելի քիչ. մի քանիսը նստակյաց են, մյուսները՝ տեղից տեղ տեղափոխվող. իսկ որոշ տեսակներ շատ արագավազ են. մի քանիսը աչքի են ընկնում եւ մեծությամբ, եւ գեղեցկությամբ կամ որեւիցե մեկ հատկանիշով, իսկ մյուսները՝ կամ չափազանց փոքր են, կամ շատ ալյանդակ, կամ էլ՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը. մի քանիսը տոկուն են, մյուսները՝ թույլ. մի քանիսը ռիսակալ են, մյուսները՝ կասկածամիտ ու նենգ, ուրիշներն էլ՝ անզգույշ. մի քանիսն աշխատասեր են ու բնավորվող, մյուսները՝ միանգամայն անգործունյա եւ անհոգ: Բացի այդ՝ ինչո՞ւ են որոշ տեսակներ սողում հողի վրա, մյուսները՝ շարժվում ուղիղ դիրքով. մի քանիսը ցամաք են սիրում, այլք՝ ցամաք եւ ջուր. մի քանիսը մաքրասեր են, մյուսները՝ անմաքրասեր. մի քանիսն ապրում են զույգերով, մյուսները՝ ոչ. մի քանիսը ողջախոհ են, այլք՝ վավաշոտ. մի քանիսը բազմածին են, այլք՝ ոչ. մի քանիսը երկարակյաց են, այլք՝ սակավակյաց: Խոսքերս կսպառվեն, եթե այս ամենը մանրամասնորեն նկարագրեմ:

24. Քննության ենթարկիր ջրում լող տվողներին, որոնք սահում ու ասես թռչում են խոնավ տարերքով, շնչում սեփական օդը, իսկ մեր օդում ենթարկվում այն նույն վտանգին, ինչ մենք՝ ջրում. քննիր դրանց բարքերը, կրքերը, ծնունդը, չափերը, գեղեցկությունը, տեղանքին կապվածությունը, թափառումները, խոնվելն ու ցրվելը՝ հատկություններ գրեթե մոտ ցամաքայինների հատկություններին, իսկ որոշ տեսակների պարագայում՝ նույնիսկ ընդհակառակը, հատկություններ՝ հակադիր ինչպես տեսակների, այնպես էլ միատեսակների մեջ:

Քննիր նաեւ ոչ երգեցիկ ու երգեցիկ թռչունների երամները, դրանց բազմազանությունն ըստ տեսակների ու գույների: Ո՞րն է երգեցիկների քաղցր դալալի պատճառը: Ո՞ւմից է դա: Ո՞վ է մորեխի կրծքի վրայի սրինգը տվել: Ո՞վ է թռչնակներին տալիս այդ երգերն ու ծառերի ճյուղերի վրա ճռվողյունը, երբ, կեսօրին արեգակի ջերմությունից խանդա-

վառված, համակում են անտառները հնչյուններով եւ երգեցողությամբ ուղեկցում անցորդներին: Ո՞վ է կարապի համար երգ հյուսում, երբ նա օդով մեկ ծավալելով թեւերը եւ սրնգանուշ դրանք թափահարելով՝ դրանցից ասես չափածո բանաստեղծություն է կազմում: Չեմ խոսի հարկադրական ձայների ու նաեւ այն մասին, թե ո՞րն է արվեստի գաղտնիքը, երբ նմանակում է իրականությունը: Ինչ պատճառով է սնապարծ մարական թռչունը՝ սիրամարգը՝ պաճուճանք ու պատիվ սիրողը, մոտեցող նկատելիս կամ, ինչպես ասում են, կանացի սեռին դուր գալու համար (քանի որ զգում է յուր գեղեցկությունը) վեհապանչ քայլվածքով, պարանոցը ձգելով եւ շրջանաձեւ ծավալելով ոսկեփայլ եւ աստղերով ընդելուզված փետուները՝ յուր գեղեցկությունն ի ցույց դնում այդու զմայլվողների առաջ: Աստվածաշունչ Մատյանը գովերգում է կանանց իմաստությունը գործվածքներ գործելու ոլորտում. «Ո՞վ է կանանց տվել ոստայնանկության հմտություն ու երփներանգ գործվածքներ ստեղծելու շնորհ» (Հոբ ԼԸ. 36): Սա, սակայն, բնական է բանական կենդանու համար, որն առատ է իմաստությամբ եւ ձգտում է նույնիսկ երկնքին:

25. Ավելի լավ է զարմացիր անբանների խելամտության վրա եւ, եթե կարող ես, դրանք քո բացատրությունները տուր: Ինչո՞ւ են թռչունների բները (քարից, փայտից լինեն թե տանիքներում ծվարած) անվտանգ եւ միաժամանակ գեղեցիկ հարդարված՝ ձագերի համար բոլոր հարմարություններով հանդերձ: Որտեղի՞ց են մեղունների ու սարդերի աշխատասիրությունն ու արվեստը: Ոմանց մեղրախորիսխները կազմված են վեցանկյուն բջիջներից՝ մեկը մյուսին ուղղված եւ միջնորմերով ամրակալված, որոնք յուրաքանչյուր երկու բջիջը մեկ ուղիղ անկյան տակ ընդհատվում են: Եւ այս ամենը մեղուններն այնքան մեծ արվեստով են գլուխ բերում մթին փեթակներում, որտեղ իրենց կառուցապատումները չեն երեւում: Իսկ սարդերը բարակ եւ գրեթե եթերային թելերից՝ տարբեր ուղղություններով ծավալված, եւ հայացքի համար աննշամարելի նյութերից հյուսկեն ցանցեր են հյուսում՝ որպես իրենց համար տներ, եւ սնունդ՝ տկար միջատներ որսալու համար: Արդյոք նման բան կարողացել է կյանքի կոչել էվկլիդեսը՝ գոյություն չունեցող գծերի մասին իմաստասիրողը եւ դրանց ապացույցների վրա չարձարվողը: Այդ ո՞ր Պաղամիդոսի գործերում կգտնես զորքերի այդպիսի շարժեր եւ կառուցվածքներ, թեպետեւ դրանք, ինչպես ասում են, փոխառված են կռունկներից, որոնք թռչում են շարքով եւ զանազանակերպ դարձնում

իրենց թուիչքը: Նման գործեր արդյոք արե՞լ են փիղիասները, զեւքսիսները, պոլիգնոտոսները, պարրագիոսները, ագլաոֆոնոսները՝ ունակ գեղեցիկ նկարելու եւ գեղեցկություն քանդակելու: Կհամեմատվի՞ արդյոք քնոսոտսյան շուրջպարը, որն այդպես անզուգական ստեղծել էր Դեդալոսը՝ որպես նվեր իր հարսնացուին, կամ խճողված ուղիներով եւ անելանելի բավիղը (լաբիրինթոսը), որը արվեստի հմտությամբ բազմիցս վերադարձնում է նախկին հետքին: Լռություն եմ պահպանում գանձապահ մրջյունների եւ գանձանոցի մասին, կերակրի պաշարների, համապատասխան ժամանակներում գործելու եւ այն ամենի մասին, ինչ դեռ պատմում են նրանց ճանապարհորդությունների, առաջնորդների եւ խիստ կարգապահության մասին:

26. Իսկ եթե քեզ հասկանալի են սրա պատճառները, եւ դու ճանաչել ես, թե որքան խոհեմություն կա դրանում, ապա զննի՛ր բույսերի տարբերությունները՝ հատկապես տերեւներինը, որ արվեստի գլուխգործոցներ են, որոնք միաժամանակ ե՛ւ հաճո են հայացքին, ե՛ւ չափազանց օգտակար պտուղների համար: Զննի՛ր հենց պտուղների բազմազանությունն ու հարստությունը եւ հատկապես դրանցից առավել անհրաժեշտների անկրկնելի գեղեցկությունը: Զննի՛ր արմատների, ավիշների, գուլների, հոտերի զորությունները ոչ միայն դրանցից ամենից դուրեկանների, այլեւ փարթամների, դրանց գրավչությունն ու ներկերի որակները: Զննի՛ր նաեւ թանկագին քարերի մեծարժեքությունն ու թափանցիկությունը: Բնությունն ասես մեծ խնջուկքում քեզ առաջարկել է ամեն ինչ՝ եւ այն, ինչ պետք է քեզ, եւ այն, ինչ ծառայում է քո հաճույքին, որպեսզի դու, ի շարս այլոց, բուն բարերարություններից ճանաչես Աստծուն եւ քո կարիքներից ավելի շատ գիտելիքներ ձեռք բերես ինքդ քո մասին:

Ապա շրջի՛ր մեզ բոլորիս համար ընդհանուր մոր՝ երկրի լայնությունամբ եւ երկարությամբ, անցի՛ր ծովածոցերով՝ միմյանց եւ ցամաքի հետ միավորված, գեղեցիկ անտառներով, գետերով, ջրառատ ու անսպառ աղբյուրներով՝ ոչ միայն սառնորակ եւ խմելու համար պիտանի ջրերի, որոնք հոսում են երկրի մակերեսով, այլեւ այն ջրերի, որոնք դժվարությամբ անցնում են ինչ-ինչ փապարներով՝ արդյոք հզոր հողմից քշվո՞ղ եւ առաջ մղվո՞ղ, թե՞ հզոր պայքարից ու դիմադրությունից կրակ կտրած տակավ առ տակավ ճեղքող-անցնող ուր որ կարող են, եւ մեր իսկ գործածության համար շատ տեղերում ջերմ բաղնիքների զանազան հատկություններ՝ անհատույց ինքնաբուժում պարգեւելով:

Ասա՝ ինչից եւ որտեղից է սա: Ինչ է այս վիթխարի եւ ոչ արհեստական գործվածքը: Աստ ամեն ինչ պակաս գովարժան չէ՝ այդ ամենը քննելիս լինենք փոխադարձ հարաբերությունների մեջ, թե առանձին վերցրած: Այդ ինչից է, որ երկիրն աներեր է ու անշեղ: Ինչն է նրան պահպանում: Ինչպիսին է նրա նեցուկը: Բանն այն է, որ բանականությունը, բացի Աստծու կամքից, ուրիշ որեւէ համոզիչ բան չի գտնում: Այդ ինչից է, որ երկիրը մերթ լեռնանում է, մերթ դաշտանում՝ ընդ որում՝ այնքան զանազանակերպ, հաճախ աստիճանաբար փոխելով իր տեղադրությունները, հենց որով էլ առավելագույնս է բավարարում մեր կարիքներն ու հմայում մեզ յուր բազմազանությամբ: Մարդկային բնակության համար առանձնացած լինի թե անմարդաբնակ, քանզի կտրատվում է լեռնաշղթաներով կամ որեւէ այլ բանով, թե մեկ այլ նպատակի համար գործածված՝ ամենուր ծառայում է որպես Աստծու ամենակարողության ամենահստակ ապացույց:

27. Իսկ ծովի առնչությամբ, եթե յուր լայնածավալությունամբ իմ զարմանքը չհարուցեր, կսկսեի զարմանալ նրա հեզության վրա, այն է՝ այդ ինչպե՞ս է, որ որեւիցե բանի կապված չլինելով՝ յուր սահմաններից չի ելնում: Իսկ եթե զարմանքս հարուցեր յուր հեզությամբ, ապա կսկսեի զարմանալ նրա լայնածավալության վրա: Իսկ քանի որ զարմացնում է թե՛ մեկով, թե՛ մյուսով, ապա բարեբանում եմ թե՛ մեկում, թե՛ մյուսում ի հայտ եկող զորությունը: Ինչն է կուտակել ջրերը նրա մեջ: Ինչն է նրանց շաղկապել: Այդ ի՞նչից է, որ ծովը ե՛ւ գլուխ է բարձրացնում, ե՛ւ կանգուն մնում յուր տեղում՝ ասես ամաչելով սահմանակից ցամաքից: Այդ ինչպե՞ս է, որ յուր մեջ ընդունում է բոլոր գետերի ջրերը եւ չի ավելանում, արդյոք իր մեծածավալության անշափությունից, թե՛ չգիտեմ ուրիշ ինչ պատճառ նշեմ դրա համար: Ինչո՞ւ է նա՝ այդ վիթխարի տարերքը, սահմանազատված ավազով: Ինչ կարող են սրա համար ասել բնագետները՝ դատարկ բաներում իմաստունները, որոնք իրականում ծովը չափում են փոքրիկ գավաթներով, այսինքն՝ խորախորհուրդը՝ իրենց հասկացություններով: Ավելի լավ չէ, որ ես այս մասին իմաստասիրեմ Սուրբ Գրքին համահունչ. «Իր հրամանով սահման է քաշել ջրի երեսին» (Հոբ. ԻԶ. 10): Ահա խոնավ տարերքի շղթաները: Բայց մի՞թե չես զարմանում, չես զմայլվում այն մտքից, երբ նայում ես՝ ինչպե՞ս է ծովը ոչ մեծ փայտի եւ քամու միջոցով երկրային լողորդին տանում, որ հանուն մարդու կարիքների ու կապերի բնությունամբ իրարից մեծ տա-

րածուծություններով բաժանված մասերն ի մի ձուլվեին, իրար հյուսվեին ծովն ու ցամաքը: Իսկ աղբյուրներից որոնք էին նախասկզբնականները: Պրպտիր, ո՞վ մարդ, ինչ ի վիճակի ես ուսումնասիրել եւ գտնել: Ո՞վ է փորել գետերի հուները դաշտավայրերում եւ լեռներում: Ո՞վ է դրանց շնորհել անարգել հոսելու կարողությունը: Հակադրությունների ինչ հրաշք՝ եւ ծովը չի լցվում, եւ գետերը կանգ չեն առնում: Ինչ սննդարար նյութեր կան ջրերում: Որտեղից է այն տարբերությունը, որ որոշ բույսեր ոռոգվում են վերելից, մյուսները՝ ջրվում արմատների միջոցով: Ես էլ դուզն-ինչ կվայելեմ խոսքը՝ Աստծու պարգեւած ուրախությունների մասին խորհրդածելիս:

28. Այժմ, մի կողմ թողնելով երկիրն ու երկրայինը, որպեսզի խոսքս հերթագայի, մտքի թելերով օդ բարձրացիր. այդտեղից քեզ կտանեմ դեպի երկինք, դեպի բուն երկինք, երկնքից էլ վեր եւ այլն: Արդարեւ, չի համարձակվի խոսքը բարձր խոյանալ, բայց կսավառնի, ասենք, թույլատրելից ոչ վեր: Ո՞վ է սփռել օդը՝ այդ առատ ու անհատնում հարստությունը, որից օգտվում են ոչ ըստ արժանիքների ու ոչ էլ առիթից առիթ, որը սահմաններ չունի, բաշխվում է ոչ ըստ տարիքի, մանանայի պես չափից ավելի չի օգտագործվում, հենց որում էլ արդարությունն է ամփոփված, այն է՝ յուրաքանչյուրին հավասար չափով է բաժին հանվում: Օդը՝ փետրավորների այդ կառքը, քամիների շտեմարանն է. օդը փոխում է տարվա եղանակները. կենդանություն պարգեւում կենդանիներին, իսկ ավելի լավ է ասել՝ պահպանում է հոգին մարմնի մեջ. օդի մեջ են [ապրում] մարմինները, նրա միջով [սփռվում]՝ խոսքը. օդի մեջ լույս ու լուսավորություն կա, ինչպես նաեւ՝ նրա միջով անցնող տեսողություն: Քննիր նաեւ այն, ինչ օդից անդին է: Բանն այն է, որ չեմ համաձայնի օդին տրամադրել այնպիսի մի ոլորտ, ինչպիսին որ նրան վերագրվում է: Որտե՞ղ են հողմերի պահեստները: Որտե՞ղ են ձյունների շտեմարանները: «Ո՞վ է, — հարցնում է Աստվածաշունչը, — որ ծնունդ է տալիս ցողի շաղերին: Ո՞ւմ արգանդից է դուրս գալիս սառույցը» (Հոբ. ԼԸ. 28–29): «Ո՞վ է իր ամպերի մեջ ջուրը ծրարում» (Հոբ. ԻԸ. 8): Ո՞վ է ջրի մի մասը թողել ամպերում (ապշեցուցիչ չէ՝ տեսնել հոսող նյութը՝ խոսքով կապված), իսկ մյուսը՝ թափում երկրի երեսին եւ սերմանում բարեպատեհ ժամանակ եւ պատշաճ չափով՝ շթողնելով, որ այս ողջ խոնավ գանգվածը եւ ազատ ու անկառավարելի մնա (բավական է Նոյի օրոք տեղի ունեցած մաքրագործումը. ընդ որում՝ ճշմարտախոսը չի մոռա-

նում Յուր ուխտը), եւ բացարձակապէս կապված չմնա (ինչ է թէ կրկին Եղիայի կարիքը չունենանք, որ վերացնի երաշտը): Ասված է. «Թե Նա փակ դնի մարդկանց առաջ՝ ո՞վ բաց կանի այն» (Հոբ ԺԲ. 14), եւ «Մի՞թե չեմ բացի ձեզ համար երկնքի պատուհանները» (Մաղ. Գ. 10), իսկ եթէ Նա բացի, ապա ո՞վ կկապի: Ո՞վ համբերությամբ կտանի թե՛ մեկի, թե՛ մյուսի անշափությունը, եթէ անձրեւ Բաշխողը այդ ամենը չտնօրինի Յուր չափերով ու կշեռքներով: Կայծակների եւ որոտների մասին ինչ իմաստուն ուսմունք կառաջարկես դու ինձ, դու, որ որոտում ես երկրից, թեեւ չես փայլում ճշմարտության միջինէլ իսկ նվազագույն կայծերով: Արդյոք այս ամենի պատճառը կանվանե՞ս ինչ-ինչ գոլորշիացումներ՝ երկրից բարձրացող եւ ամպեր ստեղծող, թե՛ օդի ինչ-որ թանձրացում, թե՛ հազվագյուտ ամպերի խտացում ու բախում, այնպէս որ խտացումից կայծակ է առաջանում, իսկ բաժանումից՝ որոտ: Թե՛ պատճառը կհամարես ինչ-որ մի սեղմված եւ իր համար դուրս գալու ելք չգտած քամի, որը սեղմվելիս փայլում է կայծակներով, իսկ ճեղքել-դուրս գալիս էլ՝ որոտ արձակում:

Իսկ եթէ մտքով ճանաչեցիր օդն ու այն ամենը, ինչ կա օդում, ապա արդեն ինձ հետ միասին քննիր երկինքն ու երկնայինը: Բայց աստ թող մեզ ավելի շատ հավատքն առաջնորդի, քան բանականությունը, եթէ, իհարկե, հասկացել ես քո տկարությունը, երբ քննում էիր քեզ շատ մոտ եղած բաները եւ իմացար ճանաչելու եղանակն այն բանի, ինչը գերիվեր է բանականությունից՝ բնավ չմնալով երկրային եւ երկրայինին նվիրված՝ նույնիսկ սեփական անիմացությունիցդ անտեղյակ մնալով: Ո՞վ է բոլորակել երկինքը, տեղադրել աստղերը:

29. Առավել լավ է ասել՝ ի՞նչ է բուն երկինքը, ու ի՞նչ են աստղերը: Կարո՞ղ ես այս բանն ասել դու, որ փքվածի մեկն ես, որ ոտքերիդ տակ ընկածն էլ չես ճանաչում, որ ի վիճակի չես ինքդ քեզ չափի մեջ պահել, բայց հետաքրքրվում ես այնու, ինչը գերիվեր է քո կարողությունից, եւ ցանկանում ես գրկել անընդգրկելին: Ենթադրենք, որ ճանաչել ես աստղերի եւ արեգակի շրջանները, շրջապտույտները, մոտեցումն ու հեռացումն իրարից, նրանց ծագումը, դրանց որոշ մասերն ու փաղանգները եւ այն ամենը, հանուն ինչի մեծարում ես քո տարօրինակ գիտությունը, բայց դա դեռ գոյի ճանաչողություն չէ, այլ ընդամենը ինչ-որ մի շարժման դիտարկում է՝ հաստատված տեւական ուսումնասիրությամբ, որը միասնական տեսակետի է բերում շատերին, ապա եւ՝ օրենքի հաստատման՝

գիտությունն անունից մեծարվող: Այսպես՝ լուսնի կերպարանափոխությունները հայտնի դարձան շատերին՝ տեսողությունն² ընդունելով իբրեւ ճանաչողության սկիզբ: Սակայն եթե բավականին բանիմաց ես այդ հարցում եւ կամենում ես, որ իրավամբ քեզնով զարմանան, ասա՛, թե որն է այդպիսի կառուցվածքի եւ շարժման պատճառը: Այդ ի՞նչ պատճառով է, որ արեգակն իրենով նշանավորում է բովանդակ տիեզերքն ու ամենքի հայացքի առաջ է՝ որպես փաղանգի առաջնորդ, իր պայծառությունը ստվերում թողնելով մնացյալ աստղերն ավելի, քան դրանց ստվերում են դրանցից մի քանիսը, ինչն ապացույցն է այն բանի, որ թեեւ աստղերն ինքնին լույս են տալիս, սակայն արեգակը գերազանցում է իր լույսով բոլորին, եւ աստղերը չեն երեւում հենց որ արեգակի հետ ծագում են: Նա չքնաղ է իբրեւ փեսա, արագընթաց է ու հսկայի պես վիթխարի (մեկ այլ գրքից, բացի Սաղմոսարանից, չեմ կարող այլ գովք փոխառել նրան հարիր (ԺԸ. 6). այսպիսին է նրա զորությունը, որ [աշխարհի] մի ծայրից մինչեւ մյուս ծայրն է իր ջերմությամբ ընդգրկում, եւ ոչ մի բան չի կարող չզգալ նրան, ընդհակառակը, ամեն ինչ նրանով է լցվում՝ եւ տեսողությունը լույսով, եւ մարմնական բնությունը՝ ջերմությամբ: Մինչդեռ նա տաքացնում է, բայց չի այրում, եւ իր հեզաբարո խաղաղությամբ ու ներդաշն շարժումով բաց է բոլորի համար եւ բոլորին էլ հավասարապես իր գիրկն է առնում: Արդյոք քննե՛լ ես սույն միտքը:

30. «Արեգակը զգայական առումով նույնն է, ինչ Աստված մտովի»,— ասել է ոչ մեզանից մեկը: Նա լուսավորում է հայացքը, ինչպես Աստված՝ միտքը, եւ տեսանելիների մեջ ամենաչքնաղն է, ինչպես Աստված մտահայեցողականի մեջ: Բայց ի՞նչն է նախասկզբնապես արեւին շարժման մեջ դրել: Ի՞նչ պատճառով է անդադրում շարժվում եւ իր շրջապատույթները կատարում նա՛ն անխախտ իր օրենքի մեջ, իրական իմաստով անշարժը, անձանձիրը, կենսաձիրը եւ, ինչպես հիրավի գովերգում են բանաստեղծները, կենսարարը, որ երբեք չի դադարեցնում ո՛չ յուր ընթացքը, ո՛չ էլ յուր բարերարությունները: Ինչպե՞ս է նա արարում ցերեկը երկրի վրա եւ գիշերը երկրի տակ: Զգիտեմ էլ, թե ինչպես է պետք արտահայտվել՝ արեգակին նայելիս: Ի՞նչ է նշանակում օրերի եւ գիշերների այս ավելացումն ու պակասումը, այդ (մի քիչ տարօրինակ արտահայտություն եմ գործածում) հավասարությունն անհավասարության մեջ: Ինչպե՞ս է ար-

² Փորձը:

փին կյանքի կոչում ու բաժանում տարվա եղանակները, որոնք բարեվայելաբար մոտենում ու հեռանում են՝ ասես շուրջպար բռնած ժամանակ մերթ մոտենում իրար, մերթ միմյանցից հեռանում, իսկ մոտենում են իրար սիրո օրենքով եւ բաժանվում բարեպատշաճության օրենքով, անգամ աստիճանաբար են իրար միաձուլվում եւ աննկատ մոտենում՝ հար եւ նման գալիք ցերեկներին ու գիշերներին, ինչ է թե իրենց հանկարծակիության մոտենում զգացողություններ չառաջացնեն։ Թողնենք, սակայն, արեւը։ Արդյոք ճանաչել ես լուսնի բնությունն ու կերպարանափոխությունները, նրա լուսնի չափն ու ուղիները։ Ինչպես արեգակն է իշխում օրվա վրա, այնպես էլ նա՝ գիշերվա վրա։ Մեկը համարձակության մեջ է օժտում գազաններին, մյուսը մարդուն գործի դնում ըստ առավել բարեպատեհ ժամանակի՝ մերթ բարձրանալով, մերթ իջնելով։ «Վերահասու եղել ես Բազմաստեղյանի կարգին, բացել ես քողը Օրիոն համաստեղության» (Հոբ. ԼԸ, 31) եւ «հաշվել ես աստղերի բազմությունը եւ կոչել բոլորն իրենց անուններով» (տե՛ս Սաղմ. ՃԽԶ, 4), ինչպես մեկը, որ գիտի տարբերությունն ամեն մի աստղի եւ նրա շարժման ուղին, որպեսզի կարողանամ հավատալ քեզ, երբ աստղերով որոշում ես մեր ճակատագիրն ու արարածին Արարչի դեմ հանում։

Ինչ ասենք։ Կանգնեցնենք մեր խոսքն աստ՝ նյութի եւ տեսանելիի վրա։ Թե՛ քանի որ Մովսեսի Վկայության խորանը Աստծու խոսքում անվանված է բովանդակ աշխարհի, այսինքն՝ տեսանելիի եւ անտեսանելիի ամբողջության հակոտնյա (Եբր. Թ, 24), ապա առաջին վարագույրի միջով անցնելով եւ զգայականից էլ ավելի վեր ելնելով՝ թափանցենք սրբարան՝ իմանալի եւ երկնային բնության մեջ։ Բայց սրան էլ, թեպետեւ ոչ մարմնական է, չենք կարող տեսնել ոչ մարմնական ձեւով, որի պատճառով կոչվում է հուր եւ հոգի կամ իրականում էլ այդպիսին է որ կա։ Արդ, ասվում է. «Նա քամիները հրեշտակներ դարձրեց Իրեն, եւ կիզիչ հուրը՝ սպասավորներ» (Սաղմ. ՃԳ, 4). աստ դարձնելը գուցե միայն նշանակում է ոչ ավելին, քան օրենքի հնազանդության մեջ պահել, ըստ որի էլ ստեղծվել են, իսկ քամի եւ հուր է անվանվում այս բնությունը՝ մասամբ իբրեւ մտահայելի, մասամբ իբրեւ մաքրագործող, քանզի Առաջին էությունն էլ նույն անուններն ունի։ Ասենք, թող դա մեզ համար մարմնական չլինի կամ ըստ կարելիության՝ մոտիկ դրան։ Տեսնում ես՝ ինչպես ենք պտույտներ գործում խոսքի մեջ եւ այլ կերպ վարվել չենք էլ կարող։ Բայց միայն կընդարձակվենք այնքան, որքան որ գիտենք, որ կան Հրեշտակ-

ներ, Հրեշտակապետեր, Աթոռներ, Տերություններ, Զորություններ, Իշխանություններ, Պետություններ, խոհեմ զորություններ կամ խոհեմներ, մաքրամաքուր բնություններ, անխառններ, աննկուններ կամ դյուրությամբ չարին անձնատուր չեղողներ, անլուելի ձայնով Նախապատճառի շուրջ ցնծացողներ: Սույն բնությունները, ինչպես կգովերգեր նրանց մեկ ուրիշը, կամ լուսավորվում են Նախապատճառից մաքրամաքուր լուսավորմամբ, կամ ըստ իրենց բնության կարողության չափի եւ կարգի այլ եղանակով են ընդունում մեկ այլ կարգի լուսավորում: Սրանք այնպես են մարմնավորել եւ իրենց մեջ դրոշմել Բարին, որ դարձել են երկրորդական լույսեր եւ Առաջին Լույսի հեղումների եւ շնորհումների միջոցով ի դուրս են այլոց էլ լուսավորել: Նրանք Աստծու կամքի սպասավորներն են՝ զորեղ ինչպես իրենց բնությամբ, այնպես էլ ձեռք բերված ուժով: Շրջագայում են ամենուր, բոլորի առաջ եւ ամեն տեղ ներկայանալու պատրաստ՝ ըստ ծառայելու նախանձախնդրության եւ բնության թեթեւության: Այս բանական արարածներից յուրաքանչյուրը տիեզերքի ինչ-որ մի մաս կամ ինչ-որ մի բան պահպանելու հանձնառություն ունի, ինչպես որ այդ բանը տնօրինել էր ամենայնի Կարգավորողն ու Բաշխողը, ըստ այդմ էլ նրանք, ամենայնի Հաստիչի հրամանով, ամեն ինչ տանում-հասցնում են նույն վախճանին, բարեբանում Աստծու մեծությունը, հայում հավիտենական փառքը, ընդ որում՝ հուր-հավիտյան ոչ թե այն բանի համար, որ Աստված փառավորվի (արդ, մի այնպիսի բան չկա, որ կարելի լիներ առաջարկել ըստ ամենայնի Լեցունին. Նա Ինքն է ուրիշներին բարիքներ բաշխում), այլ որպեսզի անմասն չմնան բարերարություններից նույնիսկ նրանք՝ Աստծուց հետո բնությամբ առաջինները:

Իսկ եթե սա ըստ արժանվույն գովերգվեց, ապա գոհություն երրորդությանն ու Եռանձնյա Մի Աստվածությանը: Իսկ եթե բաղձալից պակաս է, ապա այս դեպքում էլ իմ խոսքը հաղթանակած կլինի, քանզի չարչարվում էր ապացույցել ըմբռնումից վեր նույնիսկ երկրորդական էակաների բնությունը, եւ ոչ միայն Առաջինի եւ Միակի, խոնարհաբար կասեմ, ամենից Գերիվերի:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանեց եւ ծանոթագրեց
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ



ՄԱՏԹԷՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՑԻ

ԽԱՉԻ ՔԱՐՈՉԸ «ՓԱՌԱԲՈՐԵՅԷՔ ՄԵՐ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾԸ, ԵՐԿՐՊԱԳԵՅԷՔ
ԱՆՈՐ ՈՏՔԵՐՈՒ ՊԱՏՈՒԱՆՂԱՆԻՆ, ՈՐՈՎՅԵՏԷ ՍՈՒՐԲ Է»¹
ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ

Այս խօսքին վերաբերեալ տասը գլուխներ տեսանելի են մեզի, որոնց առաջինը այս է, թէ ինչ կը նշանակէ «փառաւորեցի»² ըսելը:

Նախ՝ այսպէս կ'ըսէ, այսինքն՝ խօսքով Անոր Աստուածութիւնը գովեցէք, ըստ որում՝ մարգարէին միջոցաւ պատարագ կը խնդրէ. «Օրհնութեան պատարագ մատուցէ Աստուծոյ»³:

Երկրորդ՝ «փառաւոր», այսինքն՝ գործով, քանի որ անոնք, որոնք թագաւորը կը սիրեն, անոր հրամանները կը կատարեն, ըստ այնմ. «Եթէ կը սիրէ՞ զիս, Իմ պատուիրաններս կը գործադրէ»⁴:

Երրորդ՝ «փառաւոր», այսինքն՝ կռապաշտներուն նման զգայութիւններու միջոցով չէ, որ զԱստուած կը տեսնենք, այսինքն՝ ոսկիով ու արծաթով կերպարանաւորուած [ձեւերով], այլ փառաւոր կերպով իմացէք, ըստ որում. «Երկինքներու երկինքին, արեւելեան կողմը կը նստի»⁵:

Չորրորդ՝ «փառաւոր», այսինքն՝ ո՛չ թէ անցաւոր ապրանքները, կամ կիներ, որդին կամ ուրիշ բան մը Աստուծմէ աւելի սիրել, այլ ամէն ինչը Իրմով փոխարինել, ըստ այնմ. «Ոչինչ կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք նանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ»⁶:

Հինգերորդ՝ «փառաւոր», այսինքն՝ արարածները տեսնելով՝ անոնց Նորոգողը բարեբանեցէք, ինչպէս գեղեցիկ շինուածք մը տեսած ատեն արհեստաւորը կը գովեն: Երեք երիտասարդներն այս մտածումով բոլոր արարածները կը հրաւիրէին օրհներգելու, ըստ որում. «Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ»⁷:

¹ Սաղմ. ՂԸ. 5, 9:

² Սաղմ. ՂԸ. 5, 9:

³ Սաղմ. ԽԹ. 14:

⁴ Յովհ. ԺԴ. 15:

⁵ Սաղմ. Կէ. 34:

⁶ Հռոմ. Ը. 39:

⁷ Սաղմ. ԺԸ. 2:

Վեցերորդ՝ «փառաւոր», այսինքն՝ հնազանդեցէք Անոր՝ իբրեւ իր ծառաները, Որուն ծովերն իսկ կը հնազանդին, մինչեւ սահմանուած կէտին հասնելով ու այն կողմ չանցնելով, ըստ որում՝ գիտենք մենք մեզ, որ անարգ ենք ու հողի ծնունդ:

Եօթներորդ՝ «փառաւոր», թէեւ կը տեսնենք, թէ Աստուած մարդ եղած ու աշխարհի մէջ շրջած է, սակայն զինք սոսկ մարդ մի՛ համարէք՝ իբրեւ մեզմէ մէկը, այլ՝ փառաւոր եւ Հօր աջ կողմը նստած, Անորմէ անքակտելի, ըստ այնմ. «Հայրը Իմ մէջս է, եւ Ես՝ Հօրս մէջ»⁸:

Ութերորդ՝ «փառաւոր», այսինքն՝ քանի որ ձեր փրկութեան համար խաչ բարձրացած է, այն բանին վրայ, որ մահուան գործիք է, բայց դուք երկրպագեցէք, որովհետեւ այդ բարձրութիւնը, ուր Ան բարձրացաւ, ձեզ երկինք կը հանէ:

Իններորդ՝ միշտ Տիրոջ մահը պատմեցէք՝ ըստ առաքեալին. «Որովհետեւ խաչի փառգութիւնը կորուստի մատնուածներուն համար յիմարութիւն է, իսկ փրկուածներու համար՝ Աստուծոյ զօրութիւնն է ան»⁹:

Տասներորդ՝ «փառաւոր», այսինքն՝ խաչէն վախցէք, քանի որ թէեւ ան ձեր փրկութեան պատճառն է, կրնայ դատապարտութիւն ըլլայ ձեզի համար, քանի որ սուրբը «կը սիրեմ» կ'ըսէ, եւ պարտաւոր է Անոր ետեւէն ընթանալ, ըստ այնմ. «Ինծի ծառայողը Իմ ետեւէս պէտք է գայ»¹⁰:

Երկրորդ գլուխը տեսնենք, թէ ինչ կը նշանակէ մեր գետնին երկրպագելը: Ասիկա բազմաթիւ խորհուրդներ ունի:

Նախ՝ կը ցուցնէ, թէ այնքան հնազանդ ենք Տիրոջ, մինչեւ հող, գետին, որ տարրերուն մէջ ամէնէն ստորինն է ու ոտքով կը կոխուի բոլոր կենդանիներուն կողմէ, այդպէս Քու ծառադ եւ մոխիր ենք¹¹: Այս խորհուրդով նաեւ իրարու կ'երկրպագենք՝ հնազանդութիւն ցուցնելով, ըստ որում՝ առաքեալը կ'ըսէ. «Ամէն ինչի մէջ իրարու հնազանդեցէք»¹²:

Երկրորդ՝ կը նշանակէ, թէ մեզ հողէն ստեղծեցիր, այսպիսի գեղեցկաշէն կերպարով, Բարբարութեանդ պատկերով եւ անձնիշխան, այդ պատճառով կ'աղաչենք՝ օգնէ՛ մեզի, որպէսզի սրբութեամբ պատկերակ-

⁸ Յովհ. Ժ. 38:

⁹ Ա. Կորնթ. Ա. 18:

¹⁰ Հմմտ. Յովհ. ԺԲ. 26:

¹¹ Գ. ձեռ.՝ եմք, ըստ այնմ. «Ո՛ր Տէր, ես ծառայ Քո եմ» (Սաղմ. ՃԺԵ. 16) (ծանօթագրութիւնը իսադ քահանայ Ղազարեանինն է):

¹² Տէս Եփես. Ե. 21:

ցութեանդ մէջ մնանք, քանի որ «Աստուծոյ պատկերին համաձայն արարեցիր»,– կ'ըսէ մարգարէն¹³:

Երրորդ՝ դէպի հող կ'երկրպագենք, որով այնքան տկարացած ենք սատանայի փորձութենէն՝ ըստ մարգարէին, թէ՝ «մեր անձերը մինչեւ գետին խոնարհեցան»¹⁴: Այդ պատճառով կ'աղաչենք՝ օգնական եղիր մեր տկարութեան եւ զօրացուր մեզ կարենալ դիմադրել ամբարիշտի հարուածներուն:

Չորրորդ՝ դէպի հող կ'երկրպագենք, որովհետեւ Քու սուրբ գարշապարդ ասոր [հողին] հասաւ. այդ պատճառով կը համբուրենք, որպէս թէ ասոր վրայ կանգնած ըլլաս Դուն:

Հինգերորդ՝ կը համբուրենք, որովհետեւ մեր մայրն է, մեր դադարն ու հանգիստը, եւ ասոր մէջ պիտի մտնենք ու լուծուինք:

Վեցերորդ՝ կը համբուրենք մեր նուաստութիւնը. տակաւին, աւաղելով ու իմանալով մեր գոյութիւնը՝ չհպարտանանք՝ միշտ մեր աչքին առջեւ ունենալով [մեր հող ըլլալը]:

Եօթներորդ՝ կ'երկրպագենք՝ ցոյց տալով մեր պակասութիւնը, որ երկինքէն գետին ինկանք Ադամի յանցանքներուն պատճառով, ըստ այնմ. «Մարդուն փափկութեան դրախտէն դուրս դրաւ»¹⁵՝ գուշակելով, թէ դարձեալ մեղք պիտի գործենք, անդունդները պիտի իջնենք, որ է դժոխքը:

Ութերորդ՝ քանի որ ասոր մէջ թաղուելով՝ մեր Տէրը կործանեց ներքին իշխանը՝ Բելիարը, այդ պատճառով կը համբուրենք՝ յիշելով մեզի համար չարին դէմ Անոր տարած յաղթութիւնը:

Իններորդ՝ դէպի հող կ'երկրպագենք, որովհետեւ չնչին եւ տկար հողէն մեր բոլոր պէտքերը պատրաստեցիր, որոնք մեր կենդանութեան պատճառներն են, այդ պատճառով կը համբուրենք զայն՝ որպէս մեր ապրելու պատճառը:

Տասներորդ՝ կ'երկրպագենք, որպէսզի ասորմէ դարձեալ նորոգես մեզ՝ վերստին կենդանացնելով մարմինի ու հոգիի, ըստ այնմ. «Բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ պիտի ըլլան, պիտի լսեն ձայնը եւ դուրս պիտի ելլեն»¹⁶, այդ պատճառով մարգարէն կը հրաւիրէ՝ «Երկրպագեցէ՛ք Անոր ոտներու պատուանդանին, որովհետեւ սուրբ է»¹⁷:

¹³ Ծննդ. Ա. 27:

¹⁴ Սաղմ. ԽԳ. 25:

¹⁵ Ծննդ. Գ. 24:

¹⁶ Յովհ. Ե. 28–29:

¹⁷ Սաղմ. ԴԸ. 5, 9:

Տեսնենք երրորդ գլուխը, թե ինչ կը նշանակէ երկրպագութենէն ետք դարձեալ կանգնիլը: Ասիկա եւս բազմաթիւ խորհուրդներ ունի:

Նախ՝ կը նշանակէ Քրիստոսի յարութեան միջոցով կանգնումը, որ յարուցեց մեզ՝ մահէն կեանքի փոխելով. այս միտումով կիրակի եւ յարութեան միւս օրերուն համար կանոն գրուեցաւ չերկրպագել, որովհետեւ այդ օրերուն յարուցեալ կ'ըլլանք, որով պատշաճ չէ դարձեալ իյնալ:

Երկրորդ՝ կը նշանակէ հաւատքի մէջ մեր կանգնումը, որովհետեւ կռապաշտութեան մէջ անհաւատ եղանք, որ Քրիստոս Իր չարչարանքներով մեր այդ անհաւատութենէն յարուցանեց:

Երրորդ՝ կը նշանակէ մեղքերէն դէպի արդարութիւն կանգնումը, քանի որ ով, որ բարի գործեր չունի, իբրեւ անդամալոյծ՝ ինկած է:

Չորրորդ՝ կը նշանակէ անգիտութենէ դէպի գիտութիւն կանգնումը, որ մեր Տէրը սորվեցուց մեզի՝ եօթնարփեան Հոգիին գալուստով մեզի շնորհներ պարգեւելուն միջոցով:

Հինգերորդ՝ կը նշանակէ ուղղափառութեան հաւատքին մէջ ուղղուիլը, չթերանալն ու երբեք երկմիտ չըլլալը, այն պատճառով, որ աստուածային բոլոր գիրքերը մեզի ճշմարտութիւնը կը սորվեցնեն, եւ այնտեղ թերութիւն չկայ:

Վեցերորդ՝ կը նշանակէ Աստուծոյ [մեզ] դէպի Իրեն քաշելը, որ ստորին երկրէն երկինք քաշեց՝ օգնական ըլլալով մեզի, ինչպէս Պետրոսին¹⁸:

Եօթներորդ՝ մեր սիրտը երկրային ցանկութիւններէն քակելը, երկնայիններու մասին խորհիլը, ուր Քրիստոս կը նստի:

Ութերորդ՝ կը նշանակէ սատանայէն մեր քակուիլը խաչին միջոցաւ եւ հրեշտակներուն ընկերակից ըլլալը, որոնք երկինքի մէջ են, ըստ որում՝ մեր գլուխները անոնց ուղղած ենք:

Իններորդ՝ կը նշանակէ մարմինի չարչարանքներու ժամանակ մենք մեզ վեր բարձրացնենք՝ ըստ Պօղոսի, թէ՛ «անոնք որոնք կ'ուզեն աստուածապաշտութեամբ ապրիլ, հալածանքներու պիտի ենթարկուին»¹⁹: Եւ կամ սատանայի բռնութեան դէմ պէտք է պատերազմին. իսկ պատերազմը ոտքի կանգնած կ'ըլլայ: Այդ պատճառով Քրիստոսի նշանը կը դրոշմենք մեր երեսին՝ անվնաս պահելու համար մեզ անոնց եւ ասոնց յարձակումներէն, ինչի պատճառով նախ պէտք է երկրպագել, ապա կանգնիլ, եւ ապա [խաչին] նշանը մեր երեսին դրոշմել՝ իբր վահան եւ զէնք:

¹⁸ Տէս Մատթ. ԺԴ. 31:

¹⁹ Բ. Տիմ Գ. 12:

Տասներորդ՝ կը նշանակէ մեր կանգնիլը օրէնքի հիւանդութենէն Աւետարանի առողջութեան, որովհետեւ մարդ մարմինով կը տկարանայ օրէնքները գործադրելու: Իսկ ասիկա ամէն ինչի մէջ առողջ ըլլալով՝ ելքի համար հնարքներ կը փնտռէ, որպէսզի ոտքի վրայ առողջ ու սրբութեամբ ապրինք՝ Քրիստոսէ կեանքը ժառանգելով, ըստ որում՝ կ'ըսէ. «Հաստատուն եւ ամուր մնացե՛ք»²⁰:

Գանք չորրորդ գլուխին եւ տեսնենք, թէ ինչ կը նշանակէ խաչին նշանը մեր երեսին դրոշմելը: Ասիկա եւս բազմաթիւ խորհուրդներ ունի:

Նախ՝ ճակատին դրոշմելը կը նշանակէ, իբր թէ երկինքն էինք, սիրտին՝ աշխարհ ինկանք, ձախ թեւին՝ ձախակողմեան եղանք, իսկ աջ թեւին՝ թէ ասոր [աջակողմեանին] կը փափաքինք:

Երկրորդ՝ կը նշանակէ Աստուծոյ Բանին երկինքին մէջ ըլլալը, աշխարհ իջնելն ու դժոխքը աւերելը, որ ձախակողմեաններուն տեղն է եւ դարձեալ Հօր աջ կողմը նստիլը:

Երրորդ՝ մեր ճակատին խաչին նշանը [դրոշմելը] կը նշանակէ Խաչելին միշտ մեր գլուխին ըլլալը, ըստ որում՝ մարգարէն կ'ըսէ. «Մարդոց ճակատին նշան դիր»²¹: Իսկ սիրտին [դրոշմելը]՝ Անոր շնորհներով մեր հոգիներուն մէջ իջնելը՝ ըստ մարգարէին. «Ինչպէս իւր, որ գլուխին վրայ կ'իջնէ»²², ձախակողմէն հանելն ու աջակողմեանին մէջ մեզ դասելը:

Չորրորդ՝ մեր չորս կողմը կը դրոշմենք, որպէսզի մեզ չորս վնասներէ պահէ, այսինքն՝ աշխարհի փորձութենէն, սատանայէն, անհաւատներէն եւ մեղքերէն, որ մեզի համար աջ կը թուին:

Հինգերորդ՝ կը դրոշմենք, իբր թէ Տէր Յիսուսի կը ծառայենք, Որուն նշանը մեր վրայ կերպարանած ունինք, քանի որ մարմնաւոր ծառաները չորս տեղ կը դադեն [կը խարանեն / կը դրոշմեն], որ մենք մեր հոգիին վրայ առինք Մկրտութեան ժամանակ՝ աստուածային իւղի օծումով մեր ճակատին, սիրտին եւ երկու ձեռքերուն:

Վեցերորդ՝ կը նշանակէ հաւատքի բարձրութիւնը, գիտութեան խորութիւնը, սիրոյ լայնութիւնը եւ յոյսին երկարութիւնը, որ առաքեալը կ'ըսէ. «Որպէսզի կարենանք հասկնալ...»²³:

²⁰ Տէս Բ. Կորնթ. ԺԳ. 11:

²¹ Եզեկ. Թ. 4:

²² Սաղմ. ՃԼԲ. 2:

²³ Հմմտ. Եփես. Գ. 18:

Եօթներորդ՝ կը նշանակէ ճակատով հոգիին զգայութիւնը մարմինին եւ այլ տեղերուն հետ, մարմինին գործերը, որ են ձեռքն ու ոտքը՝ բոլորը Տիրոջ ընծայելով, պահպանելով, որպէսզի ո՛չ ոք չարտաքսուի Անորմէ:

Ութներորդ՝ կը նշանակէ կեանքը, որ գլուխն է, մահը, որ ոտքն է, ձախակողմը, որ այստեղ է՝ աշխարհի մէջ, եւ հանդերձեալը, որ աջակողմն է, անդադար Անոր կը ծառայենք:

Իններորդ՝ չորս տեղ դրոշմելով՝ ցոյց կու տանք տիեզերքի չորս ծագերը. Դուն բռնեցիք մէջ ունիս զմեզ, ուր կ'ուզես, մեզ այնտեղ խաղաղութեամբ պահէ:

Տասներորդ՝ որովհետեւ մարդ չորս բան ունի, որոնցմով կրնայ արդար կամ մեղաւոր ըլլալ, այսինքն՝ հոգի եւ մարմին, խորհուրդ եւ խօսք: Այդ պատճառով չորս տեղ դրոշմելով՝ կ'աղաչենք այդ չորսը փրկել դժոխքէն:

Իսկ չորս գլուխները գրուած կը գտնես այս խօսքին սաղմոսի քաղուածքին մէջ²⁴:

Իսկ իններորդ, քանի որ ոմանք տէրունական Խաչը ապականացու է կ'ըսեն՝ երկու կերպով առարկելով:

Նախ՝ թէ ամէն ինչ, որ չորս տարրէն բաղկացած է, մինչեւ հանդերձեալը ապականութիւն կը կրէ. արդ՝ խաչը փայտ է եւ չորս տարրէն է, հետեւաբար՝ այդ եւս կ'ապականի:

Երկրորդ՝ քանի որ եթէ մարդուն մարմինը, որ բանական ու կենդանի է, մահուամբ կ'ապականի, հետեւաբար խաչն ալ կ'ապականի, որովհետեւ ո՛չ կենդանի է եւ ո՛չ ալ բանական, այլ կենդանութեանց քակտիչ է, քանի որ մահուան գործիք է:

Որոնց այսպիսի դիմակայութեամբ կը պատասխանենք:

Նախ՝ եթէ ըստ բնութեան օրէնքին ան չի՛ կրնար անապական մնալ, սակայն աստուածային սքանչելիքները, ինչպէս օրինակ [մարդկային] բնութիւնը առանց սերմի չէր կրնար յղիանալ եւ կուսութեամբ ծնիլ, որ Բանն Աստուածը սքանչելապէս ներգործեց, այդպէս ալ ասիկա, ըստ բնութեան օրէնքի չէ, քանի որ Բանն Աստուածը անբաժանելիօրէն ասոր [խաչին] միաւորուած է:

Իսկ երկրորդին՝ կը պատասխանենք, թէ մարդու մարմինը կ'ապականի, որովհետեւ իրմէ՝ զինք կենդանացնող հոգին կը բաժնուի, ըստ

²⁴ Զորրորդ գլուխին կը հետեւի իններորդ գլուխը, միւս չորսը չկան (ծանօթագրութիւնը Խաղ քահանայ Ղազարեանինն է):

այնմ. «Մարմինը հողին կը վերադառնայ, ուրկէ առնուեցաւ, իսկ հոգին կ'երթայ...»²⁵: Իսկ խաչին կենդանութիւնը Քրիստոս է եւ անկէ չի բաժնուիր, ըստ այնմ. «Աստուած ասոր վրայ բնակեցաւ, քանի որ հաւնեցաւ...»²⁶:

Արդ, ցոյց տանք, թէ Սուրբ Խաչը ճշմարտապէս անապական է՝ ընդդիմակայութեամբ ըսելով:

Նախ՝ բնականաբար քննութեամբ, քանի որ բոլոր արարածները Աստուծոյ ձեռագործն են, ըստ այնմ. «Իմ ձեռքերս չե՞ն, որ այս բոլորը արարեցին»²⁷: Արդ՝ ինչպէս հրեշտակները ոչինչէ գոյացան եւ անապական ու անմահ են Աստուծոյ կամքին մէջ, այդպէս ալ չորս տարրերը ինքն ըստ ինքեան անապական են, որովհետեւ անհատները միայն կ'ապականին եւ չորս տարրերուն մէջ կ'ընթանան, իսկ ասոնք, Աստուծոյ կամքին համաձայն, մշտապէս կան, այդպէս ալ խաչը Աստուծոյ կամքով եւ Անոր ներգործութեամբ կ'ուզէ, որ խաչը անապական մնայ, քանի որ ատով մարդիկը փրկեց:

Երկրորդ՝ որովհետեւ Ան, որ բոլոր արարածները գոյ կը պահէ եւ ատիկա Իրեն համար շատ չէ, քանի որ Իր գործութիւնը անբաւ է, իսկ եթէ այդ խաչն անապական կը պահէ, Անոր համար կարողութեան հարց չէ այդ: Այո՛, կարողութիւն ունի, որովհետեւ բոլոր արարածները Իր ձեռքին մէջ որպէս մարգարիտ ունի:

Երրորդ՝ քանի որ այդ խաչը աստուածային արեամբ պարուրուած է, ըստ որում՝ ատոր վրայ գամուեցաւ: Արդ, եթէ խաչը ապականի, ապա արիւնը, որ ատոր վրայ է, [ինքն ըստ ինքեան կ'ապականի, որ քաւ լիցի մեզի այդպէս ըսել]. ասկէ յայտնի կը դառնայ, թէ անոնք Բանն Աստուածը ապականացու կը խոստովանին, որովհետեւ կ'ըսեն, թէ խաչը ապականացու է, ու ասոնք նեստորականներն են²⁸: Իսկ անոնք, որոնք Բանն

²⁵ Հմմտ. Ժող. ԺԲ. 7:

²⁶ Տէս Սաղմ. ՃԼԱ. 14:

²⁷ Ես. 49. 2:

²⁸ Նեստորականութիւն. քրիստոնէութեան մէջ հերձուած: Հիմնադիրն է Կոստանդնուպոլսոյ Պատրիարք՝ Նեստորը (ազգութեամբ ասորի, ծննդեան եւ մահուան թուականներն անյայտ են): Նեստորականութեան համաձայն՝ Կոյս Մարիամը ծնած է Յիսուս Քրիստոսին, որ Սուրբ Հոգիին միջոցով աստիճանաբար յաղթահարելով մարդկային թուլութիւնները՝ բարձրացած է աստուածային «Աստուծոյ Որդի», «Մեսիա» աստիճանին: Եփեսոսի մէջ գումարուած Տիեզերական երրորդ ժողովը (431-ին) նեստորականութիւնը որպէս հերետիկոսութիւն որակեց: Տէս Ե. Տ Ի Բ - Մ Ի Ն Ա Ս Ե Ա Ն, Նեստորականները Հայաստանի մէջ (ծանօթագրութիւնը Խաղքահանայ Ղազարեանին է):

Աստուածը մարմինով անապական կը խոստովանին, պարտաւոր են աստուածընկալ խաչը եւս անապական խոստովանիլ:

Զորրորդ՝ օրինակէն յայտնի է, որովհետեւ Ահարոնին գաւազանը, որ ծաղկեցաւ²⁹, խաչին օրինակ է, իսկ պատուիրաններուն տախտակները³⁰՝ դրախտի մէջի կենաց ծառին³¹: Արդ, ասոնք այն ատենէն եւ առ յաւէտ անապական են, որ օրինակն է, հապա ինչքան աւելի ճշմարտութիւնը անապական է, որ աստուածընկալ խաչն է:

Հինգերորդ՝ որովհետեւ ո՛չ մէկ ապականացու բան կրնայ ուրիշ բան մը ամբողջ պահել, ինչպէս նիւթական բոլոր իրերէն յայտնի է: Արդ՝ ան, որ բոլոր գերեզմանները կնքուած կը պահէ, եկեղեցի կ'օրհնէ ու կը հաստատէ, ինչպէս նաեւ փորձութեան ժամանակ բոլորին զօրավիզ ու օգնական է, կրնայ անապական ըլլալ, քանի որ աստուածային նշան է:

Վեցերորդ՝ որովհետեւ Աստուծոյ գործն է ոչինչով մեծամեծ բաներ գործել, ինչպէս հողով կոյրին աչքը բացաւ³² եւ ժայռէն ջուրի տասներկու աղբիւրներ բխեցուց³³ եւ շատ ուրիշ բաներ, այդպէս ալ չնչին փայտը առնելով՝ փրկութիւն ըրաւ ամբողջ տիեզերքին ու անապական ըրաւ [զայն]:

Եօթներորդ՝ որովհետեւ Սողոմոնը կ'ըսէ. «Օրհնեա՛լ է այն փայտը, որով օրհնութիւն կ'ըլլայ»³⁴, որ փրկչական խաչն է: Արդ, ան բոլոր փայտերուն մէջ յայտնուած է արդարութեան արմատ ըլլալու, որով բանսարկունէն փրկուեցանք: Արդարին գործը յաւիտենական է, ինչպէս նաեւ անապական, ինչպէս կ'ըսէ իմաստասէրը³⁵, հետեւաբար Սուրբ Խաչը անապական է:

Ութերորդ՝ քանի որ մահուան գործարան է, ապա ապականացու է, իսկ Սուրբ Խաչին համար կ'ըսէ. «Բոլորին համար կենաց ծառ է...»³⁶: Եւ ինչպէս օրինակը՝ գիտութեան ծառը մահուան պատճառ եղաւ, այդպէս ասիկա կեանքի պատճառ եղաւ: Արդ, ան, որ կենդանութեան մայրն է, ան անապական է, այսինքն՝ Սուրբ Խաչը:

²⁹ Տէս Եբր. Թ. 4:

³⁰ Տէս Ելք ԼԴ.:

³¹ Ծննդ. Գ. 3:

³² Տէս Յովհ. Թ. 6–15:

³³ Տէս Ելք ԺԵ. 27:

³⁴ Իմաստ. ԺԴ. 7:

³⁵ Տէս Առակ. Ժ. 25: Իմաստ. Ժէ. 16:

³⁶ Առակ. Գ. 18:

Իններորդ՝ որովհետեւ դեւերը աստուածական նշանին զօրութենէն հալածական կ'ըլլան: Արդ, եթէ ասիկա ապականացու էր, դեւերը ասկէ չէին վախնար, ինչպէս յայտնի է անուններէն, հետեւաբար՝ Սուրբ Խաչը անապական է:

Տասներորդ՝ քանի որ Տէրը ասիկա մեզի Իր գալուստին որպէս նշան տուաւ, ըստ այնմ. «Եւ ապա Որդիին նշանը պիտի երեւի»³⁷, եւ ասիկա ո՛չ թէ միայն լոյս է, քանի որ ո՛չ թէ լոյսը մեզի իբր նշան տուաւ, այլ այն փայտեղէն խաչը, որու վրայ Միածին Բանը Իր ձեռքերը տարածեց, հետեւաբար անապական է:

Տեսները նաեւ տասներորդ գլուխը, որ կ'ըսէ թէ՝ «մեր Տէր Աստուածը Սուրբ է»³⁸, քանի որ «սուրբ»³⁹ ըսելն անուանակիցներու համար է, որովհետեւ բազմաթիւ բաներու համար կ'ըսուի:

Նախ՝ քանի որ կ'ըսենք, թէ Եկեղեցին Սուրբ է, ինչպէս նաեւ խաչը, սուրբերուն նշխարները եւ ասոնց նման ուրիշ բաներ:

Երկրորդ՝ «սուրբ փաղափ» կ'ըսուի, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Երուսաղէմ սուրբ փաղափին մէջ», այնտեղ կատարուելիք սքանչելիքներուն համար:

Երրորդ՝ «սուրբ» կ'ըսուի մաքրութեան, առաքինութեան գործին, ինչպէս կ'ըսենք՝ Սուրբ Մովսէսը, Սուրբ Պօղոսը, Սուրբ Գրիգորը՝ անոնց աստուածահաճութեան համար:

Չորրորդ՝ «սուրբ» կ'ըսուի յստակ էութիւնը, ինչպէս յստակ ջուր, կամ մաքուր, կամ պղտոր, կամ ապակի, եւ ասոնք՝ պիտակաբար:

Հինգերորդ՝ «սուրբ» կ'ըսուի կենդանին, ինչպէս յայտնի է Սուրբ Գիրքին մէջ, թէ՝ «անսուրբերէն՝ այսօր, իսկ սուրբերէն՝ այսօր»⁴⁰:

Վեցերորդ՝ «սուրբ» կ'ըսուի նաեւ սիրտի, ըստ այնմ. «Աստուած չարհամարհեւ սուրբ սիրտն ու խոնարհ հոգին»⁴¹: Եւ թէ՝ «անոնք որոնք սիրտով սուրբ են, զԱստուած պիտի տեսնեն»⁴²:

³⁷ Մատթ. ԻԴ. 30:

³⁸ Սաղմ. ԴԸ. 9:

³⁹ Սուրբ գրաբարեան ձեւը կը ձգենք նոյնութեամբ, որպէսզի իմաստն աւելի ըմբռնելի ըլլայ, նկատի պէտք է ունենալ, որ «սուրբ» կը նշանակէ մաքուր, անարատ, յստակ, ողջախոհ, պարկեշտ, անբասիր, արդար, առաքինի, անմեղ (տէն Ռուբէն Դազարեան, Գրաբարի բառարան, Երեւան, 2000, էջ 1154):

⁴⁰ Տէն Դեւտ. ԺԱ. 1–47: Բ. Օր. ԺԴ. 3–21:

⁴¹ Սաղմ. Մ. 19:

⁴² Մատթ. Ե. 8:

Եօթներորդ՝ «սրբութիւն» կ'ըսուի նաեւ կերակուրներուն, որոնց մէջ խառնակութիւն չկայ, այլ՝ ուտելի են:

Ութերորդ՝ «սուրբ» կ'ըսուի անապականութեան, ինչպէս կ'ըսէ Եւքին մէջ. «Տապանակը սուրբ ռսկիով պատեց»⁴³:

Իններորդ՝ «սուրբ» կ'ըսուի նաեւ իր մը, ինչպէս զուտ արծաթը, կամ՝ պղինձը, կամ՝ անագը (կլայեակը), իւրաքանչիւրը՝ առանձին, իրարու չխառնուած սուրբ կը կոչուին:

Տասներորդ՝ անկեղծ սէրը եւս «սուրբ» կ'ըսուի, եւ ան, որ ասիկա ունի, Աստուծոյ կը նմանի, որ սիրելու մէջ անկեղծ է:

Արդ, այս սրբութենէն, որու մասին ըսինք, Աստուծոյ սրբութիւնը հեռու է:

Նախ՝ որովհետեւ ասոնք եղական սուրբեր են, իսկ Ան անեղ Սուրբ է:

Երկրորդ՝ քանի որ ասոնք անունով սուրբ են, իսկ Ան էութեամբ Սուրբ է:

Երրորդ՝ որովհետեւ ասոնք երբեմն սուրբ են, իսկ Ան մշտապէս Սուրբ է:

Չորրորդ՝ քանի որ ասոնք կրնան անսուրբ ըլլալ, իսկ Անոր համար կարեւորութիւն չկայ անսուրբ ըլլալու:

Հինգերորդ՝ որովհետեւ ասոնք ուրիշ մէկը չեն կրնար իրենց նմանցնել, իսկ Աստուած կրնայ:

Վեցերորդ՝ քանի որ ասոնք իրարու բաղդատաբար սուրբ են, իսկ Ան անբաղդատելի Սուրբ է:

Եօթներորդ՝ որովհետեւ ասոնք մասնաւոր սուրբ են, իսկ Աստուած լիովին Սուրբ է:

Ութերորդ՝ քանի որ ասոնք Աստուծոյ սրբուած են, եւ ո՛չ թէ Աստուած՝ իրենցմէ:

Իններորդ՝ որովհետեւ ասոնք փոքր տեղերու մէջ կ'երեւին, իսկ Աստուած ամէն տեղ է:

Տասներորդ՝ քանի որ ասոնք շատ են եւ տարբեր-տարբեր, իսկ Աստուած մէկ է բոլորին վրայ՝ օրհնեալ յաւիտեան:

Տասնմէկերորդ՝ «սուրբ» կ'ըսուի գոյքերուն, որովհետեւ անսուրբ բաները կը ցուցնէ: Արդ՝ յայտնի է, թէ կուռքերուն համար կ'ըսէ, որոնք աս-

⁴³ Եւք ԻԵ. 11, 24:

տուածներ կ'ըստին, սակայն այդպիսին չեն, իսկ Աստուած է՝ կը կոչուի, հետեւաբար Սուրբ է:

Տասներկրորդ՝ «սուրբ» կը կոչուի, քանի որ սուրբերը կը սիրէ, այդ պատճառով առաքեալը կ'ըսէ. «Ինծի նմանեցէ՛ք, ինչպէս ես՝ Քրիստոսի»⁴⁴:

Տասներեքերորդ՝ «սուրբ» կը կոչուի, որովհետեւ սուրբ կ'արարէ, ըստ այնմ. «Եթէ ձեր մեղքերը որդան կարմիր ըլլան, ինչպէս բուրդը պիտի սպիտակեցնեմ (գրաբար բնագիրին մէջ «սուրբ արարից»)»⁴⁵, այդ պատճառով մարգարէն կը հրաւիրէ երկրպագելու, որովհետեւ մեր Տէր Աստուածը Սուրբ է:


Այսքանով գոհանանք:

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց
ՎԱՐԱՆ Դ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ



⁴⁴ Ա. Կորնթ. Դ. 16, ԺԱ. 1:

⁴⁵ Ես. Ա. 18:



Doi: 10.56737/2953-7843-2024.01-105

ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, ԵՊՀ

ԵՐԱՆԵԼԻ ՏԵՐ ԹՈՂԻԿԸ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՒՅՍԻ ՍՅՈՒՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ Ա.

ՁՈՐՈՎԱՆՔ ԵՒ ԿՈՆՊԱՆՑ

Սբ. Գրիգոր վանքը կամ եկեղեցին, որը՝ որպես երկնային սյան իջման վայր, հիշատակում են Ինճիճյանը, Սարգիսյանը եւ Շերենցը՝ թեեւ ակներեւորեն շփոթելով Սալնապատի Սբ. Գրիգոր վանքի հետ, Կոխպանց գյուղից ոչ հեռու գտնվող Ձորովանքն է։ Ուսումնասիրելով Սալնապատի վանքը եւ նշելով, որ այդտեղ է գտնվել Սբ. Լուսավորչի աղոթատեղին, Ե. Լալայանը ճշտում է մտցնում խնդրի մեջ. նրա կարծիքով՝ Ինճիճյանը, Սարգիսյանը եւ ուրիշներ հիմնվել են Վարդան Արեւելցու հաղորդած տվյալների վրա, եւ Սալնապատի Սբ. Գրիգորը նույնացնում են Ձորովանքի հետ։ Սակայն իր ժամանակ Ձորովանք գյուղը բնակեցված էր¹, եւ դրանից մոտ երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվում էր Ձորովանքի ավերակը՝ հենց Կոխպանց գյուղի դիմաց²։

Ե. Լալայանն հիմք է ընդունում Թովմա Արծրունու տվյալները։ Ըստ պատմիչի՝ Ռշտունյաց Համազասպուհի տիկնոջ աճյունն ամփոփում են «...ի տեղուոջ զոր այժմ Ձորոյ վանս անուանեն. ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց. զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի, ուր սեղանն սուրբ եւ զգաւազան հովուական եւ զմատանին պատկերեալ եւ զգօտին աշխատասէր

¹ Լալայանի օրոք այն բնակեցված պիտի լիներ քրդերով, քանի որ 1859 թ., «Արծուի Վասպուրականի» տվյալների համաձայն, այնտեղ եղել է երկու տուն հայ եւ յոթ տուն քուրդ բնակիչ (տե՛ս «Արծուի Վասպուրական», 1859, թիւ 8, էջ 207)։

² Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Վասպուրական. Նշանավոր վանքեր, ԱՀ, XXI, Թիֆլիս, 1911, էջ 81–82։

միջոցն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն»³։ Հավանաբար նույն տեղի մասին է գրում Թովմա Արծրունին պատմութեան՝ Աշոտ իշխանին վերաբերող դրվագում։ Վերջինս, ազատագրելով Վարագը Ութմանիկներից, գնում է «ընդ միւս եւս ամրականն ընդ ոստազերծ քարանձաւի», որը գտնվում է Վարագա լեռան արեւելյան կողմում՝ Կոխպանից գյուղի վրա, Սբ. Հռիփսիմյանց եկեղեցու դեմ հանդիման, որը Սբ. Գրիգորը շինել էր Ահեականից գյուղում. այնտեղ, ուր մինչ այդ գտնվել էր Վահեավահանի մեհյանը⁴։ Այսպիսով՝ Ձորովանքում է գտնվել Սբ. Հռիփսիմյանց եկեղեցի-վկայարանը, որի մասին ԺԹ. դ. հեղինակները ոչինչ չեն գրում։ Թեեւ ԺԹ. դ. կեսերին այդ վանքից մնացել էին միայն ավերակներ, այն ժամանակին կարելուր սրբատեղի եւ նույնիսկ կաթողիկոսանիստ վանք էր, որի կառուցումը կապվում է նույն Ներսես Գ. Տայեցու անվան հետ, եւ որի գերեզմանոցում ամփոփված են երկու կաթողիկոսների, արքեպիսկոպոսների եւ իշխանազունների աճյունները⁵։

Անգլիայի հյուպատոսի պեղումները ներկայացնելով՝ Գարեգին եպս. Սրվանձտյանցը եւս անդրադառնում է Ձորովանք գյուղի տարածքին, որտեղ բացվել էին շենքեր, եւ որտեղից բնակիչները մեծ թվով հնություններ էին գտել եւ տանելով Թիֆլիս եւ Պոլիս՝ վաճառել⁶։

Կոխպանցը ժայռերի մեջ կառուցված փոքր մի գյուղ էր, որն ուներ քահանա, բայց չունէր գործող եկեղեցի, եւ այդ պատճառով բոլոր ծիսակատարությունները կատարվում էին հսկա սրբազան ուռենու մոտ⁷, որտեղ գտնվում էր Առնակա տեգ սրբավայրը։

Խոսելով «առնակ, առնակային» բառերի կիրառութեան եւ դրանց հետ կապված պաշտամունքի մասին՝ Խ. Լեւոնյանը նշում է, որ Վանա կանայք այդ բառերով հայհոյում էին չարաճճի երեխաներին։ Ըստ այդմ՝ հիշատակում է նաեւ, որ եղել է Առնակ անունով առասպելական հայկազյան թագավոր կամ ոգի, հրեշտակ, որ առնում էր չար մարդկանց

³ «Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 68։ Պետք է նշել, որ ըստ Մովսէս Խորենացու Հռիփսիմյաց պատմութեան՝ այդ նույն առարկաները Սբ. Գրիգորը թողնում է ոչ թէ Ձորովանքում, այլ Կորիթում (տե՛ս «Մովսէսի Խորենացու Մատենագրութիւնք», էջ 302)։

⁴ «Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 241։

⁵ Հ. ՈՍԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 251–252։

⁶ Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՅ, Երկեր, հտ. 1, Երեւան, 1978, էջ 389։

⁷ «Արծուի Վասպուրական», 1859, թիւ 7, էջ 175։ Ե. Լալայանը նույնպէս նկարագրում է Կողպանց գյուղի Այնակա տեգը (ցիցը), սրբազան աղբյուրն ու դարավոր ուռենին (տե՛ս Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Վասպուրական-Հաւատք, ԱՀ, XXV, Թիֆլիս, 1914, էջ 29, 40–41)։

հոգիները⁸: Այնուհետև նկարագրում է Կոխպանց գյուղի միջի ցից ապառաժը, որը կոչվում էր «Առնակայ տէգ», իսկ դրա շուրջ եղած ժայռերը՝ Առնակա հովիվներ, ոչխարներ, շներ եւ այլն: Տեղն անվանի էր նաեւ իր հսկա ուռենիով, որին Սուրբ Ծառ էին ասում, եւ որի ճյուղերն անձեռնմխելի էին: Ծառի ճյուղերին լաթեր էին կապում, բնի մոտ մոմ վառում եւ խունկ ծխում, ծառի տակ լվացվում էին՝ ցավերից ազատվելու համար: Ըստ ավանդության՝ այդտեղ հնում մեհյան է եղել: Այս հիմքով Լեւոնյանը ենթադրում է, որ հենց այդտեղ է եղել Թովմա Արծրունու հիշատակած Ահեւականից գյուղը՝ իր մեհյանով⁹:

Խ. Լեւոնյանն Առնակին անվանում է հնամենի ոգի կամ հրեշտակ, Լալայանը՝ աստվածություն: Հ. Աճեմյանի գրանցած Շամիրամի պատումի մեջ, սակայն, Առնակը հանդես է գալիս խորամանկ ծերունու կերպարանքով: Նա խորհուրդ է տալիս գողանալ Շամիրամի կախարդական ուլունքները, եւ ինքն էլ իրականացնում է գործը՝ «ուլունք Շամիրամայ թալեց Վանայ ծովը»¹⁰:

Ուստի երկնային լույսի երկրորդ սյունը եւս հայտնվել է նախաքրիստոնեական ուխտավայրում, որտեղ էլ կառուցվել է Սբ. Գրիգոր Զորավանքը:

ԿԱՐՄՐԱՎՈՐ ՎԱՆՔ

Ինչպես նշեցինք, Ն. Սարգիսյանը եւ Գ. Շերենցը հայտնում են, որ լույսի սյուներից մեկն իջել է Կարմրավոր վանքի տեղում: Կարմրավոր վանքը հռչակված էր իր նախաքրիստոնեական հնություններով, այստեղից, ինչպես հայտնի է, գտնվել են ուրարտական արձանագրությունների բեկորներ: Սրվանձտյանցը նշում է, որ վանահայր Բարդուղիմեոս վարդապետն այս վանքում գտել է նաեւ «անհեթեթ մեծութեան զլուխ մը»¹¹, որը,

⁸ Խ. ԼԵՒՈՆՅԱՆ, Վան-Վասպուրական աշխարհը, Պէյրուս, 2013, էջ 109:

⁹ Անդ, էջ 110: Ավելի հավանական է, որ Ահեւականից անվանումը պահպանվել է վանա լճի ափին գտնվող մեկ այլ գյուղի մեջ՝ Ախավանց: Ահա Աղթամարի Սբ. Խաչի ուխտի նկարագրության մի դրվագ. «Ուստանայ մօտ Քարաղաշտում եւ հեռու հարաւային ափին Ախավանքում կրակ էին վառում եւ դրանց լոյսը, ծովից ցոլալով, մեզ էր հասնում, դա նշան էր թէ՛ այնտեղ նաւեր էին կանգնած, կամ ուխտաւորների բազմութիւն պահանջում էր որ կղզուց նաւը մեկնի: Մեր նաւն էլ իւր կրակ վառեց» (տե՛ս ՎԱՐԳ, նշ. աշխ., էջ 70): Գ. Սրվանձտյանցը, սակայն, բերում է գյուղի անվան ժողովրդական ստուգաբանությունը՝ իբր այստեղ Վանա լճի ալիքները զարկվելով ախ են անում (տե՛ս Գ. ՍՐՎԱՆԶՏՅԱՆՅ, նշ. աշխ., էջ 380):

¹⁰ Հ. ԱՃԵՄՅԱՆ, նշ. աշխ., էջ 69–72:

¹¹ Գ. ՍՐՎԱՆԶՏՅԱՆՅ, նշ. աշխ., էջ 87, 388, 64:

հավանաբար, պատկանում է հեթանոսական հայտնի քանդակ-«կուռքերի» շարքին¹²։ Կարմրավոր Աստվածածին վանքի ուխտագնացությունը կատարվում էր Համբարձման հինգշաբթի¹³, այսինքն՝ դա միեւնույն օրն էր, ինչ Վերին Վարագա ուխտի օրը։ Այդ վանքի վիմագիր արձանագրությունների մեջ հիշատակվում են աստվածասեր խոջա Զիրաքը, Միրաքը եւ հորեղբայր խոջա Շիրաքը¹⁴, անուններ, որ հայտնի են ոչ միայն Առաքել Դավրիժեցու պատմությունից (Վանա խոջաներ Շիրաք եւ Միրաք)¹⁵, այլեւ Թիմարի Զառահեքիմ Սբ. Տիրամոր վանքի մասին ժողովրդական ավանդազրույցից։ Այս վերջինում Զիրաքը, Միրաքը եւ Շիրաքը հեթանոս քրմեր են, եղբայրներ, որոնց պատկանել է սրբավայրը նախքան խաղաղ քրիստոնեացումը Սբ. Թադեոս առաքյալի ձեռքով¹⁶։ Եւ վերջապես, Կարմրավորա վանքի հետ կապված էր եւս մեկ ավանդույթ, որ միավորում էր այն Վարագա լեռան հետ. ինչպես նշվեց, Վանում լուսաբացը որոշվում էր Վարագա լեռան Գալիլիա գագաթի վրա բարձրացող Արուսյակով, իսկ երբ այն հասնում էր Զիաթունուկ բարձունքին եւ ընկնում էր Կարմրավորի գմբեթի խաչի վրա ու սկսում էր ցուլալ, քաղաքի եկեղեցիներում սկսում էին խփել կոչնակները¹⁷։ Ահա թե ինչու, Ե. Լալայանի նկարագրությամբ, Վանի տարեցները լուսաբացին կանգնում էին դեմքով դեպի Վարագա լեռը եւ աղոթում «շաղաթաթախ աղոթրանին»¹⁸, իսկ ըստ Գ. Շերենցի՝ գնում էին դեպի Կարմրավորը. «Վանեցի պառաւ մամն ու պապը արեւածագից առաջ՝ տալիս են իրանց առաջին երկրպագութիւն, երիցս խաչակնքելով երեսներն, ապա դիմում են եկեղեցին»¹⁹։

Կարմրավորի, այսպիսով, երկնային լույսի իջման եւրոպիկ կեսն է, որ ունի նախաքրիստոնեական հիշատակներ եւ հնամենի սովորույթներ։

Այստեղ կարեւոր է նշել եւս մեկ առանձնահատկություն. հայտնի չէ որեւէ պատմական, կեղծ-պատմական կամ առասպելական զրույց, որ վկայեր Վասպուրականում հեթանոսների ու քրիստոնյաների միջեւ եղած

¹² Հմմտ. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Քանդակագործությունը Հին Հայաստանում (VI դ. մ. թ. ա. – III դ. մ. թ.), ՊԲՀ, 1969, թ. 1, էջ 43–68։

¹³ «Բիւզանդիոն», 1899, թ. 811, էջ 1։

¹⁴ Ե. ԼԱԼԱՅԱՆ, Վասպուրական. Նշանավոր վանքեր, էջ 78։

¹⁵ «Առաքելոյ Դավրէժեցացւոյ», էջ 237։

¹⁶ Մ. ՄԻՐԱՆՈՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 272–273։

¹⁷ Գ. ՍՐՎԱՆՁՏԱՆՅ, նշ. աշխ., էջ 126։

¹⁸ Ե. ԼԱԼԱՅԱՆ, Վասպուրական-Հաւատք, ԱՀ, XXV, Թիֆլիս, 1914, էջ 21։

¹⁹ Գ. ՇԷՐԵՆՑ, Սրբավայրեր, էջ 50։

պատերազմների, տաճարների ավերման, քրմերի սպանության կամ բռնի որեւէ այլ գործողության մասին, թեեւ կան նահատակությունների մի քանի պատմություններ: Ամեն բան հուշում է, որ այստեղ քրիստոնեությունն ընդունվել է խաղաղ ճանապարհով, եւ երբեմնի հեթանոսական սրբավայրերն ուղղակի օծվել են որպէս քրիստոնեական վկայարաններ եւ եկեղեցիներ²⁰:

ՏԵՍԻԼՔԸ ԵՒ ՎԱՆՔԵՐԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԴՐՌԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Թե որն է Վարագա լեռան կատարին ճառագած լույսի սյունների պատմության մեջ ճշմարտությունը, կարող է ընկալելի դառնալ միայն այն դեպքում, եթե փորձենք վերանայել «հրաշք» հասկացությունը ժողովրդական քրիստոնեության պատկերացումների շրջանակներում: Հրաշքը ոչ թե ինչ-որ «գերբնական երեւոյթ» է, որն «անգրագետ» մարդիկ մեկնաբանում են իրենց գիտելիքների չափով եւ վերագրում «վերին ուժերին», այլ նշան է, կապի եւ պայմանի հաստատում մի կողմից՝ անձի, հանրության, մյուս կողմից՝ պաշտամունքի առարկայի միջեւ: Սրբազան առարկան այդ դեպքում ունի կամք եւ գիտակցություն, այն խոսում է մարդու հետ ուժեղ զգացմունքների (Ռ. Օտտոյի եւ Կ. Գ. Յունգի եզրույթով՝ նուրմոզություն), հիազմայականային (էքստատիկ) տեսիլքների, բույրերի ու արտասովոր հնչյունների լեզվով (հիշենք Վարագա լեռան վրա լույսի ճառագման պահին տեսողների ապշահարությունը, տարածվող բույրը եւ հրեշտակների երգեցողությունը), եւ մարդը մեկնաբանում է ստացված տեղեկությունը որպէս պայմանադրություն: Ազդեցիկ, ծոմապահության, ճգնության ճանապարհով (այլ մշակույթներում՝ նաեւ հոգեմետ նյութեր ընդունելով) մարդն ինքը դիմում է սրբազան առարկային՝ գտնվելով որոշակի հոգեբանախոսական վիճակի մեջ եւ, հետեւաբար, պատրաստ լինելով ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկությունը: Այդ վիճակում նրա զգայությունները եւ ներըմբռնումը սրված են, փոխված են տեսնելու եւ շոշափելու, լսելու եւ ըմբռնելու ընդունակությունները: Ընդամին՝ այն անձինք, որոնք ի ծնե

²⁰ Այս հարցը, անշուշտ, պահանջում է առանձին հետազոտություն եւ փաստագրական հիմնավորում: Այստեղ նշենք միայն, որ նախաքրիստոնեական սրբավայրերի վրա կառուցված առավել հայտնի վանքերը՝ Հոգվոց վանքը, Խաթուն Տիրամերը, Սբ. Բարթողիմեոսի վանքը, Աղթամարի Սբ. Խաչ վանքը եւ այլն, ունեն իրենց հարուստ առասպելաբանությունը, որը վկայում է հեթանոսությունից դեպի քրիստոնեություն խաղաղ անցման եւ հին սովորույթների պահպանման մասին:

ունեն հատուկ ընդունակություններ եւ տարիներ շարունակ, ի պաշտոնե կամ սեփական հոգեւոր պահանջմունքից ելնելով, զարգացրել են դրանք, կարող են հասնել ոչ միայն տեղեկատվությունն այսօրինակ՝ անմիջական ճանապարհով ստանալու, այլեւ ուրիշ մարդկանց վրա ներազդելու զորութեան: Անգիտակցականի հնարավորություններն այդ առումով կարող են դրսեւորվել ոչ միայն արթմնի, այլեւ քնած վիճակում, այստեղից՝ գուշակող եւ «սրբազան» երազները: Հրաշք-կապը կարող է ստեղծվել ինչպես անձի կամքով, այնպես էլ դրանից անկախ, հետեւաբար՝ աղոթքն «արդյունք է տալիս», իսկ երազը կամ տեսիլքը «գալիս է» կամ «տրվում է» ինքնաբերաբար:

Վարագա լեռան վրա իշած լույսի սյուների հրաշքի առանձնահատկությունը դրա հանրային, զանգվածային բնույթն է, երբ մարդկային ստվար խումբը միաժամանակ եւ տեւականորեն դիտում է միեւնույն երեւույթը եւ մեկնաբանում է այն միեւնույն կերպ՝ իբրեւ սրբավայրեր կառուցելու աստվածային նշան: Այսինքն՝ եթե տեր Թոդիկի եւ Հովելի համար դա կամովի, սպասված իրադարձություն է, ապա մնացած ժողովուրդն այդ նշանն ստանում է իր կամքից անկախ: Լույսի սյուները մեծ ոգեւորություն, զգացմունքների ալիք են առաջացնում ժողովրդի մեջ:

Այն, որ խոսքը մշակութային եւ ոչ սոսկ զանգվածային պատրանքի երեւույթի մասին է, կարելի է հիմնավորել այն փաստով, որ ինչպես միջնադարում, այնպես էլ մեր օրերում «գերեզմանին լույս իջնել» արտահայտությունը նշանակում է հանգուցյալի՝ նվիրական անձնավորություն, սուրբ կամ նահատակ լինելը, այսինքն՝ սուրբ առարկան (այս դեպքում՝ մահացած մարդը) ինքն իրեն դրսեւորում, բացահայտում է ապրողների համար: Ճիշտ նույն կերպ երազում եկած պահանջով, տեսիլքով, մի քանի մարդու կողմից նկատված երկնային լույսի երեւալով՝ հայտնաբերվում են սրբազան առարկաների (օրինակ՝ Ավետարանների, Նարեկների, խաչերի եւ այլ առարկաների) գտնվելու վայրերի եւ նոր սրբավայրերի կառուցման տեղերը նաեւ մեր օրերում: Բազմաթիվ օրինակներից նշենք միայն մի քանիսը, որոնք կապված են նաեւ պատմամշակութային առարկաների հայտնաբերման հետ: Այսպես՝ Սուլակի Թուխ Մանուկ տան սուրբը հայտնաբերվել է տանտիրոջ երազով, որի մեջ իրեն բացահայտած սուրբը պահանջում է փորել այգու որոշակի հատվածում, եւ այդ գործողությունների հետեւանքով հայտնաբերվել են հին եկեղեցու հիմքեր, մկրտության ավազան, քարե սեղան, մի քանի խաչքար եւ մի քարե կուժ: Եկեղեցու տեղում

կառուցվել է նոր մատուռ, որին ուխտի են գալիս տարբեր իղձերով²¹: Կոտայքի Գեղաշեն գյուղում գերեզմանոցից փոքր-ինչ հեռու մարդիկ մի քանի անգամ երկնքից իջնող լույս են տեսել, իսկ երբ այդ տեղում փորել են, հայտնաբերել են երեք պարզ խաչանշաններով գերեզմանաքարեր, որոնց վրա անմիջապես հյուսվել է գյուղացիների ձեռքով սպանված դժբախտ սիրահարների զրույցը, քարերի վրա մատուռ է կառուցվել, տեղը վերածվել է ուխտավայրի՝ Լուս գերեզման անվանումով²²:

Սակայն կան նաեւ այլ դեպքեր, երբ լույսը, տեսիլքը կամ երազը հայտնվում է արդեն հայտնի հնուկությունների կապակցությամբ: Այսպես՝ Կաթնաղբյուր գյուղի Սբ. Տիգրանը վերաշինվել է որպես մատուռ, երբ բժիշկների կողմից լքված հիվանդ երիտասարդը տենդի մեջ տեսիլք է ունեցել, որ այդ տեղը Սբ. Տիգրանինն է: Իր հիրավի հրաշալի բուժումից հետո նա վերադարձել է հայրենի գյուղ եւ մատուռ է կառուցել, որի մեջ ոչ միայն ամփոփել է այդ տեղում գտնվող եւ հավանաբար նախաքրիստոնեական ծագում ունեցող բարձրաքանդակը, այլեւ մատուռի մեջ է տեղադրել վաղմիջնադարյան քառակողմ կոթող, խաչքարերի բեկորներ եւ ուշ միջնադարի գերեզմանաքար²³: Օրինակները կարելի է շարունակել, սակայն այսքանն էլ բավական է եզրակացնելու համար, որ անգիտակցակա-նը կապ է ստեղծում անձի, հանրության եւ սրբազան առարկաների միջեւ, ընդ որում՝ սրբազանությունը հույժ անհատական է. այդպիսի առարկաներ կարող են լինել ոչ միայն քրիստոնեական կոթողները, այլեւ որեւէ այլ կրոնի վերաբերող նյութեղեն առարկաներ կամ բնական, նույնիսկ անտեսա-նելի առարկաներ («անտես ներկայությունը» նումինոզության որակներից մեկն է): Այստեղ կարելոր է այն ճանապարհը, որով առարկան ձեռք է բերում հատուկ կարգավիճակ, առանձնացվում է նման այլ առարկանե-րից՝ ինքն իրենով արդեն սրբազանության կնիք հաղորդելով տարածքին:

Այն սրբավայրերում, որոնք այդ սրբազանության կնիքն են ստա-նում տեղի թողիկի պատմության մեջ, կան ինչպես այդ օրերին նոր

²¹ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ, Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԴԱՆ, Սոյակ-Մեղրաձոր, 2015 թ.:

²² Լ. ՍԻՄՈՆՅԱՆ, Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԴԱՆ, ք. Աբովյան եւ շրջակա գյուղեր, 2015 թ.:

²³ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ, Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Թալին, 2015 թ.: Հատուկ կարգավիճակն այս եւ այլ դեպքերում կանխում է հնուկությունների առեւանգումը, տեղահանումը եւ կորուստը, քանի որ սրբավայրը միշտ գտնվում է հավատացյալ բնակիչների ուշադրության կենտրոնում: Մյուս կողմից՝ սրբազանության կնիքը պահպանվում է տեղի համար անգամ սրբավայրի փլուզման, հնուկությունների անհետանալու դեպքում:

հայտնաբերված, այնպես էլ վաղուց հայտնի կամ դատարկ տեղում առաջացած սրբություններ:

Տեր Թողիկի պատմությունը նաեւ ցայտուն օրինակ է, թե ինչպես են ժողովրդական քրիստոնեության սրբությունները դառնում պաշտոնական կրոնի առարկաներ: Ի վերջո կաթողիկոս Ներսես Գ.-ն ներկա չէր լույսի սյունների հայտնվելու պահին, սակայն նա ոչ միայն ընդունում է այդ փաստը որպես ճշմարտություն, այլեւ ընդառաջում է ժողովրդին՝ հավանաբար հենց այդ պատճառով վերջինիս կողմից հռչակվելով որպես Շինող:

Ժողովրդական քրիստոնեությունը միատարր երեւույթ չէ, սակայն գոնե հայոց մեջ այն չափազանց կենսունակ մշակութային երեւույթ է: Իր զարմանալի խառնարանում այն միացնում է Հայ Առաքելական Սբ. Եկեղեցու դավանաբանության առանցքային տարրերը, Հիսուս Քրիստոսի միանգամայն «պաշտոնական» կերպարը, աստվածաշնչյան կանոնիկ եւ պարականոն դիպաշարերով կառուցված առասպելաբանությունը եւ բազմաթիվ այնպիսի տարրեր, որոնք որեւէ առնչություն չունեն քրիստոնեության հետ եւ ունեն հին ու նոր, այդ թվում՝ հեթանոսական շրջանից եկող, պաշտամունքային երեւույթների դիմագիծ: Երբեք հնարավոր չէ կռահել, թե ինչը կընտրի ժողովրդական քրիստոնեությունը որպես սրբազան առարկա եւ ինչ ճանապարհներով «կստիպի» հոգեւոր դասի ներկայացուցիչներին ընդունել սրբազանության փաստը՝ օժել իր կառուցածը, շինարարություն ծավալել, տոն կարգել, ծառայող նշանակել եւ այլն՝ դրդելով վարդապետներին որեւէ պատշաճ բացատրություն, մեկնություն հայթայթել դրա վերաբերյալ՝ լինի դա պատմական թե դավանաբանական բնույթի: Ներսես Շինողի համար բավական էր զանգվածային տեսիլքը, քանի որ այն երաշխավորում էր ապագա ուխտի կանոնավոր բնույթը: Այդուհանդերձ՝ գոնե Վերին Վարազավանքի եւ Կարմրավոր Սբ. Աստվածածնի դեպքում ժողովուրդը պահպանում էր ուխտագնացության սեփական կայուն ժամկետը, որը տարբեր է պաշտոնական եկեղեցական տոնացույցի՝ պատմության մեջ մի քանի անգամ փոփոխված ժամկետից: Ժողովրդական քրիստոնեությունն այսպիսով հեշտորեն համադրում է երբեմնի Աստղիկի, Առնակի կամ Վահագնի, գուցե անգամ ուրարտական աստվածությունների հետ կապված սրբավայրերը հաճախելու տոն օրերը Սբ. Հռիփսիմյան կույսերի պաշտամունքի ձեւերի հետ, որին հետամուտ է Վանա Սբ. Նշան եկեղեցում: Սա այն օրինակն է, որը ցույց է տալիս, թե ինչպես է ժողովրդական քրիստոնեությունն աստիճանաբար կերպարա-

նափոխում պաշտոնականը, որի հետեւանքով միջնադարում եւ վաղ Նոր ժամանակում հայոց վանքերն այդքան տարբեր էին միմյանցից՝ պաշտամունքի, հավատալիքի եւ առասպելաբանության, սրբազան առարկաների, նաեւ ուխտի ժամկետների հարցերում:

Պաշտամունքի կերպարանքն արմատապես վերափոխում է նաեւ առասպելաբանությունը: Նոր մեկնաբանությունները չեն կարող զերծ մնալ ժողովրդական պատկերացումների ազդեցություններից: Իսկ քանի որ առասպելական ձեւերը եւ կաղապարները չափազանց պահպանողական են, քրիստոնեական մեկնաբանության ենթիմաստում դժվար չէ ճանաչել հնամենի դիպաշարերը: Սակայն քրիստոնեացված մեկնությունները, որքան էլ նման լինեն հին առասպելներին եւ չզիջեն դրանց հեքիաթային-հրաշալի էությունը, «պատմական» երանգով եւ բնության երեւոյթները յուրովի բացատրելու հակվածությամբ, դրանք ունեն որոշակի առաքելություն՝ կապել դիպաշարերն աստվածաշնչյան կերպարների, համաշխարհային քրիստոնեության սրբերի ու նահատակների կյանքի եւ որոշակի գաղափարախոսության հետ: Այն դեպքերում, սակայն, երբ մեկնաբանության ենթակա երեւոյթը չի կարող տեղավորվել այդ շրջանակի մեջ, կիրառվում է «դիտավորյալ պատմականացման» մեթոդը:

Երբեմնի տասներկու լույս-պահակները (հիշենք նաեւ միջնադարում ժամբրը «պահակ» կոչելու ավանդույթը) ի հայտ էին գալիս ամեն առավոտ, եւ այդ իրադարձության մեջ հրաշալի էր տիեզերական պարբերականությունը, բնությունն ինքնին իբրեւ հրաշք: Չի բացառվում, որ երբեմնի Աստղիկի երեկոյան ծագելու կամ առավոտյան մայր մտնելու պահին իսկապես կրակներ են վառվել հեթանոսական տասներկու սրբավայրերում, օրինակ՝ Ահեւական (Ախավանք) գյուղում, գուցե նաեւ ապագա Ներքին Վարազավանքի տեղում: Ի վերջո միանգամայն տրամաբանական է ենթադրել, որ Արուսյակի մայրամուտով եւ ծագելով՝ օրը բաժանվել է ցերեկվա եւ գիշերվա նաեւ նախաքրիստոնեական շրջանում, որի ազդանշանն էր վառվող կամ մարվող խարույկը Վարազա լեռան գագաթին: Քրիստոնեացված տարբերակին, սակայն, անհրաժեշտ էր միանվազ հրաշքը, որ կապված էր սուրբ անձանց, նրանց տոկման եւ հավատքի հետ, եւ Վարազա լեռան լույսի սյուները ոչ այլ ինչ են, քան յուրաքանչյուր առավոտյան ի հայտ եկող տասներկու «ղավազները»՝ պահապանները կամ ցերեկվա ժամերն արձանագրող կրակները, բայց այս անգամ դրանք երեւում են ոչ թե մի պահ, այլ ինը ժամ շարունակ եւ նշանավորում են այն

միանվագ իրադարձությունը, որի հիշատակը պետք է պահվեր տոնի, ուխտագնացության, գրավոր եւ բանավոր ավանդության ձևով:

Քրիստոնեական ավանդությունն ունի նաեւ արտոնման գործառույթը: Փաստերը հուշում են, որ երկնային լույսի իջման տեղերի գոնե մի մասում եղել են հեթանոսական սրբավայրեր, որոնց ուխտի գնալը, թերեւս, շարունակվել է Հայոց դարձից հետո դեռ շատ երկար ժամանակ: Մյուս կողմից՝ Սբ. Հռիփսիմյանց պատմությունը նկարագրում է հենց հեթանոսական սրբավայրերի քրիստոնեացումը: Հետեւաբար Վարագա Սբ. Խաչի ողջ պատմությունը կոչված է արտոնելու հին սրբությունների պաշտամունքը՝ որպես քրիստոնեական, դրանց քրիստոնեական կերպարանքն ապահովում են Սբ. Հռիփսիմյանց գործողությունները, Կենաց փայտի մասունքի ներկայությունը եւ երկնային լույսի սյուների իջնելը:

Այս ճանապարհով պարզվում է, որ երկնային լույսի սյուներն սկզբնական շրջանում վերաբերում էին վաղքրիստոնեական այն սրբավայրերին, որոնք կառուցվել են նախկին՝ հեթանոսական պաշտամունքների տեղերում, ընդ որում՝ այնպիսի պաշտամունքների, որոնց գոնե մի մասը, քրիստոնեական կերպարանք ստանալով, շարունակել է գոյատևել: Պատահական չէ Հայսմավուրքների մեջ համառորեն կրկնվող այն արտահայտությունը, որ Հռիփսիմյանց կույսերի հեռանալուց հետո երկիրը շարունակում էր մնալ հեթանոսական, մինչդեռ ինչպես նրանց, այնպես էլ Սբ. Թադեոսի եւ Սբ. Բարդուղիմեոսի քարոզչական գործունեության մասին զրույցները նկարագրում են Վասպուրական աշխարհի աստիճանական եւ հանդարտ, խաղաղ քրիստոնեացումը եւ հեթանոսական սրբությունների, դրանց ուխտագնացությունների ու տոնական ժամկետների պահպանումն ու վերաիմաստավորումը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարագա Սբ. Նշանի հետ կապված սովորույթների եւ ավանդության կայուն համալիրն ապրել է է. դարից մինչեւ Վասպուրականի հայաթափությունը, բայց պահպանվել է Տավուշի Նոր Վարագավանքի կենդանի ուխտագնացության մեջ: Շնորհիվ տոնի եւ լայնորեն տարածված ավանդազրույցի, գրական մշակումների՝ Վանի հարեւանությանը գտնվող վանքը եւ իր առասպելական պատմությունը ներկայանում են որպես համազգային արժեք:

Թեեւ տոնական ժամկետները պարբերաբար փոփոխվել են, իսկ ժողովրդական ուխտագնացությունները պահպանել են հնագույն ժամկետները, հայոց տոնացույցի մեջ Վարազա Սբ. Նշանի տոնը նշվել է անփոփոխ ամեն տարի:

Տեղեկությունների քննությունը թույլ է տալիս առաջ քաշել վարկած առ այն, որ Սբ. Նշանի արձակած տասներկու լույսերը մատնանշել են այն վայրերը, որտեղ մինչ այդ եղել են նախաքրիստոնեական պաշտամունքի դեռևս կենդանի սրբավայրեր, որոնք էլ խաղաղ ճանապարհով վերաիմաստավորվել եւ վերակառուցվել են որպես եկեղեցիներ:

Զանգվածային տեսիլքի եւ դրա մասին պատմող ավանդության եւ գրական երկի ձեւով Հայ Առաքելական Սբ. Եկեղեցու կողմից արտոնվել են նշված սրբավայրերի ուխտերն ու պաշտամունքը որպես Սբ. Նշանի կողմից ընտրված քրիստոնեական եկեղեցիներ:

Ավանդության միջոցով տեղական պաշտամունքը վերածվել է ազգային խորհրդանիշի, եւ դարեր անց կառուցվել են Վարազա Սբ. Նշանի անունը կրող նաեւ այլ եկեղեցիներ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վարազա Սբ. Նշան, Տափուշի Նոր Վարազավանք:

РЕЗЮМЕ

Средневековые Четьи-Минеи включают историю возникновения праздника Св. Креста Варага, который вначале отмечался в августе, далее — в феврале, а начиная с 19-го в. отмечается в сентябре. Легенда сообщает о событии, происшедшем в 7-ом в., когда молитвами двоих священнослужителей явилась частица Животворящего креста, некогда спрятанного Св. Рипсимэ и ее соратниками в пещере на горе Вараг, в виде мощного потока света, который разделился на 12 столпов и указал на места, где должны были быть построены церкви.

Сравнение археологических и этнографических данных с легендой позволяет предположить, что 12 столпов небесного света отмечали древние дохристианские святилища, которые все еще являлись святыми местами паломничества, а история — это реминисценция старого мифа, измененная на


христианский манер, а также толкование, необходимое для санкционирования древних религиозных явлений. Она заменила прежние мифы или скорее сосуществовала одновременно с ними и отражала переход культа с местного на общенациональный уровень. Легенда, которая способствовала возникновению праздника и постройке по крайней мере трех церквей, носила идею национального единства вокруг определенного предмета почитания, так что позднее под именем Св. Креста Варага были построены церкви не только в Васпуракане, но и в Восточной Армении.

SUMMARY

The medieval Synaxaries include the story of the origin of the feast of Holy Cross of Varag, which was first celebrated in August, then in February, and since the 19th century it has been celebrated in September. The story tells of an event that took place in the 7th century when, through the prayers of two clergymen, a piece of the Life-Giving Cross, once hidden by St. Hripsime and her companions in a cave on Mount Varag, appeared in the form of a powerful stream of light that divided into 12 pillars and pointed to the places where churches were to be built.

Comparison of archaeological and ethnographic data with the legend suggests that the 12 pillars of heavenly light marked ancient pre-Christian shrines that were still holy pilgrimage sites, and the story is a reminiscence of an old myth modified in a Christian manner, as well as an interpretation necessary to substantiate the existing religious practices. It replaced or rather co-existed with older myths and reflected the transition of the cult from the local to the national level.

The legend, which contributed to the origin of the feast and construction of at least three monasteries, carried the idea of national unity around a certain object of veneration, so that churches under the name of the Holy Cross of Varag were built later not only in Vaspurakan, but also in Eastern Armenia.



**ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈՉԻՉՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՃԱՍՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1830–1831 ԹԹ.**

Սկիզբը՝ թիվ Ա.

Ամերիկացի քարոզիչների ուսումնասիրություններում մեծ տեղ է հատկացված Հայ Առաքելական Եկեղեցուն: Քարոզիչները պարբերաբար անդրադառնում են Հայոց Եկեղեցու դավանաբանական առանձնահատկություններին, ծեսերին ու ավանդույթներին, քրիստոնեական խորհրդանիշներին՝ մասնավորապես խաչին, խաչակնքման ձևին, խաչի պաշտամունքի հետ կապված առանձնահատկություններին, ծոմապահությանը եւ այլն¹: Ներկայացնում են Հայոց Եկեղեցու հոգեւոր դասի եւ աստիճանակարգի հետ կապված առանձնահատկությունները²:

Քարոզիչներն իրենց ուղեւորության ընթացքում այցելում են նաեւ էջմիածին, որին նվիրված են աշխատության 15-րդ եւ 16-րդ գլուխները: Այստեղ հեղինակները նկարագրում են Մայր Աթոռը եւ Հայոց Եկեղեցու մի շարք ծեսեր եւ արարողություններ, անդրադառնում են խոստովանության կարգին, մյուռոնի օրհնությանը, մկրտությանը, Եկեղեցու յոթ խորհուրդներին, եպիսկոպոսների ձեռնադրությանը, Մայր Աթոռի եկամուտներին, թեմերին եւ մի շարք այլ հարցերի³: Վերջիններս մասնակցում են Մայր Աթոռում տեղի ունեցած պատարագին, որին ներկա էին Եփրեմ կաթողիկոսը եւ Հայկական մարզի կառավարիչ գեներալ Վ. Բեհբուլթովը⁴: Քարոզիչների վկայությամբ իրենց այցի ընթացքում Մայր Աթոռի միաբանությունում եղել են 14 եպիսկոպոս, 45–50 վարդապետ եւ 7–8 սարկավագ⁵:

Քարոզիչները նշում են, որ սկզբում Մայր Աթոռում իրենց որոշակի սառնություն էր ընդունել, քանի որ տեղեկություն էր տարածվել,

¹ Անդ, էջ 86–89, 96–99, 106–110:

² Անդ, էջ 231–236:

³ Անդ, էջ 280–310:

⁴ Անդ, էջ 283–287:

⁵ Անդ, էջ 301:

որ իրենք Հայաստան են ժամանել հայությանը դավանափոխ անելու նպատակով: Էջմիածնի միաբանության անդամները հիմնականում խուսափել են հարցազրույցներ տալուց, հնարավոր չի եղել նաեւ առանձին զրույց ունենալ կաթողիկոսի հետ: Քարոզիչներին հաջողվում է էջմիածնի միաբաններից հանդիպել կաթողիկոսի քարտուղար Հովհաննես վրդ. Սուրենյանի հետ, որից քարոզիչները ջերմ տպավորություններ են ստանում: Վերջինիս հետ նրանք քննարկում են քրիստոնեական հավատքի եւ եկեղեցու հետ կապված մի շարք հարցեր: Հովհաննես վարդապետը քարոզիչներից հետաքրքրվել է իրենց այցի նպատակ մասին, որին ի պատասխան՝ քարոզիչները հայտնում են, որ իրենց գլխավոր նպատակը Հայաստանի եւ նրա բնակիչների՝ հատկապես վերջիններիս կրոնական վիճակի ուսումնասիրումն է: Այստեղ քարոզիչներին իրազեկում են նաեւ, որ իրենք առաջին ամբողջացիներն են, որ երբեւէ այցելել են Մայր Աթոռ⁶:

Մայր Աթոռում քարոզիչներին վերջիվերջո հաջողվում է տեսնել կաթողիկոսին՝ վերջինիս ձեռնադրման 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառման ժամանակ, սակայն առանձին զրույց նրա հետ այդպես էլ տեղի չի ունենում: Միջոցառմանը ներկա է լինում նաեւ իշխան Բեհբուժովը կնոջ հետ: Քարոզիչները հայտնում են, որ Մայր Աթոռի այգում կազմակերպված հյուրասիրության ժամանակ կաթողիկոսի կենացը ներկաները խմում են կոնյակով (brandy), որին հաջորդում է այդտեղ գտնվող զինված գյուղացիների հրացանային համազարկով ողջույնը⁷: Եթե քարոզիչները հիշատակված խմիչքը չեն շփոթում կոնյակի հետ, ապա կարծում ենք, որ սա Հայաստանի տարածքում կոնյակի վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունն է: Նույն աշխատության մեջ ուղեւորները մի քանի տեղ եւս փաստում են տեղի ժողովուրդների՝ կոնյակի օգտագործումը:

Աշխատանքում կան հետաքրքրական տվյալներ նաեւ կաթոլիկ հայերի մասին: Քարոզիչների վկայությամբ կաթոլիկների թիվն ավելացել էր վերջին մի քանի տարվա ընթացքում, եւ նրանց բավական լուրջ աջակցություն էին ցուցաբերում եւրոպական տերությունները: Օրինակ՝ նշվում է, որ Զմյուռնիայում ապրող 8 հազար հայերից 2–3 հազարը հայ կաթոլիկներ էին, իսկ Կ. Պոլսում վերջիններիս թիվը 27 հազարի էր հասնում⁸: Սա

⁶ Անդ, էջ 282, 303–304:

⁷ Անդ, էջ 294–295, 298:

⁸ Անդ, էջ 2, 19, 33:

ցույց է տալիս, որ կաթոլիկ քարոզիչները եւս աշխույժ գործունեություն էին իրականացնում Օսմանյան կայսրության հայերի շրջանում: Տեղեկություններ են հաղորդվում նաեւ բուն Հայաստանի տարածքում գտնվող հայ կաթոլիկ գյուղերի, նրանց նիստուկացի, Հայոց Եկեղեցու հետ ունեցած հարաբերություններ մասին⁹:

Մեծ թվով կաթոլիկ հայեր՝ 645 անձ, եղել են նաեւ էրզրումում, որը հայերի շրջանում քարոզչություն իրականացնող ճիզվիտների կենտրոնն էր: Նրանք այստեղ էին հաստատվել դեռեւս 1688 թ.¹⁰ Ֆրանսիական դեսպանի միջոցով սուլթանից ստանալով ապահովության հրամանագրեր: Սակայն քարոզիչների այցի ընթացքում էրզրումի ճիզվիտների կենտրոնն այլեւս չէր գործում: Իսկ հայ կաթոլիկների քահանան սկսված հալածանքների պատճառով վտարվել էր Կ. Պոլիս¹⁰: Հատկանշական է, որ քարոզիչները կաթոլիկներին անվանում են ուղղակի պապականներ, աշխատությունում երբեք չի գործածվում կաթոլիկ անվանումը:

Ամերիկացի քարոզիչները չափազանց հետաքրքրական տեղեկություններ են հայտնում նաեւ Արեւմտյան Հայաստանում՝ Ակնում եւ էրզրումից ոչ հեռու գտնվող մի քանի հայկական գյուղերում ապրող հայ ուղղափառների մասին, որոնք ենթարկվում էին Կ. Պոլսի ուղղափառ պատրիարքին: Վերջինս այդ գյուղերում նշանակել էր ուղղափառ եպիսկոպոս: Ուղղափառ հայերը խոսել են հայերեն, նրանց եկեղեցական գրքերը եւս եղել են հայերեն: Քարոզիչներին տեղում պատմել են, որ երբ այս ուղղափառ հայերն ուխտի են գնում Երուսաղեմ, մասնակցում են Հայոց Եկեղեցու պատարագներին, քանի որ հունարեն ոչինչ չեն հասկանում: Քարոզիչների վկայությամբ Ակնի ուղղափառ հայերից շատերը դրամատնային բաժնետերեր են եղել, եւ նրանցից ոմանք Կ. Պոլսում իրենց բնագավառի ամենից կայացած ու հարուստ գործիչներից էին: Նրանցից մեկի հետ քարոզիչները հանդիպել են էջմիածնում¹¹: Քարոզիչները նշում են, որ բացի վերը նշված գյուղերից՝ նրանք չեն լսել ուղղափառ հայկական որեւէ այլ համայնքի գոյության մասին: Մեզ եւս չհաջողվեց ուրիշ տեղեկություններ գտնել քարոզիչների հիշատակած հայ ուղղափառների վերաբերյալ:

⁹ Անդ, էջ 428—433:

¹⁰ Նույն տեղում, էջ 64—66, 99:

¹¹ Նույն տեղում, էջ 418—419:

Իրենց ուսումնասիրություններում ամերիկացի քարոզիչները պարբերաբար անդրադառնում են նաեւ տարածաշրջանում բողոքական քարոզիչների գործունեությանը եւ արդեն իսկ գոյություն ունեցող առաքելություններին ու համայնքներին: Մասնավորապես Շուշի այցի ժամանակ քարոզիչները հաղորդում են խիստ հետաքրքրական տեղեկություններ Գանձակից ոչ հեռու գտնվող գերմանական Անեֆելդ, ինչպես նաեւ Վրաստանի տարածքում հաստատված բողոքական մի քանի այլ գաղութների մասին, որոնք ապաստանել էին այստեղ, քանի որ այդ տարիներին տարածված լուրերի համաձայն՝ 1836 թ. տեղի էր ունենալու աշխարհի կործանումը՝ Ապոկալիպսիսը¹²:

Աշխատանքի 11-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Շուշիում հաստատված քարոզիչների գործունեությանը եւ նրանց՝ Կովկասում հաստատվելու պատմությանը: Աշխատանքի այս հատվածում անդրադարձ կա նաեւ բողոքական քարոզիչների եւ Հայոց Եկեղեցու հարաբերություններին, նրանց միջեւ գոյություն ունեցող հակասություններին¹³:

Թեեւ քարոզիչները չեն եղել Համշենում, սակայն որոշ տեղեկություններ են հաղորդում նաեւ այդ տարածաշրջանի իսլամացած հայերի եւ հույների մասին¹⁴:

Հետաքրքրական են քարոզիչների անդրադարձները հայերի կրթական կյանքին: Որպես կանոն՝ վերջիններիս իրենց այցելած բնակավայրերում հետաքրքրում է դպրոցների գոյությունը: Դպրոցները հիմնականում եկեղեցիներին կից գործող ծխական դպրոցներ էին, որտեղ ուսուցանում էին տարրական գրագիտություն¹⁵: Գյուղական բնակավայրերի հիմնական մասն զրկված էր անգամ այդպիսի դպրոցներից, ինչը բազմիցս փաստում են քարոզիչները:

Դպրոցները հիմնականում գործել են քաղաքներում: Օրինակ՝ գյուղական վայրերում դպրոցներ չլինելու պատճառով էրզրումի շրջանի հայերն իրենց երեխաներին ուղարկում էին էրզրում: Քարոզիչների վկայությամբ էրզրումի հայկական դպրոցը բավականին զարգացած էր, տնօրենն աշխարհիկ անձնավորություն էր, ուներ 5–6 օգնական ուսուցիչ: Դպրոցում սովորում էր 500–600 աշակերտ, որը բավական մեծ թիվ է ժամանակի

¹² Անդ, էջ 166–171:

¹³ Անդ, էջ 195–217:

¹⁴ Անդ, էջ 456–457:

¹⁵ Անդ, էջ 43:

համար: Նշվում է նաեւ, որ էրզրումի հայերի շրջանում գրագիտության մակարդակը բավականին բարձր էր, գրագետ էին նաեւ քաղաքի որոշ կանայք, որոնք դպրոց չէին հաճախում, քանի որ դպրոցը նախատեսված էր միայն արական սեռի համար: Էրզրումի հայկական դպրոցը քարոզիչների այցի ժամանակ չի գործել, տեղի հայերի մեծ մասի՝ Արեւելյան Հայաստան գաղթելու պատճառով¹⁶:

Քարոզիչները Կարսում, որտեղ Արեւելյան Հայաստան գաղթից հետո դեռ կար 600 տուն հայ, այցելում են մինչ այդ իրենց պատահած գործող առաջին դպրոց¹⁷:

Քարոզիչները գրում նաեւ են Թիֆլիսի հայտնի Ներսիսյան դպրոցի մասին: Նրանք բարձր են գնահատում Ներսես Աշտարակեցու գործունեությունը՝ հատկապես նրա ջանքերը կրթության կազմակերպման հարցում: Հստ քարոզիչներին՝ որակյալ դպրոց ունենալու համար շենքային անհրաժեշտ պայմաններից բացի՝ խիստ դժվար էր որակյալ մասնագետների հարցը: Ներսես Աշտարակեցուն հաջողվել էր լուծել երկու խնդիրներն էլ. գեղեցիկ եւ հարմարավետ շինություն՝ կահավորված ժամանակի կրթական պահանջներին համապատասխան, տարբեր տեղերից հրավիրված բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Այդ շրջանում դպրոցն ուներ 10–11 ուսուցիչ եւ մոտ 200 աշակերտ: Տպավորված քարոզիչները նշում են, որ այն չէր տարբերվում ժամանակի եւրոպական կրթական նմանատիպ հաստատություններից¹⁸:

Իրենց աշխատության էջերում քարոզիչները պարբերաբար տեղեկություններ են հաղորդում տղաների համար նախատեսված այլ դպրոցների մասին, որոնք գործել են Շուշիում, Արցախի Սուրբ Հակոբավանքում, Գանձակում, Շամախիում, Շաքիում, Տաթեւում, Գյումրիում, Երեւանում, Աշտարակում, Տրապիզոնում¹⁹: Հատկապես հետաքրքրական են քարոզիչների անդրադարձները Շուշիի կրթական կյանքին: Վերջինների վկայությամբ 1827 թ. այնտեղ հիմնադրվել էր արական դպրոց, նաեւ մեկ մասնավոր դպրոց, որի աշակերտների թիվը հասնում էր 130-ի: Հայտնի է, որ Շուշիում կրթական գործունեություն էին իրականացնում այնտեղ հաս-

¹⁶ Անդ, էջ 65, 77, 95:

¹⁷ Անդ, էջ 94:

¹⁸ Անդ, էջ 132–135:

¹⁹ Անդ, էջ 192, 279, 456:

տատված բողոքականները, որոնց ջանքերով 1831 թ. դրուժյամբ Շուշիում եւ շրջակայքում գործել է հինգ դպրոց, ինչպես նաեւ՝ տպարան²⁰:

Քարոզիչների ուշադրության կենտրոնում են հայտնվում նաեւ կանանց կրթության հարցերը: Վերջիններս նշում են, որ իգական սեռի համար նախատեսված որեւէ դպրոց իրենց հայտնի չէ ողջ Հայաստանի տարածքում՝ բացի մեկից, որը գործել է Ագուլիսում իրենց այցից մոտ 20 տարի առաջ այնտեղ գտնվող կուսանոցում, եւ այն ունեցել է շուրջ 60 աշակերտ: Արցախ այցելության ընթացքում քարոզիչները հիշատակում են մի հետաքրքրական դեպք այն մասին, որ Գանձակում եւ Շամախիում 2–3 աղջիկների թույլատրվել է կարդալ սովորել տղաների արական դպրոցում²¹: Փաստորեն՝ սա երկու սեռերի աշակերտների նույն դպրոց հաճախելու առաջին հիշատակություններից է հայկական կրթական կյանքի պատմության մեջ: Իսկ Շուշիի դպրոցներից մեկում տղաներին դասավանդել է իգական սեռի ներկայացուցիչ՝ կուսանոցից, որը կրկին բացառիկ երեւույթ էր:

Իրենց տեղեկությունների հիման վրա քարոզիչները նշում են, որ Թուրքահայաստանում, Ռուսահայաստանում եւ Պարսկահայաստանում միասին վերցրած՝ գործել է հայկական 14 դպրոց: Իհարկե հայկական դպրոցների թիվը շատ ավելին է եղել, ուղղակի քարոզիչներին հասանելի չի եղել ամբողջական տեղեկատվությունը:

Քարոզիչներն Արեւմտյան Հայաստանում գտնվելու ընթացքում ականատես են լինում 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արեւմտահայերի գաղթին դեպի Արեւելյան Հայաստան եւ հետաքրքրական տեղեկություններ են հայտնում այդ մասին: Քարոզիչները հասնում են էրզրում այն ժամանակ, երբ մի քանի օրից ռուսական զորքերը պետք է լքեին քաղաքը: Վերջիններս ականատես են լինում էրզրումից, այնուհետեւ նաեւ Կարսից հայերի գաղթին: Նկարագրում են գաղթականների սարսափելի ծանր վիճակը, որոնց, ըստ քարոզիչների, Ամերիկայում ուղղակի մուրացկաններ կհամարեին իրենց տեսքի պատճառով²²: Քարոզիչները նկարագրում են հայերի լքած էրզրումը, Կարսը, Բայազետը եւ բազմաթիվ այլ վայրեր, ամայի ու անմշակ դարձած դաշտերը: Հայտ-

²⁰ Անդ, էջ 205–206, 208, 214:

²¹ Անդ, էջ 191:

²² Անդ, էջ 62–75:

նում են, որ հայերի գաղթից հետո էրզրումում մնացել էր ընդամենը 120 առաքելական եւ 48 կաթողիկ հայ ընտանիք: Քաղաքում եղած 6000 խանութների կեսը փակվել էր, չէին գործում նաեւ արհեստանոցները²³: Ամերիկացի քարոզիչներին հանդիպած մի հայ եպիսկոպոս տեղեկացնում է, որ գաղթել է շուրջ 15 հազար հայ ընտանիք, կամ՝ 75 հազար անձ, որից 7 հազար ընտանիք՝ էրզրումից, 4 հազարը՝ Կարսից, եւ 4 հազարը՝ Բայազետից: Գաղթից հետո երկրորդ անգամ էրզրումում գտնվելու ժամանակ տեղացի հարկահաններից մեկը քարոզիչներին իրազեկել է, որ միայն էրզրումից հեռացել է 97 հազար հայ²⁴: Այս թիվը խիստ չափազանցված է: Քարոզիչները վկայում են, որ թուրքերն ականհայտորեն զղջում էին հայերի գաղթի համար, քանի որ էրզրում քաղաքը եւ շատ այլ բնակավայրեր գրեթե ամբողջությամբ լքյալ վիճակում էին հայտնվել²⁵: Հայերի հեռանալուց հետո հատկապես մեծ էր տնտեսական վնասը, ուստի պատահական չէ, որ թուրքական իշխանություններն իրավիճակն ավելի չվատթարացնելու համար չգաղթած հայերին վերցրել էին իրենց պաշտպանության տակ՝ մոլեռադ ամբոխի վրեժխնդրությունից պաշտպանելու նպատակով:

Քարոզիչներն էրզրումում գտնված ժամանակ նկարագրում են մի հետաքրքրական դեպք: Երբ մոտենում են ռուսների գրաված քաղաքին, քարոզիչների հետ գտնվող թուրք ուղեկցորդը, տեսնելով ռուս զինվորներին, զենքերն արագ տալիս է ազգությամբ հայ ուղեկցողին: «Հաղթական ռուսական բանակը փոխել էր թուրքի եւ հպատակ ժողովրդի դիրքերը»²⁶, — գրում են դեպքին ականատես քարոզիչները:

Քարոզիչներն Ատրպատականում գտնվելու ժամանակ անդրադառնում են նաեւ պարսկահայերի գաղթին եւ կրկին հաղորդում հետաքրքրական տեղեկություններ, վիճակագրական տվյալներ հայերի հեռանալուց հետո Ատրպատականի հայաշատ բնակավայրերում ստեղծված վիճակի վերաբերյալ: Վերջիններիս վկայությամբ 60—70 հայ ընտանիք գաղթից հետո, չհարմարվելով նոր պայմաններին, կրկին վերադարձել է Ատրպատական²⁷: Աշխատության մեջ տեղեկություններ կան նաեւ Ատրպատակա-

²³ Անդ, էջ 441:

²⁴ Անդ, էջ 94:

²⁵ Անդ, էջ 68:

²⁶ Անդ, էջ 61:

²⁷ Անդ, էջ 315, 324—325:

նից գաղթած եւ Արարատյան դաշտի գյուղերում հաստատված հայության վերաբերյալ²⁸:

Ամերիկացի քարոզիչները հատկապես հնարավոր մանրամասն տեղեկություններ են հաղորդում նաեւ մի շարք խոշոր քաղաքների մասին՝ էրզրում, Կարս, Թիֆլիս, Շուշի, Երեւան, Թավրիզ, Տրապիզոն²⁹:

Վերջիններս մասնավորապես կարեւորում են էրզրումի դերն Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ առեւտրի հարցում, որում հսկայական էր հայերի կշիռը: Քաղաքն ունեցել է 36 իջեւանատուն: Քարոզիչների բնութագրմամբ՝ անգամ Բարեհուսո հրվանդանի հայտնագործման եւ ծովային առեւտրի զարգացման պարագայում էրզրումը չէր կորցրել իր նշանակությունը: Սակայն, ինչպես արդեն ասվեց, հայերի գաղթից հետո տեղի առեւտուրն ու արհեստները գրեթե ամբողջությամբ դադարել էին³⁰:

Հետաքրքրական են քարոզիչների հաղորդած տեղեկությունները Թիֆլիսի եւ այնտեղ ապրող հայերի վերաբերյալ: Աշխատության 5-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Թիֆլիսին: Հաղորդած տվյալների համաձայն՝ 1825 թ. դրությամբ Թիֆլիսում ապրել են 2500 հայ ընտանիք, 1500 վրացի ընտանիք, 500 մուսուլման ընտանիք: Իսկ արդեն 1830 թ., մի հայ եպիսկոպոսի հայտնած տեղեկությունների համաձայն, Թիֆլիսի հայ ընտանիքների թիվը հասնում է 4000-ի: Քարոզիչները սա համարում են փոքր-ինչ չափազանցված, քանի որ, ըստ նրանց, Թիֆլիսում ընդհանուր բնակչությունն այդ շրջանում կազմում էր 30 հազար մարդ: Թիֆլիսի ողջ առեւտուրն ու արհեստները գտնվել են հայերի ձեռքում: Միսոներները քաղաքում հանդիպել են ընդամենը մեկ վրացի, երկու-երեք հույն եւ մեկ շվեյցարացի առեւտրականների: Սակայն վերջիններս զարմանքով նշում են, որ թեեւ հայերը մեծամասնություն էին կազմում Թիֆլիսում, սակայն հաճախ խոսում էին վրացերեն: Քարոզիչները հիշատակում են Թիֆլիսի հայկական 10 եկեղեցու մասին, որոնցից մեկը հատկացված է եղել կուսանոցին, եւ մեկը չի գործել, եւ եւս 5-ը եղել են Թիֆլիսի արվարձաններում: Վերջիններս բերում են նաեւ Ժան Շարդենի՝ Թիֆլիսի հայկական եկեղեցիների վերաբերյալ հաղորդած տեղեկությունները, ըստ որի՝ հայկական եկեղեցիների թիվը հասել է 20-ի, որից 12-ը՝ կենտրոնում,

²⁸ Անդ, էջ 272–274:

²⁹ Անդ, էջ 62–70, 91–92, 121–138 եւ այլն:

³⁰ Անդ, էջ 66–67:

8-ը՝ արվարձաններում: Այն դեպքում, որ, ըստ ականատես քարոզիչների, Թիֆլիսում եղել է վրացական ընդամենը 8 կամ 10 եկեղեցի³¹:

Աշխատության երկու գլուխներ՝ 10-րդը եւ 11-րդը, նվիրված են Շուշիին: Այս գլխում հեղինակներն անդրադառնում են ոչ միայն Շուշի քաղաքին, այլ նաեւ ողջ Ղարաբաղին ընդհանրապես: Քարոզիչները նկարագրում են Շուշի քաղաքը, նրա աշխարհագրական դիրքը, շենքերը, բնակչությունը, կրթական եւ մշակութային կյանքը, բնակիչների սովորույթները: Շուշիում հայերին է պատկանել 2 մեծ եւ 2 փոքր եկեղեցի: Քաղաքում եղել է նաեւ 2 մզկիթ: Նշվում է, որ Ղարաբաղի բնակչությունը մոտ 50 հազար է, որի կեսը հայեր են, կեսը՝ մուսուլմաններ: Հետաքրքիր է, որ Ղարաբաղի եւ շրջակայքի եկվոր մուսուլման բնակիչներին քարոզիչները հավաքական ձեռով անվանում են ուղղակի մուսուլմաններ: Քարոզիչները նշում են, որ Ղարաբաղի եւ շրջակա նահանգների մուսուլմաններին ռուսներն ու եւրոպացիներն անվանում են թաթար, հայերը՝ թուրք, իսկ իրենք իրենց անվանում են ուղղակի մուսուլմաններ: Աշխատության մեջ անդրադարձ է կատարվում նաեւ վերջիններիս սովորույթներին, լեզվին, գրագիտության մակարդակին³²: Քարոզիչները փաստում են, որ տեղացի մուսուլմանների լեզուն գրավոր լեզվի մակարդակի չի հասել, եւ տեղական թուրքական լեզվով իրենց հայտնի չէ մինչ այժմ գրված կամ հրատարակված որեւէ գիրք: Ղարաբաղի եւ շրջակայքի թուրքալեզու մահմեդականները գրագետ չէին եւ որեւէ ցանկություն չունեին համագործակցելու քարոզիչների հետ: Վերջիններիս համար տարբեր գրքերի թարգմանության հարցում Շուշիում հաստատված քարոզիչներին օգնում է բռնի մահմեդականացած, իսկ ռուս-պարսկական պատերազմից հետո կրկին քրիստոնեությանը վերադարձած Հարություն անունով մի հայ, որը փայլուն տիրապետում էր տեղական լեզուներին: Վերջինիս գրչին էր պատկանում Նոր Կտակարանի թուրքերեն թարգմանությունը: Սակայն համապատասխան տառատեսակների բացակայությունը դժվարացնում էր թարգմանված գրքերի եւ քարոզչական նյութերի տպագրությունը տեղացի մահմեդականների լեզվով, թեեւ առաջին նման

³¹ Անդ, էջ 128–153:

³² Անդ, էջ 179–189:

փորձերը կատարվում են, սակայն քարոզչական իմաստով, ինչպես արդեն ասացինք, դրանք որեւէ օգուտ չեն տալիս³³:

Շուշիին նվիրված գլխում նկարագրում են նաեւ Ղարաբաղի հայերի սովորույթները, կրթության նկատմամբ վերաբերմունքը, դպրոցները, դասագրքերը: Հեղինակներն անդրադառնում են նաեւ տարբեր բնակավայրերի բնակչության թվաքանակին: Օրինակ՝ Շիրվանում, վերջիններիս վկայությամբ, կար 50 հայկական գյուղ, եւ 200 հայ ընտանիք՝ բուն քաղաքում, իսկ Բաքվում, որն ունեցել է մոտ 5000 բնակիչ, հաշվվել է 80 հայ ընտանիք³⁴: Նշենք, որ Ղարաբաղի եւ շրջակա շրջանների հայերի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես քարոզիչներն են վկայում, հիմնականում տրամադրում են Շուշիի բողոքականները: «Շուշի» վերնագրված 11-րդ գլուխը հիմնականում նվիրված է Շուշիի բողոքական առաքելության գործունեության ներկայացմանը:

* * *

Այսպիսով՝ խիստ կարեւորելով ամերիկացի քարոզիչների՝ Հայաստանում կատարած ուսումնասիրությունների եւ դրանց արդյունքների հրատարակման նշանակությունը՝ նշենք որ ինչպես յուրաքանչյուր նման աշխատության դեպքում, այստեղ եւս պետք է ցուցաբերել որոշակի քննադատական մոտեցում: Պետք է հաշվի առնել նաեւ նման աշխատանքներին բնորոշ կանխակալության հանգամանքը, թեեւ ամերիկացի քարոզիչները, ինչպես իրենք են վստահեցնում, փորձել են հնարավորինս մնալ անաչառության շրջանակներում:

Առանձին դեպքերում հեղինակների հաղորդած տեղեկությունները ոչ ամբողջական են ճշգրիտ, տեղեկությունների աղբյուրը երբեմն այս կամ անձի ներկայացրած տվյալներն են, որոնք կարող են լինել սխալ կամ ոչ լիարժեք: Որոշ դեպքերում քարոզիչների մտքերի եւ տեսակետների հետ կարելի է չհամաձայնել: Քարոզիչները հաճախ իրենց հաղորդած տեղեկությունները ներկայացնում են իրենց կրոնադավանական աշխարհընկալումների տեսանկյունից, փաստերին ավելացնում են սեփական դատողությունները, վերլուծությունները, հաճախ նաեւ՝ քննադատությունը: Վերջիններս, հասկանալի պատճառներով, հատկապես քննադատաբար

³³ Անդ, էջ 186, 200–202:

³⁴ Անդ, էջ 183–194:

եւ որոշակի կողմնակալությամբ են ներկայացնում Հայ Առաքելական Եկեղեցու, նրա ծեսերի, դավանաբանական առանձնահատկությունների, հոգեւորականների վերաբերյալ տեղեկությունները:

Այս ամենով հանդերձ՝ ամերիկացի քարոզիչների առաջին այցելությունը Հայաստան ինքնին ներկայացնող պատմական փաստ է: Հայաստանում նրանց կատարած ուսումնասիրությունները կարելոր աղբյուր են ոչ միայն հայության շրջանում բողոքականության տարածման պատմության ուսումնասիրման, այլ նաեւ ԺԹ. դարի առաջին տասնամյակների Հայոց պատմության մի շարք հարցերի հետազոտման համար:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ամերիկացի բողոքական քարոզիչներ, բողոքականություն, Ամերիկյան խորհուրդ, Էլի Սմիթ, Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթ, Հայաստան, ուսումնասիրություններ Հայաստանում:

РЕЗЮМЕ

На протяжении XIX века десятки иностранных путешественников, купцов, миссионеров, государственных и военных деятелей посетили различные населенные пункты исторической Армении и оставили мемуары, в которых переданы важные и интересные сведения об армянах, их социально-экономическом положении, образе жизни, обычаях, занятиях и т. д.

С 1819 года «Американский совет» начал отправлять различные миссионерские миссии на Ближний Восток с целью изучения возможностей распространения протестантизма и изучения действующих там христианских церквей.

Вначале американские миссионеры действовали в основном в столице Османской империи и в крупных прибрежных городах. Однако постепенно «Американский совет» поставил перед собой задачу проникнуть вглубь страны с целью непосредственного изучения проживающих там христианских народов.

Согласно решению «Американского совета», два американских протестантских миссионера, Эли Смит и Харрисон Грей Отис Дуайт, путешествовали по Армении и проводили там исследования в 1830—1831 годах. Это был первый визит американских миссионеров в Армению.

Исследования, проведенные американскими миссионерами в Армении, были опубликованы в двух томах в США в 1833 году, а год спустя в одном томе в Лондоне. Публикации включают 24 письма-отчета, подготовленных американскими миссионерами.

Это исследование, проведенное в Армении и соседних регионах, является не только интересным фактом о первых прямых контактах армян и американских протестантских миссионеров, но и важным источником для изучения ряда вопросов истории первых десятилетий XIX века Армении.

SUMMARY

Throughout the 19th century, dozens of foreign travelers, merchants, missionaries, statesmen and military figures visited various settlements of historical Armenia and left memoirs, which convey important and interesting information about the Armenians, their socio-economic conditions, lifestyle, customs, occupations, etc.

Since 1819, the «American Council» has begun sending various missionary missions to the Middle East to explore the possibilities of spreading Protestantism and to study the Christian churches there.

In the beginning, the American missionaries were mainly active in the capital of the Ottoman Empire and in the major coastal cities. However, gradually the “American Council” set the task of penetrating the depths of the country in order to study directly the Christian peoples living there.

According to the decision of the “American Council”, two American Protestant missionaries, Eli Smith and Harrison Gray Otis Dwight, traveled throughout Armenia and conducted researches there in 1830–1831. That was the first visit of American missionaries to Armenia.

The researches carried out by American missionaries in Armenia were published in two volumes in the USA in 1833, and in one volume in London – a year later. The publications include 24 letter-reports prepared by American missionaries.

That research conducted in Armenia and neighboring regions is not only an interesting fact about the first direct contacts of Armenians and American Protestant missionaries, but also an important source for studying a number of issues of the history of the first decades of the 19th century of Armenia.



ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

ՀԱՅ-ՈՌԻՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԵՒ ԴՐԱՆՑ ԶԱՆՈՂՈՒՄԸ¹

1920 թ. սկզբներին, երբ կարմիր բանակը, հաղթանակներ տանելով քաղաքացիական պատերազմում, մոտենում էր Կովկասին, ՀՀ կառավարությունը, շարունակելով Հայկական հարցի լուծումը կապել բացառապես Փարիզի վեհաժողովի եւ դաշնակիցների աջակցության հետ, խուսափում էր խորհրդային Ռուսաստանի հետ երկկողմ շփումների նախաձեռնությամբ հանդես գալուց: Դաշնակիցների հանդեպ ՀՀ կառավարության հավատարմությունն այն աստիճանի միանշանակ եւ կրավորական էր, որ թույլ չէր տալիս կատարել քաղաքական իրադրության վերագնահատում եւ անգամ զրկում էր աշխարհաքաղաքական տարբեր բեկեռների միջեւ խուսանավելու, դրանց հակասությունները սեփական շահերին ծառայեցնելու հնարավորությունից: Մինչդեռ, ինչպես վկայում է Հ. Տերտերյանը, կային «սակավաթիվ» շրջահայաց գործիչներ, որոնք այն կարծիքին էին, որ բավական էր ՀՀ-ն բանագնացներ ուղարկել Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ, որ դաշնակիցները՝ հատկապես անգլիացիները, «շտապէին բաւարարելու մեր կառավարութեան պահանջները, մեր երկիրը բոլշեւիկների գիրկն ընկնելու հնարաւորութիւնից հեռու պահելու մտահոգութեամբ»²: 1920 թ. գարնանը խորհրդային կառավարությունն ինքը քայլեր ձեռնարկեց Հայաստանի եւ Վրաստանի հետ բանակցությունների մեջ մտնելու եւ հաշտության պայմանագրեր կնքելու ուղղությամբ: Ապրիլի 8-ին Օրշոնիկիձեն Վլադիկավկազում ՀՀ ներկայացուցիչ Հ. Սառեկյանին, ներկայացնելով Հայաստանի հանդեպ խորհրդային կառավարության բարեկամական դիրքորոշումը, հաղորդեց խորհրդային կառավարության պատրաստակամությունը՝ Հա-

^{1*} Ստացվել է՝ 16.04.2023, գրախոսվել է՝ 6.05.2023: Էլ. հասցե՝ hayruniasht@gmail.com:

² Հ. ՏԵՐՏԵՐԵԱՆ, Հայաստանի Հանրապետության եւ խորհրդային Ռուսաստանի բանակցությունները, Լեւոն Շանթի պատուիրակությունը, մաս առաջին, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1954, թիվ 1 (335), էջ 3:

յաստանի հետ բանակցություններ վարելու եւ հաշտություն կնքելու մասին՝ առաջարկելով անհապաղ սկսել բանակցությունները³:

Խորհրդային կառավարության հետ բանակցությունների սկսման անհրաժեշտությունը պարզ էր դառնում նաեւ ռազմա-քաղաքական նոր զարգացումներով՝ մասնավորապես Ադրբեջանի խորհրդայնացմամբ (ապրիլի 28-ին), երբ կարմիր բանակն ընդհուպ մոտեցավ Հայաստանի սահմաններին: Ապրիլի 30-ին Ադրբեջանի արտգործօրդկոմի տեղակալ Հուսեյնովը վերջնագիր ներկայացրեց Հայաստանի կառավարությանը՝ պահանջելով հայկական զորքերը դուրս բերել Ղարաբաղի եւ Զանգեզուրի տարածքներից, իսկ մայիսի 1-ին կովկասյան ռազմաճակատի եւ 11-րդ կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհուրդը հայտագիր ուղարկեց ՀՀ կառավարությանը՝ պահանջելով հայկական զորքերը հանել Խորհրդային Ադրբեջանի տարածքից եւ վիճելի բոլոր հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով⁴:

Հայաստանի կառավարությունը կազմեց մի պատվիրակություն, որի կազմում ընդգրկվեցին Լեւոն Շանթը (նախագահ), Համբարձում Տերտերյանն ու Լեւոն Զարաֆյանը: Պատվիրակությունն ապրիլի 30-ին մեկնեց Թիֆլիս՝ այնտեղից Մոսկվա ուղեւորվելու համար: Թիֆլիսում նրանց միացան Ղարաբաղի հայրենակցական միության երկու ներկայացուցիչներ՝ Արամայիս Երզնկյանն ու Սիմոնիկ Փիրումյանը՝ Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցում պատվիրակությանն օժանդակելու նպատակով⁵: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Վրաստանը, մինչ հայկական պատվիրակությունը ճանապարհ կընկներ, շտապ կերպով մի պատվիրակություն ուղարկեց Մոսկվա, որը 6 օրում հասավ այնտեղ, սկսեց բանակցություններ եւ հունիսի 7-ին Ռուսաստանի հետ ստորագրելով մի պայմանագիր, որով վերջինս ճանաչում էր նրա անկախությունը, վերադարձավ⁶: Հայկական պատվիրակությունը, սակայն, ակնհայտորեն չէր շտապում, եւ չնայած խորհրդային կառավարությունը, մեծապես կարեւորելով հայկական կողմի հետ բանակցությունները,

³ Ս. Ա. Լ. Խ. Ա. Ն. Յ. Ա. Ն., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.), Երեւան, 1966, էջ 96:

⁴ Անդ, էջ 97:

⁵ Հ. Տ. Տ. Տ. Տ. Ա. Ն., նշ. աշխ., թիվ 1 (335), էջ 5:

⁶ Ա. Խ. Ա. Տ. Տ. Ա. Ն., Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Երեւան, 2018, էջ 283:

պատրաստակամություն էր հայտնել հայ պատվիրակներին ճեպընթաց գնացք տրամադրել⁷, վերջիններս նախընտրեցին գնալ այլ ճանապարհով: Վլադիկավկազում մնալով 10–12 օր, մի քանի օր էլ կանգ առնելով Նոր Նախիջեւանում՝ նրանք Մոսկվա հասան 26 օրվա ընթացքում⁸:

Պատվիրակությունը ոչ միայն Մոսկվա հասնելու հարցում չէր շտապում, այլևս ակներեւաբար, ինչպես նշում են որոշ ուսումնասիրողներ, կառավարությունից հրահանգ էր ստացել ձգձգել բանակցությունները, մինչև դաշնակիցների՝ մասնավորապես Անգլիայի խոստացած ռազմական օգնությունը տեղ կհասներ⁹: Վերջիններս, սակայն, ի պատասխան տնտեսական, ռազմական եւ այլ բնագավառներում օգնություն ցուցաբերելու՝ Հայաստանի կառավարության «անդադար դիմումներին»՝ բավարարվում էին միայն անորոշ խոստումներ եւ սին հույսեր տալով¹⁰:

Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցությունները հնարավորինս ձգձգելու՝ Հայաստանի կառավարության դիրքորոշումը փաստարկվում էր նաեւ հետագա իրադարձություններով, մինչդեռ Ռուսաստանը շտապում էր օր առաջ սկսել բանակցությունները: Այդ էր պատճառը, որ Վլադիկավկազի շրջանային գործկոմի նախագահը Մոսկվայից հրահանգ էր ստացել պատվիրակությանը «շտապ կերպով ճանապարհել» Մոսկվա, իսկ խորհրդային ռազմական կոմիսար Լ. Տրոցկին «բոլոր ուղղութեամբ հեռագրական կարգադրություններ էր արել՝ ճշգրիտ համար Հայաստանի պատուիրակութեան գտնուած վայրը եւ շտապեցնելու համար նրա ժամանումը Մոսկուա»¹¹: Երբ պատվիրակությունն ի վերջո հասավ Մոսկվա, Երեւանի հետ վերջինիս կապի հարցում տեխնիկական դժվարությունները բացառելու համար, նրան տրամադրվեց նաեւ Ռուստովի միջոցով Թիֆլիսի հետ ուղիղ հեռագրաթել¹²:

Եթե նկատի առնվի, որ հայկական պատվիրակության մեկնումից կարճ ժամանակ անց Թիֆլիսից Մոսկվա ուղեւորվեց նաեւ քեմալական պատվիրակությունը, ապա պարզ կդառնա, որ խորհրդային կա-

⁷ Ա. ԿԱՐԻՆՅԱՆ, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, էջ 23:

⁸ Անդ, էջ 23–24:

⁹ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը եւ Սովետական Ռուսաստանը, Երեւան, 1965, էջ 3: Հմմտ. Ա. ԿԱՐԻՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 24:

¹⁰ Հ. ՏԵՐՏԵՐԵԱՆ, նշ. աշխ., թիվ 1 (335), էջ 3:

¹¹ Անդ, էջ 6, 7:

¹² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 51:

ռավարության ցուցաբերած շտապողականությունը պայմանավորված էր՝ նախքան թուրքերի հետ բանակցելը՝ հայկական կողմի հետ համաձայնության գալու ձգտումով: Դա վկայում էր նաեւ, թե Ռուսաստանը որպիսի առաջնահերթություն էր տալիս Հայաստանի հետ հարաբերություններին¹³:

Հայկական պատվիրակության հետ բանակցությունները վարում էին Զիչերինը եւ նրա տեղակալ Լ. Կարախանը: Հենց առաջին հանդիպման ժամանակ Զիչերինը, հավաստելով խորհրդային կառավարության «անկեղծ ցանկությունը»՝ Հայաստանի կառավարության եւ հայ ժողովրդի հետ բարեկամական հարաբերություններ ստեղծելու հարցում, ընդգծեց, որ խորհրդային կառավարությունը Հայաստանը խորհրդայնացնելու մտադրություն չունի, եւ առաջարկեց հրաժարվել դաշնակիցներին ապավինելուց ու Մոսկվայի իրավարարությանը հանձնել Հայկական հարցի լուծումը: «Դուք՝ հայերդ, խոշոր թիրիմացութեան մէջ էք,– ասում էր Զիչերինը,– երբ ձեր բոլոր յոյսերը դրել էք եւրոպական դրամատիրական պետութիւնների վրայ: Յիշեցեք ձեր Դատի անցեալը: Քանի՜ քանի անգամներ ձեզ խաբել են այսպէս կոչուած մեծ պետութիւնները: Վստահ ենք, որ այս անգամ եւս ձեր Դատը պիտի զոհեն իրենց ազգային նեղ շահերի համար: Խորհրդային իշխանութիւնը, որպէս բանուորա-գիւղացիական իշխանութիւն, միակ անկեղծ ուժն է, որ անշահախնդիր կերպով կարող է լուծել ձեր Դատը: Հրաժարուեցէք Դաշնակիցներից եւ ձեր հարցի քննութիւնը դուրս բերէք Սեւրի խորհրդաժողովի օրակարգից եւ յանձնեցէք այն Խորհրդային կառավարութեան իրաւարարութեան»¹⁴:

¹³ «Մենք Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ ենք հաստատում սոսկ այն պայմանով,– հայտարարում էր Զիչերինը համառուսաստանյան կենտգործկոմի՝ հունիսի 17-ի նիստում իր ունեցած ելույթում,– որպեսզի Թուրքիայի եւ դրացի ժողովուրդների միջեւ, ինչպիսին է հայ ժողովուրդը, իրականացվի փոխադարձ սահմանազատում, որպեսզի դադարեն փոխադարձ կոտորածները: Այնտեղ եւս մենք հանդես ենք գալիս որպես հաշտարարներ, եւ Թուրքիան, նաեւ Հայաստանը, արդեն համաձայնում է, որպեսզի մենք լինենք միջնորդներ, որպեսզի մեր ազդեցության տակ թուրք եւ հայ ժողովուրդների միջեւ վերացվեն ցայժմ անելանելի հակասությունները, որոնք այդքան երկար ժամանակ թունավորում էին նրանց գոյությունը»: Տեն Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երեւան, 1972, էջ 452: Զիչերինը, սակայն, սխալվում էր, քանի որ եթե Թուրքիան Ռուսաստանի ճնշման ներքո ստիպված եղավ ընդունել նրա միջնորդական առաքելությունը, ապա Օհանջանյանի կառավարությունը մինչեւ վերջ հրաժարվեց դրանից:

¹⁴ Հ. ՏԵՐՏԵՐԵԱՆ, նշ. աշխ., թիվ 1 (335), էջ 10:

Պատվիրակության համար, որը ՀՀ կառավարության կողմից հանձնարարություն էր ստացել հասնելու Հայաստանի հանրապետության ճանաչմանը՝ սահմանների մեջ ներառելով նաեւ Լեռնային Ղարաբաղը, գոնե սկզբունքորեն ընդունելի դարձնելու թուրքահայ տարածքների կցումը Հայաստանին, Ռուսաստանին հրաժարեցնելու Հայաստանի ներքին գործերին ուղղակի կամ անուղղակի եղանակով միջամտելուց եւ ստանալու մի շարք տնտեսական ու մշակութային արտոնություններ¹⁵, Ռուսաստանի՝ միջնորդության առաջարկն անսպասելի էր: Չնայած Հայաստանի կառավարության կողմից պատվիրակները լիազորված չէին բանակցելու Արեւմտահայաստանի տարածքների վերաբերյալ, այնուհանդերձ, ըստ Տերտերյանի, «բանակցությունները չվիժեցնելու մտահոգությամբ» շարունակեցին այդ ուղղությամբ խոսակցությունը եւ փորձեցին պարզել, թե հայկական կողմն ինչ կարող էր ակնկալել խորհրդային միջնորդությունից¹⁶:

Ըստ Տերտերյանի՝ Չիչերինը, համաձայն լինելով Արեւմտյան Հայաստանի տարածքների մի զգալի մասը ՀՀ-ին միավորելուն, վեց վիլայեթների պահանջը համարում էր չափազանցված, սակայն ծանոթանալով Արեւմտյան Հայաստանի վերաբերյալ իր խնդրանքով պատվիրակության կողմից ներկայացրած տեղեկագրին՝ այլեւս այդ հարցը չի քննարկում:

Հունիսի կեսերին կայացած տեսակցության ժամանակ պատվիրակությունն ընդառաջում է խորհրդային կառավարությանը Հայաստանի կառավարության եւ Քեմալի միջեւ միջնորդությունը խորհրդային կառավարությանը հանձնելու հարցում, իսկ Չիչերինն իր հերթին խորհրդային Ռուսաստանի անունից խոստանում է Արեւմտյան Հայաստանի որոշ տարածքներ միացնել Հայաստանի հանրապետությանը՝ նրան ապահովելով ելք դեպի Սեւ ծով¹⁷: Ինչ վերաբերում էր Ադրբեջանի հետ սահմաններին, ապա, ըստ ձեռք բերված համաձայնության, Նախիջևանի շրջանն ու Ջանգեզուրը անվերապահորեն պետք է պատկանեին Հայաստանին, իսկ Ղարաբաղը պետք է համարվեր վիճելի, որի իրավական կարգավիճակը որոշվելու էր ժողովրդական հանրաքվեի միջոցով¹⁸:

¹⁵ Անդ, էջ 5:

¹⁶ Անդ, էջ 10:

¹⁷ Հ. ՏԵՐՏԵՐԵԱՆ, նշ. աշխ., թիվ 2 (336), էջ 14:

¹⁸ Անդ:

Բացի այդ՝ բավարարվում էին պատվիրակության՝ տնտեսական եւ մշակութային հարցերին վերաբերող մի շարք կարեւոր առաջարկները: Մոսկվայում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում գտնվող հայ գրական եւ մշակութային արժեքները հանձնվում էին Հայաստանին: Հայ գաղթականությանը եւ առհասարակ Ռուսաստանում ապրող բոլոր հայերին թույլատրվում էր իրենց ողջ շարժական ունեցվածքով փոխադրվել Հայաստան: Հայաստանին անհատույց պիտի տրամադրվեին մի քանի տասնյակ շոգեքարշեր եւ վագոններ, ինչպես եւ «բաւարար քանակութեամբ» նավթ՝ ինքնարժեքով: Խորհրդային կառավարությունը պարտավորվում էր Հայաստանին անվճար հատկացնել նաեւ երկու մանածագործարան եւ որպէս օգնություն հայ ժողովրդին՝ ՀՀ կառավարությանը կանխիկ տրամադրել 2,5 միլիոն ռուբլի ոսկով, հատկացնել երկրագործական գործիքներ, հացահատիկ եւ այլն¹⁹:

Չիչերինը խոստացավ շտապ կազմել պայմանագրի գրավոր տարբերակը եւ մեկ-երկու օրից ներկայացնել ստորագրման: Գործընթացը, սակայն, ձգձվեց: Տերտեւյանի կարծիքով՝ դա պայմանավորված էր մայիսյան ապստամբության տապալումից հետո Բաքվում ապաստանած հայ բոլշեւիկների գործելակերպով, որոնք ձգտում էին վիժեցնել ռուս-հայկական բանակցությունները²⁰: Հունիսի վերջերին պատվիրակությունը հայ-ադրբեջական սահմանների վերաբերյալ ստացավ մի նոր առաջարկ, որով Ղարաբաղը թողնվում էր Ադրբեջանին, Նախիջեւանը՝ Հայաստանին, իսկ Զանգեզուրը համարվում էր վիճելի, որի կարգավիճակը պետք է վճռվեր հետագայում, երբ խորհրդային կառավարության լիազոր պատվիրակ Բ. Լեգրանը տեղում ծանոթանար գավառի բնակչության ազգային կազմին եւ նրա ցանկությանը: Այդ առաջարկի հետ միասին Չիչերինը ներկայացրեց նաեւ բանավոր մի հուշագիր՝ մայիսյան ապստամբության ճնշումից հետո հայ բոլշեւիկների հետապնդումների մասին, ըստ որի՝ մի քանի հազար մարդ գնդակահարված, իսկ տասնյակ հազարավորները ձերբակալված էին: Այդ մասին հայտնելով՝ Չիչերինը նախազգուշացնում է, որ եթե այդ հետապնդումներն անմիջապէս չդադարեցվեն, խորհրդային կառավարությունն ստիպված կլինի ընդհատել բանակցությունները:

¹⁹ Անդ:

²⁰ Անդ, էջ 15:

Անտարակույս, այդ չափազանցված տեղեկությունները ստացվել էին հայ բոլշեւիկներից, բայց մյուս կողմից՝ ակնհայտ էր, որ սահմանագծման նոր առաջարկը եւ հայ բոլշեւիկների հալածանքների մասին Ձիչերինի արտահայտած բողոքը ուղիղ համեմատական կապ ունեին միմյանց հետ: Պատվիրակությունը, որն այդ հանդիպման ժամանակ է տեղեկանում մայիսյան ապստամբության եւ դրա ճնշման մասին, փոխանակ իր կառավարության հետ համատեղ քայլեր ձեռնարկելու՝ թյուրիմացությունները պարզաբանելու համար, իր իրավասություններից դուրս գալով՝ կառավարությանը խրախուսում է անողոք լինել բոլշեւիկների հանդեպ: «Այստեղ հաշուի է առնում միայն իրական ուժը, — նշում էր պատվիրակությունը կառավարությանն ուղարկած հեռագրում: — Որքան դուք ուժ եւ վճռականություն ցուցադրէք, այնքան մեզ հաշուի կ'առնեն այստեղ: Մեր մասին բնաւ մի մտահոգուէք: Եղէք խիստ ու անողոք՝ ազգի դաւաճանների հանդէպ»²¹:

Ինչպես վկայում է ինքը՝ Տերտերյանը, Ձիչերինը մայիսյան դեպքերից հետո եւս հակված չէր բավարարելու Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները: «Օհօ, — ծանոթանալով դրանց՝ բացականչել էր նա, — Ջուլֆան ու Նախիջեւանն էլ են ուզում, շատ են երես առել»²²: Բացի այդ՝ վերոնշյալ հանդիպումից հետո Կարախանն էլ հարկ էր համարել պատվիրակությանը տեղեկացնել, որ Ձիչերինի կողմից «խիստ ոճով եղած ծանուցումը զուտ ձեւական մի պարտականություն էր», եւ պատվիրակությունը կարիք չուներ մտահոգվելու այդ հուշագրով: Պատվիրակությունը, սակայն, դա ըստ էության ընկալելու եւ իմաստավորելու փոխարեն՝ համարում է ապացույց իր այն համոզման, թե «Մոսկուայում հաշուի են առնում միայն իրական ուժը»²³:

Ինչ վերաբերում էր հայ-ադրբեջանական սահմանագծման հարցում Ձիչերինի առաջարկին, ապա պատվիրակության ներսում միասնական մոտեցում ի հայտ չեկավ: Լ. Զարաֆյանը եւ Հ. Տերտերյանը պնդում էին, որ անհրաժեշտ է այն անհապաղ ընդունել եւ ստորագրել պայմանագիրը, որով ապահովվում էր Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչումը, Նախիջեւանի շրջանը միացվում էր Հայաստանին,

²¹ Անդ, էջ 16:

²² Անդ, էջ 15:

²³ Անդ, էջ 16:

Զանգեզուրը նույնպես, անկասկած, Հայաստանին էր պատկանելու, քանի որ այդ հարցը պետք է լուծվեր երկրամասի բնակչության ցանկությանմբ: Իսկ Ղարաբաղի միացումը Հայաստանին կարող էր հետագայում իրողություն դառնալ:

Նրանց, սակայն, չհաջողվեց համոզել Լ. Շանթին, որն անհրաժեշտ էր համարում պայմանագիրը ստորագրելու համար նախապես ստանալ Հայաստանի կառավարության համաձայնությունը: Ուստի հունիսի վերջին պատվիրակությունն այդ մասին հեռագրային հարցում կատարեց կառավարությանը: Պայմանագրի ստորագրումը, սակայն, այդպիսով մտավ փակուղի, քանի որ շուրջ մեկ ամիս Երեւանից պատասխան չստացվեց²⁴:

Մի կողմ թողնելով այն հարցադրումը, որ եթե պատվիրակությունը Մոսկվա գնալու ճանապարհին շուրջ 20 օր չկորցնեն, ապա ամենայն հավանականությամբ կկանխվեն Բաքվի բոլշևիկների հակագործողությունները, եւ պայմանագիրը կստորագրվեր առնվազն վերոնշյալ սկզբնական համաձայնությունների հիմքի վրա, չենք կարող չարձանագրել, որ Հայաստանի կառավարությունն այդուհետ եւս պայմանագրի ստորագրումը շարունակ ձգձգելու քաղաքականություն էր որդեգրել: Դա հանգեցրեց նաեւ պայմանագրի փոփոխված նախագծի ձախողմանը: ՀՀ կառավարությունը, մերժելով Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը եւ ապավինելով բացառապես դաշնակիցների օգնությանը, որոնք նրան միայն սին հույսեր էին տալիս, իրեն զրկում էր տարածաշրջանի նոր քաղաքական վերաձեւավորումներին մասնակցելու հնարավորությունից այն դեպքում, երբ Ռուսաստանը մեծապես շահագրգռված էր Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ միջնորդությունն ստանձնելու եւ Հայկական հարցի լուծումը դաշնակիցների քաղաքական հավակնությունների ոլորտից դուրս բերելու հարցում:

Փաստորեն՝ երբ բանակցությունները, չնայած բոլոր ձգձգումներին, հասել էին իրենց տրամաբանական ավարտին, եւ մնում էր պայմանագիրն ստորագրել, Հայաստանի կառավարությունը, պատվիրակության հարցմանն ընթացք չտալով, ձախողեց բանակցությունները:

Այն, որ կառավարությունը ցանկություն չունեւ Ռուսաստանի հետ, մինչեւ իսկ վերոնշյալ նպաստավոր պայմաններով, պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել, վկայում էր Թիֆլիսում ՀՀ ներկայա-

²⁴ Անդ, էջ 17:

ցուցիչ Տ. Բեկզադյանի՝ հուլիսի 6-ին Օհանջանյանին ուղարկած հեռագիրը: «Իմ կարծիքով,– գրում էր նա,– Ձիշերինին մի պատասխան միայն պետք է տալ, որ կանչում ենք մեր պատվիրակությանը մանրամասն զեկուցում լսելու համար եւ միայն դրանից հետո կտանք մեր վերջին որոշումը, որը համենայն դեպս չի կարող հանգել նրանց արած առաջարկներից եւ ոչ մեկին:Մենք ժամանակ կվաստակենք, մինչեւ կստանանք Անգլիայից եկած ռազմամթերքը եւ այն ժամանակ կարող կլինենք դիմադրել նույնիսկ ռուս զորքերին»²⁵:

ՀՀ կառավարությանը չսթափեցրեց մինչեւ իսկ Ձիշերինի կողմից հուլիսի 20-ին վարչապետ եւ արտգործնախարար Հ. Օհանջանյանին ուղարկված թիվ 751 հեռագիրը, որում նա հստակ կերպով տեղեկացնում էր, որ «բացառապես խորհրդային կառավարության ազդեցության ներքո թուրք ազգայնականները դադարեցրին իրենց սկսած զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին»²⁶:

Ուշագրավ է, որ այդ օրերին խորհրդային կառավարության հանձնարարությամբ ռազմական կենտրոնականը պատրաստել էր անդրկովկասյան հանրապետությունների սահմանագծման մի քարտեզ, որը, որպես «պլան բ», նախատեսված էր իրականացնել այն պարագայում, եթե Արեւմտյան Հայաստանը չմիացվեր Հայաստանի հանրապետությանը: «Երեք հանրապետությունների մէջ ամենամեծը Հայաստանն էր,– տեղեկացնում է այդ մասին Հ. Տերտերյանը, որին Կարախանը հնարավորություն էր ընձեռել ծանոթանալու այդ քարտեզին,– իսկ ամենափոքրը՝ Ադրբեջանը, որ համարեա թէ ամփոփուած էր Ապշերոնեան թերակղզում:Հայաստանի սահմանների մէջ մտնում էր ամբողջ լեռնային Ղարաբաղը մինչեւ Եւլախ, այնտեղից սահմանը անցնում էր Կուր գետով մինչեւ Խրամ գետը, յետոյ Բորչալուում Խրամ գետի հունից սահմանը դուրս էր գալիս ու Հայաստանի մէջ էր ներառում Ախալքալաքի եւ Ախալցխայի շրջանները եւ վերջինիս բարձունքներից համարեա թէ ուղիղ գծով իջնում էր դէպի Սեւ ծով՝ Բաթումի ու Փոթիի միջեւ, Բաթումի նաւահանգիստը իր ամբողջ շրջանով ներառելով Հայաստանի սահմանների մէջ: Զաքաթալայի վիճելի շրջանը միացուած էր Վրաստանին»²⁷:

²⁵ Ս. ԱԼԻԽԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 109: Հմմտ. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 769ա, թ. 93:

²⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 203:

²⁷ Հ. ՏԵՐՏԵՐՅԱՆ, նշ. աշխ., թիվ 2 (336), էջ 19: Երբ Կարախանը Տերտերյանին հարցնում է, թե նա արդյո՞ք հավանում է այդ սահմանագծումը, վերջինս պատասխանում է. «Մենք

Չնայած իր վերոնշյալ հարցման պատասխանն արագացնելու՝ կառավարության ուղղված պատվիրակության նոր հեռագրին՝ Երեւանից պատասխանն այդպես էլ չէր ստացվում²⁸, ուստի երբ, այդ պատճառով, բանակցությունները փակուղի էին մտել, Ձիչերինը պատվիրակությանը հայտնեց, որ խորհրդային կառավարությունը նպատակահարմար է գտնում բանակցությունները փոխադրել Երեւան²⁹: «Այստեղ, – գրում էր Ձիչերինը հուլիսի 19-ին Բ. Լեզրանին, – բանակցությունները այդ ուղղությամբ նրանց հետ անհույս են: Մենք ամեն ինչի կարող ենք հասնել միայն Հայաստանում»³⁰: Նույն օրը Ձիչերինը հեռագրով Հ. Օհանջանյանին տեղեկացրեց, որ բանակցությունները փոխադրվում են Երեւան՝ հույս հայտնելով, որ խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանի ժամանումը Երեւան կնպաստի բոլոր հարցերի շուրջ համաձայնության գալուն եւ երկու երկրների միջեւ բարեկամական պայմանագիր ստորագրելուն: Ձիչերինը միաժամանակ ընդգծում էր, որ խորհրդային կառավարությունը թուրքական ազգային կառավարության հետ հաստատվող բարեկամական հարաբերություններն օգտագործում է նաեւ այն բանի համար, «որ հայ ժողովրդի համար հնարավորություն ապահովի իր զարգացման համար բավականաչափ տերիտորիա ձեռք բերելու Փոքր Ասիայում», եւ որ «հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա (խորհրդային Ռուսաստանի – Ա. Հ.) մշտական բարեկամական վերաբերմունքի ու նրա ուժերի սահմաններում՝ նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար»³¹:

Օհանջանյանը Ձիչերինին պատասխան հեռագրով հայտնում է, որ ինքը դեմ չէ բանակցությունները Երեւան փոխադրելու առաջարկին,

այդչափ էլ աշխարհակալներ չենք, ինչպէս դուք էք ենթադրում: Իսկ Կարախանի այն հարցին, թե այդ սահմաններով Հայաստանն ընդունելի՞ է Հայաստանի կառավարության համար, պայմանով, որ վերջինս հրաժարվի «տաճկահայկական վիլայէթներից», Տերտերյանն այն «գոհացուցիչ» է համարում՝ միաժամանակ ավելացնելով, որ չնայած ինքը չի հավատում, որ դաշնակիցները վեց նահանգները «սկիւտեղի վրայ» կմատուցեն Հայաստանին, եւ ներկա Հայաստանն էլ ի վիճակի չի լինի սեփական ռազմական միջոցներով դրանց տիրանալու, սակայն «հայ ժողովրդի հոգեբանական վիճակը» թույլ չի տա հրաժարվել Արեւմտյան Հայաստանից, եւ այն էլ, երբ դաշնակիցները սկզբունքորէն ընդունել են այդ նահանգների սահմաններում անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը, իսկ սահմանագծումն էլ հանձնված է Վիրսոնին: Անդ, էջ 20–21:

²⁸ Անդ, էջ 23:

²⁹ Անդ:

³⁰ Ս. Ա. Ի. Խ. Ա. Ն. Յ. Ա. Ն., նշ. աշխ., էջ 109–110:

³¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 203:

բայց դրանք կարող են սկսվել միայն Շանթի պատվիրակության վերադարձից հետո³²։ Եւ քանի որ Օհանջանյանն ու իր կառավարությունը շարունակում էին Ռուսաստանի հետ բանակցություններից խուսափելու եւ դրանք ձգձգելու քաղաքականությունը, պատվիրակությունը, բնականաբար, դարձյալ պետք է հնարավորինս ուշացումով գար Երեւան։ Այդպես էլ եղավ։ Երկար ժամանակ Մոսկվայում անգործ սպասելով կառավարության հրահանգին, որ վերադառնան Երեւան, պատվիրակության անդամներն ի վերջո Մոսկվայից ճանապարհ ընկան օգոստոսի 10-ին³³, որից հետո, երկար կանգ առնելով Ռոստովում ու այլ վայրերում, Երեւան հասան ավելի քան մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 14-ին³⁴։ Մինչդեռ պատվիրակությունը շտապելու ցանկության պարագայում հնարավորություն ուներ Լեզրանի եւ նրա պատվիրակության հետ միասին նույն գնացքով վերադառնալու Հայաստան։ Դրա համար անհրաժեշտ էր միայն այդ ցանկությունը ներկայացնել խորհրդային կողմին։

Դա տեղի չունեցավ, իսկ եթե նույնիսկ վերջինս առաջարկեր Լեզրանի հետ նույն գնացքով մեկնել, ապա, ըստ Շանթի, իրենք դա չէին ընդունի, քանի որ իրենց՝ որպես անկախ երկրի ներկայացուցիչների «քաղաքացիական հպարտությունն ու քաղաքականությունը» դա թույլ չէին տա։ «Մենք միշտ պահած ենք մեզի իբրեւ անկախ երկրի մը անկախ դեսպանություն,— գրում էր նա հետագայում Վրացյանին,— եւ ո՛չ մեկ պայմանով Լեզրանի մը թեւարկության տակը չէինք մտնել։ Իսկ ետ դառնալու որեւէ հապճեպ շունեինք այս աստիճանի. մենք մեր դերը արդեն ավարտած կհամարեինք, բոլոր էական խնդիրներու շուրջ մանրամասն զեկուցումներ ղրկած էինք մեր կառավարության եւ կկարծեինք, որ Լեզրանի հետ մեր կառավարությունը ինքը կխոսի Հայաստանի մեջ»³⁵։

Պատվիրակության վերադարձը, այդպիսով, ձգձգվում էր։ Մինչ այդ Լեզրանը, ստանալով ՀՀ կառավարության հետ բանակցելու եւ պայմանագիր կնքելու՝ Լենինի ու Կարախանի ստորագրությամբ վավերացված լիազորագիրը, հուլիսի կեսին իր պատվիրակության հետ միասին ժամանեց Բաքու եւ ապա ուղեւորվեց Երեւան։ Հասնելով Աղստաֆա՝ նա ցանկացավ այնտեղից մեկնել Երեւան, սակայն ՀՀ կառավարությունը

³² Ս. ՎՐԱՅՅԱՆ, Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 1993, էջ 484։

³³ Հ. ՏԵՐՏԵՐԵԱՆ, նշ. աշխ., թիվ 2 (336), էջ 26։

³⁴ Ս. ՎՐԱՅՅԱՆ, նշ. աշխ., էջ 485։

³⁵ Անդ, էջ 648։

հրաժարվեց նրան ընդունել: Հինգ օր Աղստաֆայում սպասելուց հետո Լեգրանն ստիպված եղավ մեկնել Թիֆլիս³⁶:

Եթե Լեգրանի հետ բանակցությունների հետաձգումն Օհանջանյանն ու իր կառավարությունը կարող էին «հիմնավորել» նրանով, որ Շանթի պատվիրակությունը դեռ չէր վերադարձել, ապա Լեգրանի՝ Երեւան մուտքի արգելքը, որն ամեն բանից զատ՝ դիվանագիտական վարքականոնի կոպտագույն խախտում էր, նրանք փորձում էին «հիմնավորել» այն հանգամանքով, որ Ռուսաստանը դեռ չի ճանաչել Հայաստանի անկախությունը: Դա է վկայում Թիֆլիսում ՀՀ ներկայացուցիչ Բեկզադյանի՝ հուլիսի 25-ին Օհանջանյանին ուղարկած զեկուցագիրը, որում նա տեղեկացնում է Վրաստանում Ռուսաստանի ներկայացուցիչ Կիրովի հետ հանդիպման մասին: «Այսօր, ամսուս 20-ին, — գրում է Բեկզադյանը, — տեսակցություն ունեցա Կիրովի հետ, խոսեցի հետեւյալ հարցերի մասին: Լեգրանի պատվիրակության մասին ես հայտնեցի Ձեր տեսակետը եւ պնդեցի, որ մենք նրան ընդունել չենք կարող, մինչեւ որ մեր մեջ չկնքվի որեւէ պայմանագիր, որով Դուք կընդունեք Հայաստանի անկախությունը: Այդ դեպքում միայն մենք կարող ենք փոխանակել պատվիրակություններ»³⁷:

ՀՀ կառավարությունը, այսպիսով, մի կողմից, շարունակում էր փակուղի տանել մոսկովյան բանակցությունները, այն դեպքում երբ Ռուսաստանն աներկբայորեն իր պատրաստակամությունն էր հայտնել ստորագրվելիք պայմանագրում ճանաչելու Հայաստանի անկախությունը, մյուս կողմից՝ ճանաչման իրողություն դարձած չլինելը «հիմք» էր համարում՝ մերժելու Լեգրանի եւ նրա պատվիրակության ընդունումը Երեւանում:

Հուլիսի 29-ին Լեգրանը Թիֆլիսից հեռագիր ուղարկեց Օհանջանյանին (պատճենը՝ Չիչերինին)՝ նշելով, որ «Խորհրդային Ռուսաստանի բարեկամական եւ խաղաղ մտադրությունները» այնպիսի արձագանք չեն ստանում Հայաստանի կառավարության կողմից, որը կարող էր դառնալ սկսված հաշտության բանակցությունները շուտափույթ եւ բարեհաջող ավարտելու գրավական³⁸: «Հայաստանի սահմաններում ստեղծված

³⁶ Ս. Ա. Ի. Խ. Ա. Ն. Յ. Ա. Ն., նշ. աշխ., էջ 120:

³⁷ Անդ, էջ 122–123: Հմմտ. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 769, թ. 255:

³⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 214:

իրադրության պայմաններում,– գրում էր Լեգրանը նույն հեռագրում,– խորհրդային Ռուսաստանի հետ հաշտության բանակցությունների ամեն մի ընդհատում կարող է միանգամայն անցանկալի բարդություններ առաջ բերել երկու հանրապետությունների ժողովուրդների հարաբերություններում, եւ այդ դեպքում կատարված ամբողջ պատասխանատվությունը կընկնի Հայաստանի կառավարության վրա»³⁹:

Հայաստանում խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչն այդպիսով ստիպված էր երկար ժամանակ մնալ «վտարանդի», եւ մինչեւ իսկ հուլիսի 29-ին Հայաստանի կառավարությանն ուղղված Ձիչերինի հեռագիրը, որով վերջինս կոչ էր անում ապահովել Լեգրանի գլխավորած պատվիրակության անարգել ուղեւորությունը Երեւան եւ նրա հետ անմիջական բանակցությունների մեջ մտնել⁴⁰, ոչինչ չփոխեց:

Մինչ ՀՀ կառավարությունը ձախողում էր խորհրդային Ռուսաստանի հետ բանակցությունները, քեմալականները, օգտվելով դրանից, ջանում էին չեզոքացնել Ռուսաստանի հնարավոր միջամտությունը Հայաստանի վրա հարձակվելու դեպքում եւ նախապատրաստվում էին դրան:

Հուլիսի 19-ին, երբ Մոսկվայում հայկական պատվիրակության հետ բանակցությունները, փակուղի մտնելով, դադարեցվել էին, Մոսկվա հասավ թուրքական պատվիրակությունը՝ Բեքիր Սամիրի գլխավորությամբ: Հուլիսի 24-ին սկսվեցին բանակցությունները, որոնք Ռուսաստանի կողմից վարում էին դարձյալ Ձիչերինը եւ Կարախանը: Թուրք պատվիրակներն առաջարկում էին կնքել պաշտպանողական եւ հարձակողական դաշինք, որին ռուսական կողմը չհամաձայնեց, ուստի թուրքերն առաջարկեցին կնքել բարեկամության եւ եղբայրության պայմանագիր, որը Ռուսաստանի կողմից ընդունելի էր⁴¹: Մեկ ամիս շարունակվող բանակցությունների ընթացքում թուրքերի պահանջները գլխավորապես վերաբերում էին Ռուսաստանից ռազմական եւ նյութական օգնություն ստանալուն եւ Հայաստանի վրայով Ռուսաստանի հետ տարանցիկ ճանապարհ բացելուն, որը Հայաստանի կառավարությունը հրաժարվում էր տրամադրել: Վերջին հարցի կապակցությամբ ինչպես Կարախանը, այնպես էլ Ձիչերինը հայտնեցին, որ Ռուսաստանը չի կարող պաշտպանել

³⁹ Անդ:

⁴⁰ Ս. ԱԼԻԽԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 121–122:

⁴¹ Գ. ԳԱՆՅԱՆ, Հայաստանը եւ մեծ տերությունները 1917–1923 թթ., Երեւան, 1999, էջ 263:

Թուրքերի ցանկությունը՝ իրենց ուժերով բացելու ճանապարհը, քանի որ դա կհանգեցներ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ պատերազմի: Իսկ նյութական օգնության տրամադրումը Չիչերինը պայմանավորում էր Հայաստանի Հանրապետությանը Վանի եւ Բիթլիսի արեւելյան մարզերից որոշ տարածքներ տրամադրելով:

Հստ Թուրք պատմաբան Ռ. Սալահի՝ Չիչերինն ընդգծել է, որ Ռուսաստանը կօգնի Թուրքիային, եթե նա Հայաստանին զիջի նշված տարածքները: Բեքիր Սամին Ռուսաստանի այդ պահանջը համարել է համազոր «Թուրքիայի մասնատման»՝ Անտանտի քաղաքականությանը, ինչի հետ Չիչերինը չի համաձայնել՝ նշելով, որ Անտանտի պետությունները կամենում են ստեղծել մեծ Հայաստան՝ ներառելով Սեբաստիան ու Տրապիզոնը, մինչդեռ Ռուսաստանը պարզապես խնդրում էր Արեւմտյան Հայաստանից մի փոքր տարածք միացնել ՀՀ-ին⁴²: Այդ հարցին անդրադարձել է նաեւ Ալի Ֆուադը՝ իր հուշերում գրելով, որ Չիչերինն առաջարկել է, «նախկին հայկական նահանգներէն՝ Պիթլիսէն, Վանէն եւ Մուշէն մաս մը տալ Հայաստանի, որ հանգիստ շունչ չի կրնար քաշել»⁴³:

Չիչերինը Հայաստանի եւ Թուրքիայի սահմանագծման հարցում առաջ էր քաշում այն սկզբունքը, ըստ որի՝ այն տարածքները, որտեղ մինչեւ 1914 թ. հայերը մեծամասնություն էին կազմում, պետք է անցնեին Հայաստանին, իսկ նրանք, որտեղ առկա էր եղել մահմեդական բնակչության մեծամասնություն՝ Թուրքիային⁴⁴:

Ի վերջո, չնայած մեկ ամիս տեւող բանակցություններից հետո՝ օգոստոսի 24-ին, արդեն պատրաստված էր «Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ պայմանագրի նախագիծը», սակայն Թուրքական պատվիրակությունը, հայկական տարածքների հարցում խորհրդային կառավարության հետ համաձայնության չգալով, վերադառնում է՝ առանց այն ստորագրելու⁴⁵: Թուրք պատմաբան Թեֆիկ Բիուրլիլիօղլուն եւս նշում է, որ այդ համաձայնագրի չվավերացման հիմնական պատճառն այն էր, որ խորհր-

⁴² Անդ, էջ 264:

⁴³ Գ. ԼԱՋԵԱՆ, Հայաստան եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերություններու լոյսին տակ, Երեւան, 1991, էջ 252–253:

⁴⁴ Ե. ՍԱՐԳՍՅԱՆ, Քեմալականների 1920–1921 թթ. արշավանքն Անդրկովկաս եւ 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագիրը, տե՛ս Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան, 1992, թիվ 1, էջ 21:

⁴⁵ Ս. ԱԼԻԽԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 116:

դային կառավարությունը նպատակադրվել էր թուրքական արեւելյան վիլայեթների տարածքները տալ «դաշնակցական հայերուն»⁴⁶:

Խորհրդային Ռուսաստանը, այսպիսով, մինչեւ իսկ հայկական կողմի հետ Մոսկվայում վարվող բանակցությունների խափանումից հետո, հուլյս ունենալով, որ հայկական կողմը երեւանյան բանակցությունների միջոցով կընդունի իր միջնորդային առաքելությունը, փորձում էր պատնեշել Հայաստանի հանդեպ Թուրքիայի հարձակողական նկրտումները: Մինչդեռ բացառապես դաշնակիցներին ապավինած եւ անձկորեն Սեւրի պայմանագրին սպասող Հայաստանի կառավարությունը, մերժելով նույնիսկ Լեզրանին ընդունել եւ խուսափելով Ռուսաստանի հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումից, այդ կերպ իր հերթին կանաչ լույս էր վառում թուրքական հարձակման առաջ՝ նվազագույնի հասցնելով այդ դեպքում Ռուսաստանի միջամտության հնարավորությունը: Նույնիսկ կարմիր բանակի կողմից Արցախի, Ջանգեզուրի եւ Նախիջեւանի՝ որպես վիճելի տարածքների գրավումը, որի հետ ՀՀ կառավարությունն ստիպված եղավ համակերպվել օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված համաձայնագրով, չսթափեցրեց վերջինիս եւ չմղեց վերագնահատելու տարածաշրջանի աշխարհադաքական վերածեւավորումները, որոնք բախտորոշ նշանակություն պետք է ունենային Հայաստանի եւ հայ ժողովրդի համար:

Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցությունները եւ պայմանագրի կնքումը ձախողելու հարցում, անկասկած, որոշակի դեր էր խաղում նաեւ դաշնակիցների ներկայացուցիչների ազդեցությունը, որոնք ոչ միայն ձգտում էին խափանել երկու երկրների միջեւ բարեկամական հարաբերությունների ձեւավորումը, այլեւ Հայաստանը դարձնել բուշելիզմի դեմ պայքարի գործիք: Այդ առումով բնութագրական է օգոստոսի 10-ի վերոնշյալ համաձայնագրի ստորագրումից հետո նրանց մեջ սկսված իրարանցումը: Անգլիական գերագույն կոմիսար գեներալ Լուկը եւ Ֆրանսիայի ներկայացուցիչ Մարտելը, ինչպես Թիֆլիսից հաղորդում էր Բեկզադյանը, չէին կարողանում զսպել իրենց զայրույթը համաձայնագրի ստորագրման կապակցությամբ⁴⁷: Չնայած Բեկզադյանի հավաստիացումներին, որ այդ համաձայնագիրը լոկ զինադադարի փաս-

⁴⁶ Զ. ՄՍԵՐԼԵԱՆ, Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920–1921 թթ.), Պէյրուիթ, 1979, էջ 43:

⁴⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 766, թ. 110ա, 111:

տաթուղթ է, եւ իր կառավարությունը շարունակում է հավատարիմ մնալ դաշնակիցներին ու մերժել բոլշեւիզմը, Անտանտի ներկայացուցիչները շտապ մեկնում են Երեւան՝ իրենց վրդովմունքը վարչապետին հայտնելու եւ նրանից պարզաբանում ստանալու համար:

Օգոստոսի 24-ին Երեւան է ժամանում Կովկասում ֆրանսիական առաքելությունը՝ գնդ. Կորբելի ղեկավարությամբ, իսկ օգոստոսի 31-ին՝ Լուկը: Մեծ հանդիսավորությամբ ընդունելով նրանց՝ Օհանջանյանը նրանց վստահեցնում է, որ Հայաստանի կառավարությունն իր «օրիենտացիան» չի փոխել, շարունակում է մնալ «հակաբոլշեւիկ» եւ վճռական է՝ բոլոր միջոցներով իր անկախության համար կռվելու հարցում, որին, իբրեւ թե, սպառնում էր բոլշեւիզմը: Անտանտի ներկայացուցիչները, գոհ Օհանջանյանի բացատրություններից, վերադառնում են Թիֆլիս՝ չմոռանալով տալ «մեծամեծ խոստումներ»: Իսկ Կորբելը վերադարձից առաջ Երեւանում է թողնում երկու սպայի՝ այնտեղից ավելի արագ կերպով տեղեկատվություն ստանալու համար⁴⁸:

ՀՀ կառավարությունը, ոգեւորված Սելրի պայմանագրի ստորագրումից եւ դաշնակիցների խոստումներից, ոչ միայն ձգձգում եւ ձախողում էր Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցությունները, այլեւ մինչեւ իսկ, ինչպես Լուկն էր իր կառավարությանը հաղորդում, նրան գաղտնի տեղեկացրել էր բոլշեւիկներին Անդրկովկասից դուրս մղելու համար Վրաստանի եւ Մակուի խանի հետ հակաբոլշեւիկյան դաշինք կնքելու իր պատրաստակամության մասին⁴⁹:

Լրացուցիչ մեկնաբանությունների կարիք, թերեւս, չկա: Ինչ վերաբերում է հայկական պատվիրակությանը, ապա Շանթին դրա նախագահ նշանակելը պատմաբաններից շատերն են համարել կոպիտ սխալ, սակայն Ռուսաստանի հետ բանակցությունները ձգձգելու եւ ձախողելու՝ Օհանջանյանի որդեգրած քաղաքականությունը նկատի առնելիս պետք է ընդունել, որ Շանթը միանգամայն պատշաճում էր այդ քաղաքականության իրագործմանը: Նա ոչ միայն դիվանագիտական հմտություններից զուրկ անձնավորություն էր, այլեւ, ինչպես անգամ Վրացյանն է նշում, «ամբողջ էությունը բոլշեւիկներին ատող»⁵⁰. մի հատկանիշ, որն

⁴⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 369, թ. 36–37:

⁴⁹ Գ. ԳԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 257:

⁵⁰ Ս. ՎՐԱՅՆԱՆ, Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հտ. Ե. Պէյրուիթ, 2007, էջ 126:

անկասկած պետք է անթույլատրելի լինեն բոլշևիկյան Ռուսաստանի հետ բարեկամական, պայմանագրային հարաբերություններ հաստատող պատվիրակության նախագահի համար: Բնութագրական է նաեւ, որ նա, ըստ Վրացյանի, «բնաւորութեամբ չոր, ինքն իր մէջ քաշուած, աշխարհի գործերը հեզնող» անձնավորություն էր, որը «շատ գլուխ չունէր քաղաքականութեամբ զբաղուելու» եւ Մոսկվայում, բացի պաշտոնական հանդիպումներից, «...շատ քիչ մարդկանց հետ էր տեսնուում: Փակուած էր սենեակում՝ աշխատում էր «Շղթայուածը» թատերգութեան վրայ»⁵¹:

Պատկերավոր այս բնութագրի հատկապէս վերջին տողերը լիովին փաստում են Շանթի՝ իբրեւ պատվիրակության նախագահի անձեռնհասությունն իրեն վիճակված դիվանագիտական առաքելության հարցում: Պաշտոնական բանակցությունների հիմքերը եւ դրանց հաջողության երաշխիքները, ինչպէս հայտնի է, ձեւավորվում են ոչ պաշտոնական հանդիպումների եւ համաձայնությունների միջոցով: Շանթը, սակայն, պաշտոնական հանդիպումներից դուրս զբաղված էր միայն իր նոր թատերգությունը գրելով:

Երբ թուրքական պատվիրակությունը Մոսկվայում սկսել էր բանակցությունները, հայկական պատվիրակության երկու անդամները փորձում են Շանթին համոզել՝ հանդիպում ունենալ թուրքական պատվիրակության հետ եւ փորձել երկկողմ համաձայնության գալ, իսկ եթե դա չհաջողվեր, ապա գոնե կկարողանային շոշափել թուրքերի տրամադրությունները: Ի վերջո, ինչպէս իրավամբ պնդում էին Տերտերյանը եւ Զարաֆյանը, դա ոչ մի վնաս չէր պատճառի հայկական կողմին: Շանթը, սակայն, վճռականորեն ընդդիմանում է՝ ասելով, որ իրենք լիազորված չեն թուրքերի հետ բանակցելու, եւ որ «ինքը կողք կողքի չի՛ նստի մեր ազգի ջարդարարների հետ»⁵²:

Ինչ խոսք, դա բնավ դիվանագիտական մոտեցում չէր: «Աշխատում էինք համոզել, որ այստեղ լիազորութեան խնդիր չկայ, այլ տրամադրություններ շոշափելու հարց», գրում է այդ առնչությամբ Տերտերյանը, — եւ, եթէ պէտք լինի, Հայաստանի կառավարութիւնից հետագային կը ստանայինք անհրաժեշտ լիազորութիւնները: Ինչ վերաբերում է երկրորդ առարկութեան՝ գտնում էինք, որ դիւանագիտական յարաբերութիւննե-

⁵¹ Անդ:

⁵² Հ. ՏԵՐՏԵՐԵԱՆ, նշ. աշխ., թիվ 1 (335), էջ 12–13:

րի մարզում զգացմունքը անելիք չունի, այլ միայն սառն դատողութիւնը եւ մեր ժողովրդի շահը: Դժբախտաբար, այդ խնդրում մեզ չաջողուեց համոզել ընկ. Շանթին»⁵³:

Ուշագրավ է, որ նույնիսկ «բոլշեւիկներին ատող» Շանթը Վրացյանին ուղղած իր նամակում չի հերքում Հայաստանի հանդեպ խորհրդային կառավարության բարեկամական դիրքորոշումը եւ հայկական կողմի հետ համաձայնության գալու՝ նրա ձգտումը: «Ան (Բ. Լեգրանը.— Ա. Հ.) կշանար իրոք որ հաշտության բերեր մեզի ու Բաքուն, մեզի ու Թուրքերը,— գրում է նա:— Ինծի կթվի, որ Լենինը կողմնակից էր Հայաստանի մնալուն, նույնիսկ ո՛չ բոլշեւիկյան, ինծի կթվի, որ Կարախանը նմանապես այդ ուղղությամբ կաշխատեր. ինծի կթվի, որ ներքին կապ կար Լեգրանի ու Կարախանի միջեւ»⁵⁴:

Թե Շանթն անձամբ որպիսի կարեւորություն էր տալիս իր առաքելությանը, վկայում է եւ այն, որ նա այդպես էլ թղթին չհանձնեց իր հուշերը՝ անգամ Վրացյանի բազմաթիվ խնդրանքներից հետո⁵⁵: Եւ եթե, փաստորեն, Տերտերյանը դա չաներ, ապա մենք գրեթե տեղեկացված չէինք լինի Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների մասին:

Կարող է զարմանք հարուցել եւ այն հանգամանքը, որ Տերտերյանն իր հուշերը գրի է առել մեծ ուշացումով՝ 1954 թ.: Դրա պատճառն ըմբռնելու համար կարող է, թերեւս, օգնել Թ. Վեհապետյանի այն տեղեկությունը, որ Տերտերյանը դեռ 1925 թ. փորձել է հրապարակել իր հուշերը, սակայն նրան դա արգելել են կուսակցական ընկերները, իբրեւ թե Շանթին խնայելու համար, իսկ երբ Տերտերյանը համառել է իր ցանկության մեջ, նրան սպառնացել է անձամբ Ռ. Տեր-Մինասյանը⁵⁶: Այդ իսկ պատճառով էլ, ըստ Վեհապետյանի, Տերտերյանի հուշերը հրապարակ եկան միայն 1954 թ., երբ արդեն մահացել էին եւ Ռ. Տեր-Մինասյանը, եւ Շանթը⁵⁷:

Մոսկվայում հայ-ռուսական բանակցությունների ձախողման պատասխանատվությունը, այսպիսով, ծանրանում էր հայկական կողմի վրա: Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցությունները շարունակ

⁵³ Անդ, էջ 13:

⁵⁴ Ս. ՎՐԱՅՑԱՆ, նշ. աշխ., էջ 651:

⁵⁵ Անդ, էջ 645:

⁵⁶ Թ. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ, Նոր սերունդը՝ քառութեան նոխազ, հտ. Ա., Պէյրուիթ, 1988, էջ 91: Այդ տեղեկությունը, ըստ Թ. Վեհապետյանի, անձամբ նրան հաղորդել է Շահան Նաթալին:

⁵⁷ Անդ:

ձգձգելու եւ ձախողելու ռազմավարությունը, որ որդեգրել էին ՀՀ վարչապետ Համո Օհանջանյանը եւ Մոսկվա ուղարկված ՀՀ պատվիրակությունը, ոչ միայն ի չիք էր դարձնում Ռուսաստանի աջակցությամբ Հայկական հարցի որոշակի լուծման հնարավորությունները, այլեւ նպաստում էր Հայաստանի հետ հաշվեհարդար տեսնելու եւ այդ ճանապարհին Ռուսաստանի չեզոքությունն ապահովելու քեմալական ծրագրի իրականացմանը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայաստանի հանրապետություն, Համբարձում Տերտերյան, Համո Օհանջանյան, Ադրբեջան, Լեւոն Շանթ, Մոսկվա, Չիչերին, հայ-ռուսական բանակցություններ, Բորիս Լեզրան, Արցախ, Լեւոն Կարախան, Նախիջևան, Ձանգեզուր

РЕЗЮМЕ

В статье освещаются армяно-российские переговоры 1920 г. и причины их поражения. Премьер-министр Армении Амо Оганджян прилагал большие усилия для установления тесных взаимоотношений с Англией и другими западными державами и возлагал на них надежды по решению Армянского вопроса на Парижской мирной конференции. В то же время правительство Армении игнорировало влиятельную роль Советской России по территориальным требованиям и избегало создания двусторонних связей с последней. Этими факторами были обусловлены задержка, а затем и провал армяно-российских переговоров в Москве.


Несмотря на то, что Советская Россия запретила Кемалю вторжение в Армению и обязало его принять посредничество России между Арменией и Персией в вопросе пограничных территорий, правительство Армении не сделало никаких выводов, что привело к дипломатическому поражению. В случае принятия Арменией российского посредничества, Россия брала на себя обязательство о возврате некоторых территорий Западной Армении — провинций Вана и Битлиса, обеспечив выход к Чёрному морю. Тем не менее правительство

Армении упорно не приняло данное посредничество. Более того, делегации под руководством Бориса Леграна долгое время воспрещался въезд в страну. Неприятие решающей роли Советской России по вопросам территориальных притязаний привело Армению к катастрофическим последствиям.

SUMMARY

The article examines the Armenian-Russian negotiations that began in 1920 and the reasons for their failure. Armenian Prime Minister Hamo Ohanjanyan and his government, trying to build close relations with England and other Western powers and hoping for the solution of the Armenian issue at the Paris Peace Conference, ignored the role of Soviet Russia in the region and avoided establishing bilateral ties with it. This was the reason for the delay and failure of the Armenian-Russian negotiations in Moscow.

Even after Soviet Russia forbade Kemal from attacking Armenia and forced him to accept its mediation on the border demarcation with Armenia and Persia, the Armenian government failed to draw conclusions from this. Although the Russian government promised to give Armenia territories from Van and Bitlis provinces of Western Armenia and provide access to the Black Sea if Armenia accepted its mediation, the Armenian government stubbornly did not accept it and didn't even allow the delegation sent to Armenia under the leadership of Boris Legran to enter Armenia for a long time. Disregarding Russia's role in the region ultimately became one of the main factors contributing to the disastrous developments for Armenia.



ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

«ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ»՝ ԿՈՍՏԱՆԲՈՒՅԻ ՉԿԱՅԱՑԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Սկիզբը՝ թիվ Ա.

ՇԱՐԺՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբնական շրջանում հակակեղեցական պայքարի ազդեցության մեթոդների անբավարար կամ թույլ լինելը հարկադրեց նոր իշխանություններին անցնել առավել համակարգված հակակրոնական գործունեության, որը թեպետ երբեմն ուղեկցվում էր պայքարի արտաքուստ «թուլացմամբ», սակայն ստանում էր պարտադիր ու հետեւողական ծրագրավորման բնույթ: Արագորեն աշխուժանալով՝ «Մարտնչող անաստվածների միությունը» դարձավ խորհրդային երկրում գոյություն ունեցող ամենից զանգվածային կամավոր հասարակական կազմակերպություններից մեկը (կոմկուսից, կոմերիտմիությունից, արհմիություններից հետո): Զեւավորվեց աստվածամերժական քարոզչության ու կադրերի պատրաստման կուռ համակարգ՝ տարատեսակ լայնածավալ միջոցառումներով եւ գրականության մեծաքանակ տպագրությամբ:

Ելնելով ԽՍՀՄ-ում որդեգրված կոլտնտեսային շարժման ու դասակարգային պայքարի հետագա սրման ընդհանուր քաղաքական նոր իրավիճակից՝ արդեն 1929 թ. անաստվածների միությունները վերանվանվեցին մարտնչող անաստվածների միությունների, այլեւս նախկին «մեղմ» մեթոդներն ու եղանակները փոխարինվեցին ավելի կոշտ ու անզիջում պայքարի՝ պետական համակարգին բնորոշ վարչահրամայական մեթոդներով: Երբեմն գործը հասնում էր ծայրահեղության, եւ հաճախ ներկայացվում էին Եկեղեցու դեմ իրականում չծավալված գործունեության կեղծ ցուցանիշներ:

Հատկանշական է, որ 1930-ականների սկզբին հակակրոնական շարժումը որոշակի տեղատվություն ապրեց, ինչը պայմանավորված էր ոչ

այնքան այդ ոլորտում իշխանությունների ունեցած հաջողություններով, որքան այդ պայքարն անմիջականորեն վարողների «հոգնածությունամբ» ու աշխատանքի անբավարար արդյունավետությամբ: Եւ պատահական չէ, որ Եկեղեցուց ու հավատքից հեռացան հիմնականում այն խավերը եւ անհատները, որոնց հավատն առանց այդ էլ տկար էր: Նրանց բավական էր նոր իշխանությունների քաղաքական աջակցությունը, եւ անաստվածներն արդեն հակակրոնական քարոզի կարիք չունեին: Մյուս կողմից՝ համոզված հավատացյալ զանգվածների վրա հակակրոնական քարոզչությունը քաղաքական ու դավանանքային առումով էական ազդեցություն չունեցավ:

Հակակրոնական պայքար մղող միության գործուն անդամները գիտամտավոր եւ կրթական պատրաստվածության ներուժով առանձնակի աչքի չէին ընկնում: Պետական մեքենայի բռնաճնշիչ ու վարչական միջոցառումները մեծ հաջողությունների չէին բերում սոսկ այն պատճառով, որ այդ ամենը բնակչության լայն խավերի շրջանում՝ մանավանդ գյուղացիության, ճնշվողների՝ հոգեւորականության նկատմամբ զուտ ենթագիտակցական ու զգացմունքային կարեկցանք էր առաջացնում:

Տեղին է հիշատակել, որ բացթողումների եւ անարդյունավետ աշխատանքի համար բուն միության ղեկավար ու միջին աշխատակազմը նույնպես բռնաճնշումների էր ենթարկվում ԽՍՀՄ-ում տիրող ընդհանուր ներկուսակցական պայքարի համապատկերում: Միության հատկապես ղեկավար կազմը գերազանցապես, որպես կանոն, կուսակցա-պետական աշխատակիցներ էին, որոնք ենթակա էին այդ տարիներին իշխող զանազան մեղադրանքներով բռնադատման:

1937 թ. ԽՍՀՄ մարդահամարի տվյալների համաձայն՝ բնակչության ընդհանուր առմամբ երկու երրորդն իրեն հավատացյալ էր համարում: Այսինքն՝ այդ փաստը վկայում էր, որ նոր աստվածամերժ պետության հակակրոնական գործունեությունն անգամ խորհրդային իշխանության հաստատումից շուրջ երկու տասնամյակ հետո անհաջողության էր մատնվել, ինչը բնականաբար պետք է անհանգստացներ իշխանություններին: Սակայն Հայրենական մեծ պատերազմը եւ մի շարք այլ առարկայական ու ենթակայական գործոններ ստիպեցին իշխանություններին մեղմացնել ու չափավորել հակակրոնական պայքարը: Ուշագրավ փաստ. 1943 թ. ԽՍՀՄ «գլխավոր անաստված» Եմ. Յարոսլավսկու մահից հետո բազմաթիվ մահախոսականներում նրա գործունեությունը նույ-

նիսկ հիշատակության չարժանացավ, մինչև անգամ լուծարվեց ԽՍՀՄ կենտրոնական հակակրոնական թանգարանը:

Բնականաբար «Մարտնչող անաստվածների միության» հիմնական միջուկը կազմում էին փոքրաքանակ գործունյա անդամները, մինչդեռ աշխատակազմի հիմնական զանգվածը, որպես կանոն, պարզապես այսպես կոչված բուռն գործունեության տպավորություն էր ստեղծում եւ այդ աշխատանքն ընկալում իբրեւ լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Եւ քանի որ այդ աշխատանքները կատարվում էին անվճար ու հասարակական հիմունքներով, չկար առանձնակի շահագրգռվածություն եւ ոգեւորություն:

Հակակրոնական քաղաքական պայքարի շրջանակներում կիրառվում էին տարաբնույթ միջոցներ. պատժիչ (պետանվտանգության կառույցներ, աքսորի, քրեական գործերի հարուցման թույլտվություն), վարչական (հոգեւորականների ու կրոնաեկեղեցական կառույցների համատարած դիտարկում ու վերահսկողություն, աղոթատեղիների փակում), օրենսդիր (կրոնաեկեղեցական կառույցների գործունեությունն արգելող կամ կարգավորող օրենքների եւ կանոններ սահմանող իրավական փաստաթղթերի պատրաստում), քարոզչական (հակակրոնական մամուլի եւ գրականության հրատարակում եւ անաստված կառույցների ստեղծում), ներեկեղեցական (այսպես կոչված «բարենորոգչական» կառույցների ձեւավորում ու Եկեղեցու ղեկավար մարմիններում խառնակչության սերմանում):

Մասնավորապես, միության հիմնական քաղաքական բնույթի գործառույթներից էին դասախոսությունները, նոր խորհրդային «կարմիր» տոների եւ քաղաքացիական ծեսերի արմատավորումը, անաստված գյուղերի, կոլտնտեսությունների ու արտադրական միավորների ստեղծումը, որոնք միշտ էլ, որ ցանկալի արդյունքներ էին տալիս: Նույնը վերաբերում է նաեւ կրոնի ու Եկեղեցու պատմության, Քրիստոսի պատմականության, կրոնաեկեղեցական ծեսերի էության մասին «գիտական» աշխատություններին, որոնք թեպետ հրատարակվում էին ժամանակի համար մեծ տպաքանակներով (ՀՍԽՀ-ում նաեւ ռուսերենից կատարված բազմաթիվ թարգմանություններ էին հրատարակվում), սակայն այդպես էլ գիտական-ակադեմիական շրջանակներում եւ հանրային ընկալման մեջ իրենց հաստատուն տեղը չունեցան եւ տասնամյակ անց վերջնական մոռացության մատնվեցին:

Հակակրոնական պայքարի ծրագրավորված միջոցառումների շրջանակում միությունն իրականացնում էր այսպես կոչված «Անաստված հնգամյակներ»։ Դա սկսվեց 1929 թ. վերջին եւ նպատակ էր հետապնդում, համատարած պայքար մղելով, վերջնականորեն արմատախիլ անելու «կրոնական թուրմը» հատկապես տնտեսական ենթակառուցվածքների ոլորտում՝ ելնելով դասակարգային պայքարի սրման մասին Ի. Ստալինի դրույթներից, որտեղ իշխանության ամենից գործուն հակառակորդներից էին համարվում կրոնական կազմակերպությունները։ Առաջին ծրագիրը հաստատվեց արդեն 1930 թ. սկզբին։ Սակայն ոչ իրատեսական խնդիրների (օրինակ՝ հակակրոնական համաշխարհային թանգարանի ստեղծում, միությանը 10 միլիոն անդամագրում) առաջադրման արդյունքում առաջին հնգամյակի ցուցանիշները չկատարվեցին։ Այդուհանդերձ՝ մշակվեց երկրորդ հնգամյակ, որի ցուցանիշները նախորդի համեմատ ավելի անիրատեսական ու ցնորական էին, օրինակ՝ այնպես անել, որ մինչեւ 1937 թ. մայիսի 1-ը ԽՍՀՄ ողջ տարածքում մոռացվի Աստծու անունը։ Մինչդեռ միության ղեկավարությունն այդ ծրագրերի իրականացման տապալումը բացատրում էր արդեն սովորական դարձած հիմնադուրկ պատճառներով, ներքին ու արտաքին թշնամիների խոչընդոտներ, կրոնական կազմակերպությունների վնասակար գործունեություն։ Արդյունքում հնգամյակները դադարեցվեցին։ 1937 թ. ԽՍՀՄ մարդահամարով պարզվեց, որ քաղաքային բնակչության 1/3-ը եւ գյուղական բնակչության 2/3-ը իրենց համարել են հավատացյալ, ինչը վերջնական վկայեց հակակրոնական պայքարի ձախողման մասին։ Մարդահամարի արդյունքների հրապարակումն անմիջապես արգելվեց, եւ դա բացահայտվեց միայն 1990 թ.¹։

Ինչպես ողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ ՀՍԽՀ-ում միությունն ամենից զանգվածային հասարակական կազմակերպություններից էր՝ իր բազմաճյուղ գործունեությամբ։ Սակայն հակակրոնական պայքարում՝ հատկապես վարչահրամայական գործիքակազմի կիրառման տեսանկյունից, որքան էլ զարմանալի թվա, նրա դերակատարությունը երկրորդական էր։ Միության գործունեության հիմնական եւ առաջնահերթ նպատակը տեղեկատվական էր՝ հակակրոնական քարոզչություն։

¹ И. Павлов, Российская религиозность в контексте переписи населения 1937 года //http://www.krotov.info/hislovy/20/1930/1937 pavlov.htm

ՇԱՐԺՄԱՆ ՔԱՐՈՋՁԱԿԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ խոսք, զանգվածային հակակրոնական պայքարում քարոզչական առաջնահերթ սլաքը պետք է ուղղվեր Հիսուս Քրիստոսի մերժմանը, անգամ Նրա գոյության հերքմանը: Այս առումով առանձնահատուկ «ջերմեռանդություն» էին ցուցաբերում հայազգի մարտնչողները: Նրանցից առավել աչքի էր ընկնում Նիմանդը, որը հեղինակել էր մի քանի հանրամատչելի ցածրորակ գրքույկներ: Նա մասնավորապես վերջնական ճշմարտության հավակնելով՝ բացարձակ հրամայական ոճով հայտարարում էր. «Մեր ժամանակակից գիտությունը ապացուցում է, որ Քրիստոսը իսկապես գոյություն չի ունեցել, որ նա առասպելական անձ է: Եթե Քրիստոս երբեք գոյություն չի ունեցել եւ առասպելական անձնավորություն է եղել, ապա ուրեմն եզրակացնելու ենք, որ առասպելական մարդու մայր համարվող Մարիամն էլ առասպելական անձ է եւ իսկի գոյություն չի ունեցել»²: Հեղինակի մի շարք գրքույկներ նվիրված են քրիստոնեական տոների քննադատությանը եւ մերժմանը: Այստեղ այդ տոները դիտարկվում են հատկապես տնտեսական «վնասակարության» տեսանկյունից³:

«Մերունի վանական» կեղծանունով հանդես եկող նախկին Բենիկ վարդապետը, «մերկացնելով» մեռոնեփեքի ծեսը, պատմական ոչ մի քննադատության չդիմացող, կատարյալ անհեթեթության հասնող եզրակացություն էր կատարում. «Մեռոնեփեքի ծեսից եւ օծյալների եսապատությունից բղխում է եւ մի ուրիշ չարիք, որ մղձավանջի նման դարերով խեղդում էր հայ ժողովրդին եւ օրեցօր կրճատում նրա թիվը: Այդ դեպքը օտար ազգերն ու օտարազավանները տաժած ատելությունն է, որի հետեւանքով օտարների ատելությունն էլ իբրեւ տապանաքար հայ ժողովրդի վրա է քաշվում»⁴:

Նույն նյութի վերաբերյալ, հայազգի հեղինակներից զատ, որպես վերադասի անբեկանելի ճշմարտություն, ռուսերենից պարբերաբար թարգմանությամբ հրատարակվում էին մոսկովյան «մարտնչողների» գրքույկները, որոնց վերնագրերն արդեն իսկ խոսուն էին⁵:

² ՆԻՄԱՆԳ, Աստվածածնի տոնը, Երեւան, 1928, էջ 6:

³ ՆԻՄԱՆԳ, Եկեղեցական տոներ, Երեւան, 1931: Քրիստոսի ծնունդն ու մկրտությունը, Երեւան, 1930:

⁴ ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ, Մեռոնեփեք (նվեր հայ ուխտավորներին), Երեւան, 1926, էջ 14:

⁵ Հարության տոնի առասպելը: Երեւան, 1930: Վ. ԿՈՒՋՄԻՆ, «Քրիստոս չհարյավ ի մեռելոց», Երեւան, 1925: Ա. ԼՈՔԻՆՈՎ, Քրիստոսի լեզենդը, Երեւան, 1927: Ն. ԱՄՈՍՈՎ,

Ակտիվ «մարտնչողներից» մեկը՝ Հովհ. Պետրոսյանը, ձեռակերպեց իրենց գործունեության առաջնահերթությունը, թեկուզ դա եւս հիմնականում մնաց թղթի վրա. «Հակակրոնական աշխատանքը չպիտի տարվի կոմպանիոն ձեռով, նա մեր հասարակական-քաղաքական աշխատանքների մի հիմնական բնագավառն է: Հակակրոնական աշխատանքը պիտի լինի մարտական, մյուս կողմից ճկուն, տեղի կոնկրետ պայմանների հաշվառման հիման վրա: ՄԱՄ պիտի դառնա հզոր եւ մասսայական մի կազմակերպություն»⁶:

Հատկանշական էր, որ հայազգի «մարտնչողները» քարոզչական նպատակներով հնարավորինս լայնորեն օգտագործում էին նաեւ թարգմանական մոսկովյան հրատարակությունները՝ դրանք լրացնելով «հայկական նյութերով»: Մասնավորապես կարեւորելով ԽՍՀՄ «Մարտնչող անաստվածների միության» հրատարակած համամիութենական դասագիրքը՝ այն համեմել էին նմանօրինակ նյութերով: Նկատի ունենալով դրանց կարեւորությունը հայազգի «մարտնչողների» գաղափարական, պատմական եւ քաղաքական մտածելակերպի պատկերացման տեսանկյունից՝ կատարենք մի քանի բնորոշ մեջբերում. «1905 թ. հեղափոխության թշնամի դուրս եկավ եւ հայ եկեղեցին, որ միանալով հայ կապիտալիստների հավատարիմ գամփոնների՝ դաշնակցականների հետ, իր ամբողջ ուժերը գործ դրեց, որ Հայաստանի բանվորությունը եւ գյուղացիները չկարողանան միանալ Ռուսաստանի բանվորների եւ գյուղացիների հեղափոխական շարժմանը: Դաշնակցականները եւ էջմիածինը որպես միջոց օգտագործեցին ցարիզմի կողմից գիտակցաբար առաջ բերված հայ-թուրքական ընդհարումները եւ այդպիսով գրավեցին Հայաստանի բանվորների եւ գյուղացիների ուշադրությունը հեղափոխության ընդհանուր խնդիրներից»: «Հայ հոգեւորականները օրհնում էին կամավորական խմբերին եւ աղոթում աստծուն, որ նա օգնի ջարդելու թուրքերին: էջմիածինը իր սեւ ծառայությունը մատուցեց ցարիզմին, հայ աշխատավորությունը կռվի դաշտ ուղարկվեց ցարիզմի համար արյան մեջ խեղդվելու: Հայ աշխատավորությունը միլիոնից ավելի զոհ տվեց, եւ Տաճկահայաստանն ազատվեց հայե-

Հեքիաթ Քրիստոսի մասին, Մոսկվա, 1931: Ա. ԶՈՒՄԱԶԵՆԿՈ, Ինչպես են մարդիկ աստված հնարել, Երեւան, 1933: Վ. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ, Ում է պետք Քրիստոսի ծնունդը, Մոսկվա, 1931:

⁶ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Զատիկի դեմ, Երեւան, 1930, էջ 7: Նաեւ տես Կրոնի դեմ, Երեւան, 1928:

րից: Իրագործվեց ցարիզմի լոգոնգը. «Հայաստանն առանց հայերի»: «Խորհրդայնացման ժամանակ աշխատավորների պատմական եւ դարավոր թշնամի էջմիածինը չէր կարող համաձայնվել այն մտքի հետ, որ նա այլեւս հնարավորութիւն չի ունենալու բանվորների եւ աշխատավոր գյուղացիների արյունը ծծելու, խավարի ու տգիտութեան մեջ պահելու»: «Դաշնակցականները, հայ բուրժուազիան եւ հայ եկեղեցին կրոնը իրենց համար զենք էին դարձրել հայ աշխատավորներին իրենց թուրք եղբայրների դեմ գրգռելու համար: Նույն բանն էին անում նաեւ թուրք փաշաները, աղաները, բեգերը, սուլթանական կառավարութիւնը եւ թուրք ազգային կուսակցութիւնները»: «Քրիստոնեութիւնը հրով ու սրով եւ արյան հեղեղների միջոցով է տարածվել Հայաստանում եւ իր հենց առաջին օրվանից եղել է մի զենք աշխատավորութեանը հիմարացնելու, խաբելու, հնազանդութեան մեջ պահելու, ազգային թշնամութիւն առաջ բերելու եւ շահագործող դասակարգերի իշխանութիւնն ամրացնելու համար»⁷:

Հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ինչպէս բոլոր մյուս դեպքերում, այնպէս էլ «մարտնչող անաստվածների» պարագայում տեղերում՝ այդ թվում ՀԽՍՀ-ում, առաջնորդվում էին մոսկովյան վերադասի հրահանգներով եւ ցուցումներով: Կատարենք մի քանի բնորոշ մեջբերումներ. «Աշխարհումս կատարված մեծագույն շարագործութիւնների ուսուցիչն ու պաշտելի գիրքը աստվածաշունչն է եղել»⁸: «Ավետարանական Քրիստոսը հարուստների, կապալառուների, հարկահանների եւ նմանների բարեկամն է հանդիսանում»⁹: «Մեր երկրում հեղափոխական, սոցիալիզմ կառուցող կարող է լինել միայն նա, որ չի հավատում ոչ մի աստծու, որ ազատ է կրոնական թուլնից: Սոցիալիզմի կառուցումն ու դասակարգային կռիվն անհնարին է առանց կրոնի դեմ պայքարելու: Ոչ միայն առանց աստծո, այլեւ աստծո դեմ – ահա թե ինչը պիտի լինի մեր լոգոնգը»¹⁰: «Առանց աստված հավատալու ոչ թե միայն ապրել կարելի է, այլեւ աստծուն հավատալը խանգարում է կենսուրախ ապրել, հա-

⁷ Հակակրոնական դասագիրք: Լրացված է հայկական նյութերով, Մոսկվա, 1931, էջ 39, 45, 46, 54, 307:

⁸ Ե. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ, Աստվածաշունչը հավատացյալների եւ ոչ հավատացյալների համար, Երեւան, 1923, էջ 5:

⁹ Ս. ՉԱՐՈՎ, Անաստվածի կատեխիզիսը, Երեւան, 1931, էջ 49:

¹⁰ Բ. ՄԱԿԱՐՈՎ, Առանց կրոնի թե կրոնի դեմ, Երեւան, 1930, էջ 14:

մոզված կռվել, համարձակ գործել: Ձի կարելի լինել լենինյան եւ աստ-ծուն հավատար»¹¹:

«ԱՆԱՍՏՎԱԾ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍԱՓՈՂ

Ինչպես հանրային, հասարակական-քաղաքական կյանքի բոլոր աս-պարեզներում, այս ոլորտում եւս իշխանությունները մարտնչող անաստ-վածների շարժմանը զանգվածայնություն հաղորդելու եւ հակակրո-նական պայքարն ընդլայնելու նպատակով հրատարակեցին «Անաստ-ված» ամսագիրը (երկշաբաթյա եւ ամսական)¹², ապա՝ թերթ (5-օրյա եւ 10-օրյա)¹³: Ամսագրի տպաքանակն առաջին իսկ համարից անկայուն էր. տատանվում էր 1500-ից մինչեւ 6000, եզակի համարներ՝ 11 000: Թերթի պարագայում տպաքանակն ավելի քիչ էր:

Պարբերականն առաջին իսկ համարից խմբագրականներում մշտա-պես անդրադառնում էր շարժման ծավալման ընթացքին, առկա դժվա-րություններին ու խնդիրներին, դրանց լուծման եւ հաղթահարման ուղի-ներին, հակակրոնական պայքարի խստացման կարեւորությունը՝ նշելով նաեւ տիրող դժգոհությունը եւ աշխատանքի ցանկալի արդյունքների բացակայությունը:

Ներկայացնենք մի քանի օրինակ. «Խորհրդային իշխանությունը ոչ մի կրոնի կարոտ չէ, նա դեմ է ամեն մի կրոնի: Խորհրդային իշխանու-թյունը գործունե կերպով նպաստում է մասսաների կրոնական թուլնից ազատագրվելու պրոցեսին՝ իրագործելով հակակրոնական պրոպա-գանդը խորհրդային պետական ապարատի միջոցով: Ավելի պարզ ու ուղիղ չէ՞ր լինի արդյոք, եթե եկեղեցիները փակվեին, տերտերներին ու աղանդավորներին էլ արգելվեր տանել իրենց աշխատանքը: Այդպես վարվելը արմատապես սխալ կլիներ: Կրոնը հոգեպես ճնշելու ծպտյալ, քողարկված մի ձեւ է, որից մասսաները անմիջապես ազատագրվել չեն կարող: Անհրաժեշտ է սխտեմատիկորեն մերկացնել նրանց առաջ կրո-

¹¹ Կարելի է ապրել առանց աստծուն հավատալու: Ինչ է ասում Լենինը, Երեւան, 1924, էջ 13:

¹² «Անաստված» ամսագիր — օրգան ՀՍԽՀ ՄԱՄ ԿԽ եւ Երգավխորհրդի, Երեւան, 1928–1934, պատասխանատու խմբագիրներ՝ Պ. ԹՈՐՈՍՅԱՆ, Կ. ՂԱԶԱՐՅԱՆ, Վ. ԹԱԹԻԿՅԱՆ, Ե. ԽՈԶԱՄԻՐՅԱՆ:

¹³ «Անաստված» թերթ — օրգան ՀՍԽՀ ՄԱՄ ԿԽ, Երեւան, 1933–1935, պատասխանատու խմբագիրներ՝ Վ. ԹԱԹԻԿՅԱՆ, Ե. ԽՈԶԱՄԻՐՅԱՆ, Լ. ՎԱՐԳՈՒՆԻ:

նի դասակարգային դերը, անհրաժեշտ է հակակրոնական մասսայական պրոպագանդ»¹⁴։ «Անաստված»-ի խնդիրն է ավելի սրել պայքար դասակարգային բոլոր թշնամիների — կուլակների եւ հոգեւորականների, կուսակցության եւ Խորհրդային իշխանության խորթ բոլոր իդեոլոգիաների դեմ¹⁵»։

Ձնայած այս ամենին՝ ՀԿ(Բ)Կ ԿԿ կուլտպրոպ բաժնի մամուլի բաժինը հերթական անգամ դժգոհեց պարբերականի գործունեությունից. «Անաստված» թերթի աշխատանքը գտնել անբավարար, չի տարել մասսայական աշխատանք, կտրվել է մասսաներից, անծրագիր ինքնահոս է աշխատել, անհրաժեշտ է վերակառուցել թերթի աշխատանքը»¹⁶։

Այսուհանդերձ՝ անգամ միության ստեղծումից վեց տարի անց մարտնչող անաստվածների խոսնակն ստիպված էր խոստովանել. «Կրոնը կենսունակ է։ Հազարավոր ու միլիոնավոր աշխատավորներ մինչեւ այժմ էլ այս կամ այն չափով ենթակա են նրա ազդեցությանը։ Կրոնը մինչեւ այժմ դեռ մնում է որպես այն գործոններից մեկը, որոնք դանդաղեցնում են մեր առաջընթացը դեպի սոցիալիզմ»¹⁷։

ՀԱԵ-ի դեմ պայքարում նրան պարբերաբար ու սերտորեն շաղկապում էին կոմունիստական կուսակցության գաղափարական թշնամի Հ. Յ. Դ. հետ։ Իհարկե այդ ամենը բխում էր հենց կոմկուսի հայեցակարգային ուղեգծից։ Այս առումով հատկանշական էր խմբագրականում տրված հետեւյալ ուղեցույց-հրահանգը. «Դաշնակցությունն իր ամբողջ պատմության ընթացքում էջմիածինն ու նրա հետ միասին ամբողջ կղերականությունը ունեցել է իբրեւ զորավիգ իր արկածախնդրական բովանդակ գործունեության համար։ Հայ աշխատավորության գլխով անցած դառնությունների ու կոտորածների, ավերների ու թալանների եւ այդ ամենի հետ միասին տաճկահայ աշխատավորության բնաջնջման գործում հայ հոգեւորականությունը, էջմիածինն իր կաթողիկոսով մնում են դաշնակցության հետ միասին հավասարապես պատասխանատու»¹⁸։ Իսկ հեղինակներից մեկն էլ շարունակում էր այդ միտքը. «Հայ հեղափոխական դաշնակցությունը» կատարյալ տեր ու տնօրենը դար-

¹⁴ «Անաստված», 1928, թ. 1, էջ 1–3։

¹⁵ «Անաստված», 1933, թ. 2, էջ 1։

¹⁶ «Անաստված», 1933, թ. 17, էջ 1։

¹⁷ «Անաստված», 1934, թ. 2–3, էջ 1։

¹⁸ Խմբագրական, Դաշնակցությունը եւ էջմիածինը, «Անաստված», 1928, թ. 3, էջ 1–2։

ձավ էջմիածնի «հոգեւոր» գործերի, իսկ էջմիածնի «ամենայն հայոց հովվապետերը» «հայ հեղափոխական դաշնակցության» ամենամոտ լծակիցը եւ աֆտորիտեւ ու խորհրդատու անձը: Այնպէս որ դաշնակցության վերջին շրջանի պատմության մեջ հազիվ թէ գտնվի շատ թե քիչ աչքի ընկնող մի ձեռնարկում, որին այս կամ այն ձեւով մասնակցած չլինի եւ էջմիածինը ու ընդհակառակն: Եւ իրոք, էջմիածինը եղել է ոչ այլ ինչ, եթե ոչ դաշնակցություն կուսակցության «հոգեւոր» թելը¹⁹:

Բնականաբար պետք է իրենց տեսակետն արտահայտեին բարձրաստիճան գործիչները: Այդ առումով հատկապէս աչքի ընկավ Արտաշես Կարինյանը, որի ծավալուն հոդվածը հրատարակվեց որպէս հատուկ թերթոն²⁰: Սովորական դարձած «ավանդույթի» ուժով Սբ. էջմիածնի հիմնական քաղաքական մեղքն էր համարվում Առաջին աշխարհամարտի եւ Հայաստանի առաջին հանրապետության տարիներին Հ. Յ. Դ.-ի հետ իբր ունեցած սերտ կապն ու գործակցությունը. «էջմիածինը դառնում է Դաշնակցության ամենաակտիվ զինակիցը: Սեւազգեստ հայ հակահեղափոխականները կանգնել էին իմպերիալիզմի եւ միջազգային ռեակցիայի դիրքերում: Հայ կղերականները կանգնած են եղել միշտ ջարդարարմաուզերիստների կողքին, դաշնակցական ռեակցիայի սեւազգեստ ժանդարմներն էին»: Իսկ խորհրդայնացումից հետո Սբ. էջմիածնի գնահատականը կրում էր «մահապատժի» բնույթ. «էջմիածնի միաբանությունը կապված էր ամուր շղթաներով թէ մաուզերիստական էմիգրացիայի եւ թէ առանձնապէս իմպերիալիզմի դիվանագիտության հետ: Իրականում ներկայացնում է իրենից միջազգային հակահեղափոխության հետ սերտորեն շաղկապված հայ հակահեղափոխության անհրաժեշտ մասնիկն ու հատվածը»: Պարբերականի գործունյա հեղինակներից էր բարձրաստիճան խորհրդային մեկ այլ գործիչ՝ Հայկ Ազատյանը²¹:

Պատմական բնույթի հոդվածաշարով աչքի էր ընկնում «Աթեյիստ» կեղծանունով Գրիգոր Զուբարը, որի ստապատիր եւ անհիմն վերլուծու-

¹⁹ ՄԱՐԼԵՆ, էջմիածինն եւ դաշնակցությունը, «Անաստված», 1930, թ. 12, էջ 10–12, 1931, թ. 2, էջ 9–11:

²⁰ Ա. ԿԱՐԻՆՅԱՆ, էջմիածինը – ռեակցիայի միջնաբերդ, «Անաստված», 1933, թ. 5–8:

²¹ Հ. ԱԶԱՏՅԱՆ, Երկնային կոնցեսիա, «Անաստված», 1928, թ. 1, էջ 3–5, Կրոնի խնդիրները բուրժուական հեղափոխությունների շրջանում, 1928, թ. 4, էջ 2–6, Բուրժուազիան եւ կրոնը կապիտալիզմի զարգացման բարձր շրջաններում, 1928, թ. 7–8, էջ 2–5, թ. 9–10, էջ 2–5, Բուրժուական գիտությունն ու կրոնը, 1928, թ. 11–12, էջ 3–10, 1929, թ. 9, էջ 2–5, թ. 10, էջ 3–4, 1930, թ. 1, էջ 4–7:

թյունները ոչ մի պատմագիտական քննադատության չեն դիմանում²²: Օրինակ՝ անբարոյականության գազաթնակետ է նրա հետեւյալ եզրահանգումը. «Գեւորգ կաթողիկոսը եւ դաշնակցությունը թեւ ու թիկունք տալով էնվերներին եւ Թալեաթներին կատարեցին ցարական մինիստրի կամքը, մի բան էլ ավելի՝ Հայաստան թողին առանց հայերի եւ տվին տաճիկներին: Ահա թե ինչ արդյունք տվեց ցարական իմպերիալիզմի եւ էջմիածնի կղերի դարավոր գործակցությունը»²³: Հակակրոնական պայքարի անբավարարության՝ պարբերական դարձած փաստագրումից հետո նա հերթական անգամ ընդգծում էր պայքարի հզորացման անհրաժեշտությունը. «Մինչ օրս բացի կենտ ու ջուխտ հողավածներից մենք արժանի չափով չենք մերկացրել «հայ առաքելական» եկեղեցու պատմական-քաղաքական դիմագիծը, սոցիալ-դասակարգային արժեքը, զինակցությունը բոլոր կարգի ու բարքի շահագործողների, բռնակալների հետ: Մեր պայքարը լինելու է գերազանցապես իդեոլոգիական – դա հակակրոնական պայքարի լավագույն զենքն է հանդիսացել միշտ: Մենք մարտնչող անաստվածներս կարիքն էլ չենք զգում այլ զենքերի»²⁴: Ուշագրավ է, որ հեղինակը, ժամանակի՝ արդեն փոխված հրամայականին ենթարկվելով, քննադատության սլաքն ուղղեց նաեւ «ազատ եկեղեցականների» դեմ. «Եկեղեցու հակահեղափոխական գոնափոխության եւ վերակերպության ամենավտանգավոր արտահայտություններից մեկը հենց այսպես կոչված ազատ եկեղեցականությունն է: Կրոնական շանտաժի ու խաբեբայության այս նոր ասպետները սկսեցին օգտագործել հեղափոխական մեր տոները: Սկսեցին քարոզել, որ ամենամեծ սոցիալիստը Քրիստոսն է, որ Մարքսն ու Լենինը քրիստոնեական գաղափարի քարոզիչներն ու առաքյալներն են, որ գիտությունն ու կրոնը հաշտելի են եւ այլն: «Ազատ» եկեղեցականությունը պաշտոնական եկեղեցու «բարեփոխված» հրատարակությունն է: «Ազատ եկեղեցականությունը

²² ԱԹԵՅԻՍ, էջմիածնի կղերը, բուժուական Հայաստանը եւ մայիսյան ապստամբությունը, «Անաստված», 1930, թ. 3, էջ 1–3: Քրիստոնեական պետականությունը եւ «լուսավորչի» գահակալությունը, 1930, թ. 12, էջ 12, 1931, թ. 1, էջ 10–12: Հայ եկեղեցին եւ գյուղացիական ապստամբությունը, 1931, թ. 3, էջ 10–12: էջմիածինը եւ խորհրդային իշխանությունը, 1931, թ. 11–12, էջ 4–5:

²³ ԱԹԵՅԻՍ, Զարական իմպերիալիզմը, էջմիածնի կղերը եւ տաճկահայերի կոտորածը, «Անաստված», 1929, թ. 11–12, էջ 16–17:

²⁴ ԱԹԵՅԻՍ, Ուժեղացնել իդեոլոգիական պայքարը «ազգային-առնկավար» եկեղեցու դեմ, «Անաստված», 1931, թ. 2, էջ 4–5:

նր» պաշտոնական եկեղեցու քաղաքական-իդեոլոգիական անպատկառ գործակալությունն է»²⁵;

Պատմական նյութերից հիշատակելի է նաեւ Վարդան Պարսամյանի հրապարակումը²⁶:

Մշտական բնույթ էին կրում Քրիստոսի եւ տոների ու ծեսերի դեմ հրապարակումները, հատկապես Նիմանդի հողվածաշարը²⁷, խմբագրականները²⁸ եւ ուրիշների հողվածները²⁹:

Ներկայումս ոչ մի քննադատություն չեն դիմանում այսպես կոչված «գիտական» հակակրոնական հողվածները³⁰:

Պարբերականում, ժամանակի հրամայականին համապատասխան, հակակրոնական գեղարվեստական ակնարկներով հանդես էին գալիս Դ. Դեմիրճյանը, Խ. Դաշտենցը, Գ. Մահարին, էդ. Խոճիկը, Ն. Զարյանը: Առանձնակի հիշատակենք Լեո Կամսարի երգիծական հակակրոնական ֆելիետոնները³¹:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ՝ «Մարտնչող անաստվածների միություն» հակակրոնական գործունեությունը չունեցավ ցանկալի արդյունք հետեւյալ պատճառներով.

²⁵ ԱԹԵՅԻՍՏ, Ազատ եկեղեցականությունը եւ նրա սոցիալ-քաղաքական դիմագիծը, «Անաստված», 1931, թ. 5, էջ 4–5:

²⁶ Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ, էջմիածինը դաշնակցության փետրվարյան ավանտյուրայի օրը, «Անաստված», 1933, թ. 2:

²⁷ ՆԻՄԱՆԴ, Քրիստոսի ծնունդը եւ մկրտությունը, «Անաստված», 1928, թ. 1, էջ 5–7, թ. 11–12, էջ 1–3: Կրոնական եւ պրոլետարական տոներ, 1928, թ. 4, էջ 7–9: Մատաղ, 1928, թ. 5–6, էջ 12–13: Խաչվերաց, 1928, թ. 7–8, էջ 7–8: Մեծ պասը, 1928, թ. 3, էջ 5, թ. 11–12, էջ 5–6: Քրիստոսի համբարձումը, 1929, թ. 4, էջ 8–9: Անաստվածների տոներ, 1929, թ. 7, էջ 4–6: Հին երկրագործական տոները ու մեր բերքի տոներ, 1929, թ. 8, էջ 8–11: Խաչը, 1930, թ. 3, էջ 5–7: Ինչ էլ գատիկը, 1930, թ. 4, էջ 6–8: Վարդավառ, 1930, թ. 6–7, էջ 21: «Տյառնընդառաջ», 1930, թ. 12, էջ 12–13, 1931, թ. 1, էջ 12–13: «Քրիստոսի հարությունը», 1931, թ. 3, էջ 4–6: Պասի ծագումը, 1935, թ. 3:

²⁸ Հարություն առնող աստվածներ, «Անաստված», 1928, թ. 4, էջ 1–2: Ծննդյան տոն, 1929, թ. 11–12, էջ 3–4:

²⁹ Ս. Գրիգոր Լուսավորչի «աջը», «Անաստված», 1928, թ. 5–6, էջ 8–11: Հ. Պետրոսյան, Կորչի գատիկը, կեցցե հնգամյակը չորս տարում, 1930, թ. 4, էջ 3–5: Վ. ԲԵՔԱՐՅԱՆ, Աստվածածնա տոներ, 1930, թ. 8–9, էջ 9–10:

³⁰ Ռ. ԳԱՐԻԲԵԼՅԱՆ, Մարդու ծագումը, «Անաստված», 1928, թ. 3, էջ 2–3, թ. 4, էջ 18–21, թ. 5–6, էջ 20–24, թ. 7–8, էջ 9–12, թ. 9–10, էջ 8–10, թ. 11–12, էջ 11–13, 16–19, 1929, թ. 3, էջ 11–13: Զրհեղեղի պատմությունը եւ գիտությունը, 1929, թ. 5–6, էջ 9–10, թ. 7, էջ 6–7:

³¹ ԼԵՌ ԿԱՄՍԱՐ, Քրիստոսի ծնունդը, «Անաստված», 1928, թ. 1, էջ 13–15: Ի խորոց սրտի խոսք ընդ աստծո, 1928, թ. 2, էջ 8:

Միության գործուն միջուկն էապես տարբերվում էր նրա հիմնական աշխատակիցներից, որոնց կրթական ցածր մակարդակը, քաղաքագիտական անպատրաստվածությունն ակնհայտ էին: Աշխատակիցների շրջանում նշանակալից էր անգրագետների կամ կիսագրագետների թիվը: Դասակարգային թշնամու հանդեպ մտավախության պատճառով նախկին հոգեւորականներին քարոզչական նպատակով օգտագործումը մերժվում էր: Հակակրոնական քաղաքական պայքարում ընդգրկված կուսակցական-կոմերիտական պաշտոնյաների համար այդ պայքարը, որպես կանոն, լրացուցիչ ծանրաբեռնություն էր, որից նրանք որեւէ շոշափելի օգուտ չէին ստանում. աշխատանքը կրում էր գերազանցապես հասարակական բնույթ: Եւ զարմանալի չէր, որ անգամ միության շատ բջիջներ ստեղծվում եւ գործում էին իրականում միայն թղթի վրա:

Միության գործունեության ընթացքում խիստ նկատելի էր անհարկի ձեւապաշտությունը, երբ աշխատանքն իբր կատարվում էր ոչ թե վերջնական քաղաքական արդյունքի, այլ պարզապես հաշվետվության ու թվանկարչության համար: Որոշ առումով բացասական դերակատարություն էր ունենում նաեւ ամեն ինչում կուսակցական վերադաս մարմիններից խիստ կախվածությունը, ինչը վարչահրամայական համակարգի պայմաններում միությանը հաճախ զրկում էր նախաձեռնողականության ցուցաբերումից:

Միության հակակրոնական քարոզչության քաղաքական-փիլիսոփայական ելակետերը, կոմունիստական աստվածամերժության տարբերակը զրկում էին շարքային խորհրդային քաղաքացուն եւ լայն ժողովրդական զանգվածներին (գերազանցապես՝ գյուղացիությանը) էաբանական-գոյաբանական հիմնախնդիրների ավանդաբար ձեւավորված պատմական ընկալումներից: «Դրախտ երկրի վրա» հորջորջվող խորհրդային աստվածամերժ գաղափարախոսությունն այդպես էլ ոգեւորությունը զանգվածաբար չընդունեց դարեր շարունակ այլ վարքականոնով ու բարոյականությամբ ապրող բնակչությունը:

Հակակրոնական քարոզչությունը հաճախ իրականացվում էր անկանոն եւ ոչ համակարգված, ձեւական դասախոսություններն արագ ձանձրացնում էին ունկնդիրներին, մանավանդ երբ դասախոսներն ընդամենը տարրական կրթություն ունեին: Այդ քարոզչությունն իրականում ոչ այնքան աստվածամերժական էր, որքան քաղաքական: Դա ոչ այնքան անաստվածության, որքան հակաաստվածության քարոզ էր, ինչը տա-

նամյակներ անց՝ արդեն ներկա պայմաններում, իր դառը պտուղները տվեց ու արտացոլվեց հանրային լայն շրջանակներում, երբ բնակչության զգալի հատված ոչ հավատացյալ է եւ ոչ աստվածամբոժ:

Մեր նախնական հաշվարկներով՝ 1920–1930-ական թվականներին հայերեն լեզվով Երեւանում, Մոսկվայում եւ ԽՍՀՄ այլ քաղաքներում հրատարակվել է ընդհանուր առմամբ մոտ 100 գիրք ու գրքույկ՝ շուրջ 350 հազար տպաքանակով, ինչը հիրավի պատկառելի թիվ էր ժամանակի տպագրական սուղ պայմաններում: Սա ինքնին խոսուն փաստ է ՀԱՅ-ի եւ կրոնի դեմ կոմկուսի պաշարի մարտական տրամադրվածության մասին: Սակայն հատկանշական է, որ այդ հսկայածավալ գրականությունը շատ կարճ ժամանակամիջոցում մոռացության մատնեցին անգամ իշխանությունները, եւ այն վերածվեց... թղթի թափոնի:

Փաստորեն՝ շուրջ երկու տասնամյակ գործելով, վայելելով կոմկուսի եւ խորհրդային պետական համակարգի բազմակողմանի եւ ըստ ամենայնի լայն աջակցությունը եւ հովանավորությունը, ունենալով միլիոնավոր անդամներ, լայնատարած կազմակերպչական կառույց, հրատարակչական-տեղեկատվական աննախադեպ աշխույժ գործունեություն, զանգվածային քարոզչություն՝ մարտնչող անաստվածների շարժումն այդուհանդերձ չհասավ այն նպատակին, ինչի համար ծավալվել էր: Խորհրդային իրականությունից հնարավոր չեղավ ոչ մի այն ի սպառ վերացնել հավատքի-կրոնական զգացմունքի գործոնը, այլեւ հակառակը՝ խորհրդային քաղաքացիները շարունակեցին պահպանել հավատն առ Աստված, հաճախել եկեղեցի, նշել կրոնական ծեսեր ու տոներ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մարտնչող անաստվածներ, չկայացած նախագիծ, աստվածամբոժ, հակակրոնական գործունեություն:

РЕЗЮМЕ

Союз воинствующих безбожников в Армении было основано в 1928 году, были изданы журнал и газета «Безбожник».

Действуя в течение двух десятилетий при поддержке и покровительстве Коммунистической партии и советской государственной системы, союз насчитывал миллионы членов. Союз вел активную издательско-информационную деятельность, массовую пропаганду, но не добился намеченной заранее цели.


Устранить фактор религиозного чувства из советской действительности не удалось. Советские граждане продолжали хранить веру в Бога, посещать церковь, отмечать религиозные обряды и праздники.


SUMMARY

The “Union of Fighting Atheists” in Armenia was founded in 1928, which published a magazine and newspaper entitled “Atheist”.

Operating for two decades with the support and patronage of the Communist Party and the Soviet state system, the Union had millions of members. The Union was active in publishing and information activities and mass propaganda, but it did not achieve its intended goal.

It was not possible to eliminate the religiosity from the Soviet reality. Soviet citizens continued to keep their faith in God, attend churches, and celebrate religious rites and feasts.





ԱԽԵՏԻՔ ԻՍԼԱՎԿԵԱՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԷՋՍԻԱՄԻՆԸ¹

Աետիք Իսահակեանն իր ողջ գիտակցական կեանքում բազմաթիւ անտեսանելի թելերով կապուած է եղել Հայ Լուսաւորչական Եկեղեցուն եւ Սուրբ Էջմիածնին՝ որպէս համայն հայութեան հոգեւոր կենտրոնի: Իր երկար՝ ալեկոծութիւններով լի կեանքում, առաւել եւս պատանեկութեան ու երիտասարդութեան փոթորկուն շրջանում, տարուելով զանազան կրօնական եւ փիլիսոփայական ուղղութիւններով, նա, այնուամենայնիւ, մնացել է Հայ Եկեղեցու արժանաւոր զաւակը, որի համար հոգեկան ծանր պահերին Քրիստոս ու Նրա ուսմունքը եղել են սփոփիչ բալասան եւ յուսատու փարոս²: Եւ այլ կերպ լինել չէր էլ կարող: Նա ծնուել էր նահապետական բազմադամ ընտանիքում, որի համար Հայ Առաքելական Եկեղեցին մեծագոյն սրբութիւն էր, իսկ Աստուածաշունչն ու Նարեկը՝ սեղանի գրքեր: Վարպետի գիտական կենսագրութիւնն ու նրա ստեղծագործութիւնը հետաքրքիր փաստեր են ներկայացնում այս առիթով: Այսպէս՝ Իսահակեանի հայրն ու մայրը՝ Սահակ աղան եւ Ալմաստ խանումը, «դրամական նուիրատուութեամբ մասնակցել են Արթիկի շրջանի Հառիճ (Ղփչաղ) գիւղի՝ ԺԲ. դարում կառուցուած սքանչելի

¹* Ստացուել է՝ 29.08.2023, գրախօսուել է՝ 31.08.2023: Էլ. հասցէ՝ manukyan-armen@mail.ru:

² Մենք մեր առջեւ նպատակ չենք դրել համակողմանի քննութեան ենթարկել այն հարցերը, թէ ինչ են եղել քրիստոնէական հաւատը, Հայ Եկեղեցին եւ Յիսուս Քրիստոս Իսահակեանի համար (դրանք բարդ, երկար ժամանակ եւ մանրակրկիտ աշխատանք պահանջող հարցեր են), այլ, օգտուելով Իսահակեանի կենսագրութեան որոշ դրուագներից եւ հայ մամուլը քրքրելիս պատահաբար մեր ձեռքն ընկած նրա գրեթէ անյայտ մի հարցազրոյցից, ընթերցողների ուշադրութիւնն ենք ցանկացել հրաւիրել առ Վարպետի՝ Սուրբ Էջմիածնի նկատմամբ ունեցած խորին յարգանքն ու սէրը եւ նրա գործունէութեան բարձր գնահատականը հաւաստող մի քանի իրողութիւնները:

վանքի վերանորոգմանը եւ դպրոցի կառուցմանն ու պահպանմանը»³: Սահակ աղան, որը մահացել է 1890 թ., երբ Աւետիքը 15 տարեկան էր, նրա «Հայրենի յուշեր» պատմութեամբ (1933 թ.) այսպէս է ներկայանում ընթերցողին. «Առաւօտ է: Հայրս հագել է քիրմանշալի⁴ խալաթը (զգեստ), նստել է մտամփոփ, վերացած, Սաղմոս կամ Նարեկ է կարդում կիսաձայն: Դռան ճեղքից երկիւղածօրէն նայում եմ հորս. կարծես խեղճ մարդը մի ծանր ոճիր է գործել, որ հիմա, աչքերը արցունքով լի, կարդում է Սուրբ Գիրքը՝ քաւելու համար իր մեղքը»⁵: Այսքանից յետոյ, ինչ խօսք, բնական է, որ «ընտանեկան խորհուրդը, յանձինս Սահակ աղայի, Ալմաստ խանումի եւ Ալեքսան եղբօր, որոշում է ընդունում պատանի Աւետիքին ուսման տալ Գեւորգեան ճեմարան»⁶: Սահակ աղան, ի հարկէ, բոլոր հնարաւորութիւններն ունէր իր սիրելի կրտսեր որդուն Թիֆլիս՝ Ներսիսեան դպրոց ուսման ուղարկելու, բայց ընտրութիւնը կատարում է Գեւորգեան ճեմարանի օգտին, ուր էլ արդէն իր գրական առաջին փորձերն անող պատանին անց է կացրել ոչ լրիւ երեք տարի՝ անվերջ կարդալով, խորհելով ու գրելով:

Աւ. Իսահակեանի ճեմարանական տարիների մասին շատ է գրուել, ըստ ամենայնի կարեւորուել է այն մեծ փոփոխութիւնը, որ կատարուել է ապագայ բանաստեղծի աշխարհընկալման եւ մտածողութեան մէջ, նշուել է նաեւ բախտորոշ հանդիպումը Յովհ. Յովհաննիսեանի հետ, որն էլ նրան փաստացի «բանաստեղծ է կարգել»⁷: Գեւորգեան ճեմարան ընդունուած 14-ը չլրացած պատանին այդ ընթացքում դարձել է տարիքից անհամեմատ մեծ երեւացող խոհուն ու լուրջ մարդ, որի միտքն զբաղեցնում էին մարդկութեանը դարեր շարունակ հանգիստ չտուող յաւերժական հարցերը, իսկ հոգին փոթորկւում էր ինքնամոռաց սիրոյ բուռն ու

³ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ, Աւետիք Իսահակեան. գիտական կենսագրութիւն, գր. 1, Երեւան, 2000, էջ 16–17: Սա հէնց այն դպրոցն էր, որտեղ 1887–1889 թթ. սովորել է Իսահակեանը:

⁴ Քիրմանշալ, քիրմանի շալ՝ բրդեայ նուրբ գործուածք (Իրանի Քիրման քաղաքի անունից, որը հռչակուած էր այդ կտորի արտադրութեամբ):

⁵ Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հտ. VI, Երեւան, 2019, էջ 281–282 (այսուհետ՝ ԵԼԺ):

⁶ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ, նշ. աշխ., գր. 1, էջ 91:

⁷ Տէն Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵԼԺ, հտ. XI, Երեւան, 2020, էջ 88. տէն նաեւ Ա. Լ. ՄՈՒՇԵՂԵԱՆ, Աւետիք Իսահակեան. վաղ տարիներ, Երեւան, 1983, էջ 16–54. Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ, նշ. աշխ., գր. 1, էջ 91–131: Անշուշտ, մեծ ուշադրութիւն է դարձուել նաեւ նրա առաջին սիրուն՝ ծնուած 1891 թ. յունիսին՝ Գեւորգեան ճեմարանի չորրորդ դասարանից ինքնակամ հեռանալուց յետոյ:

անյագուրդ տենչանքից: Այդ փոփոխությունն մէջ վճռորոշ էր էջմիածնի՝ այն միջավայրի դերը, ուր Իսահակեանն ստացել է, ըստ էության, իր առաջին լուրջ կրթությունը: Ահա թէ ինչպէս է էջմիածնում անցկացրած այդ երեք տարիները բնորոշում Աւիկ Իսահակեանը. «Երեք տարին (1889–1892 թթ.) Իսահակեանի նման վառ անհատականության համար, այն էլ մի շրջանում, երբ ձեւաւորում է թէ՛ մարդկային խառնուածքը, թէ՛ աշխարհայեացքը, մեծ ժամկէտ էր, մեծ եւ որոշիչ: Եւ այդ երեք տարիներն ընթացան ամենօրեայ հարեւանութեամբ Մայր Տաճարի, նրա վեհ գմբէթների, եկեղեցու գանգերի, աղօթքների ու ոգին վեհացնող պատարագների, որոնք ինքնըստինքեան ամրացնում էին պատանու հոգում քրիստոնէության սուրբ պատգամները, ձեւաւորում էին նրա աշխարհայեցողության հայրենասիրական երակը, կապում նրա միտքը հայոց հերոսական անցեալի հետ, զգալ տալիս իրեն որպէս մի մասնիկը հայության եւ հայության խորհրդանիշ Սուրբ էջմիածնի»⁸: Այս զգացումները յետագայում երբեք չեն լքել բանաստեղծին, ուր էլ որ նա գնացել է՝ Թիֆլիս ու Վիեննա, Կ. Պոլիս ու Ժնև, Փարիզ ու Վենետիկ... Եւ երբեմն դրանք անսանձ յորդել են նրա «Յիշատակարանի» եւ յուշագրության էջերում, երբ բախտը նրան մեծ հայորդիների հետ հանդիպելու եւ շփուելու հնարաւորութիւն է ընձեռել: Այսպէս՝ անթաքոյց են նրա հիացմունքն ու ակնածանքը 1893 թ. օգոստոսին Վիեննա այցելած նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանի (Մկրտիչ Ա. Վանեցի) եւ նրան փառահեղ ընդունելութիւն ցուցաբերած Վիեննայի Մխիթարեան հայրերի նկատմամբ⁹, եւ դրանք աւելի են խորացել յետագայում, երբ նա մտերմացել է Խրիմեան Հայրիկի, հայրեր Ղեւոնդ Ալիշանի, Արսէն Այտրնեանի, Բառնաբաս Պիլեգիկեանի, Ներսէս Ակինեանի, Արսէն Ղազիկեանի, Բարսեղ Սարգիսեանի ու այլոց հետ: Այդ սիրոյ ու յարգանքի արտայայտութիւն են Մկրտիչ Խրիմեանի ու Ղեւոնդ Ալիշանի մասին գրած կարճ, բայց շատ տարողունակ յուշերը¹⁰, Արսէն Ղազիկեանի մասին գրած հետաքրքիր յօդուածը¹¹ կամ, վերջապէս, Մխիթարեան հայրերին գրած

⁸ Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, նշ. աշխ., գր. 1, էջ 129–130:

⁹ Անդ, էջ 196–201:

¹⁰ Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵԼԺ, հտ. XI, էջ 6–14 («Խրիմեան Հայրիկ», գրուել է 1907 թ. կաթողիկոսի մահուան կապակցութեամբ:) եւ 108–115 («Ղեւոնդ վարդապետ Ալիշան», 1948 թ.):

¹¹ Տե՛ս անդ, էջ 223–233, «Հ. Արսէն վ. Ղազիկեան» յօդուածը Գրուել է 1925 թ. նրա գրական գործունէութեան 30-ամեակի կապակցութեամբ, առաջին անգամ լոյս է տեսել Բօստօնի

բազմաթիւ նամակները սկսած 1895 թուականից¹² ու նրանց անունների յիշատակումները այլոց գրած նամակներում¹³։ Իսահակեանի որդին՝ Վիգէնը, սովորել է Վենետիկի Մուրադ-Ռափայէլեան վարժարանում, իսկ ինքը՝ բանաստեղծը, եւ Վիեննայում, եւ Վենետիկում օգտուել է Մխիթարեան վանքերի հարուստ գրադարաններից։

Բարձր գնահատելով Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեանների գործունէութիւնը հայագիտութեան ասպարէզում՝ Աւ. Իսահակեանը, այնուամենայնիւ, ամուր կապուած էր Հայ Լուսաւորչական Եկեղեցուն, Հառիճի վանքին, Մարմաշէնին ու Երերոյքին, Անիի Մայր տաճարին ու Հովուի եկեղեցուն, Ղօշավանքին ու Հոռոմոսին, նուիրական Շիրակում եւ շրջակայքում գտնուող այլ եկեղեցիների, որոնց անուններն սփռուած են նրա գրուածքներում։ Բաւական է յիշել միայն նրա «Ճարտարապետ Թորոս Թորամանեան» յուշագրութիւնը, ուր հայ գիտնականի, հայ ճարտարապետութեան անխոնջ ուսումնասիրողի հանդէպ ականածանքը միահիւսուած է հայ եկեղեցական ճարտարապետութեան՝ մասնաւորապէս Անիի եկեղեցիների նկատմամբ անվերապահ հիացմունքի հետ¹⁴։

Որդիական սիրոյ, յարգանքի ու նուիրումի ամենամեծ բաժինն արդէն վերը նշուած պատճառով բաժին էր հասնում Սուրբ Էջմիածնին, որն իր թանկ յիշատակներով անվերջ ձգում էր Իսահակեանին։ 1936 թ. դեկտեմբերին՝ վերջնականապէս հայրենիք վերադառնալուց յետոյ, բանաստեղծն առաջինն այցելում է Էջմիածին, հանդիպում իր մօրեղբոր որդուն՝ եպիսկոպոս Արսէն Դլտճեանին, եւ կաթողիկոսական տեղապահ Գեւորգ Զորբէջեան արքեպիսկոպոսին՝ ապագայ Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի հետ բանաստեղծը ծանօթ էր դեռ Վիեննայից ու Լայպցիգից¹⁵։ Վարպետի որդին՝ 25-ամեայ Վիգէնը, որն ուղեկցել է հօրն այդ այցելութեան ժամանակ, ուշագրաւ մանրամասներ է հաղորդել երկու մեծ հայորդիների հանդիպումից՝ միաժամանակ ներկայացնելով տնտեսական ու քաղաքական ծանր ու անապահով վիճակը, որում

«Հայրենիք» ամսագրում նոյն տարում. տե՛ս «Հայրենիք», Բօստօն, 1925, թ. 4, էջ 51–56։

¹² Տե՛ս Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵԼՓ, հտ. XIII, Երեւան, 2020, էջ 30, 48, 56, 58, 63, 66, 151, 156, 206, 207 եւ այլն. նոյնի՝ հտ. XIV, Երեւան, 2021, էջ 23։

¹³ Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵԼՓ, հտ. XIII, էջ 367, 369, 433, 471 եւ այլն. տե՛ս նաեւ Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, նշ. աշխ., գր. 1, էջ 193։

¹⁴ Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵԼՓ, հտ. XI, էջ 25–34։

¹⁵ Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, նշ. աշխ., գր. 1, էջ 222. Աւ. ՄՈՒՇԵՂԵԱՆ, Աւետիք Իսահակեան. վաղ տարիներ, էջ 154. Վ. ԻՍԱՀԱԿԵԱՆ, Հայրս, Երեւան, 2011, էջ 421։

յայտնուել էր Հայ Եկեղեցին բոլշևիկների իշխանութեան յատկապէս վերջին տարիներին¹⁶: 1936 թ. դեկտեմբերի 5-ին (Իսահակեանի Երեւան ժամանելու յաջորդ օրն է) այսպէս կոչուած Ստալինեան սահմանադրութեան ընդունումից յետոյ առաւել խստացուեցին քաղաքական հետապնդումները, եւ այդ բռնութիւններից, ցաւօք, զերծ չմնաց նաեւ Սուրբ Էջմիածինը. դրանց զոհը դարձաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբեկեանը¹⁷, իսկ նրա մահից յետոյ հայրապետական գահը եօթ տարի թափուր մնաց: Քաղաքական իշխանութեան ճնշումն ու հալածանքները Հայ Եկեղեցու նկատմամբ այդ իշխանութեան կամակատարները փոխանցում էին նաեւ նրանց, ովքեր, ըստ ամենայնի, մեծարում էին Եկեղեցին եւ նոյնիսկ այդ պայմաններում մնում նրա նուիրեալ զաւակը: Այդպէս պատահեց եւ Իսահակեանի հետ: Էջմիածին այցելելուց մի քանի օր յետոյ, ըստ Վ. Իսահակեանի, նրան հրաւիրել են Գրողների միութիւն, որտեղ հայրենիքում կատարած իր առաջին այցելորի, այդ թւում՝ Էջմիածին այցելելու համար նա մեղադրուել է «քաղաքական կուրուլթեան» մէջ, բայց, ի պատիւ իրեն, արժանի պատասխան է տուել այդ անհեթեթ մեղադրանքին¹⁸: Աւելին, ութ տարի յետոյ՝ 1944-ին, երբ Հայ Եկեղեցին մեծ օգնութիւն էր ցուցաբերել Ֆաշիզմի դէմ մարտնչող սովետական բանակին, եւ այդ պատճառով որոշակիօրէն մեղմացուել էին հալածանքները, նա գրել եւ Էջմիածին է ուղարկել «Էջմիածնի պատմական դերը» յօդուածը, որը, սակայն, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, միաբանութիւնը նպատակայարմար չի համարել այդ ժամանակ հրապարակել¹⁹:

¹⁶ Վ. ԻՍԱՀԱԿԵԱՆ, Հայրս, էջ 420–422:

¹⁷ Տէն, օրինակ, Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Հայ առաքելական եկեղեցու բռնադատուած հոգեւորականները 1930–1938 թթ., Երեւան, 1997, էջ 44–45, ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԷՐՏԵՐԵԱՆ, Խորէն Ա. Մուրադբեկեան Ամենայն հայոց կաթողիկոսի կեանքն ու գործունէութիւնը, «Էջմիածին», 1994, Դ.–է., էջ 74–77. Ք. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ, Ամենայն հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբեկեանի մահուան առեղծուածի վերլուծութիւնը պատմագիտութեան մէջ, «Էջմիածին», 2018, է., էջ 136–146, <https://www.youtube.com/watch?v=G9pkdyRqHE> (մուտք՝ 14.08.2023), <https://www.youtube.com/watch?v=2k0Q6vQ2rOw> (մուտք՝ 14.08.2023) եւ այլն: Ի դէպ, Վիգէն Իսահակեանը վկայում է, որ իր հայրը տեսակցել է նաեւ Խորէն Ա.-ի հետ, բայց մանրամասներ չի ներկայացրել (տե՛ս Վ. Իսահակեան, Հայրս, էջ 426):

¹⁸ Վ. ԻՍԱՀԱԿԵԱՆ, Հայրս, էջ 425–426:

¹⁹ Առաջին անգամ տպագրուել է «Էջմիածին» ամսագրում 1975-ին (ԺԱ., էջ 14–17), Վարպետի ծննդեան 100-ամեակի առիթով, յետագայում՝ ԵԼԺ, հտ. XII, Երեւան, 2021, էջ 234–240: Թերեւս այն գրուել է 1944-ից Էջմիածնում հրատարակուող նոյնանուն ամսագրի առաջին համարներից մէկում հրապարակելու համար:

Իր յօդուածում Իսահակեանը ներկայացրել ու մեծապէս արժեւորել է այն պատմական դերը, որ կատարել է Սուրբ Էջմիածինը՝ «հայ ժողովրդի համար ազգային ամենաառաջին սրբավայրը», հայ պետականութեան կորստից յետոյ փաստացի պետութեանը փոխարինելով, վանքերը «ազգային գոյութեան վառարաններ» դարձնելով, այն է՝ կրթական-մշակութային գործը կազմակերպելով, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին նպաստելով եւ այդ պայքարը կազմակերպելով, հայ հողի վրայ առաջին տպարանը եւ Գեւորգեան ճեմարանը հիմնելով, հաւաքելով եւ «վերջնական կորուստից փրկելով մեր դարերի հոգեւոր գանձը – 10 000 հին ձեռագրեր՝ մագաղաթեայ եւ թղթեայ» եւ այլն, մի խօսքով՝ ներկայացուած է այն բազմաբովանդակ գործունէութիւնը, որ ծաւալել է Լուսաւորչի աթոռը երկար դարերի ընթացքում: Ստալինեան բռնապետութեան պայմաններում Վարպետի այս քայլն արդարեւ կարելի է գնահատել որպէս աննախադէպ համարձակութիւն, որը յօդուածի՝ այդ ժամանակ տպագրուելու դէպքում, ո՛վ գիտէ, գուցէ եւ ունենար տխուր հետեւանքներ:

Աւելացնենք, որ Իսահակեանն Էջմիածնի՝ հայ ժողովրդի կեանքում կատարած դերին անդրադարձել է նաեւ իր երկու ելոյթներում՝ 1956 թ. հոկտեմբերի 7-ին՝ Վազգէն Ա. հայրապետի գահակալութեան առաջին տարեդարձի առիթով կազմակերպուած²⁰, եւ 1957 թ. յունիսի 23-ին՝ Ս. Էջմիածնի Կաթողիկէի տօնի առիթով կազմակերպուած ընդունելութիւն-ճաշկերոյթներին²¹:

Երկու ելոյթներում էլ նա ընդհանուր առմամբ համառօտ տուել է այն նոյն գնահատականը, ինչ «Էջմիածնի պատմական դերը» յօդուածում: Աւելորդ չէ այստեղ մէջբերել մի փոքրիկ ինքնաբնութագրական հատուած Վարպետի երկրորդ ելոյթից, որը «խորապէս յուզել է բոլոր ներկաներին». «Ես սիրում եմ Էջմիածինը եւ պաշտել եմ Էջմիածինը եւ քանի ողջ եմ, նոյնը իմ հոգու մէջ պիտի կատարուի, եւ ամէն մի հայրենասէր, ազգասէր մարդու սրտի մէջ, որովհետեւ Էջմիածնի սիւները չեն հանգչում միայն Էջմիածնի վանքի հաստաբեւտ քարերի վրայ, այլ ամէն մի հայի սրտի մէջ են Էջմիածնի սիւները»: Այս սիրոյ եւ նուիրումի համար նա՝ ինքը, արժանացել է սիրոյ եւ յարգանքի ու մինչեւ իր կեանքի վերջը մնացել Սուրբ Էջմիածնի լաւագոյն բարեկամներից մէկը:

²⁰ «Էջմիածին», 1956, Ժ., էջ 29–30:

²¹ «Էջմիածին», 1957, Զ., էջ 15 եւ 1975, ԺԱ., էջ 18:

* * *

Եթէ 1938 թուականը սեւ տարի էր Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի համար, ապա 1945 թուականը դարձաւ յիշուելի պայծառ տարի, քանի որ Հայրենական մեծ պատերազմում տարած փառապանծ յաղթանակին գումարուեցին յունիսի 22-ին տեղի ունեցած կաթողիկոսական ընտրութիւնները, եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեց Գեւորգ Զ. Զորեքչեանը: Այդ պատմական իրադարձութեանն անմասն չէր Աւ. Իսահակեանը, որը, որպէս հայ ժողովրդի կողմից ընտրուած 74 աշխարհական պատուիրակներից մէկը, մասնակցել է յունիսի 16–25-ին կայացած Համագային եկեղեցական ժողովին եւ երկու այլ անձանց հետ վարել ժողովի նիստերի ատենապետութիւնը: Եկեղեցական ժողովի աշխատանքների մասին «էջմիածին» ամսագրում տպագրուած մանրամասն հաղորդման մէջ²² բազմիցս հանդիպում ենք բանաստեղծի անուանը, եւ ակններեւ է, որ նա եւս, ինչպէս բոլոր հայերը, խանդավառուած է տեղի ունեցածով: Ո՛չ 1945 թ., ո՛չ էլ յետագայում Վարպետը գրաւոր չի անդրադարձել այս եկեղեցական ժողովին, նոր հայրապետի ընտրութեանն ու դրանում իր մասնակցութեանը, եւ ոչ էլ ուրիշներն են արել դա. թէեւ խորհրդային կառավարութիւնը իր ներկայացուցիչ Պոլեանսկու բերանով հաւաստում էր, որ «ձգտելու է վերացնել Հայ Եկեղեցու ճանապարհին եղած ամէն կարգի խոչընդոտները»²³, այնուամենայնիւ, ստալինեան բռնատիրութեան պայմաններում դա հնչում էր որպէս դառը կատակ, եւ Հայ Եկեղեցին ստիպուած էր խելացի խուսանաւումով վարել իր գործերը, մինչեւ կգային աւելի լաւ ժամանակներ: Եւ տեղական, եւ սփիւռքահայ մամուլն անդրադարձել է եկեղեցական ժողովին, երբեմն ժլատ հաղորդագրութիւնների, երբեմն էլ ծաւալուն հաղորդումների տեսքով²⁴: Նման հրապարակումներից մէկն էլ Փարիզի «Արեւմուտք» շաբաթաթերթում²⁵

²² «էջմիածին», 1945, Զ.–է., էջ 27–43:

²³ Անդ, էջ 11:

²⁴ Տե՛ս «Սովետական Հայաստան» օրաթերթ, 1945, թ. 121, 126, 133, 134. «Սովետական Հայաստան» ամսագիր, 1945, թ. 1, էջ 40–44. «Ազդարար», Պէյրուիթ, 1945, թ. 139, 140. «Ասպարէզ», Ֆրեզնոյ, 1945, թ. 2194, 2195, «Արեւ», Կահիրէ, 1945, թ. 8062, 8063, 8065–8067. «Ալիք», Թեհրան, 1945, թ. 136, 138, 139, 141, 142. «Յառաջ», Փարիզ, 1945, թ. 4442, 4443 եւ այլն:

²⁵ «Արեւմուտք» ազգային, գրական անկախ շաբաթաթերթը լոյս է տեսել Փարիզում 1945–1952 թթ.: Հրատարակել է Կիլիկեան ընդհանուր միութիւնը, տնօրէն՝ Գեւորգ Գուլումճեան, խմբագիր-հրատարակիչներ՝ Լ. Մոզեան, Բ. Թօփալեան, Լեւոն Զորմիսեան: Աւ. Իսահակեանի հետ հարցազրոյցը տպագրուել է թերթի 1945 թ. 25-րդ համարում (սեպտեմբերի 2):

տպագրուած «Տեսակցութիւն մը Աւետիք Իսահակեանի հետ» հարցազրոյցն էր, որի հեղինակը՝ փարիզաբնակ պատմաբան, լրագրող եւ հանրային գործիչ Լեւոն Չորմիսեանը (1896–1980 թթ.) Իսահակեանի հետ տեսակցել եւ լրագրի համար հարցազրոյց է վերցրել էջմիածնի եկեղեցական ժողովի աշխատանքների աւարտից յետոյ: Հարցազրոյցը ուշագրաւ է մի քանի առումով. նախ՝ այն հաստատում է Վարպետի ոգեւորութիւնը կատարուած իրողութիւններից, ապա՝ նոր գծեր ու երանգներ աւելացնում այն ամէնին, ինչ նա ասել էր մասնաւորապէս վերջին տասը տարուայ իր գրական եւ հրապարակախօսական յօդուածներում ու ելոյթներում եւ, ի վերջոյ, հարցազրոյցում դրսեւորուել է բանաստեղծի աներեր հաւատը Հայ դատի արդար լուծման նկատմամբ, հաւատ, որն աշխարհաքաղաքական խաղերի, մեծ երկրների շահերի հերթական բախման պատճառով այդպէս էլ իրականութիւն չդարձաւ:

ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՀԵՏ

Հեռուէն կը նշմարեմ զինքը էջմիածնի Վեհարանին մէջ, շրջապատուած բազմաթիւ պատգամաւորներով: Նոյնն է, ինչպէս ասկէ տասը տարի առաջ, Փարիզի մէջ տեսած էինք զինքը: Տարիները իրենց հետքը չեն ձգած ո՛չ անոր ֆիզիքականին, ո՛չ աշխուժութեան եւ ո՛չ ալ իր մտքին վրայ, ինչպէս պիտի հասկնայի քանի մը օր վերջը մեր ունեցած խօսակցութեան ընթացքին:

Իր շուրջը ստեղծուած վայրկեանի մը պարապութենէն օգտուելով, կը մօտենամ: Ճանչցաւ զիս ալ, ինչպէս միւսները, հակառակ սպասումիս: Իր զօրաւոր յիշողութիւնը՝ անձերու եւ դէպքերու մասին, զարմացուց զիս: Նոյն զուարթ եւ կատակասէր Իսահակեանն է, ինչպէս կը ճանչնան բոլորը: Բայց նոյնը չէ իր հմայքով եւ հեղինակութեամբ: «Վարպետ»ն է ան հիմա, հայ մտքի եւ գրականութեան վարպետը՝ Հայաստանի մէջ, ու իր անունը, դուրս գալով հայ իրականութենէն, դարձած է հայ գրականութեան խորհրդանիշը խորհրդային բոլոր երկիրներու եւ մասնաւորաբար Մոսկուայի մէջ:

Օր մը օգտուեցայ իր հաճոյակատար ու ընկերական վերաբերումէն եւ տեսակցութիւն մը խնդրեցի «Արեւմուտք»ին²⁶ համար, որուն մէկ քա-

²⁶ Բոլոր ընդգծումներն «Արեւմուտքին» են:

նի թիւերը երբ իրեն ներկայացուցի, լաւ տպաւորութիւն գործեցին իր վրայ:

Գնունի փողոցին²⁷ ծայրը նոր շէնքի մը երրորդ յարկը կը բնակի ան: Լաւ կահաւորուած բնակարան մը, որուն մտերմութիւնը կը կապէ քեզ առաջին վայրկեանէն: Հայ ընտանեկան աւանդութիւնները, ինչպէս ամէն տեղ, հոս ալ կան. փոքր երախայ մը՝ թոռը, օրօրոցին մէջ կը ժպտի²⁸:

Կարգ մը ընդհանուր խօսակցութիւններէ յետոյ, որոնց կը մասնակցին տիկ. Իսահակեան եւ հարսը, կ'անցնիմ հարցումներուս.

— Ի՞նչ է ձեր տպաւորութիւնը Եկեղեցական համագումարէն:

— Ժողովին մասնակցում էի իբրեւ Երեւանի պատգամաւոր: Շատ ոգեւորիչ եւ գեղեցիկ էր ժողովին պատկերը: Պատգամաւորները ցոյց տուին ազգային բարձր գիտակցութիւն, ժամանակի պայմաններուն հասկացողութիւն եւ գաղտնի քուէով՝ միաձայնութեամբ ընտրեցին Գէորգ Զ. Կաթողիկոսը, որ տարիների ընթացքում իբրեւ Կաթող. տեղապահ, կարողացած էր լեզու գտնել Պետութեան հետ եւ հմտութեամբ, գիտակցութեամբ ու «թաքթ»ով կարողացած էր պահել էջմիածինը, եւ յաջողցուցած էջմիածնի վերազարթնումը եւ Եկեղեցական համագումարը: Միաձայնութեամբ կայացած ընտրութիւնը ազգային բարձր գիտակցութեան եւ հասկացողութեան արտայայտութիւն էր: Այս ձեւով աւելի սերտանում է Երկրի եւ Սփիւռքի կապը եւ աւելի գործօն դառնում անոնց յարաբերութիւնը:

— Ի՞նչ աշխատանքներ տարաւ հայ մտաւորականութիւնը, Հայաստանի մէջ, պատերազմի ընթացքին:

²⁷ Հեղինակը շփոթել է Երեւանի Գնունու (այժմ՝ Պուշկինի) փողոցը Ղուկաս Ղուկասեանի (այժմ՝ Ղազար Փարպեցու) փողոցի հետ, ուր Իսահակեան ընտանիքն ապրել է 1937–1946 թթ: Այդ մասին վկայում են ինչպէս Վարպետի նամակները (տե՛ս Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵՎԺ, հ. XIV, էջ 401, 402, 413, 439, 499), այնպէս էլ նրա թոռը՝ հէնց Ղուկաս Ղուկասեանի փողոցի 12-րդ շէնքի 10-րդ բնակարանում ծնուած Աւիկ Իսահակեանը: Նոյն հասցէում շէնքի պատին ամրացուած յուշատախտակին նշուած են 1936–1946 թթ., բայց Վիգէն Իսահակեանի «Հայրս» գրքում որպէս նոր բնակարան տեղափոխուելու թուական յստակ նշուած է 1937-ը (էջ 426–427): Մինչ այդ ընտանիքն ապրում էր «Ինտուրիստ» հիւրանոցում (յետագայում՝ «Երեւան», այժմ՝ «Գրանդ Հօթել Երեւան»): Շփոթութեան պատճառը, ըստ երեւոյթին, այն է, որ Ղազար Փարպեցու 12 շէնքը գտնւում է նախկին «Ղուկաս Ղուկասեան եւ Պուշկինի (նախկին Գնունու) փողոցների անկիւնում» (տե՛ս Վ. ԻՍԱՀԱԿԵԱՆ, Հայրս, էջ 426):

²⁸ Բանաստեղծի թոռն Աւիկն է, որը ծնուել է 1944 թ. նոյեմբերի 27-ին եւ այդ ժամանակ եօթ ամսական էր:

– Պատերազմի ամբողջ տեւողութեան, հայ գրողները, բանաստեղծները, արուեստագէտները եւ առ հասարակ բոլոր մտաւորականները շատ եռանդուն եւ նշանակալի գործ տեսան: Բանաստեղծները եւ արձակագիրները ոգեւորում էին մարտիկներին իրենց գրութիւններով, յաճախ գնում էին ռազմաճակատ եւ քաջութիւն ներշնչող ոտանաւորներ կարդում էին անոնց: Թիկունքում պահում էին նոյն քաջութեան ոգին եւ հաւատ էին ներշնչում յաղթանակին համար: Թատերական նոր գործեր գրում էին բեմի համար, պատերազմի կեանքը վերարծարծում էին գրականութեան մէջ եւ մեր հերոսների սխրագործութիւնները պատկերացնում: Պատերազմի սկիզբի օրէն ընդունուած կարգախօսն էր՝ «Ամեն բան ճակատի համար»²⁹: Այդ կարգախօսով առաջնորդուած, մեր դերասանները թէ՛ ժողովուրդին մէջ եւ թէ՛ ճակատին վրայ թատերագիրների գործերը ներկայացնում էին: Մեր նկարիչները նկարում էին հերոսական դրուագներ, քանդակագործները քանդակում էին հերոսների քանդակներ, երաժիշտները քայլերգեր գրում էին հերոսների փառաբանութեան համար եւ բանաստեղծների ոտանաւորները երգերով ընդհանրացնում էին ժողովուրդին մէջ: Ամէն տարի նկարչական եւ քանդակագործական ցուցահանդէսներ տեղի էին ունենում, որոնք յետոյ փոխադրում էին Մոսկուա, ուր առաջնակարգ տեղ էին գրաւում խորհրդային միւս ժողովուրդներու արուեստներուն մէջ: Իսկ մեր գիտնականները զանազան միջոցներ գտան վարակիչ հիւանդութիւնները կանխելու, եւ շատ մը բժիշկներ ճակատ մեկնեցան, ինչպէս բազմաթիւ ճարտարագէտներ ի սպաս դրին իրենց մասնագիտութիւնը պատերազմի պատրաստութեան համար: Առ հասարակ, բովանդակ հայ ժողովուրդը լծուած էր պատերազմի աշխատանքին եւ ոգեւորուած՝ յաղթանակը շահելու գաղափարով:

– Երիտասարդ գրական նոր ուժեր յայտնուեցան այդ շրջանին:

– Կար արդէն Յ. Շիրազը, որ աւելի յայտնի դարձաւ պատերազմի ընթացքին, ինչպէս Սողոմոն Տարօնցին, Սարմէնը, Էմինը եւ շատ մը ուրիշներ:

– Նոր գրողներու գործերուն մէջ, ընդհանուր հասարակաց ձգտում մը կը նշմարուի:

²⁹ Աւելի ճիշտ՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամէն ինչ յաղթանակի համար»:

– Պատերազմից առաջ, «Սասունցի Դաւիթ»-ի տօնակատարութեանց հանդիսաւոր օրերին³⁰, գրականութեան մէջ սկսուեց հայրենասիրական խորունկ հոսանք: Մի շարք բանաստեղծներ տուին հայրենաշունչ ոտանաւորներ, իսկ աւելի հին գրողներ, ինչպէս Դ. Դեմիրճեան իր «Վարդանանք»-ով, Ս. Զօրեան իր «Պապ թագաւոր»-ով, Նայիրի Զարեան իր «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ»-ով, մեր պատմութեան հին դիւցազներգութիւնները պատմական վէպի ձեւով ներկայացնելով, մեծ խանդավառութիւն ստեղծեցին ժողովուրդին մէջ: Ասոնցմէ առաջին երկուքը արդէն հրատարակուած են, վերջինը՝ պիտի հրատարակուի մօտ օրէն, բայց հիմակունէ արդէն սիրուած է³¹:

– Արտասահմանի հայ գրողներուն եւ անոնց գործերի մասին ի՞նչ կարծիք գոյութիւն ունի Հայաստանի մէջ:

– Պատերազմի ընթացքին մեր յարաբերութիւնները խզուած էին արտասահմանի հետ եւ մեր գրողները անծանօթ էին հոն հրատարակուած գործերին: Այս չի նշանակում, թէ Սով. Հայաստանի գրողները չեն հետաքրքրուում իրենց արտասահմանի եղբայրների գործերով: Առ հասարակ, արեւմտահայ գրականութիւնը շատ գնահատուած է. արդէն տպագրուած են Օտեան, Դուրեան, Սիպիլ, Մեծարենց, Զօհրապ, առանց յիշելու Պարոնեանը եւ ուրիշներ: Սիրով եւ հիացմունքով կարդացուում են այստեղ Թէքէեան, Սիւսանյան եւ Վարուժան: Մօտ ատենէն նորավէպերու հաւաքածոյ մը լոյս պիտի տեսնէ, ուր պիտի երեւան Նրուխան, Բաշալեան³² եւ ուրիշներ: Լեզուի պատճառով արեւմտահայ հեղինակներու գործերը մատչելի չեն լայն զանգուածներուն, բայց մտաւորականութիւնը ջերմապէս շահագրգռուում է անոնցմով:

– Նոր աշխատութիւն կը պատրաստէ՞ք դուք, եւ ի՞նչ են ձեր ծրագիրները:

³⁰ Նկատի ունի «Սասունցի Դաւիթ» կամ «Սասնայ ծռեր» էպոսի ստեղծման 1000-ամեակին նուիրուած տօնակատարութիւնները, որոնք տեղի են ունեցել 1939 թ. սեպտեմբերին: Դրանց գործուն մասնակցութիւն է ունեցել նաեւ Աւ. Իսահակեանը, գրել է յօդուածներ, սեպտեմբերի 17-ին ԽՍՀՄ գրողների միութեան վարչութեան 7-րդ յոբելեանական պլենումում՝ նուիրուած էպոսի 1000-ամեակին, հանդէս է եկել «Փորձ մեր էպոսի դիցաբանութեան մասին» ծաւալուն եւ բովանդակալից զեկուցումով (տե՛ս Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵԼԺ, հտ. XI, էջ 283–298, 633–639):

³¹ Ստ. Զօրեանի «Պապ թագաւոր» պատմավէպը լոյս է տեսել 1944 թ., Դ. Դեմիրճեանի «Վարդանանք»-ի առաջին հատորը՝ 1943-ին, երկրորդը՝ 1946-ին, Ն. Զարեանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգութիւնը՝ 1946-ին, բայց դրանից առաջ բեմադրուել էր 1944 թ.:

³² Նրուխանի «Նովելներ» ժողովածուն Նրեանում լոյս է տեսել 1946 թ., Լ. Բաշալեանի «Ընտիր երկեր»-ը՝ 1962-ին:

– Պատերազմի ընթացքում գեղարուեստական գործեր չարտագրեցի, բայց շատ յօդուածներ եմ գրել Խորհրդ. Միութեան բոլոր թերթերի եւ արտասահմանի համար³³: Այժմ աշխատում եմ աւարտել հին գործերս: Նիւթեր շատ կան, բայց ժամանակ չեմ գտնում: Այս չորս տարին շատ ժամանակ խլեց ինձմէ. կը յուսամ վերսկսիլ աշխատանքներու պատերազմից յետոյ:

Այստեղ, Իսահակեան ցոյց կու տայ արտասահմանի հայութեան ուղղած իր բազմաթիւ կոչերէն մէկ քանին ու անոնցմէ կը կարգայ քանի մը հատուածներ, որոնք, ուժգին հայրենասիրութեան մը շեշտով գրուած, կը թելադրեն Սփիւռքի հայութեան անտարբեր չգտնուիլ հայրենական պատերազմին հանդէպ եւ նիւթական ու բարոյական բոլոր միջոցներով նպաստել յաղթանակին:

– Համամիութենական ընդհանուր մտաւոր կեանքին մէջ ի՞նչ տեղ կը գրաւեն հայ հեղինակներու գործերը: Միւս լեզուներով թարգմանում են անոնք:

– Ընդհանուր պետական սկզբունք է այստեղ, որ բոլոր լեզուներով թարգմանուին ոեւէ ժողովուրդի մէջ յայտնուած արժէքաւոր գործեր: Ահագին աշխատանք կատարուած է ծանօթացնելու համար հայ գրականութիւնը, պատմութիւնը, գեղարուեստը ռուս եւ միւս ժողովուրդներուն: Հրատարակուել է ռուսերէնով մի հաւաքածոյ հայ բանաստեղծութեանց³⁴, «Սասունցի Դաւիթ»-ը հրատարակուել է թե՛ Ակադեմիայի եւ թե՛ Պետհրատի կողմէ³⁵:

Սեղանին մէկ անկիւնէն Իսահակեան կ'առնէ իր բանաստեղծութեանց ռուսերէն թարգմանութիւնը, գեղեցիկ տպագրութեամբ ստուար հատոր մը, որուն յառաջաբանը գրած է յայտնի ռուս քննադատ մը³⁶:

³³ Խօսքը Մեծ հայրենականի տարիներին գրած հրապարակախօսական յօդուածների մասին է, որոնք տպագրուել են ինչպէս տեղական մամուլում («Սովետական Հայաստան», «Գրական թերթ», «Սովետական գրականութիւն» եւ այլն), այնպէս էլ Սփիւռքում, մասնաւորապէս՝ Նիւ Եօքքի «Լրաբեր» թերթում (տե՛ս Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵԼԺ, հտ. XII, էջ 443–471):

³⁴ Խօսքը 1940 թ. Մոսկուայում Ս. Յարութիւնեանի եւ Վ. Կիրպոտինի խմբագրութեամբ լոյս տեսած «Антология армянской поэзии с древнейших времен до наших дней» պատկառելի ժողովածուի (720 էջ) մասին է, որտեղ տպագրուել են նաեւ Վարպետի բանաստեղծութիւններից (էջ 486–513):

³⁵ Եւ ռուսերէն (Մոսկուայում), եւ հայերէն գրքերը լոյս են տեսել 1939 թ. էպոսի ստեղծման 1000-ամեակի կապակցութեամբ:

³⁶ Խօսքը Ա. Իսահակեանի «Избранные стихи» ժողովածուի մասին է, որը լոյս է տեսել 1945 թ. Մոսկուայում: Վ. Բրիւսովի, Ա. Բլոկի եւ այլոց թարգմանութիւնների բնագրերը

Այդ երկար յառաջաբանին մէջէն կը կարդայ ինծի ու կը թարգմանէ հատուած մը, ուր հեղինակը ցոյց կու տայ Իսահակեանը ո՛ր միայն Հայաստանի եւ ամբողջ Խորհրդ. Միութեան, այլ աշխարհի բոլոր ժողովուրդներուն մէջ ապրող քնարական բանաստեղծներէն մեծագոյնը:

Այդ փոքր հատուածը կարդալէ յետոյ ան ոտքի կ'ելլէ ու կը չափափէ սենեակը: Յայտնի է, թէ ուրիշ գովասանքներ շատ կան գրուածքին մէջ, բայց ինքզինքին թոյլ չի տար կարդալ զանոնք, ու ընդհանրացնելով խօսքը, ան երկարօրէն կը բացատրէ հայ մշակոյթին արժէքն ու կարեւորութիւնը, եւ Խորհրդ. Միութեան ու մասնաւորաբար ռուս բարձր մտաւորականութեան մէջ անոր հանդէպ ցոյց տրուած գնահատութիւնը: Ռուս մեծ ժողովուրդին բարձր ու հարուստ մշակոյթէն յետոյ երկրորդ կարգին վրայ դասուած է Խորհրդային Հանրապետութիւններուն մէջ հայ մշակոյթը, որուն դարերու հնութիւնն իսկ տուած է տեսակ մը ազնուականութեան դրոշմ եւ թանկագին արժէք:

— Հայ գրողին համար ազատ ստեղծագործութեան պայմաններ կան երկրին մէջ:

— Ազատ ստեղծագործութեան համար նիւթական շատ նպաստաւոր պայմաններ ունի հայ գրողը (տեսնել «Արեւմուտք»ի նախորդ թիւին մէջ տրուած տեղեկութիւնները այս առթիւ³⁷), ու ան շարունակում է իր ստեղծագործութիւնը պատերազմի ատեն ցոյց տուած թափով:

— Երկրի եւ արտասահմանի հայ մտաւորականներուն միջեւ ինչ ձեւով կարելի է աւելի սերտ եւ տեսական կապ պահել:

— Այդ նպատակին համար արդէն ստեղծել ենք «Արտասահմանի հետ մշակութային կապի ընկերակցութիւնը»³⁸, որ հետզհետէ աւելի ընդարձակ գոհացում կարող է տալ այդ պահանջին:

— Ինչպէս գնահատուած է մեր ժողովուրդին պատերազմին մասնակցութիւնը Խորհրդ. Միութեան կեդր. իշխանութեան կողմէ:

պատրաստել եւ առաջաբանը (էջ 4–12) գրել է հայագգի յայտնի բանասէր, թարգմանչուհի, գրական գործիչ Սոֆիա (Սիւզան) Խիթարովան (Խիթարեան, 1908–1978 թթ.):

³⁷ Նկատի ունի թերթի թ. 24-ում (օգոստոսի 26) տպագրուած իր՝ Լեւոն Չորմիսեանի «Խորհրդ. Հայաստանը ինչպէս որ տեսանք» ակնարկաշարի «Գիր, գրականութիւն» հատուածը (էջ 6):

³⁸ Աւելի ճիշտ՝ Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան եւ մշակութային կապի հայկական ընկերութիւն, ստեղծուել է 1944-ին: Մինչ այդ Սփիւռքի հարցերով զբաղուել են ՀԽՍՀ ժողկոմխորհի ներգաղթի յանձնաժողովը (1931-ից), ՀՕԿ-ը (1921–1937 թթ.), ներգաղթի կոմիտէն (1931–1944 թթ.): 1964 թ. ընկերութիւնը փոխուել է Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի եւ գործել մինչեւ 1998 թ.:

– Պետութիւնը շատ բարձր գնահատում է հայ ժողովուրդի մասնակցութիւնը բոլոր մարզերում, ինչպէս զինուորների հերոսութիւնը, նոյնպէս թիկունքի անձնուէր աշխատանքը: Յիսուն կէնէրալներու շարքը եւ հերոսների անթիւ քանակը՝ դրան ապացոյցը կը կազմէ: Մամուլի մէջ էլ գովեստներ չեն պակասած, եւ հայ ժողովուրդը նկատում են իբրեւ քաջ ժողովուրդ: Վախկոտ հայու գաղափարը արդէն բոլորովին մոռացուել է:

Հաւատացած եմ, որ Սթալինը հայ ժողովուրդի մեծ ու անկեղծ բարեկամն է:

– Ներկայ պատերազմէն յետոյ, կը հաւատա՞ք որ հայ ժողովուրդը կարելիութիւն կ'ունենայ հաւաքուելու իր հայրենիքին մէջ:

– Լիապէս հաւատացած եմ, որ Հայաստանի ներկայ սահմանները կ'ընդլայնուեն, ու այդ կերպով կը ստեղծուեն ամբողջական պայմաններ ներգաղթի համար³⁹:

Մեր քաղաքական արդար դատին լուծման մասին իր այս անխախտ հաւատքը յայտնելէ յետոյ Իսահակեան կ'աւելցնէ.

– Գաղթահայութիւնը շատ մօտ է մեր սրտին: Անոր ուրախութիւնը եւ վիշտը մերն է: Փափաքում ենք, որ ան պահէ իր ազգային նկարագիրը, լեզուն, երգը, մշակոյթը եւ այն հաւատքը, թէ իրենք ալ մեզ հետ կը լինեն հայրենի սրբազան հողին վրայ: Յաջողութիւն եմ մաղթում բոլորին եւ միակամ ու համերաշխ գործակցութիւն: Յանկանում եմ, որ թողնեն մանր-մունր վէճերը եւ խոր հաւատով կապուեն մեր դարաւոր հայրենիքին: Սրտագին ողջունում եմ բոլորին:

Ժամեր տեւած էր մեր խօսակցութիւնը. հրաժեշտ կ'առնեմ իրմէ, ինծի հետ տանելով մեծ հայրենասէրի իր մտածումներէն ու զգացումներէն մաս մը գոնէ:

³⁹ Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակը Մայր հայրենիքում եւ Սփիւռքում ապրող հայերին յոյս ներշնչեց, թէ հնարաւոր է հետ բերել հայերի պատմական հողերը՝ Արեւմտեան Հայաստանի եթէ ոչ ամբողջ տարածքը, ապա գոնէ նրա մի մասը: 1945 թ. յուլիսի 17-ից օգոստոսի 2-ը Գերմանիայի Պոտսդամ քաղաքում տեղի ունեցած համաժողովում ՍՍՀՄ-ը տարածքային պահանջներ է ներկայացրել Թուրքիային, բայց ամերիկեան եւ բրիտանական պատուիրակութիւնները դրանք չեն ընդունել:

Ի վերջոյ ամէն ինչ վերադարձել է ի շրջանս իւր. 1952 թ. Թուրքիան դարձել է ՆԱՏՕ-ի անդամ, եւ 1953 թ. մայիսի 30-ին ՍՍՀՄ արտաքին գործերի նախարար Մոլոտովը Թուրքիայի դեսպանին արել է պաշտօնական յայտարարութիւն, համաձայն որի՝ Խորհրդային Հայաստանի եւ Վրաստանի կառավարութիւնները հրաժարում էին Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից: Դրանով Արեւմտահայաստանի տարածքների Սովետական Հայաստանին վերադարձնելու հարցը վերջնականապէս փակուել է (մանրամասները տես Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԵԼԺ, հտ. XII, էջ 476–477):

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

ԱՆ. Իսահակեան, Գեորգեան ճեմարան, անձի ձեւաւորում, Միխրարեան հայրեր, այց Էջմիածին, բարեկամութիւն, Համագային եկեղեցական ժողով, «Արեւմուտք» շաբաթաթերթ:

РЕЗЮМЕ

В своей долгой, полной волн и скитаний жизни Аветик Исаакян всегда оставался верным и преданным сыном Армянской Апостольской Церкви. Основы этой преданности были заложены в 1889–1892 годах, когда будущий поэт учился в Эчмиадзинской семинарии Геворгян и вместе с учебой преисполнился глубокой любовью и уважением к духовному центру всего армянства. В дальнейшем, куда бы ни пошел Исаакян, его никогда не покидали эти чувства и, более того, с годами они еще больше углубились. Научная биография и творчество поэта представляют неоспоримые факты по этому поводу. В 1893 году, например, он с нескрываемым восхищением и почтением в Вене встретил Католикоса Всех Армян Хримяна Айрика (Мкртич I Ванеци), с которым впоследствии был в близких отношениях вплоть до смерти последнего в 1907 году.


Красноречивым доказательством сыновней любви и уважения являются и его визит в Святой Эчмиадзин в декабре 1936 года, сразу после окончательного возвращения на родину, статья «Историческая роль Эчмиадзина» (1944), в которой он высоко оценил ту огромную роль, которую сыграл Первопрестол в армянской жизни, а также его дружба с католикосами Геворгом VI и Вазгеном I. Наконец, поэт не остался безучастным к историческому событию в жизни армян в июне 1945 года – Общенациональному церковному собранию, где после семилетнего перерыва Католикосом Всех армян был избран Геворг VI. В дни собрания в Эчмиадзине с ним встретился и через несколько дней взял интервью проживающий в Париже прогрессивный армянский журналист Левон Чормисян. Это почти неизвестное интервью было опубликовано в парижском армянском еженедельнике «Запад» (N 25, 2 сентября) и в дальнейшем не переиздавался, не нашло места даже в Полном собрании сочинений Исаакяна, между тем оно заслуживает большого внимания, в частности, как еще одно доказательство дружбы между Варпетом и Святым Эчмиадином.

SUMMARY


In his long life full of waves and wanderings Avetik Isahakyan always remained a faithful and devoted son of the Armenian Apostolic Church. The foundations of this devotion were laid in 1889–1892, when the future poet studied at the Etchmiadzin Gevorkian Seminary and along with his studies was filled with deep love and respect for the spiritual center of all Armenians. In the future, wherever Isahakyan went, these feelings never left him and, moreover, they deepened even more over the years. The scientific biography and works of the poet present indisputable facts on this subject. In 1893, for example, with undisguised admiration and reverence he met Khrimian Hayrik (Mkrtich I of Van), the Catholicos of All Armenians in Vienna, with whom he was subsequently on close terms until the latter's death in 1907.

His visit to Holy Etchmiadzin in December 1936, immediately after his final return to his homeland, his article «The Historical Role of Etchmiadzin» (1944), in which he praised the great role played by the Mother See of Holy Etchmiadzin in the life of Armenia, as well as his friendship with Catholicos Gevork VI and Vasken I are eloquent proofs of his filial love and respect. Finally, the poet was not indifferent to the historic event in Armenian life in June 1945 – the National Church Assembly, where Gevork VI was elected Catholicos of All Armenians after a seven-year break.

During the Assembly in Etchmiadzin, Levon Chormisyan, a progressive Armenian journalist living in Paris, met with him and interviewed him a few days later. This almost unknown interview was published in the Parisian Armenian weekly “The West” (N 25, September 2) and was not reprinted in the future, did not find a place even in the Complete Works of Isahakyan. However, it deserves great attention, particularly as another proof of the friendship between the poet and Holy Etchmiadzin.



ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՍՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՆԱՓՈԽ ՎԱՍՇԵՆԱՎԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

2022 թ. դեկտեմբերի վերջին ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ լույս տեսավ անվանի հայագետ, համշենագետ Սերգեյ Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» ուսումնասիրությունը (Երևան, ՀԱԻ հրատ., 352 էջ + 16 էջ գունավոր ներդիր): Գրքի խմբագիրն է բ. գ. դ. Ա. Սարգսյանը, գրախոսները՝ բ. գ. դ. Վ. Սվազլանը, պ. գ. դ. Հ. Չոլաքյանը, բ. գ. թ. Լ. Դոեջյանը: Առաջաբանում հեղինակն ընթերցողի համար պարզաբանում է, որ ներկա աշխատությունը գիտական համարվող չոր-ցամաք, անհաղորդ ոճով գրված շարադրանք չէ սոսկ. այն ամենից առաջ գիրք է մարդկանց մասին (բանասաց, բանահավաք, զվարճապատումի հերոս, հրատարակիչ, գիտնական եւ այլն), որոնք սովորաբար լավագույն դեպքում հիշատակվում են միայն տողատակի ծանոթագրություններում կամ առհասարակ անտեսվում են: «Սույն մենագրության մեջ.... փորձել ենք կոտրել գիտական գրականության մեջ տասնամյակներ իշխող այն կարծրատիպը, երբ հեղինակին հղելիս կամ որեւէ մեկին անդրադառնալիս, հաճախ առանց որեւէ կենսագրական տվյալ հիշատակելու, նշվում են սոսկ նրա ազգանունն ու անվան միայն սկզբնատառը՝ մոռանալով, որ ինչ էլ որ գրում ենք, ի վերջո, այդ ամենը մարդկանց մասին է»:

Դժվար, գրեթե անհնար է անդրադառնալ Համշենին եւ համշենահայերին՝ առանց հիշելու Սերգեյ Վարդանյանին, որն ապրած տարիների մեծ մասը նվիրել է համշենագիտությանը: Նախորդող շրջանի բանագիտության մեջ բավական սակավ էր համշենահայությունը՝ մասնավորապես կրոնափոխ համշենցիներին առնչվող նյութը, որն իր շուրջ կեսդարյա գործունեության ընթացքում, հաճախ կյանքը վտանգելով, անհամեմատելիորեն հարստացրեց Ս. Վարդանյանը: Հետեւաբար առանց չափազանցության կարելի է ասել, որ նրա անվան հետ է կապվում համշենագիտության դպրոցի հիմնումը:

Հայագետը ծնվել է 1952 թ. Երեւանում, 1969 թ. ավարտել է Հ. Պարոնյանի անվան թիվ 59 դպրոցը, 1974 թ.՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրության բաժինը: Ապա աշխատանքի է անցել նույն հաստատության հոգեբանության ամբիոնում: Առանձին ուշագրության է արժանի նրա գործունեությունը «Պիոներ կանչ» (այժմ՝ «Կանչ») թերթում եւ «Պիոներ» (այժմ՝ «Աղբյուր») ամսագրում: Այդ շորս տարիների ընթացքին Ս. Վարդանյանը շոշափելի ներդրում է ունեցել հայ պատանիներին հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում: Նրա կոչով Հայաստանի, ինչպես նաեւ Հյուսիսային եւ Հարավային Կովկասի հայկական դպրոցների աշակերտների՝ տարբեր բարբառներով հավաքած բանահյուսական նյութերը հրատարակվում են «Հրեղեն ձին» (1981) եւ «Թագավորի երազները» (2003) ժողովածուներում, որոնք աննախագեպ են մեր բանագիտության նորագույն պատմության մեջ: Այդ գրքերից ընտրված արձակ նմուշները նրա ջանքերի արդյունքում Երեւանում լույս են տեսնում անգլերեն («The salvaged tales», 2007) եւ գերմաներեն («Gerettete Marchen», 2009, «Vor dem Vergessen gerettete armenische Märchen», 2023):

Ս. Վարդանյանի հանրահայտ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գիրքն սկզբում հոգվածաշարի տեսքով հրատարակվում է «Պիոներ» ամսագրի համարներում: 1995-ին այն, համալրվելով նոր նյութերով եւ առավել ամբողջական տեսք ստանալով, լույս է տեսնում առանձին գրքով, որի վերահրատարակված տարբերակ համար («Հայաստանի մայրաքաղաքներ», 1995 թ.) հեղինակն արժանացել է «Թեքեյան» մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին, իսկ 2012 թ.՝ Երեւանի քաղաքապետի Ոսկե մեդալին:

Հետագա տարիներին Ս. Վարդանյանն աշխատել է Հայ ճարտարապետության թանգարան-ինստիտուտում, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում: 1991–2002 թվականներին եղել է ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահը: Նա թեեւ արժատներով վանեցի է, հիմնադրման օրվանից՝ 1992-ից, Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ նախագահի տեղակալն է, իսկ 2004–2018 թթ. հասարակական հիմունքներով կատարել է նույն կազմակերպության «Ձայն համշենական» պաշտոնաթերթի գլխավոր խմբագրի պարտականությունները: 2004 թ. հուլիսից մինչեւ 2018 թ. Ս. Վարդանյանը միայնակ հրատարակել է թերթը,

որի ողջ տպաքանակը (հազար օրինակ) անվճար բաժանել է Հայաստանի եւ Սփյուռքի ընթերցողներին, ուղարկել Ռուսաստանի, Աբխազիայի ու Թուրքիայի համշենահայերին: Նա 2009 թ., որպես խմբագիր, ստացել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ Սփյուռքի նախարարության եւ Հայաստանի ժողովրդային միության բարձրագույն մրցանակները:

1969 թ. ամռանը Սերգեյ Վարդանյանը Սեւ ծովի առափնյա Ադլեր քաղաքում ականատեսն է լինում մոտակա Մոլդովկա գյուղում հայկական դպրոց բացելու պահանջով կազմակերպվող ստորագրահավաքին՝ խորապես մտահոգվելով Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների ծանր կացությանը: Վերադառնալով Հայաստան՝ նա չի կարողանում մոռանալ այդ տխուր պատկերը, որից տպավորվելով՝ սկսում է զբաղվել անծայրածիր տարածք եւ տասնմեկ ժամային գոտի ունեցող ԽՍՀՄ-ում սփռված հայերի խնդիրներով: Այսպես նա բացահայտում է համշենահայերին, որոնց բանավոր ժառանգության նմուշների ուսումնասիրությանը դառնում է նրա կյանքի հետագա տարիների գլխավոր գործն ու առաքելությունը:

Ս. Վարդանյանը, բազմաթիվ զրկանքներ կրելով, շատ անգամներ մեկնում է թե՛ խորհրդային տարբեր հանրապետություններ, թե՛ Արեւմտյան Հայաստան՝ հաճախ նույնիսկ առերեսվելով կյանքին սպառնացող ստույգ վտանգների: Դեռեւս 1984 թ. եւ 1987 թ. Ղազախստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում եւ Ռուսաստանում հայտնաբերում է մահմեդականությանը դավանած համշենահայերի: 2019 թ. տողերիս հեղինակը ծավալուն հարցազրույց է անցկացնում նրա հետ (տե՛ս «50 տարի անց... կրկին համշենահայերի մասին», «Ազգ», 2019, հուլիսի 19): Այդ հարցազրույցում նվիրյալ հայագետը խոսում է իր կյանքի կեսդարյա ուղու մասին, հիշում դեպի մեծ նվիրում տանող ճանապարհն ընտրելու հանգամանքները:

Սերգեյ Վարդանյանի գիտական կյանքում բեկումնային եղավ 1981 թվականը, երբ Կրասնոդարի երկրամասի՝ համշենահայերով բնակեցված գյուղերում տեղեկանում է Ղազախստանից ու Ղրղզստանից եկած մարդկանց մասին, որոնք խոսում են համշենցիների բարբառին մոտ լեզվով: Բանագետն անմիջապես գլխի է ընկնում, որ Կենտրոնական Ասիայի բնակիչների նման հագնված այդ մարդիկ 1944 թ. Աջարիայից բռնի տեղահանված համշենահայերը պետք է լինեն, որոնց ինքը մի քանի տարի շարունակ որոնում էր՝ ցանկանալով փաստագրել նրանց բռնի տե-

ղահանությունը, նաեւ բանահյուսական նյութերը հավաքել: Ժամանակի սղություն պատճառով խորամուկ չլինելով հավելյալ մանրամասների մեջ՝ վերադառնում է Երեւան: Տարիներ անց տեղեկանալով, որ Կրասնոդարում վերաբնակված համշենահայերի մի մասը տեղափոխվել է Դրղստանի Օշի մարզի Կըզըլ-Կիյա քաղաքից, 1984-ին մեկնում է Միջին Ասիա: Այդ ուղեւորության արդյունքում Վարդանյանին հաջողվում է գրառել համշենահայոց բանարվեստի զգալի քանակություն կազմող նմուշներ եւ փաստագրել բռնագաղթը: Ս. Վարդանյանը Ղազախստան, Դրղստան եւ Ուզբեկստան է գնում նաեւ 1987 թ.: Այդ ընթացքում Ղազախստանում գրառում է «Առդիլէցիֆ՝ ալշի» վերտառությամբ երգիծական մանրավեպը: Այդ երկին ու նրա փոփոխականներին է նվիրված «Բանահյուսական պատումի միշավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» մենագրությունը, որն առանձնանում է նախ նրանով, որ մահմեդականություն ընդունած եւ քրիստոնյա համշենահայերի բանահյուսության համապարփակ քննության առաջին փորձն է: Այս գրքում, որ եզակի է ոչ միայն համշենագիտության, այլեւ առհասարակ հայագիտության մեջ, արտացոլված է Համշենի վերջին երեք հարյուրամյակի պատմությունը, ներկայացված են համշենագիտությանն այս կամ այն կերպ առնչվող մարդկանցից շատերի կենսագրականները: Հայագետն իր պատմական անդրադարձն սկսում է Ժէ. դարասկզբից՝ անդրադառնալով Սիմեոն դպիր Լեհացու ուղեգրության էջերում պահպանված տեղեկությունները: Ապա հիշատակում է այս պահին գիտությանը հայտնի՝ կրոնափոխ համշենահայերին վերաբերող ամենահին սկզբնաղբյուրը, որը պատկանում է Պողոս վրդ. Մեհերյանի գրչին («Պատմութիւն վարուց Տեառն Հ. Պօղոս վարդապետի Մէհէրեան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու»):

Այնուհետեւ, հիմնվելով Ղուկաս Ինճիճյանի, Մինաս Բժշկյանի, Աբել Մխիթարյանի, Սարգիս Հայկունու աշխատություններում տեղ գտած տվյալների վրա, հյուսում է Համշենի պատմությունը:

Հեղինակն այստեղ անդրադարձ է կատարում նաեւ Բաթումի մարզի համշենահայերի պատմությանն ու մշակույթին: «Բաթումի մարզի համշենցիները» գլխում Ս. Վարդանյանը ներկայացնում է Բաթումի համշենահայերի մասին առաջիններից մեկն անդրադարձած Հարություն Գաթենյանի կենսագրության ինչ-ինչ դրվագները: Աշխատության մեջ վերլուծվում են «Համշեն» եւ «համշենցի» անուններն ու տարբեր ազգերի լեզուներում

դրանց աղճատված ձեւերը՝ քաղաքական կամ տվյալ լեզվի հնչյունային համակարգի պատճառներով:

Բացառիկ արժեք ունի գրքի «Կրոնափոխ համշենահայերի բարբառի եւ բանահյուսության ուսումնասիրության պատմությունից (XIX—XXI դդ.)» վերտառությամբ գլուխը, որտեղ հեղինակը մանրամասն անդրադառնում է Համշենի բարբառի առանձնահատկություններին, ինչպես նաեւ համշենագիտության ձեռքբերումներին եւ կրոնափոխ համշենահայերի մասին գրված գրքերին ու հոդվածներին: Խորին երախտագիտությամբ արտահայտվելով Համշենի պատմությանն անդրադարձած գիտնականների մասին եւ գնահատելով կատարված աշխատանքը՝ Ս. Վարդանյանը ներկայացնում է նրանց հեղինակած ուսումնասիրությունների մատենագիտությունը:

Այնուհետեւ հեղինակն ընթերցողին հակիրճ ծանոթացնում է «Արդէլէցիք՝ ավշի» գվարճապատումի 37 պատումների բովանդակությանը, որոնք ԺԹ.—ԻԱ. դարերում գրի են առնվել Ղազախստանում, ԱՄՆ-ում, Արեւմտյան Հայաստանում, Արցախում, Ղարաբաղում, Նախիջեւանում, Զավախքում, Կեսարիայում, Լոռիում, Տավուշում, Սեւանա լճի ավազանում, Սյունիքում, Փերիայում, Մուշում, Հալեպում եւ այլուր: Դրանցից յոթը գրի է առնվել կրոնափոխ համշենահայերից, որոնցից վեցը գրառել է Ս. Վարդանյանը (մեկը՝ Ղազախստանում, հինգը՝ Արգվինի նահանգում), իսկ մյուս փոփոխակը գրի են առել Հարվարդի համալսարանի երեք աշխատակիցները Բոստոնում՝ Խոփայի գավառից տեղափոխված համշենցի մի երիտասարդից:

Հմտորեն համադրելով եւ ուսումնասիրելով առկա մեծածավալ նյութը՝ Ս. Վարդանյանն այդ ամենը համեմատության մեջ է դնում հիշյալ բանահյուսական պատումի՝ այլ ժողովուրդներին (ռուսներին, թուրքներին, պարսիկներին եւ ասորիներին) պատկանող տարբերակների հետ: Հանգամանք, որն առավել մեծ արժեք է հաղորդում մենագրությանը: Կարելու է նաեւ այն, որ հեղինակը մի առանձին գլուխ հատկացնում է ամերիկացի հայագետ Զեյմա Ռասելին՝ մատնանշելով վերջինիս՝ հայկական որոշ գվարճապատումներին վերաբերող չպատճառաբանված եւ անհիմն դիտարկումները:


Այս գիրքը, այո՛, մարդկանց մասին է, նաեւ այն մարդկանց, որոնք, ինչպես վերոհիշյալ հարցազրույցում հիշում է Ս. Վարդանյանը, «...ամռան տապին երկարաթեւ վերնաշապիկներ հագած եւ թղթապանակներն

ամուր բռնած, հոգսաշատ դեմքերով տնետուն էին գնում եւ հայկական դպրոց բացելու համար ստորագրություններ հավաքում»:

Այդ մարդկանց մասին ավելի քան կես դար է, ինչ իր գրքերում պատմում է Ս. Վարդանյանը՝ այն վստահ գիտակցումով, որ նրանց մասին, բացի իրենից, «...ոչ ոք չի գրի, որովհետեւ նրանց թոռներն ու ծոռները հիմա շատ զբաղված են, ռուսական էստրադային երգերի բարձր հնչյունների ներքո ծովափին արեւկող պառկած հանգստանում են կամ էլ հերթական սրճարանը, ռեստորանը, հյուրանոցն են բացում»:

Սերգեյ Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» հիմնարար հետազոտություն է, շատ կողմերով գիտական նորույթ պարունակող աշխատանք, եւ այն իր մնայուն տեղը կունենա հայ բանագիտության պատմության մեջ:

ԳԵՒՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , на собрании священников по случаю праздника Свв. священников Гевондянов	5
---	---

ПРОПОВЕДИ

Проповедь ЕПИСКОПА ОШАКАНА ГЮЛГЮЛЯНА , произнесенная во время Литургии в церкви Св. Григория Просветителя г. Еревана	8
Проповедь АРХИЕПИСКОПА АРШАКА ХАЧАТРЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	10
Проповедь ИЕРЕЯ ГРИГОРИСА ПОГОСЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	13
Проповедь ЕПИСКОПА ВАГАНА ОГАНИСЯНА , произнесенная во время Литургии в монастыре Св. Гаяне.	17
Проповедь Патриарха Константинопольского ААЦ ЕГО ПРЕОСВЯЩЕНСТВА АРХИЕПИСКОПА СААКА МАШАЛЯНА , произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	24

РЕЛИГИОВЕДЕНИЕ

БАБКЕН НАНЯН —Предпосылки Моисеева Закона в контексте праздника Сретения Господня	34
СВ. ГРИГОРИЙ БОГОСЛОВ (НАЗИАНЗИН) — Слово 28, о богословии второе	56
АРХИМАНДРИТ МАТЕОС ДЖУЛЬФАЕЦИ — Проповедь об изречении «Превозносите Господа Бога нашего, и поклоняйтесь подножию Его: свято Оно»	70

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- ЛИЛИТ СИМОНЯН** — Блаженный Тодик и столпы небесного света 81
- ЭДГАР ОГАНИСЯН** — Первое путешествие американских протестантских миссионеров в Армению и их исследования в 1830—1831 гг. 93
- АШОТ АЙРУНИ**— Армяно-российские переговоры в Москве и причины их поражения 105
- АВАГ АРУТЮНЯН** — «Союз воинствующих безбожников» — провалившийся проект компартии 125

СООБЩЕНИЯ

- АРМЕН МАНУКЯН** — Аветик Исаакян и Святой Эчмиадзин 140

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- ГЕВОРГ ГЮЛУМЯН** — Ценный труд про вероотступничество амшенских армян 156



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , during the priestly meeting held on the occasion of the feast of St. Ghevond the Priest and His Companions	5
---	---

SERMONS

Sermon delivered by H.G. BISHOP OSHAGAN GULGULIAN during the Divine Liturgy celebrated at St. Gregory the Illuminator Church of Yerevan	8
Sermon delivered by H.E. ARCHBISHOP ARSHAK KHACHATRYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	10
Sermon delivered by FR. GRIGORIS POGHOSYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	13
Sermon delivered by H.G. BISHOP VAHAN HOVHANNISYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	17
Sermon delivered by HIS BEATITUDE SAHAK MASHALIAN , Armenian Patriarch of Constantinople, during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	24

RELIGIOUS STUDIES

BABKEN NANYAN — Prerequisites of the Mosaic Law in the context of the Feast of the Presentation of the Lord to the temple.	34
ST GREGORY THE THEOLOGIAN (OF NAZIANZUS) — Oration 28: The Second Theological Oration	56
ARCHIMANDRITE MATTHEOS OF JULFA — Sermon on the Cross on the verse “Exalt ye the LORD our God, and worship at his footstool; for he is holy.”	70

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES


LILIT SIMONYAN — Blessed Fr. Todik and the pillars of heavenly light	81
EDGAR HOVANNISYAN - The first trip and studies of American Protestant preachers in Armenia in 1830—1831	93
ASHOT HAYRUNI — Armenian-Russian negotiations in Moscow and their failure	105
AVAG A. HARUTYUNYAN — “Union of Fighting Atheists”: a failed project of the Communist Party	125

ESSAYS

ARMEN MANUKYAN — Avetik Isahakyan and Holy Etchmiadzin	140
---	-----

LITERARY REVIEW

GEVORG GYULUMYAN — Valuable work on the converted Hemshin Armenians	156
---	-----



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը
Սրբոց Ղեկնողեանց տօնի առիթով գումարուած քահանայից հաւաքին 5

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՕՇԱԿԱՆ ԵՊՍ. ԿԻԻԼԿԻԼԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Երեւանի Ս. Գրիգոր
Լուսաւորիչ եկեղեցում մատուցուած Ս. Պատարագին 8

Տ. ԱՐԾԱԿ ԱՐՔ. ԽԱԶԱՏՐԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ
վանքում մատուցուած Ս. Պատարագին 10

Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ՔԶՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 13

Տ. ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ
վանքում մատուցուած Ս. Պատարագին 17

**Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔ.
ՄԱՇԱԼԵԱՆԻ** քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած
Ս. Պատարագին. 24

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՔԿԷՆ ՆԱՆԵԱՆ — Մովսիսական օրէնքի նախադրեալները
Տեառնընդառաջի տօնի համապատկերում. 34

Ս. ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱՔԱՆ (ՆԱԶԻԱՆԶԱՅԻ) — Ճառ ԻԸ.
Աստուածաբանութեան մասին, երկրորդ 56

ՄԱՏՈՒՄ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՅԻ — Խաչի քարոզ՝ «Փառաւորեցէք
մեր Տէր Աստուածը, երկրպագեցէք Անոր ոտքերու պատուանդանին,
որովհետեւ սուրբ է» խօսքին մասին. 70

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆԵԱՆ — Երանելի տեր Թողիկը եւ երկնային լոյսի սիւները 81

ԷԴԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Ամերիկացի բողոքական քարոզիչների
առաջին ճամփորդութիւնը եւ ուսումնասիրութիւնները Հայաստանում
1830—1831 թթ. 93

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ — Հայ-ռուսական բանակցութիւնները Մոսկուայում
եւ դրանց ձախողումը 105

ԱԲԱԳ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ — «Մարտնչող անաստուածների միութիւնը»
կոմկուսի չկայացած նախագիծ 125

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՄԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ — Աւետիք Իսահակեանը եւ Սուրբ Էջմիածինը 140

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ԳԻԼՈՒՄԵԱՆ — Արժեքաւոր աշխատութիւն կրօնափոխ
համշենահայերի մասին. 156



ISSN 1829—4243
eISSN 2953—7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրոյթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քնյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374-10) 517-276

Ստորագրուած է տպագրութեան՝ 2.04.2024 թ.



ԵՃՄԻԱԾԻՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ